ՈՐԵՍ ԱՐԱՐԱՏ

Թիվ 3 (14), հոկտեմբեր – նոյեմբեր, 2007 թ.



Ի՞նչո՞ւ Նորագույն զինյալ ազատագրական պայքարը

Լլոյդ Ջորջ Դեյվիդ, Մեծ Բրիտանիայի պրեմիեր մինիստր՝ 1916-1922թթ.:

«Հայաստանը ողջակիզվեց մեր կառուցած հաղթանակի զոհասեղանին: Բրիտանական կառավարության քաղաքականությունը անխուսափելիորեն հանգեցրեց (հայերի) 1895-97թթ., 1909թ. սարսափելի ջարդերին և 1915թ. ամենասարսափելի կոտորածին: Հայերը պետք է վերագտնեն իրենց անկախությունը»:

Լոուրենս Էդուարդ Արաբացի, բրիտանական հետախույզ: Մեջբերումները՝ 1919թ. Լինկոլն Սթեֆընսի հարցազրույցից:

«Հայերը պետք է ամբողջությամբ ոչնչացվեն», «...Դա է Հայկական հարցի միակ լուծումը», «Հայերը, չպետք է ունենան Հայաստանը, բուն երկիրը»: «...Հայաստանը պետք է բաժանման ենթարկվի»: «...ինչպես հայերն են, ինչպես բոլոր այս հին ազգերն էլ, որոնց պետք է ոչնչացնել»:

Ռալֆ Պիտերս, ԱՄՆ զինված ուժերի սպա: «Իսկ մի սարսափելի չարագործություն, ինչպիսին է հայերի... ցեղասպանությունը, երբեք չի կարող փոխհատուցվել տարածքային նվիրատվությամբ», «Էթնիկ զտումներն իրենց գործն անում են»:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջաբան	էջ 1
Հայության մաքառումների փուլերը Սփյուռքում և Հայրենիքում	էջ 2-3
Ինչո՞ւ Նորագույն զինյալ ազատագրական պայքար	էջ 4-7
Լոուրենս Արաբացու հարցազրույցը	էջ 8-15
Չերչիլ, Սիոնիզմն ընդդեմ բոլշևիզմի	էջ 16-17
Պաուլ Ռորբախ	էջ 18
Լ. Բ. Տրոցկու 1921թ. հոդվածը	էջ 18-22
Պայմանագիր Ռուսաստանի և Թուրքիայի միջև	էջ 23-25
Լոզանի կոնֆերանս, 1923թ.	էջ 25
Սևրի հաշտության պայմանագիրը, 1920թ.	էջ 26
ԱՄՆ անկախության հռչակագիրը	էջ 27
Ալան Դալեսի ծրագիրը	էջ 28-29
Ռալֆ Պիտերս, «Նոր Մերձավոր Արևելքի քարտեզը», 2006թ.	էջ 29-33
ՄԱԿ-ի հռչակագրեր, բանաձևեր	էջ 34-37
ՀՀ-ի և ԼՂՀ-ի ազգային և միջազգային իրավական կարգավիճակի փուլերը 1917-ից ցայսօր	էջ 38-40
ՀՀ և ԼՂՀ հռչակագրեր, որոշումներ	էջ 40-47
Մահաթմա Գանդի	էջ 48
Ֆրիտյոֆ Նանսեն	էջ 49-51
Գուրգեն Յանիկյան	էջ 51-54
Վերջաբան	էջ 55-56

Լրատվական գործունեություն իրականացնող «Ուխտ Արարատի» ՍՊԸ, հասցեն Կասյան 6/19, վկայական N-03A 069706, տրված 12.10.2005թ.

Տպաքանակը՝ 1000
Ծավալը՝ 4.5 տպ. մամուլ

Համարի թողարկման պատասխանատու՝ Տիգրան Փաշաբեզյան

Տպագրված է «ՍԱՄԱՐԿ» տպարանում, ստորագրվել է տպագրության՝ 07.11. 2007

Խմբագրության հասցեն՝ 375010, Երևան, Ագաթանգեղոսի 7բ
Հեռ. (37410) 52-51-90

Official periodical of "Oukht Ararati" LTD

EDITORIAL BOARD
Responsible of the issue: Tigran Pashabezyan

Address: 375010, Yerevan, Agatangeghos 7b
Tel. (37410) 52-51-90
E-mail: oukhtararadi@yahoo.com

Գինը՝ 300 դրամ

«Ուխտ Արարատի» ամսագրից նյութեր արտատպելիս՝ խնդրում ենք հղում կատարել:

Հարգելով հեղինակային իրավունքը՝ ստացված հոդվածները չենք խմբագրում:

ԱՌԱՋԱԲԱՆ

Մարդկությանն ու Հայությանը, աշխարհին ու Հայաստանին սպառնացող, անցյալից եկող ներկայիս մարտահրավերները

Չկա մի ասպարեզ. քաղաքական, դիվանագիտական, տնտեսական, պատմական, հոգևոր, մշակութային..., անգամ մարզական, որտեղ ամեն օր և ամեն ժամ չոտնահարվեն հայի և հայության իրավունքները: Եվ չկա դրանց մեջ մի դեպք, որ ենթակա չլինի պատասխանատվության ու պատժի: Պետք է փաստել, սակայն, որ մենք վատ ենք տիրապետում օրենքին, իրավունքի մեխանիզմին, այդ թվում՝ միջազգային..., ավելի ճիշտ կլինի ասել, ընդհանրապես չենք օգտվում դրանից:

Հայ մարդու գիտակցության մեջ չի տեղավորվում այն փաստը, որ պետական, քաղաքական կամ հասարակական հայտնի այս կամ այն գործիչը կարող է թույլ տալ իրեն... հանցանք գործել, այն էլ ամբողջ մի ազգի, կամ մարդկության դեմ ուղղված: Սա առաջին կարծրատիպն է: Երկրորդը՝ ձևավորել է այն մտայնությունը, թե պետական, քաղաքական կամ հասարակական այս կամ այն գործչի հանցանք պարունակող արարքը թելադրված է պետական շահերով, հետևաբար «հասկանալի» է, պատասխանատվության ոչ ենթակա, անգամ «ներելի»:

Երբ Մեծ Բրիտանիայի պրեմիեր մինիստրը կամ Ֆրանսիայի նախագահը, Գերմանիայի կանցլերը կամ Ռուսաստանի առաջնորդը, ԱՄՆ-ի պետքարտուղարը կամ եվրոկոմիսարը իրենց քաղաքական կեցվածքներում, բանակցություններում կամ կնքած պայմանագրերում ոտնահարել են հայության վաղընջական իրավունքները՝ «ներելի են», քանզի նրանք պետական, քաղաքական գործիչներ են, այդպես է պահանջել նրանց պետական շահը, ասել է թե՝ դա այդ երկրների ներքին գործն է, որն էլ, իբր, չի տալիս միջամտելու, անգամ բողոքելու իրավունք: Այս դեպքում էլ աշխատում է չիմացության գործոնը: Հայտնի է՝ միջազգային իրավունքներն ու պարտավորությունները պաշտպանված են, խախտողներն էլ ենթակա են պատասխանատվության:

Չիմացության պատրվակով, օրինակ, չես ասի՝ ինչպես վերաբերվել թուրք պետական, քաղաքական գործիչներին, երիտթուրքերին, որոնք իրենց հանցագործ գործունեությունն իրականացնելիս ղեկավարվել են իրենց իմացած «պետական շահով»: Իսկ բոլոր այն պետական գործիչների՞ն, որոնք տեսականորեն ձևակերպեցին, ծրագրեցին ու տասնամյակների քարոզչությամբ նախապատրաստեցին 1915 թվականը, աջակցեցին ու հովանավորեցին թալեաթներին, քողարկեցին հանցագործությունը, զանազան անօրինական պայմանագրերով ամրագրեցին հանցագործության արդյունքում ստեղծված իրավիճակը: Ինչպե՞ս վերաբերվել բոլոր այդ երկրների անունից հանդես եկող անցյալի ու ներկայի գործիչներին: Այս դեպքո՞ւմ էլ հայտնի չեն միջազգային օրենսդրական նորմերը:

Մի տեսեք, թե ի՜նչ անուններից է սկսվում մեղադրյալների շարքը. Ռորբախ, Արաբացի, Տրոցկի, Պիտերս... Ռորբախը գերմանահպատակ հայտնի գործիչ է: Արաբացին՝ բրիտանացի հայտնի հետախույզ: Տրոցկին՝ հայտնի հեղափոխական, բոլշևիկյան Ռուսաստանի ռազմական նախարար: Պիտերսը՝ ԱՄՆ զինված ուժերի, հավանաբար, հարգարժան սպա: Նրանց բոլորին միավորում են հայերի բռնի տարագրումը, ցեղասպանությունը ծրագրելու, նախապատրաստելու, քարոզելու, խրախուսելու, արդեն կատարված հանցագործությունը թաքցնելու, հանցագործության հետևանքներն «օրինականացնելու», հանցագործությանը ցայսօր մասնակից ու հանցակից լինելու մեղադրանքները:

Ի՞նչ է անելու հայ մարդը: Շարունակելո՞ւ է «ընբռնումով» վերաբերվել իր կամ մարդկության դեմ ուղղված բոլոր հանցագործություններին: Թե՞, ազատագրական պայքարի ջանքերն ու ճիգերը, ի վերջո, ուղղորդելու է նաև իրավական ոլորտ՝ հաստատելու համար հայրենիքում ապրելու և հազարամյակներով ստեղծած ազգային և համամարդկային քաղաքակրթական ժառանգությունը պահպանելու իրավունքը:

Ցեղասպանություն, լոկալ և գլոբալ պատերազմ քարոզելը, ազգային կամ կրոնական ատելություն, թշնամանք ու բռնություն սերմանելը, նաև դրանցով զբաղվող անձանց հովանավորելը, աջակցելն ու պաշտպանելը, ինչպես և պատասխանատու անձանց՝ պաշտոնյաների հանցագործությունը կոծկելու փորձերը աշխարհի գրեթե բոլոր երկրներում՝ սահմանադրական - օրենսդրական դաշտով, նաև ՄԱԿ-ի կանոնադրական հիմնական գործառույթով, Մարդու Իրավունքների Համընդհանուր Հռչակագրով (10-ը դեկտեմբերի 1948թ.), Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և դրա համար պատժի մասին (9-ը դեկտեմբերի 1948թ.), Միջոցներ, որոնք պետք է ընդունվեն ընդդեմ նոր պատերազմի քարոզչության և հրահրողների (3-ը նոյեմբերի 1947թ.), Պատերազմի հանցագործությունների և մարդկության դեմ հանցագործությունների նկատմամբ վաղեմության ժամկետ չկիրառելու մասին (26-ը նոյեմբերի 1948թ.) Կոնվենցիաներով՝ ենթակա են պատասխանատվության և խստագույն պատժի:

Երկիր մոլորակի վրա չեն դադարի մարդկության դեմ ուղղված հանցագործությունները, ցեղասպանությունները, լոկալ և գլոբալ պատերազմները, ազգային ու կրոնական թշնամանքը, ատելությունն ու բռնությունները, քանի դեռ յուրաքանչյուր պետություն ինքնուրույն, նաև մարդկային հանրությունը ամբողջությամբ պատասխանատվության չեն կանչել անցյալի, ներկայի ու առաջիկայի լոկալ, թե գլոբալ աղետներ հրահրող բոլոր քարոզիչներին ու նրանց հովանավորներին:

«Ո՞ւժն է ծնում իրավունք»: Իրավունքը բնական, անօտարելի իրողություն է: Ուժը երաշխավորում, պաշտպանում է իրավունքը, նաև վերականգնում այն: Մարդկային աշխարհի բարուն, բնականոնությանն ու բանականությանը հենված ազգային և միջազգային օրինականությամբ առաջնորդվող ուժն է երաշխավորում ու պաշտպանում յուրաքանչյուր անհատի, ազգի, ժողովուրդի ու համայն մարդկության կյանքի, խաղաղ ու ստեղծագործ ապրելու անօտարելի իրավունքը:

Հենց այս խնդիրների քննարկումով է պայմանավորված «Ուխտ Արարատի» պարբերականի այս համարի բովանդակությունը, որտեղ առաջին փաթեթում ներկայացնում ենք վերջին հարյուրամյակում հայության մաքառումների, ազատագրական պայքարի փուլերն ու հարցադրումները՝ Սփյուռքում և Հայրենիքում: Երկրորդում՝ պատերազմի, ցեղասպանության քարոզչության, ազգային թշնամանք ու կրոնական ատելություն սերմանողների՝ Պաուլ Ռորբախի, Լոուրենս Արաբացու, Լև Տրոցկու, Ռալֆ Պիտերսի, ինչպես նաև Ալան Դալեսի մարդատյաց, հայատյաց մտքերը, տրամաբանությունը, ծրագրերը: Այս ցանկը, անշուշտ, կարելի էր շարունակել: Երրորդում՝ ուշադրության արժանի ազգային և միջազգային հռչակագրերը, կոնվենցիաները, օրենքները: Եզրափակիչ փաթեթում՝ մարդկության խղճի ու բարոյականության մեծերի՝ Վուդրո Վիլսոնի, Մահաթմա Գանդիի, Ֆրիտյոֆ Նանսենի, Գուրգեն Յանիկյանի, սթափեցնող ու դատապարտող մտքերը, խոսքը, կոչերը, եզրակացությունները:

ՎԵՐՋԻՆ ՀԱՐՅՈՒՐԱՄՅԱԿՈՒՄ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՔԱՌՈՒՄՆԵՐԻ ՓՈՒԼԵՐԸ ՍՓՅՈՒՌՔՈՒՄ ԵՎ ՀԱՅՐԵՆԻՔՈՒՄ

Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկատվությունը Հայկական Սփյուռքի մասին հատվածաբար՝ ըստ «Հայկական Հարց», հանրագիտարանի:

ՍՓՅՈՒՌՔ հայկական. հայ ժողովրդի այն հատվածը, որը գտնվում է Հայրենիքից կամ բնօրրանից դուրս: «Սփյուռքահայություն» տերմինն սկսել է օգտագործվել 1920-ական թվականների սկզբից, 1915-23-ին թուրքական իշխանությունների իրագործած հայերի ցեղասպանության (տես՝ Մեծ եղեռն) և Արևմտյան Հայաստանից ու Թուրքիայի հայաբնակ վայրերից բռնագաղթի ու ցեղասպանության հետևանքով աշխարհով մեկ ցրված հայերի (շուրջ 1,5 մլն) նկատմամբ:

1920-ական թթ. վերջին, 1930-ական թթ. սկզբին Սփյուռքի տարածական կառուցվածքը հիմնականում կայունացել է:

1950-ական թթ.-ից սկսվել և ցայսօր (որոշ ընդմիջումներով) շարունակվում է սփյուռքահայերի տեղաշարժի մի նոր շրջան: Արևելքի երկրներից արտագաղթը պայմանավորված է տվյալ երկրներում տնտեսական անկայուն և ներքին անբարենպաստ քաղաքական կացությամբ, ազգային փոքրամասնությունների նկատմամբ խտրականությամբ և այլն (1920-ի հեղափոխությունը Եգիպտոսում, քաղաքացիական կռիվները Լիբանանում, Կիպրոսի մի մասի զավթումը թուրքերի կողմից, իսլամական հեղափոխությունը Իրանում, 1980-88-ի Իրաք-Իրանյան պատերազմը):

Սփյուռքահայ յուրաքանչյուր համայնքի վիճակը պայմանավորված է տվյալ երկրի սոցիալ-տնտեսական, քաղաքական ու մշակութային կյանքի դրությամբ ու ընդհանուր մակարդակով:

Սփյուռքի կենսագործունեությունը պայմանավորված է որոշակի սոցիալական հիմնարկությունների առկայությամբ, որոնց հիմնական խնդիրն է միասնականության ապահովումը, նրա անդամների համախմբումը որոշակի ազգային-մշակութային արժեքների շուրջ: Սփյուռքահայության ազգային ինքնությունը պահպանելու գործում վճռական դեր ունեն Հայ առաքելական եկեղեցին, դպրոցը և մամուլը, նաև հայրենակցական, բարեգործական, քաղաքական, մշակութային, գիտական, երիտասարդական, ուսանողական, կանանց, մարզական միություններն ու կազմակերպությունները: Կարևոր է նաև սոցիալական-մշակութային շրջապատի ազդեցությունը, հայերի տարաբնակեցումը (համախումբ, թե ցրիվ), կապը Հայաստանի հետ:

…Սփյուռքի շուրջ 80-ամյա պատմությունը հանուն Հայկական հարցի արդար լուծման հարատև պայքարի պատմություն է, որը բաժանվում է չորս փուլի:

ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼ (1915-23)

…Բազմահազար հայեր, որոնք ապաստանել էին աշխարհի տարբեր երկրներում, հավատացած էին, որ շատ շուտով պետք է վերադառնան Հայրենիք, և հնարավոր է ազգային ինքնավարության վերականգնումը Արևմտյան Հայաստանի տարածքում: Այս սպասումները կապված էին Առաջին համաշխարհային պատերազմում Թուրքիայի պարտությամբ, Արևելյան Հայաստանի մի մասում հայկական պետականության վերականգնմամբ, 1920-ի Սևրի Հաշտության պայմանագրի արդարացի պայմանների իրականացման հույսի հետ: Սակայն իրադրությունների ընթացքը, հատկապես 1922-23-ի Լոզանի կոնֆերանսի որոշումները, հանգեցրին բոլորովին այլ, անբարենպաստ քաղաքական իրադրության, որը բացառում էր մոտակա ապագայում հայ ժողովրդի իրավունքների իրականացումը…

ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼ (1923-65)

…Սփյուռքի հայ քաղաքական կուսակցությունները (Հնչակյան, Դաշնակցություն, Ռամկավար Ազատական) ակտիվ գործունեություն ծավալեցին՝ բազում դիմումներ հղելով ՄԱԿ-ին, ԱՄՆ-ի, Ֆրանսիայի, Մեծ Բրիտանիայի, ԽՍՀՄ-ի կառավարություններին՝ կոչ անելով վերականգնել պատմական արդարությունը և նպաստել հայ ժողովրդի վերադարձին իր բուն հայրենիքը…

Սակայն հայ ժողովրդի շահերը նորից հակասության մեջ մտան մեծ տերությունների ռազմաքաղաքական շահերի հետ: Սկսված «սառը պատերազմի» և Թուրքիայի՝ ՆԱՏՕ-ին անդամագրվելու պայմաններում, ԱՄՆ-ը և Մեծ Բրիտանիան հրաժարվեցին քննարկել Թուրքիայի և ԽՍՀՄ-ի միջև սահմանների վերանայման հարցը, իսկ խորհրդային կառավարությունը 1953-ին, կրկին անտեսելով հայ ժողովրդի օրինական իրավունքներն ու ձգտումները, հայտարարեց, որ տարածքային ոչ մի պահանջ չունի Թուրքիայից:

ԵՐՐՈՐԴ ՓՈՒԼ (1965-88)

Այս ընթացքում հայ համայնքներում կատարվեց սերնդափոխություն. նոր սերունդը ձգտում էր մշակել Հայկական հարցի քաղաքական լուծման ամբողջական, երկարաժամկետ ծրագիր: Անցյալ տարիների փորձից ելնելով՝ Սփյուռքում հանգեցին այդ գործունեության մեջ իրենց հատուկ դերի կարևորության գաղափարին, քանի որ Խորհրդային Միության ներքին և արտաքին քաղաքականության հիմնական գերակայությունները բացառում էին որևէ նախաձեռնություն ԽՍՀՄ-ի և Խորհրդային Հայաստանի կողմից:

1965-ին Սփյուռքի բոլոր համայնքներում լայնորեն նշվեց Մեծ եղեռնի 50-րդ տարելիցը:

Չնայած որոշակի տեղաշարժերին[1] 1915-ի ցեղասպանությունը ճանաչելու և դատապարտելու ուղղությամբ, Սփյուռքում աճում էր անբավարարությունը նման քաղաքական գործունեության արդյունքներից: Սփյուռքահայ երիտասարդության մի մասը սկսեց հակվել այն կարծիքին, որ միայն դիվանագիտության միջոցներով անհնար է ճեղքել Հայկական հարցի շուրջ ստեղծված լռության պատնեշը, և որ անհրաժեշտ են ավելի գործուն միջոցներ՝ ազդելու համաշխարհային հասարակական կարծիքի վրա: Դրա համար ընտրվեց տարբեր երկրներում Թուրքիայի դիվանագիտական ներկայացուցիչներին ահաբեկելու միջոցը (տես՝ Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակ): Հայկական խմբերի զինված ելույթները, որոնք ընթանում էին ազգային-ազատագրական պայքարի դրոշի ներքո, հետապնդում էին հետևյալ հիմնական նպատակները՝ դատապարտել առաջատար տերություններին, որոնց անտարբերությունը Հայկական հարցի նկատմամբ հարկադրում է հայերին դիմելու նման ծայրահեղ միջոցների՝ արդարության համար

պայքարում. ցույց տալ Թուրքիային, որ նրա իրագործած հայերի ցեղասպանությունը չի հասել իր նպատակին, և որ հայ ժողովուրդը երբեք չի հրաժարվի իր հայրենիքը վերադարձնելու և հարազատ հողում ապրելու իրավունքից. ամրապնդել հայ ժողովրդի հավատը առ այն, որ նրա երիտասարդները, որոնք ծնվել ու մեծացել են իրենց պապերի երկրից շատ հեռու, ժառանգել են իրենց հայրերի ու պապերի պատգամը և հանուն դրանց իրականացման պատրաստ են զոհել իրենց կյանքը: Ձեռնարկած ահաբեկչությունները խթանեցին Հայկական հարցի քննարկումը ամենատարբեր մակարդակներով՝ սկսած զանգվածային տեղեկատվության միջոցներից, վերջացրած մի շարք երկրների խորհրդարաններով ու կառավարություններով: Այդ նույն ժամանակ աշխուժացրին իրենց գործունեությունը Սփյուռքի այն շրջանները, որոնք Հայկական հարցի լուծումը կապում էին նախ և առաջ քաղաքական պայքարի նոր ձևերի հետ: Սկսվեց հայ համայնքների լոբբիական գործունեությունը մի շարք երկրների, առաջին հերթին՝ ԱՄՆ-ի, Ֆրանսիայի և այլոց խորհրդարաններում ու կառավարություններում, հատկապես այդ նպատակի համար ստեղծված կազմակերպությունների միջոցով (տես՝ Հայկական համագումար, Հայ դատ): Ձինվելով Արևմուտքում ընդունված քաղաքական պայքարի մեթոդներով՝ սփյուռքահայ նոր սերունդը որակապես այլ բնույթ հաղորդեց իր պատմական իրավունքները ճանաչելու համար հայ ժողովրդի պայքարին, որի ընթացքում ձեռք բերվեցին որոշակի արդյունքներ: 1983-ի օգոստոսին Եկեղեցիների համաշխարհային խորհուրդը իր ասամբլեայում (Վանկուվր, Կանադա) ճանաչեց Թուրքիայի կողմից 1915-ի կատարած հայերի ցեղասպանության փաստը և դիմեց ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարին՝ այդ փաստը ճանաչելու կոչով: 1984-ի ապրիլին Փարիզում Ժողովուրդների մշտական ատյան հեղինակավոր միջազգային կազմակերպությունը նույնպես ճանաչեց Թուրքիայի մեղավորությունը հայերի ցեղասպանության մեջ և ընդունեց ՄԱԿ-ին ուղղված համապատասխան կոչ: 1975-ից սկսած ԱՄՆ Կոնգրեսում քանիցս քննարկվել են բանաձևեր, որոնք կոչ են անում ճանաչել հայերի ցեղասպանության փաստը, սակայն ԱՄՆ-ի վարչակազմի ճնշման տակ այդ բանաձևերը մերժում է Սենատը: Այդուհանդերձ, 1990-ին Կալիֆոռնիա նահանգում ապրիլի 24-ը հայտարարվեց «Հայերի ցեղասպանության զոհերի հիշատակի օր»: 1987-ի հունիսին Եվրոխորհրդարանը դատապարտեց 1915-ի հայերի ցեղասպանությունը, կոչ արեց Թուրքիային ճանաչել ցեղասպանության փաստը և երկխոսություն սկսել հայ ժողովրդի ներկայացուցիչների հետ (տես՝ Եվրոխորհրդարանի բանաձևը...):

ՉՈՐՐՈՐԴ ՓՈՒԼ (1988-ից սկսած)

1988-ից Հայկական հարցի արդարացի լուծման պայքարը թևակոխեց նոր փուլ. այն կապված է Լեռնային Ղարաբաղի հայության՝ Մայր հայրենիքին վերամիավորվելու պահանջի հետ: [2] ...

Է. ՄԵԼՔՈՆՅԱՆ
«Հայկական Հարց», հանրագիտարան, Հայկական Հանրագիտարանի գլխավոր խմբագրություն, Երևան, 1996թ., էջ 425:

<u>Ծանոթագրություն</u>

1. 1965-ի հոկտեմբերին ՄԱԿ-ում հնչեց Կիպրոսի արտգործնախարար Կիպրիանուի ելույթը, որը կոչ արեց քննարկել Հայկական հարցը: 1967-ի ապրիլին Մոնտեվիդեոյում (Ուրուգվայ) կայացած Լատինական Ամերիկայի երկրների միջխորհրդարանային համագումարը ընդունեց որոշում՝ աջակցել Հայկական հարցի քննարկմանը ՄԱԿ-ում: 1970-ին Ուրուգվայի խորհրդարանը հանձնարարեց երկրի կառավարությանը և արտգործնախարարին՝ Հայկական հարցը ներկայացնել ՄԱԿ-ի քննարկմանը:

2. **Չորրորդ փուլ**-ում զետեղված վերջին պարբերությունը, հրատարակված 1996-ին, չի համապատասխանում 1991-ին հրատարակված ռուսալեզու մայր օրինակին: Ստորև ներկայացնում ենք բաց թողնված ռուսերեն պարբերությունն ամբողջությամբ (տեքստում՝ մուգ), ապա՝ դրա հայերեն թարգմանությունը (տեքստում՝ մուգ).

С 1988г. борьба за справедливое решение Армянского Вопроса вступила в новый этап, связанный с требованием армянского населения Нагорного Карабаха о воссоединении территории области с Сов. Армением...

...**от которой она была насильственно отторгнута и включена в состав Азерб. ССР в 1921г.. Это движение нашло широкую поддержку со стороны диаспоры, т. к. воссоединение НКАО с Арменией является составной частью Армянского Воспроса. Начавшиеся в Армении процессы демократизации, выработка новой политики в отношении диаспоры и, наконец вовлечение основной части армянского народа в борьбу за справедливое решение Армянского Вопроса придало новый импульс диаспоры, возродило надежды, что совместными усилиями станет возможным осуществление исконных и неотъемлемых прав всего армянского народа.**

...որից նա բռնի անջատվել և կցվել է Ադրբեջանական ՍՍՀ-ին՝ 1921թ.: Արցախյան ազատագրական պայքարը մեծ աջակցություն ստացավ Սփյուռքի կողմից, քանզի Արցախի վերամիավորումը Հայաստանին Հայկական հարցի բաղկացուցիչ մասն է: Հայաստանում սկիզբ առած ժողովրդավարական գործընթացները, Սփյուռքի նկատմամբ նոր քաղաքականության մշակումը, և վերջապես, հայության հիմնական մասի ներգրավումը Հայկական հարցի արդարացի լուծման պայքարին՝ նոր ազդակ եղան Սփյուռքի համար, վերածնեցին հույսեր առ այն, որ միացյալ ուժերով հնարավոր է իրականացնել համայն հայության վաղընջական և անօտարելի իրավունքները:

Э. Мелконян
“Армянскии Вопрос”, энциклопедия, ГЛ. редакция Армянской Энциклопедии, Ереван, 1991г., стр. 166-167.



ԻՆՉՈ՞Ւ ՆՈՐԱԳՈՒՅՆ ԶԻՆՅԱԼ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐ [1]

Հարց ու պատասխան

Ո՞ՐՆ է Հայոց նորագույն զինյալ ազատագրական պայքարը: Ո՞ՐՆ է նրա գաղափարախոսությունը: Որո՞նք են ազատագրական պայքարի մարտավարական խնդիրները: Ո՞վ է ազատագրական պայքարի զինվորը, ինչպիսի՞ն են նրա վարքն ու բարոյական կերպարը: Ո՞ՐՆ է Հայոց հաղթանակի գրավականը:

Ներածական խոսք

Հայոց նորագույն զինյալ ազատագրական պայքարը սկիզբ առավ դեռևս 1970-ականներին՝ աշխարհի մեծ խառնակության, երկրներ, ժողովուրդներ ու ազգեր ոչնչացնող միջազգային մութ ուժերի ծրագրած մեծ դավադրության՝ 1985թ. ԽՍՀՄ-ի ինքնափլուզման ծրագրով՝ պերեստրոյկայով, նախատեսված առաջիկայում սպասվող մեծ աղետի մեկնարկից 10 տարի առաջ, պաշտպանելու համար հայությունը, Հայոց երկիրն ու պետականությունը:

Հայոց ցեղասպանության վրա միջազգային դիվանագիտության ուշադրությունը հրավիրելու խնդիրը չէր միայն Գուրգեն Յանիկյանի, Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակի, այլ կազմակերպությունների գործունեության նպատակը: Այդ կերպ այն կլիներ Հայոց նվիրյալ ուժի՝ հերոսացումի ու անձնուրաց զոհողության ինքնանպատակ վատնում: Նորագույն զինյալ ազատագրական պայքարի հիմնական խնդիրը խափանելն էր 1970-ականներին հայտնի դարձած հայությանը սպառնացող վտանգը, ավելի ճիշտ՝ 1915-23թթ. ցեղասպանությունը ռազմաքաղաքական նոր մեթոդներով ու տեխնոլոգիաներով՝ Նախիջևանում, Արցախում, Ջավախքում ու ՀՀ-ում շարունակելու արևմտյան նկրտումները:

Նորագույն զինյալ ազատագրական պայքարը ձևավորվեց՝ իրագործելու երկու հիմնական խնդիր.

Առաջին՝ հնարավորինս կանխարգելելու, խոչընդոտելու հայությանը և Հայոց պետությանը առաջիկա երկու - երեք տասնամյակներում սպառնացող միջազգային վտանգի ծրագրային քայլերն ու գործողությունները: Այդ խնդիրը, վստահաբար, հաղթական փառքով ի կատար ածվեց:

Երկրորդը՝ շարունակական կատարման խնդիր է. հույս ու հավատ ներշնչելու հայությանը՝ միայնակ իսկ մարտնչելու, սեփական ուժին վստահելու, պաշտպանվելու: Նաև տիրապետելու՝ հաղթելու ռազմավարությանն ու գործնական մարտավարությանը, անվարան հավատալով վերջնական հաղթանակին:

Այն ժամանակներում արևմտյան տեղեկատվության արտահոսքը շատ գաղտնիքներ էր բացել Նորագույն զինյալ ազատագրական պայքարը ծնող մեր Մեծերին, աշխարհի նոր՝ գլոբալ ցնցումների և դրանց մեջ հայությանը սպառնացող վտանգների վերաբերյալ, որոնց ականատեսն ենք այսօր՝ շուրջ երկու տասնամյակ: Գուրգեն Յանիկյանը, Գևորգ Աճեմյանը և այլք ավելին գիտեին, քան շատերը կարծում են: Ազատագրական պայքարի զինվորը 1975-85թթ. ավելին է արել, քան գիտեն, կամ կարծում են, թե գիտեն:

- Ինչո՞ւ Նորագույն ազգային ազատագրական պայքար, ինչո՞վ է նա տարբերվում դասականից:

- Դասական ազգային ազատագրական պայքարը հազարամյակներով հայտնի իրողություն է: Օտար զավթիչից երկիրը ազատագրելը, դասական ձեռագրով պետության անկախությունը վերականգնելը ժողովուրդն իրականացնում է հենց իր երկրում՝ հայրենիքում, զինյալ պայքարի միջոցով: 20-րդ դարի երկրորդ կեսից՝ Երկրորդ աշխարհամարտից հետո, յուրաքանչյուր երկրի ազգային ազատագրական պայքար արդեն հովանավորում էր ոչ միայն որոշակի շահ հետապնդող որևէ երկիր, այլև հենց համաշխարհային հանրությունը՝ միջազգային իրավական դաշտում, որպես միակ և հիմնական կառույց, ունենալով ՄԱԿ-ը՝ իր կանոնադրությունով, հռչակագրերով և միջազգային դատարանով, համաձայն միջազգային իրավական սկզբունքների, նորմերի ու կոնվենցիաների: Այն, ի դեպ, լրացնում և ամբողջացնում է Առաջին աշխարհամարտից հետո ձևավորված, Ազգերի Լիգայի կողմից հովանավորվող, ազգերի ինքնորոշման իրավունքով ազատագրվելու սկզբունքը՝ որպես անցումային դրույթ ազգային ազատագրական պայքարով ազատության ու անկախության ձեռքբերման և միջազգայնորեն ճանաչման ու երաշխավորման արդի իրողություն:

Մարդկության դեմ իրագործված ծանրագույն հանցագործությունը՝ Հայոց ցեղասպանությունը, իրագործվեց 1915-23թթ.: Աննախադեպ այս հանցագործության շարունակությունը միջազգային իրավական դաշտ ներմուծված 1921թ. մարտի 16-ի Ռուս-թուրքական և 1923թ. հուլիսի 24-ին Լոզանի պայմանագրերն են: Արդյունքում՝ հայության ամբողջական հայրենիքի 9/10-րդ մասը հայազրկվեց, ցեղասպանությունից փրկվածներն ու նրանց սերունդներն էլ առ այսօր դեգերում են աշխարհով մեկ՝ Հայրենիք վերադառնալու, Հայրենիքում և Հայրենիքով ազատ, անկախ և ինքնիշխան ապրելու բնական, անօտարելի վճռականությամբ:

Ակնհայտ է, որ նման իրողության պայմաններում հայրենիքն ազատագրելու դասական պայքարը հնարավոր չէ իրականացնել հենց միայն հայրենի տարածքում հայության չլինելու պատճառով: Իրողություն, որը թելադրում է ազատագրական պայքարի սկզբունքային նոր մոտեցում, որպես զինյալ ազատագրական և միջազգային իրավական մեկ ամբողջական լուծում: Առավել ևս, երբ 1948-ին համաշխարհային հանրությունը, որպես միջազգային իրավական նորմ, ընդունեց Ցեղասպանության կանխարգելման և դատապարտման կոնվենցիան: Ասել է թե՝ Հայոց հայրենիքի ազատագրումը ոչ միայն լուծումն է տեղական հայկական հիմնախնդրի, այլև կանխարգելող է ցեղասպանությունը այլ ազգերի նկատմամբ տարածելու հարցում: Ա՛յ, սա է այն հիմնական պատճառը, որն ի տարբերություն Հայոց և այլոց հազարամյակներով հայտնի ազգային ազատագրական պայքարների, առաջին անգամ, հենց Հայոց կողմից սկիզբ դրվեց և իր ձևով, և բովանդակությամբ եղավ Նորագույն զինյալ ազատագրական պայքար:

- Նորագույն զինյալ ազատագրական պայքարը կո՞ղմ է բռնության:

- Նորագույն զինյալ ազատագրական պայքարը մերժում է «բռնության դեմ՝ բռնություն» սկզբունքը. ընդունում է բռնության դեմ սեփական իրավունքի ազգային և միջազգային իրավական պաշտպանվածությունը ու այն երաշխավորող ուժային պաշտպանությունը:

- Այդ դեպքում ինչո՞ւ զինյալ..., բավարար չեն արդյո՞ք միջազգային իրավական նորմերը, դրույթները, կոնվենցիաները և Միավորված Ազգերի Կազմակերպությունը:

- Մարդու, հավաքականության, ժողովուրդների ու ազգերի բնական իրավունքները, ինչպես և միջազգային նորմերը ընդամենը դատարկ խոսքեր են, երբ ամրագրված չեն ուժային՝ զինյալ պաշտպանությամբ: Չունես իրավունք, երբ այն չես պաշտպանում:

ՄԱԿ-ի Հռչակագրով ամրագրված Մարդու իրավունքները, այն է՝ մարդու և մարդկային աշխարհի կենսաբանական, ազգային, մշակութային, բարոյահոգևոր և քաղաքակրթական, բնական կենսաանհրաժեշտությունները գործուն իրողություններ են, երբ ունեն ուժային պաշտպանվածություն: Չկա պաշտպանություն - չկա իրավունք. առկա է բռնություն, հանցագործություն:

- Նույնակա՞ն են, թե՞ տարբեր «Նեմեսիսը» և Նորագույն զինյալ ազատագրական պայքարը:

- Ո՛չ, նույնական չեն: «Նեմեսիսը» ցեղասպանությունն իրագործող հանցագործների մահապատիժն ի կատար ածող Հայոց նվիրյալ՝ վճռական անհատների, հերոսական գործողությունն էր: Փառք ու պատիվ նրանց:

Դա կարևոր էր, որպես Հայոց նահատակների պատգամը կատարող գործողություն: Արդարացի էր, ոչ միայն բարոյական, այլև իրավական առումով: Բոլոր հանցագործներն էլ մահվան էին դատապարտված ինչպես համայն հայության ու առաջադեմ մարդկության, այնպես էլ ցեղասպանությունն իրականացնող երկրի ռազմական դատարանի կողմից, սակայն մահապատժի փոխարեն ազատ էին արձակված: «Նեմեսիսը» կանխարգելող կլիներ, եթե իրականացվեր մինչև 1915թ., երբ տարիներ առաջ հայտնի էին Հայոց ցեղասպանության «տեսաբանները», ծրագրողները, քարոզիչները:

Նորագույն զինյալ ազատագրական պայքարը նախ և առաջ կանխարգելող էր:

- «Նեմեսիսի» գործողությունների իրավական հենքը, ներպետական և միջազգային առումներով, այնքան օրինական էր, որ Սողոմոն Թեհլիրյանը արդար ճանաչվեց գերմանական դատարանի կողմից: Իսկ ո՞րն է Նորագույն զինյալ ազատագրական պայքարի իրականացրած գործողությունների իրավական հենքը:

- Ինչպես Նորագույն զինյալ ազատագրական պայքարի ընդհանուր, այնպես էլ ԱՍԱԼԱ-ի յուրաքանչյուր առանձին գործողության օրինականության իրավական հենքը ավելի քան բավարար է, թե՛ միջազգային - իրավական առումով և թե՛ առանձին երկրի ներպետական ու նրա միջպետական հանրագումար - ընդհանրական իրավական դաշտում:

Այսպես, օրինականությունը հաստատող իրավական հիմքերից են.

1. ՄԱԿ-ի Կանոնադրությունն ու, ըստ այդմ, միջազգային հանրության (ՄԱԿ-ի անդամ) բոլոր երկրների որդեգրած համամարդկային նշանակության նպատակներն ու դրանց իրագործման տանող խնդիրները:

2. 1948-ին միջազգային հանրության որդեգրած՝ Ցեղասպանության կանխարգելման և դատապարտման ՄԱԿ-ի Կոնվենցիան:

3. Ցեղասպանության քարոզչությունը զսպելու, այդ թվում՝ ցեղասպանությունը արդարացնելու, կատարված ցեղասպանության իրողությունը կասկածի տակ առնելու կամ մերժելու փորձերը արգելակող ՄԱԿ-ի ընդունած փաստաթղթերը և առանձին երկրների օրենքները:

4. Մարդու բնական՝ կենսաբանական, ազգային, հոգևոր, մշակութային, քաղաքացիական և քաղաքակրթական իրավունքների միջազգային - իրավական հենք հանդիսացող ՄԱԿ-ի 1948-ի Մարդու Իրավունքների Համընդհանուր Հռչակագիրը:

Ինչպես և՝

5. Բռնությամբ տարագրված աշխարհասփյուռ հայության, տանտիրոջ իրավունքով, Հայրենիք՝ Արևմտյան Հայաստան, վերադառնալու և իր տունն ու տեղը, անձնական ու հանրային ունեցվածքը՝ սեփականությունը, հողն ու ջուրը, ազգային հարստությունը վերադարձնելու իրավունքը, ինչպես և իր Մեծ տանը ազատ, անկախ և ինքնիշխան ապրելու բնական և միջազգայնորեն հարգված ու պաշտպանված իրավունքը վերականգնելու օրինականությունը:

6. Մարդկության դեմ կատարված հանցագործություն - ոճրագործության՝ ցեղասպանության, ճանապարհով թալանվածը վերադարձնելու, քանդվածն ու ավերվածը վերականգնելու, նաև բարոյական անհաշվելի վնասների հատուցումը ստանալու միջազգային - իրավական նորմերը:

7. Բռնազավթված երկիրն ազատագրելու, անկախությունն ու ինքնիշխանությունը վերականգնելու նպաստող և արդարադատությունը իրականացնող բնական ու միջազգային - իրավական դաշտի բոլոր ամրագրված ու նախադեպային իրավական հայտնի նորմերը:

Թուրքական կայսրությունից անկախանալու արևմտահայության 19-20-րդ դարերի բնական ձգտման նախադեպի օրինական, իրավունքի կիրառության սկզբունք կարող է հանդիսանալ ԱՄՆ-ի Անկախության Հռչակագիրը:

- Իրավական հենքից զուրկ են.

1. Եվ երիցս անօրինական են ներկայիս չհայտարարվող, սակայն բացահայտ իրականացվող պատերազմները, պատերազմի ժամանակակից՝ դիվային տեխնոլոգիաներն ու դրանցում կիրառվող զանգվածային ոչնչացման՝ քիմիական, կենսաբանական, միջուկային, նեյտրոնային ու ճառագայթային, օդերևութաբանական ու երկրաբանական, հոգեկան և գենետիկական խանգարումներ առաջացնող զենքերն ու զինատեսակները:

2. Ինչպես նաև սահմանադրական - օրենսդրական ներխուժումները, մշակութային՝ գիտության, կրթության և արվեստի, բարու և բարոյականության, հոգևորի ու հավատի, մարդկային ազատության և զարգացումի կեղծ արժեքային շարունակական խափանարարություններ, իբրև թե անկկատ, սակայն, մարդկության որոշակի տեսակներ բնաջնջելու, ցեղասպանություններ իրականացնելու լոկալ և գլոբալ պատերազմները:

3. Հենց միայն խաղաղ բնակչության՝ անպաշտպան կանանց, երեխաների ու ծերերի, ստեղծող և ստեղծագործող մարդու դեմ ժամանակակից ու գերժամանակակից զենքերով հագեցած, բարոյահոգևոր առումով լրիվ վայրենացած կանոնավոր բանակներով, կամ էլ նրանց փոխարինող, այսպես կոչված՝ միջազգային ահաբեկչության ռազմական գործողությունները:

- Ի՞նչ է քարոզում Նորագույն զինյալ ազատագրական պայքարը:

- Նորագույն զինյալ ազատագրական պայքարը չի քարոզում, սովորեցնում է. անհատապես իսկ տեր լինել Հայոց ազգային հարստությանը՝ հայրենիքին, նրա տարածքային ամբողջությանը, ազգային լեզվին, հավատքին, մշակույթին, նախնյաց պատգամներին ու նոր սերունդներին:

Նա սովորեցնում է խումբ առ խումբ, անգամ Վճռական մենակի զգացումով և ինքնակազմակերպումով պատասխանատու լինել ազգի, հայրենիքի և յուրաքանչյուր հայ անհատի համար անձնապես:

- Ինչո՞ւ գաղտնի:

- Գաղտնի, քանի միջազգային իրավական, ռազմաքաղաքական, անգամ քաղաքակրթական՝ հասարակական, մշակութային, լրատվական համակարգը, մեղմ ասած, անկատար է տակավին:

- Ի՞նչ ասել է գաղտնի:

- Գաղտնի ասել է թե՝ ոչ ոք երբեք չպետք է իմանա.

ա) ովքե՞ր են,

բ) որտե՞ղ են,

գ) որքա՞ն են,

դ) ի՞նչ ուժի տեր են,

ե) ե՞րբ, որտե՞ղ և ինչպե՞ս պետք է հարվածեն:

Գաղտնի չեն հարվածն իրականացնելու պահից և պատասխանատու են կատարած արդարադատության իրականացման համար: Հարվածը հայտնի է, դեմ առ դեմ է, երբեք թիկունքից չի լինում, ազնվորեն և ոչ երբեք նվաստացնող, ստոր ու նենգ:

- Ի՞նչ կապ ունեին Ֆրանսիան և բոլոր այն երկրները, որտեղ թուրքական պետական հաստատությունների դեմ իրականացվում էին զինյալ գործողություններ:

- Յուրաքաչյուր երկիր պետք է իմանա, թե հանձին Թուրքիայի ինչպիսի երկրի հետ է բարիդրացիական կամ դիվանագիտական հարաբերություններ կառուցում: Առավել ևս, որ այդ բոլոր երկրները մասնակից են 1948 թվականի Ցեղասպանության կանխարգելման և դատապարտման ՄԱԿ-ի Կոնվենցիային: Հայտնի է՝ չդատապարտված, պատասխանատվության չենթարկված հանցագործությունը ճանապարհ է հարթում նորի համար:

- Ըստ էության, ի՞նչ էր պահանջում Նորագույն զինյալ ազատագրական պայքարն այդ երկրներից:

- Պահանջում էր մի բան. դատապարտել 1915-23թթ. Թուրքիայի՝ մարդկության դեմ կատարած հանցագործությունը, ոչ միայն հայության, այլև աշխարհի բոլոր երկրների և ժողովուրդների համար, դեռ ծրագրման փուլում կանխարգելելու ցեղասպանության տարածման սպառնալիքը:

- Ի՞նչ տարբերություն՝ միջազգային ահաբեկչության ու Նորագույն զինյալ ազատագրական պայքարի ձևերի միջև:

- Միջազգային ահաբեկչությունը տերությունների հատուկ ծառայությունների միջոցով ստեղծված, ֆինանսավորված ու նրանց աշխարհաքաղաքական ագրեսիվ նկրտումները այլ երկրներում իրականացնող հանցագործ կառույցների գործողություններ են: Ահաբեկիչները նենգորեն, դաժանորեն սպանում են խաղաղ, անպաշտպան բնակչությանը, որպես կանոն առանց դրդապատճառների ու պահանջների: Ահաբեկչության պատասխանատվությունը ստանձնում են ինտերնետ կայքերի միջոցով (իրականում հարց է, թե ովքե՞ր են ստանձնում), պահանջները սովորաբար լինում են անհեթեթ:

Անցել են ժամանակները, փոխվել են պատերազմներ վարելու տեխնոլոգիաները: Ժողովուրդները չեն ցանկանում ագրեսիվ զավթողական պատերազմ, սակայն պատրաստ են պաշտպանել սեփական երկիրը օտար նվաճողներից: Ուստի և վերջին տասը տարիներին ահագնացող միջազգային ահաբեկչություն կոչված այս երևույթի բուն դրդապատճառը աշխարհաքաղաքական ագրեսիվ ծրագրեր հետապնդող գերտերություններից ոմանց ու իրենց, ինչպես և զոհ հանդիսացող ժողովուրդների հակադրությունն է: Գործողության ձեռագիրը մարդատյաց է և ավելի քան վտանգավոր՝ մարդկության ապագայի հեռանկարում:

- Ո՞րն է պայքարի վերջակետը՝ ավարտը:

- Ոչ միայն Հայաստանի ամբողջական ազատագրումը, այլև աշխարհի բնականոն համակեցության հաղթանակն ու դրա նվաճումը: Քանզի հայը, ինչպես և յուրաքանչյուր պետություն, չի կարող, թեկուզ ազատ, անկախ, սակայն մեկուսացած ապրել աշխարհում: Դա հակառակ է մարդկային հասարակության բնական օրենքներին, և միմիայն աշխարհի բոլոր երկրների ու ազգերի բնականոն փոխհարաբերությունների կարգավորվածության ու խաղաղ համակեցությամբ է, որ յուրաքանչյուր՝ ամենափոքրաքանակ ժողովուրդ ունեցող պետությունն անգամ ի զորու կլինի իր երկրում բոլորի հետ համաքայլ ապրել ազատ, անկախ ու ինքնիշխան:

Ի դեպ, սա է մեր էպոսի հիմնական գաղափարախոսությունը՝ որպես միջազգային քաղաքական հայեցակարգ:

- Իսկ մինչ ավա՞ղտը...

- Իսկ մինչ այդ Հայոց պետությունը և պետականությունը պետք է պաշտպանվեն թե՛ ներսից, թե՛ դրսից:

- Ո՞ւմ կողմից և ի՞նչ իրավական հենքով է կազմակերպվում պաշտպանությունը:

ա) ներսից՝ Հայաստանի զինված ուժերի կողմից՝ ազգային ավանդույթի, Հայաստանի Մայր Օրենքի՝ Հայաստանի Անկախության Հռչակագրի և սահմանադրական - օրենսդրական - իրավական հիմքով,

բ) ներսից՝ արտաքին ներխուժման վտանգի և ներքին ահաբեկչության սպառնալիքի դեպքում, նաև աշխարհազորի և համայն բնակչության կողմից՝ ազգային ավանդույթի և Հայաստանի Անկախության Հռչակագրի իրավական հենքով,

գ) դրսից՝ Նորագույն զինյալ ազատագրական պայքարի կազմակերպությունների, համանման խմբերի, անգամ

անհատների կողմից՝ հայ անհատի ազգային ծագման իրավունքից ու պարտավորությունից, ազգային ավանդույթի, Հայաստանի Անկախության Հռչակագրի և ՄԱԿ-ի 1948-ի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի և միջազգային իրավական դաշտի հենքով:

- Արդյո՞ք միայն պատերազմով է հնարավոր Հայոց հայրենիքի ամբողջական ազատագրումը:

- Փորձված ուղին դասականն է, սակայն չեն բացառվում ազգային ազատագրական պայքարի նորագույն լուծումները միջազգային իրավական դաշտում:

- Ասել է թե՝ միջազգային հանրությո՞ւնը պետք է պարտադրի Թուրքիային, որ նա վերադարձնի բռնազավթած մեր հայրենիքը:

- Նախ՝ բռնազավթվածը ազատագրվում է ազգային ազատագարական պայքարի միջոցով: Երկրորդ՝ բռնազավթածը դեռ ոչ մեկին չի հաջողվել անվերջ պահել: Աշխարհի և մարդկության բնական զարգացման օրենքների դեմ անզոր են բոլորը: Բացառված չէ, որ պայքարի ընթացքն ու տրամաբանությունը բերեն Թուրքիային այն համոզման, որ հենց իր համար վերադարձնելը շատ ավելի շահեկան է, քան ամեն գնով պահելը:

- Պատասխանատու է արդյո՞ք այժմյան թուրքը իր նախորդ սերունդների կատարած հանցագործությունների համար:

- Այո՛, պատասխանատու է.

1. այնքան ժամանակ, քանի դեռ անհատապես և համահավաք, ամբողջությամբ, նաև պետականորեն չի գիտակցել ու չի զղջացել կատարած հանցագործությունը,
2. քանի դեռ գտնվում է մեր հայրենիքում, շարունակում է օգտվել մեր ազգային հարստությունից՝ հողից, բնական պաշարներից, ազգային պատմամշակութային արժեքներից,
3. քանի դեռ ոչնչացնում է մեր մշակույթը,
4. քանի դեռ կեղծում է թե՛ իր և թե՛ մեր պատմությունը:

- Ի՞նչ ասել է զինյալ պայքար: Ժամանակ առ ժամանակ իրականացվող զինյալ գործողությո՞ւն, թե՞ պատերազմ:

- Նորագույն զինյալ ազգային ազատագրական պայքարը, ըստ էության, մի շարք զինյալ և ոչ զինյալ՝ ռազմաքաղաքական, քաղաքական, իրավական, քաղաքակրթական միջոցառումների ու գործողությունների ամբողջությունն է: Հենց դրանով է տարբերվում դասականից:

- Ասում են՝ պատերազմով է միայն հող հայրենին ազատագրվում, ոչ մի զավթիչ կամավոր չի վերադարձնում այն:

- Հիշենք հայտնի մի ճշմարտություն. ինչպես յուրաքանչյուր զավթիչ, այնպես էլ թուրքը ապրում է մշտական վախի իրողությունում: Սերունդ առ սերունդ ապրում է զավթածը լքելու, հեռանալու ներքին մշտական լարվածության մեջ: Այսօր էլ պատրաստ է հանձնել, երբ տեսնի, որ հայը տեր է իր մեծ տանը՝ հայրենիքին ու լի վճռականությամբ վերադառնում է տուն: Այդպես էր, օրինակ, 1945-ի ամռանը, երբ խորհրդային բանակի հայկական դիվիզիաները, իրենց ողջ գրոհային հզորությամբ և մարտի պատրաստ, կանգնած էին Արաքսի ամբողջ երկայնքով, հարյուրավոր կիլոմետրեր դատարկվել էին... Ասել է թե՝ այն ժամանակ արդեն վերադարձնում էին զավթածը:

Յուրաքանչյուր հանցագործ, լինի դա անհատ, հանցախումբ, ցեղ թե ժողովուրդ, հստակ գիտե, որ վաղ թե ուշ պատասխան է տալու. թեև կարողանում է մեղսագործության զգացումը ինքնախաբեությամբ կասեցնելով ապրել այնքան ժամանակ, քանի դեռ չի տեսնում կամ լսում պատասխանատվության կանչողին, հատուցում պահանջողին:

- Այն ժամանակ, սակայն՝ 1945-ին, ԽՍՀՄ-ի հայկական դիվիզիաներն էին կանգնած Արաքսի ափին:

- Այն ժամանակ էլ, հիմա էլ՝ պահանջատերը հայն է: 1970-ականներից Նորագույն զինյալ ազատագրական պայքարի ամեն մի գործողության արդյունքում թուրքը վերստին ու լրջորեն անհանգստանում էր, երբ կրկին տեսնում էր իրեն պատասխանատվության կանչող, հատուցում պահանջող հային:

- Ո՞րն է հաղթանակի գրավականը:

- Ազգային ազատագրական պայքարը պատերազմ չէ: Շարունակական, հավատով ու վստահությամբ ընթացող վճռական գործողությունների և տեղային ճակատամարտերի ընդհանուր գործընթաց է: Այն հանրագումար արդյունքն է հաղթական ճակատամարտերի:

<u>Ծանոթագրություն</u>

1. Տե՛ս, «Հայկական Հարց», հանրագիտարան, Երևան, 1996թ.:
- Սփյուռք, էջ 422-425:
- Յանիկյան Գուրգեն, էջ 347:
- Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակ (ՀԱՀԳԲ, Armenian Secret Army for the Liberation of Armenia), էջ 209:
- «Հայաստան», պաշտոնաթերթ ՀԱՀԳԲ-ի, էջ 209:
- Հայկական ժողովրդային շարժում (ՀԺՇ), էջ 226:
- Հայկական ցեղասպանության արդարության մարտիկներ (ՀՑԱՄ, Justice Commandoes of the Armenian Genocide), էջ 277-278:
- Հայ նոր դիմադրություն (ՀՆԴ, New Armenian Resistance), էջ 208:

Թոմաս Էդուարդ Լոուրենս (15.08.1888 – 19.05.1935): Անգլիական հետախույզ: Կրթությամբ՝ հնեաբան, արևելագետ: 1914-1919թթ. և 1922-1935թթ. ծառայել է բրիտանական բանակում: 1916-1919թթ.՝ Կահիրեում անգլիական այսպես կոչված, Արաբական գործերի բյուրոյի աշխատակից: Հետախուզական աշխատանք է կատարել Սիրիայում, Պաղեստինում, Արաբիայում և Եգիպտոսում: 1921-1922թթ. եղել է Գաղութների մինիստրությունում արաբական գործերի խորհրդական: 1925-1929թթ. գտնվել է Կարաչիում, Փեշավարում, աֆղանական սահմանում, որտեղ Աֆղանստանի և ԽՍՀՄ-ի նկատմամբ զբաղվել է քայքայիչ գործունեությամբ: Մշակել է Միջին Արևելքի նվաճման ծրագիրն ու գաղափարը, ինչպես և բրիտանական կայսրության կազմում «Առաջին գունավոր դոմինիոնի»[1] ստեղծումը: Կյանքի վերջին տարիներին հարել է անգլիական ֆաշիզմին: Մահացել է ավտովթարից ստացած վերքերից: [2]

ԼՈՒՐԵՆՍ ԱՐԱԲԱՑՈՒ ՀԱՆՁԱԳՈՐԾ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Արաբացու հարցազրույցի մասին

Առաջին աշխարհամարտից առաջ և հետո Մեծ Բրիտանիայի կայսրության արտաքին քաղաքականության տրամաբանությունը, հեռահար նպատակները, դրանք իրագործելու մեթոդներն ու տեխնոլոգիաները ձևավորելու խնդրում մեծ ներդրում ունեցող՝ Լոուրենս Արաբացի կեղծանունով գործող, բրիտանական արտաքին հետախուզության ազդեցիկ պաշտոնյայի սույն հարցազրույց ասվածը, որպես ծրագրային փաստաթուղթ, հետապնդում է երեք հիմնական նպատակ.

1. Անմիջական ազդեցությամբ խոչընդոտել Սևրի Հաշտության կոնֆերանսում արդեն իսկ ընթացքի մեջ դրված Հայկական հարցի մասնակի լուծմանը,

2. Առաջիկա և հետագա հեռահար քայլերով գործողության մեջ դնել միջազգային քաղաքական գործընթացում հայերին լրիվ բնաջնջելու, ընթացքի մեջ գտնվող ցեղասպանությունը ավարտին հասցնելու, Հայկական հարցը՝ որպես այդպիսին, իսպառ վերացնելու խնդիրը: Ինչպես նաև քաղաքական կուրսից չշեղվելու համար՝ հիշեցնելու Արևմուտքի գերտերությունների ղեկավարներին ու բոլշևիկյան Ռուսաստանին, որ՝

3. Այս ամենը, այդ թվում և Համաշխարհային պատերազմը (և պատերազմները), արվել և արվելու են մարդկությունը նորովի ստրկացնելու՝ Համաշխարհային Կառավարություն ստեղծելու համար, որի նախատիպը, ինչպես որոշված է, Մեծ Բրիտանիայի կայսրությունն է: Այլ խնդիր է, որ տասնամյակներ հետո, ինչպես Մեծ Բրիտանիան, նույնպես և բոլոր եվրոպական, ինչպես նաև Մերձավոր Արևելքի ու Աֆրիկայի երկրները՝ որպես նահանգներ, ենթակա կդառնան Համաշխարհային Կառավարություն ասված այդ վերազգային՝ միակենտրոն կառույցին:

Նկատի առնելով դիվային քաղաքականության լուծելիք խնդրի հրատապությունը, որը հնարավորություն չէր տալիս, ավելի շուտ բացառում էր 2-3 ամիս ձգվող «կուլուարային» լոբբինգի (ստվերային՝ ոչ բացահայտ) ձեռագրի օգտագործումը, Արաբացին դիմել է զանգվածային լրատվության միջոցով այն գործի դնելու արևմտյան քաղաքականության մեջ իրագործվող (իբրև թե, ընդամենը, ինչ որ հարցազրույց ներկայացնող) հայտնի մեթոդին: Այս դեպքում շարքային ընթերցողի համար բուն ասելիքը վարպետորեն համակցվում է առաջին պլանում դրված՝ ընթերցողի ուշադրությունը իր վրա գամող նյութի հետ: Ճարպկորեն սարքված այսպիսի խաղի միջոցով ոչ միայն շեղվում է ուշադրությունը, այլև աննկատ կերպով, շատերի հիշողությամ մեջ ամրագրվող արդյունարար իրողությունում ի չիք է դառնում հիմնական ասելիքը: Գերտերությունների քաղաքականությունը իրագործող գործիչները, սակայն, բավականին վարժ են այսօրինակ քաղաքական ուղերձները՝ ասելիքի ամբողջ խորությունն ու բուն անելիքը հստակ, անթերի ընկալելու հարցում: Դրանց էլ հիմնականում ուղղված է Արաբացու սույն «հարցազրույցը»: Տեղական լրատվամիջոցների համար էլ այսօրինակ հրապարակումները ուղեցույց են երկրի որդեգրած հանցագործ պետական կուրսը հանդուրժելի տեսքով ներկայացնելու ջանքերին:

Հաշվի առնելով այս ամենը՝ սույն «հարցազրույցը», ներկայացնում ենք կրճատ, հանելով բուն ասելիքի հետ առնչություն չունեցող բոլոր ավելորդությունները, նյութի գրեթե մեկ երրորդը:

ԱՅԴ ԱՆՏԱՆԵԼԻ ՀԱՅԵՐԸ

(Լինկոլն Սթեֆընսի 1919թ. հարցազրույցը Լոուրենս Արաբացու հետ: Վերահրատարակվել է 1931թ.: [3])

Դա ի՛մ հարցազրույցն էր: Թեև հյուրանոցի իր ապրած սենյակում էր, բայց ինքս էի խնդրել տեսակցությունը, և իմ նպատակն էր այդ կայսերական հետախույզից մի բան իմանալ Փոքր Ասիային և Մերձավոր Արևելքին վերաբերող գործնական քաղաքականության մասին: Սկզբում կարծում էի, թե ինքս էի վարում խոսակցության ընթացքը: Հետո միայն, մի տեսակ ցնցվելով կռահեցի, որ նա էլ մի նպատակ էր ունեցել, և որ այդ նպատակն էր՝ իմ ուղեղը լցնել հայերի վրա ամերիկյան մանդատ հաստատելու վերաբերյալ բրիտանական պրոպագանդով: Ահա այդ էր, որ կռահեցի: Ուրիշ բաներ էլ: Ես՝ սկզբունքներով անկախ անհատս, շշմել էի և բավական նվաստացած էի զգում ինձ՝ ինչո՞ւ մենք՝ ամերիկացիներս, պետք է աշխարհի մյուս կեսը գնանք հայերին հոգալու, և ոչ միայն նրանց փրկելու թուրքերից, հույներից, ֆրանսիացիներից, իտալացիներից, բրիտանացիներից և հենց իրենցից էլ, այլև, մի տեսակ, ինքներս էլ մեզնից և նրանցից փրկելու:

Արաբացի - ...հայերը «մարդկային անտանելիության վերջնական խոսքն են»: Որպես ցեղ՝ ակադեմիական բանավեճում նրանք համանման են «վերջին մարդուն»[4]:

Սթեֆընս - Ես այնպես եզրակացրի, որ **նա մի անասելի հակակրանք ունի հայերի հանդեպ[5], կամ էլ, ավելի ճիշտ այսպես ասեմ՝ նրանց վերաբերյալ ունի մի այնպիսի իմացություն[6] կամ փորձառություն, որ նրան թույլ է տալիս մարդկայնորեն հասկանալ թուրքերին և հայերի բոլոր մերձավոր հարևաններին, որոնք երբևէ ջանացել են ոչնչացնել այդ որբ ցեղը:** ...նրա մտքինն այն էր, որ դա հայերի հանդեպ անելիք միակ բանն է: ...հայերը պետք է ամբողջությամբ ոչնչացվեն[7]: ...դա է հայկական հարցի միակ լուծումը[8], և թե այդ պատճառով էր ցանկանում, որ ամերիկացիներս մեզ վրա վերցնենք **այդ գործը[9]:**

Արաբացի - ...թուրքերը չպետք է անեն **այդ գործը[10].** նրանք չափազանց պրիմիտիվ են և քրիստոնյա չեն: Ոչ էլ

հույները[11]. սրանք էլ շատ են հաճույք զգում դրանից և արդյունավետ չեն. երբեք որևէ բան մինչև վերջ չեն հասցնում...:

Սթեֆընս - Նա ինձ վրա ոտից գլուխ տարածեց իր մալթուսական հուսահատությունը և մի այնպիսի սարսափ հայերից, որ քիչ մնաց կուլ տայի իր ամբողջ որոգայթը ամերիկա-հայկական մանդատի[12] վերաբերյալ...:

Սթեֆընս - Բայց ինչո՞ւ հենց բրիտանացիներն էլ չանեն **այդ գործը[13],** ...

Արաբացի - Հայերի լիակատար կոտորածը, կարող է սկանդալ դառնալ, եթե դա բրիտանացիներն անեն, ...թեպետ Բրիտանական կայսրությունը դիմացավ որոշ այդպիսի ցնցումների և պետք է, անշուշտ, դիմանա ուրիշ ցնցումների ևս, բայց չափից ավելին, հենց ա՛յս ժամանակ, կարող է սասանել կայսրությունը: Իսկ կայսրությունը, հենց ա՛յս օրերին, չպետք է սասանվի անհարկիորեն[14]: **Բրիտանական կայսրությունը համաշխարհային կառավարման նախատիպն է**: Մեր բոլոր մեծ տագնապները՝ պատերազմներ, հեղափոխություններ, գործադուլեր, համաճարակներ և այլն, հետևանք են այն իրողության, որ **երկրագունդը թեև ամբողջություն է, բայց չի կառավարվում որպես ամբողջություն[15]:** Բրիտանացիները մի օր պիտի վերջ տան այս անհիշխանականությանը: Բայց կայսրությունը երիտասարդ է տակավին և հարաբերաբար փոքր, թույլ և գերծանրաբեռնված: Հաշվի առեք մայր կղզիները, գաղութային ռազմավարական կետերը, ծովերը և առևտրական ճանապարհները, բոլոր այն նոր ծանրություններն ու պատասխանատվությունները, որ Բրիտանական կայսրության ուսերին ընկան գերմանական իմպերիալիզմի պարտությամբ: Ո՛չ: Բրիտանական կայսրությանը պետք է խնայել առայժմ: Հետագայում, երբ, այսպես ասած, ծովերի ազատությունը ցամաք հանվի, և երբ բրիտանական իշխանությունն ալիքներից տարածվի ցամաքի վրա, բոլո՛ր ցամաքների, ապա Մեծն Բրիտանիան կկարողանա, և պետք է կարողանա ուրախությամբ ընդառաջ գնալ հաղթահարելու մի այնպիսի ցնցում, որ ես (նա հենց այդպես էլ ասաց՝ «ես») առաջարկում էի Հայաստանում[16]: Բայց ո՛չ դեռ, ո՛չ այժմ: Ո՛չ կայսրության դեռ մանուկ հասակին:

Արաբացի - Բացի այդ, բրիտանական իմպերիալիզմն այս փուլում շահագրգռված է ավելի բնական հարստություններով, քան ժողովուրդներով[17]՝ որպես այդպիսիք: Անգլիացիները գործնական մարդիկ են, ո՛չ իդեալիստներ, հասկանո՞ւմ եք: Նրանք գիտակցում են, որ **համաշխարհային մի կառավարություն պետք է հիմնվի**, բայց **ոչ թե** «ձեր» **Ազգերի լիգայի[18]** նման՝ գաղափարների և իդեալների, սկզբունքների և ժողովուրդների վրա, այլ շոշափելի բաների՝ նավթի, հանքանյութի, օդային տարածության, ծովերի:

Սթեֆընս - Բայց, հարուստ հողեր և շահավետ հանքավայրեր կան Հայաստանում:

Արաբացի - ...Հայաստանը[19] պետք է բաժանման ենթարկվի[20]: **Բուն երկիրը, ուր բնական հարստություններն են, պետք է անջատվի առաջամասից, ուր ոչինչ չկա բացի հայերից[21]:** Ամերիկյան մանդատը պետք է լոկ հայերի վրա լինի[22]: Մի ուրիշ դաշնակից, ոչ թե բրիտանացիք, այլ մի ուրիշ՝ հավասարաչափ գործնական տերություն պետք է ստանա Հայաստանը:

Սթեֆընս - Բայց ի՞նչ օգուտ մի երկրի բնական հարստություններից առանց այն ժողովրդի, որ պետք է մշակի դրանք: Հանքերը, նավթի պաշարները, բերրի հողերը, մի խոսքով՝ բնական հարստությունները, ոչ մի օգուտ չեն տա կապիտալիզմ՝ առանց այն աշխատուժի, որ պետք է փորի ու զարգացնի դրանք: Եվ մի երկրի բնիկներն ամենաբնական աշխատուժն են դրա համար, ամենաէժանը, ամենահնազանդը, ամենաքիչ կազմակերպվածը, լավագույնը:

Սթեֆընս - Լսում էր ինձ, ուստի իրար ետևից օրինակներ էի բերում ամերիկյան, ինչպես նաև բրիտանական գաղութներից՝ նրան ցույց տալու համար, որ սխալ է անջատել մի երկրի ժողովրդին այդ երկրի բնական հարստություններից: Պետք է միասին օգտագործվեն դրանք, միասին զարգացվեն, և այդպես էլ արվում է սովորաբար: Չկա ուրիշ ճանապարհ: Նկարագրեցի թուրքերի կամ ֆրանսիացի դրամատերերի կամ որևէ չաշխատող ժողովրդի անօգնականությունը, երբ կջանան օգտագործել Հայաստանի հարստությունները: Այսպես պերճախոսում էի, ու մի պահ թվաց՝ բավականին հաջող: Ես կոչ եմ անում ոչ թե գաղափարապաշտորեն, ոչ թե **«Հայաստա՛նը հայերի համար»,** այլ գործնականորեն՝ **«Հայե՛ր Հայաստանի համար»:**

Արաբացի - Որևէ գիտակից անգլիացի կարող է հասկանալ որևէ անգիտակից ամերիկացու[23]:

Սթեֆընս - Եթե ամերիկացիներս հանձն առնենք հայերին, նրանց իսկ օգտի համար կանենք այդ բանը: Նրանց կկառավարենք միշտ էլ այն գաղափարով, որ նրանց ընդունակ դարձնենք իրենք իրենց կառավարելու:

Արաբացի - Այո, այո, մենք հասկանում ենք այդ բոլորը:

Սթեֆընս - Լավ, ուրեմն պետք է դրանում տեսնեք նաև հենց այդ նպատակը. որպեսզի հայերին ընդունակ դարձնենք իրենք իրենց կառավարելու, պետք է աշխատեցնենք նրանց: Ու քանի որ չես կարող մի ժողովուրդ աշխատեցնել առանց մի այնպիսի բանի, որի վրա աշխատեցնես, մենք կարիքը կունենանք Հայաստանի հողերի և հանքերի: Ոչ թե հարստությունները կորզելու համար նրանցից, այլ օգտագործելու որպես ուսումնադաշտ, ուր ժողովրդին վարժեցնենք աշխատասիրության, խնայասիրության և... բոլոր այն քրիստոնեական առաքինություններին, որոնց միջոցով նրանց դարձնենք լավ մարդիկ և լավ քաղաքացիներ[24]:

Արաբացի - Խնայասիրությունը չի պակասում հայերին, և անշուշտ գիտեք, որ քրիստոնյաներ են նրանք, **երդվյալ քրիստոնյաներ:**

Սթեֆընս - Իհարկե գիտեի: Պարզապես, ոգևորությանս մեջ, մի պահ մոռացել էի այդ բանը: ...Բայց, հայերը պետք է աշխատեն: Դա՛ է հաջողության գաղտնիքը, լինի անհատի, լինի ազգի համար՝ աշխատանք, համառ, եռանդուն աշխատանք: Եվ հայերը պե՛տք է ունենան Հայաստանը՝ դրա վրա աշխատելու համար:

Արաբացի - Հայերը չեն աշխատելու, Դա՛ է ցավոտ կետը ձեր ծրագրում, դա՛ է հայերի էլ ցավոտ կետը: Ճիշտն ասած, դա է ցավոտ կետը բոլոր այս հին ցեղերի, որոնք եղել են քաղաքակիրթ, սովորել են խաղը և, մի ժամանակ տիրած լինելով աշխարհին և աշխատեցրած, կորցրել են իշխանությունը և այլասերել, ինչպես դուք եք ասում: Կամ էլ, ինչպես ես եմ ասում, շարունակել են, առաջ են գնացել՝ տրամաբանականորեն, հոգեբանորեն, բնախոսականորեն: Նրանք չեն սիրում համառ, եռանդուն աշխատել: Դա է, որ նրանց տարբերում է այն երեխայանման իսկապես հետամնաց ժողովուրդներից որոնց հետ գործ եք ունեցել ամերիկացիներդ: Նախնական ժողովուրդները պարզապես ծույլ են[25]: Նրանց կարելի է ստիպել աշխատելու, զարգանալու, նրանց հնարավոր է շահագործել, եթե ուզում եք: Մի որոշ հույս կա նրանց համար, մի որոշ օգուտ նրանցից: Իսկ այս առաջադեմ ժողովուրդները, երբեմնի քաղաքակիրթ ազգերը ծույլ չեն: Նրանք չափից ավելի խելացի են ուրիշների օգտին աշխատելու համար: Իրենք իսկ շահագործողներ են՝ բնազդական, բնածին, անուղղելի, անհուսալի շահագործողներ: **Բոլոր ազգերը բաղկացած են զարգացող մարդկանցից, նրանք մարդ են աճեցնում: Նրանք խոսում**

են իրենց երկրները զարգացնելու մասին, բայց հակառակն է. նրանց երկրներն են զարգացնում իրենց: Իսկ հին ազգերը ցույց են տալիս մարդկանց այն տեսակը, որ այժմ նոր ազգերը կազմավորում են իրենց մոտ: Այս հին ժողովուրդները բնաշրջության արդյունք են: Դուք կարող եք Միջերկրականի ափերին տեսնել այն տիպը, որ ինքներդ այժմ ընտրասերում, աճեցնում, բնաշրջում եք ձեր հայրենիքում: **Հին ցեղերից նրանք, որ այստեղ ապրում են դեռ, վերապրածներն են մի քաղաքակրթության, որ բնույթով առևտրական էր, ինչպես ձերը:**

Սթեֆընս - Մերը,- ուղղեցի ես, անգլիացիներին էլ մտցնելու համար խնդրի մեջ: Նա ուղղակի վրա տվեց:

Արաբացի - Դուք՝ նոր ազգերդ պետք է սովորեք հին ժողովուրդների օրինակի վրա,- կրկնեց նա,- որ **նախկին մեծ ու նախկին հռչակավոր ազգերի արդի ներկայացուցիչները բնական և անխուսափելի արդյունքն են արհեստական այն ընտրասերման, որը կատարվել է մի այնպիսի հասարակության մեջ, որը բանտարկում է քաջերին, արտաքսում ինքնատիպներին, ճնշում զանգվածին, խեղդում է ցեղի միջին մակարդակից ցանկացած տարբերություն և պաշտամունքացնում հեզին, միջակին, խորամանկին, նրբամիտին ու խնայասերին, որովհետև սրանք առևտրական առումով պիտանի են:** Արդի հույներն ուղղակի ժառանգներն են հելլենների, և իրենց տհաճ հատկանիշներն այն տևական գծերն են, որ ծագում են հին հունական մշակույթից, ինչպես իրականում կենսագործում էին հին հույները: Ոչ այնպես, ինչպես մեծ, բացառիկ հույները խոսում, երգում ու կերտում էին այդ մշակույթը, այլ հենց այնպես, ինչպես միջին հույները կենսագործում էին գործարարությամբ, ուզում եմ ասել՝ այն հույները, որոնք Սոկրատեսին մահվան դատապարտեցին: Արդի եգիպտացիները, ինչպիսիք ժառանգել ենք բրիտանացիներս, եգիպտական մշակույթի ամենահեռո՞ւ - հեռավոր փոքր ծռոներն են, իրենց ապուպապերի երեխայանման աշխատանքով այնքան գեղեցկորեն կերտված Սֆինքսի հանելուկին ուշացած պատասխանը: **Այսօրվա արաբը** հին, փառավոր Արաբիայի արվեստներից, բարքերից, գործարարությունից զուրկ է. նա **անապատի փոշին է...**[26]

Արաբացի - Հնադարյան հույները, նաև եգիպտացիները, սիրիացիները, վերջապես թուրքերը և մյուսները՝ նրանք էլ իրենց հանճարներն ունեին[27], իրենց բանաստեղծներն ու արվեստագետները, իրենց զորավարները, որոնք հետամնաց ժողովուրդներ էին նվաճում, ունեին իրենց արդյունաբերական ղեկավարները, որոնք աշխատանքով էին ապահովում, իրենց սեփական աշխատուժն էլ ունեին: Բայց ընտրասերյալները, ազնվապետությունները, հարստապետությունները չհարատևեցին: Նրանց հետնորդները ժառանգորդներ չեղան, չվերապրեցին նույնիսկ: Հաջողակների, հարուստների, հզորների, առանձնաշնորհյալների զավակները գրողի ծոցը գնացին, և նույնը լինելու է ձեզ մոտ: Եվ աշխատուժի էլ հաջորդական սերունդները, աշխատանքով գերծանրաբեռնված, թերսնված, վհատված և խիստ կարգ-կանոնի ենթարկված, բուռ ստրուկների վերածված, մեռան կամ ոչնչացվեցին: Պարզվեց ու պարզվում է, որ **միջին դասակարգն է ունակ վերապրելու** այդ կերպ կազմակերպված հասարակության մեջ, այդ **ստոր միջին դասակարգը**[28]**:** Ուստի ամբողջ հին աշխարհն այժմ տեսնում եք, փաստորեն, միայն բիզնեսմեններով բնակված, մանր բիզնեսմեններով՝ վաճառականներ, առևտրականներ, խանութպաններ, վաշխառուներ, փերեզակներ, ոչ արտադրողներ: Նրանք զբաղված են գնել-ծախելով, ու սերված լինելով գնող-ծախողներից, առևտրական մրցակցության բազում սերունդների միջով ընտրասերվելով՝ նրանք լավ գնող-ծախողներ են: Կարող են գնալ աշխարհում որևէ տեղ առևտուր անելու, բայց ոչ ստեղծելու, ոչ կազմակերպելու, կառուցելու, ծրագրելու և աշխատելու: Նրանց այն եղբայրները, որոնք այս բաներն էին անում, անզավակ մեռյալներ են: Ոչ, միայն ամենազուտ, ամենախորամանկ առևտրականներն են ապրում, և նրա՛նց ենք գտնում ամեն տեղ, նրանք սողոսկում-թափանցում են ամենուր: Մեր գաղութներում՝ Հարավային Ամերիկայում, ես հանդիպել եմ արաբների, որոնք փերեզակություն են անում, առևտուր են անում, հարստանում են: Իսկ ինչ վերաբերում է սիրիացիներին, հույներին, հայերին...

Սթեֆընս - Եվ հրեաներին: Անտեսեց:

Արաբացի - Իմ այս հին ժողովուրդները, կգնան ցանկացած տեղ, ուր աշխատավորներ կան աշխատեցնելու, խորամանկորեն կխիզախեն՝ հեզորեն տառապելով, դրամ խնայելով, **գործ անելով:** Այո՛, նրանք **գործ** են անում: **Այնպես են գործ անում, որ աշխատավորն այդպես չի աշխատի:** Այնպես են գործ անում, ինչպես բիզնեսմենը միայն կանի՝ հարատևորեն, համառորեն, մնալով հենց միայն շահի նեղ լուսանցքում: Բայց,- շեշտեց նա,- չե՛ն աշխատի նրանք: Չե՛ն կարող: Չեն կարող հասկանալ «աշխատավարձի համար աշխատելու» դրույթը: Դա բնազդ է նրանց մեջ, մի գիծ, մի ուշիմություն, որ զարգացվել է հաջողված ընտրասերումով, ինչպես որսորդության ուրույն գծեր ենք զարգացնում որսկան շների այս կամ այն ցեղի մեջ: **Նրանք իրենց արյան մեջ իսկ գիտեն, որ աշխատավարձով, նույնիսկ բարձր աշխատավարձով աշխատելն անօգուտ է, եթե ուզում ես հաջողության հասնել ու հարստանալ:** Ոչինչ չկա, ոչինչ չի կարող լինել աշխատավարձի որևէ հնարավոր բարձրության մեջ՝ ոչ շահույթ, ոչ դրամագլուխ, ոչ բաղադրյալ առաջատվություն: Նրանք չեն էլ խոսում դրա մասին, դա շատ ակնհայտ է նրանց համար, դա նրանց կյանքն է: **Նրանք խելոք են, ինչպես հին մի ցեղ կարող է խելոք լինել՝ որսալու խաղին պատրաստ:** Քոթոթի իրենց աչքերը բանալու պահից արդեն տեսնում են արարող աշխատանքի անհեթեթությունը: **Անելիքը՝ միայն դիտել ու սպասելն է մինչև հարստությունն արտադրվի, ու հետո, մի կերպ, արտադրողից այն ձեռք բերելը:** Եվ նրանք գիտեն՝ ինչ կերպ անեն այդ բանը, ինչպես կենդանին գիտե իր կենդանական գործը և բույսն էլ գիտե իր բուսական գործը՝ բնազդով: **Ուստի կզբաղվեն բժշկությամբ, իրավաբանությամբ, որևէ այլ մասնագիտությամբ էլ, որ բիզնեսի նման ձեռք է բերում այս կամ այն շահաբաժինը հասարակական ընդհանուր հարստության ավարտված, վերջնական, դրոշմված ձևից, երբ հասարակ ժողովուրդն արդեն ստեղծել է այդ հարստությունը:** Իսկ դուրս գալ ու ճակատի քրտինքով արդյունահանել երկրի հումքը և մշակելով վերածել շուկայական ապրանքների՝ ոչ: **Հին ժողովուրդները չեն հանդուրժում անել այդ բանը, իսկ ինչ վերաբերում է ձեր հայերին՝ նրանք պարզապես չե՛ն անի:**

Սթեֆընս - Լռեց մի պահ,

Արաբացի - **Հայերը ամենախելացի, ամենակատարյալ ընտրասերված, ամենաբարձր զարգացած ցեղն են աշխարհում՝ քաղաքակրթվածության տեսակետից**[29]**:**

Սթեֆընս - Ես կրկին տվի իմ թեկնածուի անունը:

Արաբացի - Հրեանե՞րը: Առաջ էլ ասացիք նրանց մասին, և ես գոհ զգացի: Դա ցույց տվեց, որ գեթ մի նշույլ ընկալում եք հին ցեղերի մասին իմ ասել ուզածից: Քիչ ճամփաներ անցած մարդու համար հրեաներն ամենածանոթ օրինակն են հին, խորաթափանց, խելացի ժողովրդի, և այո՛, նրանք բնազդորեն շահագործողներ են: Նրանք հակված են վաշխառության: Բայց նրանք կաշխատեն: Չեն հանդուրժում, բայց կարելի է նրանց աշխատեցնել: Եվ ավելի վատ, որ նրանք ստեղծագործող էլ են, հնարամիտ

ու սենտիմենտալ: Նրանց մեջ դեռ կան արվեստագետներ, փիլիսոփաներ, մարգարեներ: Անկատար են նրանք: Քաղաքակրթության անավարտ մի արդյունքն են, կիսատ մնացած: Ես հասկանում եմ, թե ինչու իրենց հանդեպ վախ ու ատելություն են հարուցում նրանք. ունեն ցեղային տարեցության որոշ իմացական գերազանցություն: Բայց անհեթեթ է նրանց նույն ոգով դասել այն հին ժողովուրդների հետ, որոնց մասին խոսում եմ: Չէ՞ որ իմ հին ցեղերն իրենց երկրից դուրս են քշել ձեր այդ հրեաներին կամ չեն թողել, որ **գործ անեն** իրենց մոտ: Նրանք չեն կարող ապրել արաբների, սիրիացիների, եգիպտացիների վզին: Իրենց լավ են զգում Անգլիայում, հարստանում են Ֆրանսիայում ու Գերմանիայում և անշուշտ՝ Միացյալ Նահանգներում. այո՛, այո՛, նրա՛նք: Բայց չինացիները, օրինակ, չինացիները կուլ են տալիս հրեաներին, ինչպես կետ ձուկը փոքր ձկներին: Մեր շոտլանդացիները ողջ-ողջ քերթում են նրանց: Այդպես են անում արաբներն էլ, թուրքերը, հույները, իսկ ինչ վերաբերում է հայերին...

Սթեֆընս - Շունչ քաշելով, շարունակեց.

Արաբացի - **Հրեաներն իրենք այնպես են զգում հայերի հանդեպ, ինչպես հակասեմական եվրոպացիները հրեաների հանդեպ են զգում**[30]. ...Հայերն ունեն հրեաների բոլոր հատկանիշները, առավել՝ բոլոր մյուս ցեղերի էլ բոլոր հատկանիշները, և բացի այդ՝ քրիստոնյաներ են:

Սթեֆընս - Կանգ առավ, ...կարծես խուսափում էր իր եզրակացությունն ասելուց, նախընտրելով ինձ ստիպել, որ ինքս բռնեմ իր եզրակացությունը, քան թե իր բերանից մեջբերեմ: Ու քանի որ խայծը չէի կլլել, նա շարունակեց՝ ևս մի պատեհություն տալու ինձ:

Արաբացի - **Հայերը, չպետք է ունենան Հայաստանը**, բուն երկիրը[31]: Իրենք չեն աշխատի, որ մշակեն երկիրը, նույնիսկ ոչ իսկ հոգուտ իրենց: **Ուզում են այդ հողերը, այո, բայց միայն սեփականատերը լինելու համար:** Մինչև իսկ զարգացման գործը կազմակերպելու համար չեն աշխատի նրանք: Արտոնագրությամբ վարձու կտան ուրիշներին՝ գործը վարելու: Նրանք ուզում են ապրել ծովեզրին, քաղաքներում՝ ի հաշիվ ստացած վարձի շահույթի, շահաբաժինների, արժեթղթեր առնել-ծախելով ձեռք բերված շահի և դրամագլխով ու աշխատուժի կիրառմամբ վաստակված դրամի:

Սթեֆընս - Շատ մարդիկ կան այդպես: Միայն հայերը չեն:

Արաբացի - Տեսնում եմ, որ դուք դեռ չեք ըմբռնում բուն խնդիրը: Իրոք, ուրիշներ էլ կան, որ կուզենային այդպես անել: Ֆրանսիական բուրժուազիան այդ ուղղությամբ է շարժվում, ու մեր անգլիացիներն էլ գալիս են դրան, մանավանդ մեր այսպես կոչված բարձր դասի այն դժգոհները, որոնք գնում են գաղութներ կառավարելու, բայց ինքնամփոփվում են՝ իրենց համար «Փոքր Անգլիա» ստեղծելով տեղում: Նրանք կուզենային ոչինչ չանել, բայց չեն կարող: Անվնաս են նրանք: Կուզենային ոչինչ չանել, բայց ծախսել: Ու ծախսում են իրոք, հասկանո՞ւմ եք: Նույնիսկ ձեր հրեաները ծախսող են, սքանչելի ծախսող: Բայց ձեր այդ հայերը ոչինչ չեն անի ու չեն էլ ծախսի: Ձեռք են բերում ու խնայում: Վաճառում են, բայց միայն կրկին գնելու և ավելի ու ավելի ձեռք բերելու համար: Դարերով բնաշրջություն է պետք՝ իսկական առևտրական ոգու այդպիսի կատարելություն զարգացնելու համար, իսկ բնաշրջությունն աստիճան առ աստիճան զարգացման խնդիր է: Ու **հայերն ամենաբարձր աստիճանին են հասել: Ասում եմ ձեզ, որ եթե հայերին առիթ տրվի մի կարգին թռիչք առնելու աշխարհում, եթե նրանք ազատ իշխանություն ձեռք բերեն երկրագնդի որևէ անկյունում**[32], **ամբողջ մոլորակի տերը կդառնան և կաշխատեցնեն մնացյալ ամբողջ մարդկությանը: Ա՛յդ է, որ գիտեն թուրքերը և սարսափում են, և հույներն էլ և... մենք բոլորս, որ գիտենք նրանց: Ուրեմն...**

Սթեֆընս - Ուրեմն... - ասացի:

Արաբացի - Ուրեմն, պետք է բաժանենք նրանց՝ **Հայաստանի վրա մի մանդատ**[33]**, հայերի վրա՝ ուրիշ մանդատ:**

Սթեֆընս - Ուրեմն, դուք ուզում եք, որ Հայաստանը տրվի ձեր մի դաշնակցին, բրիտանական կապիտալի մի գործակցին, իսկ հայերը տրվեն մեզ՝ ամերիկացիներիս: Շատ լավ: Երկու հարց է ծագում: Ձեր դաշնակիցը ի՞նչ կարող է անել Հայաստանում առանց աշխատուժի: Ու վերջապես ի՞նչ կարող ենք անել ամերիկացիներս հայերի հետ առանց Հայաստանի:

Արաբացի - Օ՜, ուրիշ ժողովուրդներ կան Բալկաններում, Փոքր Ասիայում, Հնդկաստանում և Աֆրիկայում, հետամնաց ազգեր, իսկապես հետամնաց ազգեր, որոնք աշխատուժ կարող են լինել: Նրանց կարելի է բերել Հայաստան և աշխատանքի լծել: Աշխատուժի պակաս չկա[34]:

Սթեֆընս - Ուրեմն դա կլուծի բրիտանական, գործնական խնդիրը,- ասացի: - Գանք իդեալիստական՝ ամերիկյան խնդրին: Ի՞նչ պետք է անենք հայերի հետ:

Արաբացի - ...ասիական աշխատուժի ու եվրոպական կապիտալի համար վտանգավոր է հայերի ներկայությունը որևէ այնպիսի վայրի մոտ, ուր հանքեր ու հողեր են մշակվում[35]:

Սթեֆընս - Մի ստվեր անցավ աչքերում, բայց ոչ ձայնի մեջ: Կրկին զվարթորեն խոսեց «ամերիկյան իդեալիզմի» մասին...: Բայց այս անգամ մի քիչ փոխեց երգի բանալին: Երիտասարդ կոչեց ամերիկացիներիս, ասաց, որ մենք դեռ անփորձ ենք ուրիշ, ավելի հին ցեղեր ղեկավարելու մեջ: Եվ ուրեմն, անտարակույս, հակված ենք խստորեն դատելու բրիտանացիների և այլ գործնական կառավարիչների գաղութային վարմունքը, որոնց ամենախղճմիտ գործակալն անգամ երբեմն անհրաժեշտ էր գտնում սպանել կամ ուրիշ կերպ Աստծո վախը ներշնչել ենթակա մի ժողովրդի փոքրամասնությանը՝ մեծամասնության ընդհանուր շահի և ներդրված կապիտալի ապահովության համար:

Արաբացի - Դուք չեք գիտակցում, թե որքան դժվար ու նրբին խնդիր է մի տարօրինակ, մի օտար ժողովուրդ կառավարելը:

Սթեֆընս - Սխալվում եք,- ջղագրգռված ասացի ես ու կրկնեցի մեղադրանքս, թե նա չգիտե մեզ: - Դուք նույնքան անտեղյակ եք իմ ժողովրդի մասին,- հայտարարեցի,- որքան ասում եք, որ մենք ենք անտեղյակ եվրոպացիների, թուրքերի, հայերի և մյուսների մասին:

Ի ցույց բերեցի Ֆիլիպինները, Կուբան, Սանդվիչյան կղզիները, բոլոր այն օտար երկրները, որ կառավարում ենք հաջողությամբ: Ու հիշեցրի նրան, որ ամեն տեսակ օտարականներ ունենք հենց մե՛ր մեջ: Առանց պատճառի չէ, որ Միացյալ Նահանգները ձուլարան են կոչել: Ինչ օտարականներ ասես չունենք այնտեղ: Նույնիսկ նրա հայերին ենք աշխատեցրել: Պնդեցի, որ մենք էլ մեր դժվար գործն ենք արել, ինչպես որևէ կառավարություն երկրագնդի երեսին՝ չբացառելով բրիտանացիներին էլ: Եվ համոզելու համար նրան, որ մենք գործնական ենք, պատմեցի, թե տեսել եմ՝ ինչ է արվել օտար աշխատուժի նկատմամբ մեր Նոր Անգլիա նահանգներում, հարավային նահանգներում, մեր արևմուտքում և ամենուրեք: Բայց պատահեց, որ հիշատակեցի նաև մեր սեփական բնիկներին՝ ամերիկյան հնդկացիներին:

Հենց դրա վրա էլ նա ուղղակի վեր թռավ:

Արաբացի - Ա՛յդ է ահա,- գոչեց: - Ա՛յդ էր իմ մտքում ամ-

բողջ ժամանակ: Ձեր հնդկացիների հանդեպ ձեր քաղաքականությունն այն է, ինչ պետք է հայերի հանդեպ:

Սթեֆընս - Անակնկալի եկա, շշմեցի: Հարցրի, թե իր կարծիքով ի՞նչ է եղել մեր քաղաքականությունը հնդկացիների հանդեպ:

Արաբացի - …ոչնչացրել եք նրանց բոլորին էլ… բո՛ւ-լո՛-ռի՛ն: Այնպես չէ՞:

Սթեֆընս - Այդպես, ուրեմն, դուք մտածում եք՝ ա՛յդ է, որ պետք է հայերին անենք…, պետք է ոչնչացնենք նրանց բոլորին էլ, գլխովին:

Արաբացի - Ոչ, ոչ, ոչ: Ինչպե՞ս եք դուք՝ լրագրողներդ սխալ հասկանում և սխալ մեջբերում:

Սթեֆընս - Բոլորովին էլ չէր ուզում ասել, թե մենք պետք է կոտորածն ընդունենք որպես քաղաքականություն:

Սթեֆընս - Դե լավ, ի՞նչ էր ուզում ասել, ուրեմն: Ի՞նչ պետք է անենք: Ձասաց: …Բայց ի վերջո հասկացա: Պետք է ինքս ասեի իր ասել ուզածը, երևի ա՞յդ էր ճիշտը: Ձուղղեց ինձ:

Որոշակիորեն ու հստակորեն չէր ուզում ասել, թե մենք պետք է գիտակցորեն ու մտածված կերպով գնանք բնաջնջելու հայերին: Բոլորովին ոչ: **Պարզապես հույս ուներ կամ հավատում էր, որ ուրիշ ամեն ինչ փորձելուց հետո՝ մենք պետք է հարցը վերջացնենք այդ բանն անելով: Ու նաև հիմնավոր անելով: Ձթողնելով ոչ մի Ադամ ու Եվա, որ չշարունակեն Կայեն աճեցնել…**

Սթեֆընս - Բայց դա սկանդալ չի՞ դառնա:

Արաբացի - Կարծում եմ՝ ոչ: Դուք այնքան գաղափարապաշտ եք և այնպիսի համբավ եք վայելում ձեր մարդասիրության համար, որ թվում է՝ ի զորու եք որևէ բան անելու բանականության սահմաններում՝ առանց կորցնելու ձեր իդեալիզմը կամ ձեր բարի անունը:

Արաբացի - Հնդկացիների հանդեպ ձեր քաղաքականության մեջ խայտառակություն չկար, այնպես չէ՞: Ու երբեք էլ չեք դադարել մտածելուց, թե ձեր արածը ճիշտ էր, այո՞: Նվաճել եք Մեքսիկայի մի մասը, գրավել Հավայան կղզիները, զենքի ուժով Իսպանիայից խլել եք Ֆիլիպինները և Պուերտո Ռիկոն, ազատագրել եք Կուբան և գրավ եք դրել դրա վրա, գնել եք Դանիական կղզիները, ձեր ծովային հետևակազորը ափ եք հանել Կենտրոնական Ամերիկայում և զորքը մոռացել այնտեղ: Շուտով ստիպված եք լինելու վերականգնել կարգ ու կանոնը միացյալ Մեքսիկայում: Եվ սակայն, դուք դեռ կողմ եք փոքր ազգերի ինքնորոշմանը[36]: Դուք փոքր կայսրություն եք, իսկ մեզ զգուշացրել եք ձեր Մոնրոյի դոկտրինով, որ երբ պատրաստ լինեք՝ մեծ կայսրություն եք դառնալու: Եվ սակայն դուք հակաիմպերիալիստներ եք: Հենց նոր պատերազմ մղեցիք գերմանական իմպերիալիզմի դեմ, և…

Սթեֆընս - Դուք էլ:

Արաբացի - Օ՜հ, դա տարբեր է: Մենք իմպերիալիստներ ենք: Մենք մեզ անկեղծորեն կայսրություն ենք կոչում և պարկեշտորեն կռվեցինք մեր կայսրության համար գերմանացու կայսրության դեմ: Իսկ դուք՝ դուք կռվեցիք կայսրության դեմ **հօգուտ ինքնորոշման**: Ես կարծում եմ, որ դուք՝ ամերիկացիներդ կարող եք որևէ բան անել ու տարակուսանքի չենթարկվել ո՛չ աշխարհի, ո՛չ էլ ինքներդ ձեր կողմից: Մի սքանչելի բան կա դրա մեջ, շատ սքանչելի, աշխարհի համար օգտակար մի բան: Դա թույլ է տալիս մտածել, որ ամերիկացիներդ բուն Հայաստանում կարող էիք հիմնավորապես անել ու վստահաբար կանեիք այն, ինչ պետք է արվի այնտեղ[37]: Կանեիք **աստիճանաբար, բայց կատարելապես,** առանց բաց թողնելու որևէ մի առանձին կամ, ավելի ճիշտ, ամուսնացած հայի, և այդ ամբողջը առանց խայտառակության, առանց նվազագույնս խախտելու ձեր այն հավատքը, թե դուք … ինչպե՞ս ասեմ … դե՛հ, դուք նման չեք մեզ՝ անգլիացիներիս կամ ֆրանսիացիներին, գերմանացիներին, թուրքերին և, վախենամ, դույզնիսկ նման չեք հայերին էլ: Եվ, **պետք է որևէ մեկը լուծի Հայկական հարցը[38]:** Ինձ թվում է բանաստեղծական արդարություն կլինի, լավ քաղաքականություն և հաստատ գործ, որ աշխարհում ամենահիդեալիստ ժողովուրդն իր վրա վերցնի աշխարհի ամենագործնական ժողովրդին:

Սթեֆընս - Հիշեցի, որ ասաց՝ ժխտելու է հարցազրույցը, եթե ամենաթեթև իսկ առարկություն լինի: Որոշեցի հենց ուղղակի փորձել նրան:

Սթեֆընս - Ինչպես հասկանում եմ,- ասացի,- ամերիկացիներս առևտրական մշակույթ ենք, ինչպես հայերն են, **ինչպես բոլոր այս հին ազգերն էլ, որոնց պետք է ոչնչացնել[39]:**

Սթեֆընս - Նա գլխով արեց: Ես շարունակեցի. Նրանք մտածում էին, որ զարգացնում են գործարարությունը, երբ իրականում զարգացնում էին մարդկային ցեղի մի որոշ տեսակ՝ մի ուրույն ցեղ գործարար մարդկանց, որ կախյալ են ուրիշների արտադրողական աշխատանքից, ուրիշների, որոնց նրանք չեն կառավարում հիմա, և որոնք ատում են նրանց, որովհետև նրանք կարող են որևէ մեկին մատի վրա խաղացնել առևտրի մեջ և ապրում են առանց աշխատելու, **ստախոսներ են, չարաշահողներ, մակաբույծներ՝ ամենագործնական ուղեղով և ամենաքրիստոնեական իդեալներով ու վարվելակերպով:**

Արաբացի - Դուք՝ ամերիկացիներդ լավ եք խոսում: Ձեք կարող գտնել ոչ մի անգլիացու, որ այդքան հստակորեն բանաձևեր որևէ այդպիսի բան:

Սթեֆընս - Եթե ամերիկացիներս կարողանայինք այժմ, մեր ներկա դրությամբ, այս տեսակ մարդու զարգացման նախնական փուլում, եթե կարողանայինք, կառավարելով հայերին, մոտիկից տեսնել մեր մշակույթի կիրառման գործնական ձևերն ու արդյունքները, եթե կարողանայինք հասկանալ, որ այն, ինչ ստուգում ու քննում ենք ներկա հայի մեջ, ապագա ամերիկացունն է…

Արաբացի - Վաղվա:

Սթեֆընս - **Ապա ուրեմն, գուցե հուսախաբ լինեինք հայերից, գուցե, ջղայնացած, ոչնչացնեինք նրանց բոլորին…**

Արաբացի - **Ահա, ահա:**

Սթեֆընս - **Գուցե ոչնչացնեինք բոլոր հայերին, բայց պիտի տուն գնայինք…**

Արաբացի - Հեռագրեք[40],- հուշեց նա,- ավելի արագ է դա:

Սթեֆընս - Հեռագրեինք տուն, հեռագրեինք զգույշ լինելու մի ահազանգ. «Զգուշացեք գործնական բիզնեսի հետ քրիստոնեական իդեալիզմի խաչաձևումից»: Ձափից շատ բիզնեսը և չափից շատ իդեալիզմը կարող են վնասել այս երկու լավ բաներին ու մեզ էլ՝ որպես ժողովրդի:

Արաբացի - Ահա՛, ահա՛: Դա կարող էր մեծ, հարուստ Ամերիկան վերածել մի Հայաստանի, որը ապագայի բրիտանացիներն ու ռուսները պիտի «անհրաժեշտ» գտնեին վերցնելու որպես մանդատային՝ երկու մասի բաժանված, մեկը՝ բուն իսկ Միացյալ Նահանգները, Անգլիայի համար, մյուսը՝ ամերիկյան ժողովուրդը՝ Ռուսաստանի համար: Ձեր այդ գաղափարը…

Սթեֆընս - Ի՞մ գաղափա՜րը,- պայթեցի ես:

Արաբացի - Այո: Դա մի գաղափար է: Լավ գաղափար է, լավ է տեսականորեն, բայց… էությամբ իդեալիստական է:

Ես նկատի ունեմ գործնականը: Հավատո՞ւմ եք իրոք, որ հայերին կառավարող ամերիկացիք բավական գիտակից կլինեն տեսնելու համար, որ հայերը նման են ամերիկացիներին:

Սթեֆընս - Դուք՝ անգլիացիներդ, տեսնում եք:

Արաբացի - Ճիշտ է: Մենք տեսնում ենք հայերի նշանակությունը ամերիկացիների համար, մենք՝ իմպերիալիստ անգլիացիներս տեսնում ենք դա: Բայց վստահ չեմ ու **մտածում եմ՝ կարելի՞ է արդյոք մեր, այսպես կոչված, բարձր դասի դժգոհներին բերել այն գիտակցության, որ կանխատեսեն իրենց ճակատագիրը այն հին ազգերի ճակատագրի մեջ, որոնց կառավարում են[41]:**

Արաբացի - Գնաք բարով, ես հավանում եմ ձեր տեսությունը: Գայթակղիչ է: Վախենամ՝ թե գործնականում դա չաշխատի[42], բայց գրեցեք դրա մասին: Թելադրական է: Զգույշ գրեցեք, ոչ շատ հստակ և, իմիջիայլոց, մի՛ մեջբերեք ինձ: Ես ոչինչ չեմ ասել, ոչինչ...

Ծանոթագրություն

1 Դա, ըստ էության, Ռալֆ Պիտերսի 2006-ին ներկայացրած քարտեզն է, որին միացած էր նաև Բրիտանիայի գաղութ Հնդկաստանը՝ իր կազմում ունենալով ներկայիս Պակիստանն ու Բանգլադեշը:

2 БЭС, том 15, стр. 35, Москва, 1974г., Лит., Лиддель Гарт, Полковник Лоуренс, пер. с англ., Москва, 1939г.

3 Հոդվածի վերահրատարակման անհրաժեշտությունը թելադրված էր գերմանական ֆաշիզմի ոչ արիական ռասաներին բնաջնջելու քաղաքականության մեջ հայերին նույնպես զոհ մատուցելու միտումով: Եվ իրոք, Գերմանիայում մի քանի տարի շարունակ իրականացվեց հակահայկական քարոզչություն, որը, սակայն, կասեցվեց Նժդեհի գործուն միջամտության շնորհիվ:

4 Ուշադրություն դարձրեք փաստին. այս արտահայտությունը արվել է 1919թ., երբ հայերի ցեղասպանությունը դեռևս ընթացքի մեջ էր, իսկ 1918թ. սկսած այն Արևելյան Հայաստան տեղափոխելու և ամբողջ հայությունը բնաջնջելու ծրագիրն էր գործում, ինչը փակուղի մտավ Սարդարապատի, Բաշ Ապարանի, Ղարաքիլիսայի հերոսամարտերի արդյունքում, նաև թուրք-բոլշևիկյան համատեղ ուժերի նկատմամբ նորանկախ ՀՀ-ի քառակողմ պատերազմների, ինչպես և Նժդեհի կողմից Զանգեզուրը ինքնուրույն և պաշպանված պահելու իրողություններով: Կարծում ենք հասկանալի է անգլիացի քաղաքական գործչի բնաջնջվել չցանկացող հայերին «անտանելի» տեսնելու իրական պատճառը:

5 Սթեֆընսը չի սխալվում. այդ հակակրանքը քաղաքական ենթատեքստ ունի:

6 Իմացություն իրոք կա, որն անգամ հայերը չգիտեն: Իսկ աշխարհին տիրելու ձգտող անգլիական քաղաքականությունը խորապես ուսումնասիրել ու գնահատել է հայության, անգամ անհատ հայի դերը, որպես խոչընդոտ համաշխարհային կայսրություն, համաշխարհային կառավարում ստեղծելու մոլուցքին: Հաջորդ տողերում Արաբացին ինքը կասի, որ հայերը գիտեն աշխարհի կառավարման օրենքները, բայց չի ասի, որ հայերը երբևէ չեն ձգտել կառավարել աշխարհը (ճիշտ է, Արաբացին չի հասկանում, թե ինչո՞ւ), սակայն անգլիական քաղաքականությունը շատ լավ գիտե, որ տարբեր երկրներում գտնվող հայը մշտապես նպաստել է այդ երկրների ու ժողովուրդների ազատության, ինքնիշխանության, անկախության համար մղվող պայքարին:

7 Հայերի բնաջնջման այսպիսի բացահայտ հայտարարություն, նաև ցեղասպանության այսօրինակ բացահայտ քարոզչություն, չեն արել ոչ միայն Աբդուլ Համիդ Բ-ն, այլև երիտթուրք ղեկավարները: Նրանք գիտակցում էին իրենց կատարած հանցագործության ու պատասխանատվության չափը, ուստի և պաշտոնական գրագրության մեջ ցեղասպանությանը վերաբերող հրահանգները առաքվում էին ծածկագրված և հույժ գաղտնի կնիքով: Այստեղ հանձին Արաբացու՝ միջազգային քաղաքական պրակտիկայում, մենք գործ ունենք, հիմնականում, կանխավ ծրագրված լոկալ և գլոբալ պատերազմների ու ցեղասպանությունների իրականացումը նախապատրաստող, այսպես կոչված գաղափարախոսական՝ միջազգային առումով ծավալուն, հրապարակային քարոզչության հետ: Ինչպես և իրականացնողի ոչ միայն անպատասխանատվության, այլև անձնական անվտանգության պետական երաշխավորվածության փաստի հետ: Այս հարցում մտահոգիչն այն է, որ պատերազմներն ու ցեղասպանությունները կանխարգելելու միջազգային գործառույթ ունեցող առաջին և երկրորդ կառույցները՝ Ազգերի Լիգան և ՄԱԿ-ը, երբևէ պատասխանատվության չեն կանչել և ոչ մի իրական հանցագործի... Այն դեպքում, երբ թե՛ ՄԱԿ-ի ընդունած Մարդու Իրավունքների Համընդհանուր Հռչակագրով, թե՛ երկրների սահմանադրական պահանջով արգելվում էին պատերազմի քարոզչությունը, ինչպես և ազգային, կրոնական ատելություն սերմանելու ու մարդատյացության այլ դրսևորումների քարոզչությունը, իրենց բոլոր մեթոդներով ու ձևերով: Հիմա էլ կարելի է դա արգելել. տե՛ս, ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի 3074 (XXVIII) Բանաձև, Մարդկության դեմ հանցագործության և պատերազմի հանցագործություններում մեղավոր անձանց հայտնաբերելու, ձերբակալելու, հանձնելու և պատժելու Միջազգային համագործակցության սկզբունքները, 3-ը դեկտեմբերի 1973թ. (Резалюция 3074 (XXVIII) Генеральной Ассамблеи ООН, Принципы международного сотрудничества в отношении обноружения, ареста, выдачи и наказания лиц, виновных в военных преступлениях и преступлениях против человечества, 3 декабря 1973г.): Բայց արի ու տե՛ս, որ 1948-ից սկսած բազում են նման խայտառակ իրողությունները, որոնցից վերջինը Ռալֆ Պիտերսի Միջին Արևելքի նոր քարտեզն ու հոդվածն է:

8 Հայկական հարց. թուրքական լծից արևմտահայության ազատագրման, սեփական պետություն ստեղծելու, անկախությունը վերականգնելու հայ ժողովրդի մղած պայքարի անվանումը միջազգային դիվանագիտության պատմության մեջ: Ասպարեզ է իջել 1870-ական թթ.: Մշտապես խոչընդոտվել է եվրոպական գերտերությունների կողմից. 1878թ.՝ Սան-Ստեֆանոյի, Առաջին համաշխարհային պատերազմի ավարտին՝ Լոզանի և Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտին՝ 1945թ. Պոտսդամի խաղաղության պայմանագրերով: Նույն հետևողականությամբ հարցի լուծումը խոչընդոտվում է առ այսօր: Վկա՝ վերջին քսան տարիների հայտնի գործընթացները:

9 Նկատի ունի, դեռևս ընթացքի մեջ գտնվող հայերի բնաջնջումը Արևելյան Հայաստանում շարունակելու խնդիրը:

10 Պատճառը ոչ այնքան թուրքերի մարդատյաց դաժանության և ոչ քրիստոնեա լինելու մեջ էր, այլ այն իրողության, որ նրանք այլևս ի վիճակի չէին իրենց սև գործն ավարտին հասցնելու: Հարցազրույցի պահին՝ 1919-ին, ակնհայտ էր, որ ոչ միայն Առաջին աշխարհամարտում, այլև Սարդարապատում պարտված Թուրքիան այլևս ի զորու չէ այն շարունակել Արևելյան Հայաստանի տարածքում:

11 Նկատի ունի, Բյուզանդական կայսրությունը և ոչ թե այդ ժամանակների հույներին, որոնք դիմագրավում էին արևմուտքի կողմից հրահրված թուրքական վտանգը Հունաստանի և հույն ժողովրդի նկատմամբ:

12 Նկատի ունի, Սևրի կոնֆերանսը, որտեղ Հաշտության պայմանագրով նախատեսվում էր Արևմտյան Հայաստանի մի մասով և Արևելյան Հայաստանի տարածական

հենքով հայկական ինքնուրույն պետություն ստեղծելու գործընթացը երաշխավորող տերություն ընտրելու և նրան Ազգերի Լիգայի կողմից համապատասխան լիազորություններով՝ մանդատով օժտելու հարցը: Սույն հարցազրույցից օրեր առաջ Ազգերի Լիգան արդեն իսկ առաջարկել էր ԱՄՆ-ին ստանձնել այդ դերը: Ուստի, հենց այդ հայկական ինքնիշխան պետության ստեղծմանը խոչընդոտելու համար է Արաբացու կողմից նախաձեռնվել այս հարցազրույց ասվածը, որն, ըստ էության, ուղղորդող ցուցում էր կոնֆերանսի մասնակից գերտերությունների քաղաքական գործիչների համար:

13 Հենց բրիտանացիներն էլ անում են «այդ գործը», պարզապես ուրիշների ձեռքերով: Եթե 1894-96թթ. թուրք սուլթանի ձեռքերով արեցին, իսկ 1915-23թթ. երիտթուրքերի ու Քեմալի գլխավորությամբ թուրքերի ու քրդերի ձեռքերով, ապա 1945-ից հետո՝ ամերիկացիների ու եվրոպացիների միջոցով են անում, այլ ազգերի ձեռքերով. օրինակ՝ 1988-ից ադրբեջանցիների, թուրք «գորշ գայլերի», վարձկան աֆղանների ու ուկրանացիների, չեչենների...

14 Ասել է թե կայսրությունը պետք է վերանա այն պահին, երբ ստեղծվի Համաշխարհային Կառավարությունը:

15 Փորձում է հիմնավորել ժողովուրդներն ու աշխարհը մեկ կենտրոնից ղեկավարելու անհրաժեշտությունը: Սա Արաբացու հայտնագործությունը չէ, քանզի դա՝ որպես միջազգային գաղափարախոսական թեզ, առաջ է քաշվել դեռ 1800-ական թթ. վերջերին, ինչի համաձայն աշխարհը, ըստ մայրցամաքների, պետք է վերածվի միավորված նահանգների: Այդ խնդիրը, Եվրոպայի Միացյալ Նահանգներ պետության ծրագիրը, իրականացնելու համար էր սանձազերված Առաջին համաշխարհային պատերազմը, որն, ըստ էության, տապալվեց:

16 Ակնհայտ է, որ Արաբացու առաջարկած «մեծ ցնցման» ժամանակը Միջին Արևելքի և Եվրասիայի համար եկել է հիմա, որն առաջարկվում է Ռալֆ Պիտերսի քարտեզով: Տե՛ս, «Ուխտ Արարատի», թիվ 4/10 և 2/13 համարներում ներկայացված քարտեզները:

17 Բնական հարստություններով զբաղվեցին Առաջին և Երկրորդ համաշխարհային պատերազմների ժամանակ և միջոցով: 1945-ին Ալան Դալեսի առաջարկած ծրագրով դրվեց Արաբացու նշած՝ Ժողովուրդներով զբաղվելու խնդիրը, որը գործողության մեջ մտավ 1957-ից Արևմտյան Եվրոպայի երկրներում, իբրև Եվրոմիության հրապուրիչ նախագիծ, իրականում Եվրոպայի Միացյալ Նահանգների ստեղծմանը միտված գործընթաց, իսկ Արևելյան Եվրոպայի և ԽՍՀՄ-ի երկրների համար 1985-ից՝ որպես գորբաչովյան Պերեստրոյկա…

18 Ակնհայտ է, թե ինչու դեռ նորաստեղծ Ազգերի Լիգան ժամանակին շատ արագ դարձավ ձևական ու չգործող, ուստի և չկարողացավ կանխարգելել բացահայտ ձևավորվող Երկրորդ համաշխարհային պատերազմը: Նույն այս մոտեցումն է, որ 1965-ից սկսած և հիմնականում 1985-ից հետո լրիվ անդամալուծեց ՄԱԿ-ը: Այսօրվա իրողությունը վտանգավոր է հենց նրանով, որ դա կարող է պատճառ դառնալ երրորդ համաշխարհային - համամարդկային մեծ աղետի, ողբերգության:

19 Նկատի ունի 1918-ին ստեղծված նորանկախ Հայաստանի Հանրապետությունը:

20 Այդպես էլ արվեց. 1921-ին բոլշևիկները Տրոցկու առաջարկած ծրագրով մասնատեցին Արևելյան Հայաստանը: Իսկ Լոզանի կոնֆերանսում՝ Արևմտյան Հայաստանը ամբողջության նվիրեցին Թուրքիային, նախադեպը չունեցող՝ այլոց կողմից «Հայաստանի համար» կնքված անօրինական պայմանագրերի միջոցով:

21 Այդպիսին եղավ Հայաստանի 1/10 մասը կազմող Խորհրդային Հայաստանի տարածքը:

22 Արաբացու հոդվածն իր գործն արեց. ԱՄՆ Սենատը մերժեց Հայաստանի մանդատը, չիրագործեց Սևրի դաշնագրի դրույթները, չիրականացրեց Վիլսոնի իրավարար վճիռը: Ըստ Արաբացու առաջարկի՝ ԱՄՆ-ը վերցրեց հայկական սփյուռքի հետ աշխատելու խնդիրը («լոկ հայերի մանդատը»), բոլշևիկյան Ռուսաստանը՝ «մի ուրիշ հավասարաչափ գործնական տերություն», մկրատված սահմաններով Հայաստանը:

23 Այստեղ է, որ պետք է հիշել, երբ տեսնում ես բացահայտ անտրամաբանություն, ապա պետք չէ շտապել դիմացինին հիմար ու տգետ կարծել: Պետք է փորձել գտնել հենց այն՝ խնամքով թաքնված միտքը, և հասկանալի կլինեն գործի դրված տրամաբանության բուն իմաստը, խորությունը: Արաբացու առաջարկած խնդիրը մեկ կենտրոնից համայն աշխարհը կառավարելն է: Համաշխարհային տիրապետության երկհազարամյա մոլագար երազանքը իրական դարձնելն է, որը, ի դեպ, ընթանում է այսօր էլ, 1985-ից՝ բացահայտ քայլերով:

24 Ինչպես հայտնի է մինչև 19-րդ դարի կեսերը արևմտյան տերությունները ԱՄՆ-ը, Մեծ Բրիտանիան Աֆրիկայից, Ավստրալիայից ու նրան հարակից տարածքներից ստրուկներ էին տեղափոխում իրենց երկրները: 1860-ական թթ. սկսած, երբ պաշտոնապես արգելվեցին ստրկավաճառությունն ու ստրկատիրությունը, փոխվեց այդ ցեղերի շահագործման մարտավարությունը: Այդուհետ գաղութների բնակչությունը շահագործվում էր տեղերում: Սթեֆընսի խոսքում պարզապես նկարագրված է ամերիկյան գաղութատիրության մոտեցումը: Ուշագրավ է, որ բացառապես նույն մոտեցումն ենք նկատում Հայաստանի՝ հայության նկատմամբ՝ սկսած 1990-ական թթ., երբ եվրոամերիկյան քաղաքական գործիչները գործուղվում էին Հայաստան, իբրև թե, աֆրիկյան մի երկիր, որտեղ իրենց կարծիքով ու համոզմամբ բարեգործական - մարդասիրական առաքելություն ունեին հայերին սովորեցնելու ժողովրդավարություն, աշխատանք ու խնայողություն, քրիստոնեական բարեպաշտություն…

25 Այս ամբողջ անհիմն մենախոսության բուն նպատակը բացահայտվում է հարցազրույցի վերջերում, որպես հին քաղաքակրթությունները ոչնչացնելու քարոզչության հիմք ու արդարացում:

26 Պետք է ուշադրություն դարձնել այն փաստի վրա, որ հարցազրույցի պահին ընթանում էր Առաջին համաշխարհային պատերազմի արդյունքները ձևավորող կոնֆերանսը, որտեղ դրված էր լուծարված Օսմանյան կայսրությունից անջատված արաբական երկրները Անտանտի երկրների միջև բաժանելու խնդիրը: Այստեղ իր մեծ ներդրումն ուներ Արաբացին, որպես Մեծ Բրիտանիայի հետախուզական ծառայության ազդեցիկ դեմքերից մեկը Միջին Արևելքում, մեկ այլ խնդիր ունենալով Պաղեստինում՝ Իսրայելի ստեղծումը: Ուստի, պատահական չէ Արաբացու արտահայտությունը. «արաբները անապատի փոշին են»: Մոտեցում, որը 1960-ական թթ. սկսած իրագործում է ներկայիս Իսրայել պետությունը:

27 Առնվազն տարօրինակ է թուրքերին հին հույների, եգիպտացիների, սիրիացիների շարքը դասելը, եթե հիշենք թեկուզ, թե ինչպես էր եվրոպական մտածողությունը ճանաչում Եվրոպայի կեսը նվաճած ու քաղաքակրթություններ ոչնչացնող բարբարոս թուրքին: Պատճառն ակնհայտ է. հայերի, հույների և այլոց բնաջնջումն իրականացնող թուրքին պետք է ներկայացնել քաղաքակիրթ, որովհետև նա, որպես գործիք, դեռևս անելիք ունի: Հենց այս մոտեցման հիմքում է դրված 19-րդ, 20-րդ դդ. շատ ազգերի՝ քաղաքակրթությունների, պատմության ու մշակույթի աննախադեպ ու լկտի նենգափոխման համատարած գործընթացը: Պատահական չէ, որ 1915-ից մի քանի տարի առաջ համաշխարհային համբավ և ճանաչում ունեցող հայազգի ծովանկարիչ Այվազովսկուն անգամ փորձ արվեց ներկայացնել՝ որպես ազգությամբ թուրք: Այվազովսկու նկատմամբ նույն զավեշտը կրկնվում է 2007-ին: Հարց է ծագում, հիմա

ինչո՞ւ: Ճիշտ է, սա միայն մեր խնդիրը չէ: Շատ ու շատ հին ազգերի և քաղաքակրթությունների, ժողովուրդների ու պետությունների առջև խնդիր է ծագում պատմության և մշակույթի՝ համաշխարհային չափեր ընդգրկող կեղծարարությունը իրավական դաշտ բերել, միջազգային իրավունքի հենքով պատասխանատվության կանչել պատմության ու մշակույթի ամեն կարգի կեղծարարներին և այդպիսով կանխել պատմության և մշակույթի հետագա նենգափոխման բոլոր տեսակի փորձերն ու դրանց աղետածին հետևանքները: Տե՛ս, ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի Բանաձև 127 (II), Կեղծ կամ խեղաթյուրված տեղեկատվություն, 15-ը նոյեմբերի 1947թ.:

28 Ուշագրավ է, որ շուրջ 100 տարի է ինչ գլոբալացվող արևմտյան կապիտալը՝ հանձին մոնոպոլիաների ու վերազգային կորպորացիաների, բոլոր երկրներում ոչնչացման թիրախ է ընտրել հենց միջին դասակարգին (Արաբացու բնորոշմամբ «այդ ստոր միջին դասակարգը»):

29 Պարզվում է, ամենաբարձր քաղաքակրթվածություն ունենալն է հայի «մեղքը», որի համար էլ Արաբացին առաջարկում է բնաջնջել բոլոր հայերին:

30 Հատկապես վերջին հարյուրամյակի իրադարձությունների հենքում՝ հայ քաղաքական ու պետական մտածողության մեջ, Արաբացու այս դիտարկումը ոչ մի կերպ չի ընկալվել և ուշադրության չի արժանացել: Հետևանքները հայտնի են…

31 Նույն մոտեցումն է կիրառվում և այսօր. այսինքն՝ Հայոց բնօրրանում հայկական պետություն չպետք է լինի: Սրանով են պայմանավորված 1988-ից առ այսօր ԼՂՀ-ին ու ՀՀ-ին սպառնացող քաղաքական գործընթացները:

32 Զարգացնելով նախորդ միտքը Արաբացին, ըստ էության, պնդում է, որ հայերին չպետք է թույլ տրվի ազատ և ինքնիշխան պետություն ստեղծել անգամ Հայաստանից դուրս, երկրագնդի որևէ անկյունում: Սրանով են հասկանալի դառնում 1919-ից արևմուտքում, այնուհետև Մերձավոր ու Միջին Արևելքում, սփյուռքահայ գաղթօջախների կազմալուծմանը և փոշիացմանն ուղղված նպատակային գործողությունները: Հակառակ այն բանին, որ այդ գաղթօջախների հայությունը երբևէ չի հավակնել այդ երկրներում սեփական պետություն ստեղծել, հավատարիմ է եղել հյուրընկալ երկրներին, ժողովուրդներին ու օրենքներին:

33 Արաբացին ԱՄՆ-ին առաջարկում է վերցնել հայերի մանդատը, ասել է թե՝ հրաժարվել կոնֆերանսի առաջարկից: Այդպես էլ եղավ: Սևրի դաշնագրով ԱՄՆ-ին տրվող մանդատի փոխարեն, ըստ էության, 1921թ. մարտի 16-ի Ռուս-թուրքական և 1923թ. Լոզանի պայմանագրերով Արևմտյան Հայաստանը և Արևելյան Հայաստանի մի մասը առանց մանդատի նվիրաբերվեց Թուրքիային, Նախիջևանն ու Լեռնային Ղարաբաղը՝ Ադրբեջանին, Զավախքը՝ Վրաստանին, Արևելյան Հայաստանի և արևելահայության մնացորդացի մանդատը տրվեց բոլշևիկյան Ռուսաստանին, արևմտահայ գաղթականության՝ հետագայում սփյուռքահության, մանդատը՝ ԱՄՆ-ին:

34 Արաբացու աշխատուժի լրացման այս լուծումը դեռևս 1902թ. առաջարկել էր գերմանացի Պաուլ Ռորբախը, որպես բռնագաղթի միջոցով Հայաստանը նոր աշխատուժով լցնելու տարբերակ: Նա գրել է. «Արևմտյան Հայաստանից պետք է դուրս անել բնիկ հայերին, իսկ նրանց տեղում բնակեցնել Թրակիայից և Ռուսաստանից բերված մահմեդականների»: Նոր ժամանակների արաբացին՝ Ռալֆ Պիտերսը, օրինականացնելով մարդկության դեմ կատարված հանցագործությունը՝ 1915-23թթ. ցեղասպանությունը, գտնում է, որ «էթնիկ զտումները կատարում են իրենց գործը», պարզ ասելով, որ հայերը Արևմտյան Հայաստան վերադարձի հույս պետք չէ ունենան:

35 Այս մոտեցումն է, որ 1950-ական թթ. իրապես վտանգում է Միջին Արևելքի արաբական և այլ երկրների հայկական գաղթօջախների գոյությունը: Հիշենք օրինակ, 1960-ական թթ. վերջերից ԱՆՉԱ-ի ծրագրով Միջին Արևելքից հայերին ԱՄՆ տեղափոխելու գործընթացը:

36 Կարծում ենք հասկանալի է, թե ո՞ւմ թելադրանքով և ինչո՞ւ Արցախի ազգային ազատագրական պայքարով անկախության հասնելու խնդիրը փոխարինվեց այսպես կոչված ինքնորոշման խնդրով, այն դեպքում, երբ 1988-ից առ այսօր այդ ձևակերպման դեմ մշտապես նշվել է, որ հայ ժողովուրդը ինքնորոշվել է հազարամյակներ առաջ, իսկ վերջին 500-ամյակում ունի հայոց պետության անկախության վերականգնման խնդիր: Ուստի, պատահական չէ, որ եվրոամերիկյան քաղաքականությունը բանավեճի առարկա է դարձրել արցախահայության ինքնորոշվելու իրավունքը թույլ տալ - չտալու խնդիրը:

37 Այսինքն, ինչպես վերևում նշել էր Արաբացին, պետք է բոլոր տեսակի գործողությունները ուղղորդել հայությանը բնաջնջելու նպատակին:

38 Մտահոգվելու լուրջ հիմքեր կան, քանզի 1988-ից առ այսօր, հենց Արաբացու առաջարկած ձեռագրով են ուզում լուծել Հայկական հարցը:

39 Սթեֆընսն, ըստ էության, բաց տեքստով ներկայացնում է Արաբացու հիմնական թեզը, որ բնաջնջման խնդիրը ոչ միայն հայերին է վերաբերում, այլև բոլոր հին ազգերին, որոնց նույնպես պետք է վերացնել, քանզի նրանք, ինչպես հայերը, խանգարում և խանգարելու են համաշխարհային կառավարություն ստեղծելու գործին: Այս ենթատեքստում է, որ պետք է հիշել հույների վիճակը, որոնք արդեն մի քանի հարյուրամյակ հնարարավորություն չունեն իրենց երկրում գիտությամբ և սեփական արտադրությամբ զբաղվելու, սահմանափակվել են իրենց ծովեզերքը սպասարկելու, զբաստաշրջիկներին զավարճացնելու խնդիրներով: Ավելի տխուր է Իսպանիայի վիճակը, որը վերջին հարյուրամյակներում այդպես էլ չի կարողանում մեջքն ուղղել տասից-քսան տարին մեկ ընթացքող հեղափոխությունների, քաղաքացիական ու ոչ քաղաքացիական պատերազմների պատճառով: Էլ չխոսենք Չինաստանի ու Հնդկաստանի ծայրահեղ աղքատության բերված նախկին այդ գաղութների իրողությունից:

40 Շտապեցնում է այս զրույցի բոլոր մանրամասներին տեղյակ պահել ԱՄՆ-ի քաղաքական վերնախավին, այդ կերպ ակնկալելով խոչընդոտել Վիլսոնի իրավարար վճռի իրագործումը և Հայաստանի մանդատի ստանձնումը ԱՄՆ-ի կողմից: Շտապողականությունը թելադրված էր նրանով, որ հարցն արդեն օրերի ընթացքում պետք է լուծում ստանար կոնֆերանսում:

41 Պետք է հիշել, որ եթե Առաջին համաշխարհային պատերազմից հետո չհաջողվեց ԱՄՆ-ին ներքաշել եվրասիական տարածաշրջանային քաղաքականության մեջ, ապա Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո՝ եվրոպական, հիմնականում բրիտանական քաղաքականությունը, որոշակի խորամանկություններ բանեցնելով, հասավ նրան, որ ստիպեց ԱՄՆ-ին 1947-ից մնալ Միջին Արևելքում, ըստ էության, աստիճանաբար վերածվելով համաշխարհային ժանդարմի, այսինքն՝ գործիք եվրոքաղաքականության ձեռքում, վերջինիս սև գործերն անելու համար:

42 Հայտնի է, որ այն աշխատել սկսեց արդեն 1948-49թթ.՝ որպես «սառը պատերազմի» իրողություն, 1961-62թթ.՝ որպես երրորդ ատոմային համաշխարհային պատերազմի ճգնաժամ, 1965-85թթ.՝ որպես 1991-ից առ այսօր նախկին ԽՍՀՄ և ոչ ԽՍՀՄ երկրների, այդ թվում՝ Միջին Արևելյան երկրների ռազմաքաղաքական անմիջական և միջնորդված, լոկալ և ոչ լոկալ հակամարտությունների ու պատերազմների, գունավոր և ոչ գունավոր հեղափոխությունների շարժիչ ուժ, ուղղորդում:

Ուինստոն Լեոնարդ Սպենսեր Չերչիլ (Churchil), (1874-1965), Մեծ Բրիտանիայի մինիստր (պրեմիեր մինիստր) 1940-1945թթ., 1951-1955թթ.: 1886-1898թթ. ծառայել է Հնդկաստանում, մասնակցել է Սուդանի դեմ ռազմական գործողություններին: 1899-1902թթ. անգլո-բուրական պատերազմի ժամանակ զինվորական թղթակից է եղել Հարավային Աֆրիկայում: 1906-1908թթ. եղել է Մեծ Բրիտանիայի Գաղութների մինիստրի տեղակալ, 1908-1910թթ.՝ առևտրի, 1910-1911թթ.՝ ներքին գործերի, իսկ 1911-ից՝ ռազմածովային մինիստր:

Առաջին Համաշխարհային պատերազմի ժամանակ **Դարդանելի օպերացիայի (1915թ. մարտ - ապրիլ ամիսներ)[1] կազմակերպիչներից է, որի ձախողման համար պաշտոնաթող է եղել**:

1917-1918թթ.՝ ռազմական մատակարարման մինիստր: 1919-1921թթ. միաժամանակ եղել է և ռազմական, և ավիացիայի մինիստր:

1924-ից մինչև կյանքի վերջը եղել է պառլամենտի դեպուտատ՝ պահպանողականների կողմից: 1924-1929 թթ.՝ եղել է ֆինանսների մինիստր Ս. Բոլդուինի կառավարությունում: 1930-ական թթ. ակտիվորեն հանդես է եկել Ս. Բոլդուինի և Ն. Չեմբեռլենի ֆաշիստական զավթիչներին զսպելու քաղաքական կուրսի դեմ՝ այն համարելով անհեռատես:

Մեծ Բրիտանիայի Երկրորդ համաշխարհային պատերազմի (1939-1945թթ.) մեջ մտնելուց հետո՝ 1939թ. սեպտեմբերին նշանակվել է ռազմածովային մինիստր,

1940թ. մայիսին դարձել է կոալիցիոն կառավարության պրեմիեր մինիստր:

Մասնակցել է Թեհրանի (1943թ.), Ղրիմի (1945թ.) և Պոդստամի (1945թ.) կոնֆերանսներին:

1945թ. պաշտոնաթող է եղել. պառլամենտում, որպես պահպանողական ընդդիմության ղեկավար, գլխավորել է «սառը պատերազմ» սանձազերծելու արշավը:

1946-ից կոչ է արել (ճառը Ֆուլտոնում) ստեղծել Մեծ Բրիտանիայի և ԱՄՆ-ի ռազմաքաղաքական միություն՝ ընդդեմ ԽՍՀՄ-ի և ժողովրդա-դեմոկրատական երկրների: Մինչև ԽՍՀՄ-ում ատոմային ռումբի ստեղծումը, կողմնակից էր ԽՍՀՄ-ի դեմ ԱՄՆ-ի ատոմային պատերազմին:

1951-1955թթ., «Կորեական ճգնաժամի» շրջանում, վերստին Մեծ Բրիտանիայի պրեմիեր մինիստրն է:

1955-ից պաշտոնաթող լինելով՝ հեռացել է քաղաքական ակտիվ գործունեությունից:

Сов. энциклопедический словарь, Москва, 1989г.

ՍԻՈՆԻԶՄՆ ԸՆԴԴԵՄ ԲՈԼՇԵՎԻԶՄԻ

ՊԱՅՔԱՐ ՀՐԵԱՆԵՐԻ ՀՈԳԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Հեղինակ՝ սըր Ուինստոն Ս. Չերչիլ

Մարդկանցից ոմանք սիրում են հրեաներին, իսկ ոմանք ոչ, սակայն ոչ մի մտածող մարդ չի կարող ժխտել այն փաստը, որ նրանք ամենասարսափելի և ապշեցուցիչ ցեղատեսակն են, որ երբևէ եղել է աշխարհում[2]: Եվ շատ հնարավոր է, որ այս ապշեցուցիչ ցեղատեսակը ներկա ժամանակում լինի փաստացի մի այլ բարոյական և փիլիսոփայական համակարգի ստեղծման գործընթացում, որը այնքան չարակամ է, որքան որ Քրիստոնեությունը՝ բարիկամեցողական, և որին եթե չկանգնեցնես, ապա անդարձ կավերի այն ամենը ինչ ստեղծել է Քրիստոնեությունը[3]: Կարծես Քրիստոսի ավետարանիչները և ՀակաՔրիստոսի ավետարանիչները կանխագուշակել էին, որ մարդկության մեջ պետք է առաջանա այս խորհրդավոր ցեղատեսակը, որը պետք է իրականացնի Գերագույն կառավարում՝ թե՛ աստվածային, թե՛ սատանայական[4]: Ռուսական հրեաները, չնայած իրենց ճնշված վիճակին, ինչպես որ ապրում էին Ռուսաստանում, կարողացել էին հաջողությամբ հանդես գալ Ռուսաստանի ներքին կյանքում: Նրանք, որպես բանկիրներ և արդյունաբերողներ, կազմակերպում էին Ռուսաստանի տնտեսական միջոցների զարգացումը և ստեղծում ռուսական համատեղ ձեռնարկություններ: Քաղաքականությունում նրանք օգնություն էին ցուցաբերում ազատական և առաջադիմական շարժումներին և նրանք էին Ֆրանսիայի և Մեծ Բրիտանիայի հետ բարեկամության ջատագովները:

Համաշխարհային հրեաները

Չնայած հրեաների հանդեպ ուժեղ հակընդդեմությանը՝ նրանք փորձում են ստեղծել Համաշխարհային Հրեական միություն: Այս չարանենգ միության կողմնակիցներ էին հիմնականում այն հրեաները, որոնք ապրում էին այնպիսի երկրներում, որտեղ իրենց ատում էին և ճնշում: Նրանց մեծամասնությունը, եթե ոչ բոլորը, հեռացել էին իրենց նախնիների կրոնից և թողել էին բոլոր հոգևոր հույսերը կապված այն աշխարհի լավ կյանքի հետ: Այսպիսի շարժում նրանց մոտ առաջին անգամը չէր: Սա սկսվել էր Սպարտակուս-Վայսհաուպտից[5] մինչև այնպիսիները, ինչպիսին Կարլ Մարքսն էր, այնուհետև Տրոցկին[5] (Ռուսաստանում), Բելա Կունը (Հունգարիայում), Ռոզա Լյուքսեմբուրգը (Գերմանիայում) և Էմմա Գոլդբերգը (ԱՄՆ-ում): Նրանց միջազգային դավադրության անշեղ աճի նպատակը քաղաքակրթության կործանումն[6] էր և այնպիսի հասարակության ստեղծումը, որի հենքը զարգացման կասեցումն է, անբարյացակամությունը և անհիրագործելի հավասարությունը: Եւ սա էր, ինչպես գրել է տիկին Ուեբսթերը, հիմնական դերը խաղում Ֆրանսիական հեղափոխության ողբերգությունում: Այս դավադրությունն էր քսաներորդ դարի ցանկացած հակակառավարական շարժումների շարժիչ ուժը, և հիմա այս արտառոց անձանց խումբը, կազմված Եվրոպայի և Ամերիկայի խոշորագույն քաղաքների հանցագործներից, բռնել է ռուս մարդկանց մազերից և փաստացի դարձել է հսկա կայսրության անզիջում տերը:

Ահաբեկիչ հրեաները

Կարիք չկա չափազանցնելու Բոլշևիզմի ստեղծման և ռուսական հեղափոխության փաստացի իրականացման գործում ունեցած միջազգային և հիմնականում աթեիստ հրեաների դերը, քանզի դա արդեն իսկ չափազանց է և վեր է բոլոր պատկերացումներից: Բացի Լենինից, մնացած առաջատար դեմքերը հրեաներ են: Բացի դրանից առաջատար և շարժիչ ուժ հանդիսացող առաջնորդներ դառնում էին հրեական առաջնորդները: Այսպիսով, Չիչերինը ռուս է, սակայն նրա օգնականը Լիտվինովն է, և ռուս Բուխարինի ու Լունաչարսկու ազդեցության մակարդակը չի կարող համեմատվել Տրոցկու կամ Զինովևի, որը Կարմիր Պետրոգրադի դիկտատորն էր, կամ Կրասինի կամ Ռադեկի իշխանության հետ, որոնք բոլորը հրեաներ էին: Խորհրդային կառավարման մարմիններում հրեաների տիրապետությունը ավելի ապշեցուցիչ է: Եվ հայտնի է, որ Արտակարգ հանձնաժողովի կողմից իրականացվող ահաբեկչության, որը իրականացվում էր իբր հակահեղափոխականների դեմ պայքարում, եթե ոչ ղեկավարումը, ապա իրականացնողների մեծ մասը հրեաներ էին և անգամ հրեուհիներ, և այդ ժամանակ էր որ Բելա Կունը մեկնեց Հունգարիա: Նույն բանը կատարվում էր նաև Գերմանիայում (նամանավանդ Բավարիայում), որոնց թույլատրվել էր որս կատարել դեպրեսիվ դրության մեջ գտնվող գերմանական ժողովրդի մեջ: Հետաքրքրական է, որ այս բոլոր երկրներում կան շատ ոչ հրեաներ, սակայն հրեաների թեկուզ մի կաթիլը նույնքան սարսափելի է, ինչպես ամենավատ հրեա հեղափոխականը և հետաքրքրականը նրանց ընդհանուր բնակչության կազմում եղած թվաքանակի և իրենց ունեցած գործուն դերի հարաբերակցությունն է:

Հրեաների հովանավորյալները

Բնականաբար վրեժի ամենամեծ կրքերը բորբոքվում են ռուսների սրտում: Բոլոր այն վայրերում, ուր գեներալ Դենիկինի իշխանությունը հասնում էր՝ պաշտպանություն էր իրականացվում հրեաների համար, իսկ նրա սպաները անում էին ամեն ինչ կանխելու ճնշումները հրեաների նկատմամբ և պատժում էին հրեաների դեմ գործողություն իրականացրածներին: Այդ էր պատճառը, որ պետլյուրականների քարոզչությունը գեներալ Դենիկինին դատապարտում էր որպես Հրեաների Պաշտպանի: Օրիորդ Հիլայը՝ պարոն Թիմ Հիլայի զարմուհին, որն ունի կյանքի փորձ Կիևի հետ կապված, հայտարարել էր, որ հնարավորություն է ունեցել ավելի շատ բան իմանալ, քան մեկ սպան, որը իրականացրել է հանցագործություններ ընդդեմ հրեաների, որոնք բաժանվել էին խմբերի և ուղարկվել ռազմաճակատ: Սակայն, հորդաները, որոնք տարածված էին ամբողջ Ռուսական կայսրության տարածքով մեկ, երբ առիթը ստեղծվում է, չէին տատանվում իրենց արյան և վրեժի ծարավը հագեցնել ի հաշիվ անմեղ հրեաների: Բանդիտ Մախնոն, Պետլյուրայի և Գրեգորիևի հորդաները իրենց հաղթանակները նշում էին ամենագազանային կոտորածներով և դա անտիսեմիտիզմի սպասված պատասխանն էր՝ արտահայտված ամենաարյունոտ ձևով: Շատ դեպքերում հրեաների շահերը և իրենց կրոնական կառույցները միայն Բոլշևիկների նկատմամբ ունեցած թշնամանքի փաստը բերեցին այն տենդենցին, որ Ռուսաստանում Հրեաներին սկսեցին կապել այն գազանությունների հետ, որոնք այժմ այնտեղ կատարվում են:

Տուն հրեաների համար

Սիոնիզմն առաջարկում է հրեաների քաղաքական տեսության երրորդ ոլորտը, որն ուժգնորեն արտահայտված է միջազգային կոմունիզմի պատկերի վրա:

Սիոնիզմն արդեն դարձել է Ռուսաստանի քաղաքական ջղաձգումների առիթ, ինչպես որ բոլշևիկյան շրջանակների ուժգին մրցակցությունը միջազգային կոմունիստական համակարգի հետ: Ոչինչ չի կարող ավելի առարկայական լինել քան այն, թե ինչպես Տրոցկին հարձակում գործեց ընդդեմ սիոնիստների և անձամբ Վայսմանի դեմ: Խորամուխ լինելով նրա դաժան մտքերի մեջ՝ հասկանում ես, որ (սիոնիստները) խանգարում են նրա (Տրոցկու) գծագրած հրեական տիրապետությամբ միջազգային կոմունիստական պետության ստեղծմանը[7], որին պետք է լծել աշխարհի բոլոր հրեաներին, ուղղորդելով նրանց ջանքերը և էներգիան դեպի այդ նպատակը, որպես միակ ճշմարիտ և դյուրին հասանելիի: Պայքարն այժմ մղվում է Սիոնիստների և Բոլշևիկ հրեաների միջև, որը կարելի է բնութագրել որպես պայքար հրեաների հոգիների համար:

Հոդվածը տպագրվել է 1920թ. փետրվարի 8-ին
«Sunday Herald» լրագրում,
www.patriot.dk/churchill.html
Թարգմանությունը՝ Հրամարտի

Ծանոթագրություն

1. Ըստ Թուրքիայում ԱՄՆ դեսպան Հ. Մորգենթաուի, երբ անգլիական նավատորմը 1915-ի ապրիլին մտավ Դարդանել բոլորի, այդ թվում՝ թուրքական կառավարության և Գերմանիայի դեսպանի համար ակնհայտ էր, որ անգլիական զորքերը առանց կրակոցի կմտնեն Կ. Պոլիս, քանի որ, ինչպես հայտնի էր, Բոսֆոր և Դարդանել նեղուցները, ըստ էության, չէին պաշտպանվում, իսկ Կ. Պոլիսը հիմնական մասով էվակուացվել էր երկրի խորքերը: Սակայն բոլորի, այդ թվում և Գերմանիայի դեսպանի, համար հանելուկ մնաց, թե ինչո՞ւ անգլիական նավատորմը, որն առանց ռազմական միջադեպերի արդեն հասել էր Մարմարա ծով, շրջեց ուղղությունն ու վերադարձավ Անգլիա: Հայտնի էր, որ այդ մասում նեղուցը պաշտպանում էին ընդամենը երեք ոչ մեծ տրամաչափի հրանոթ, և ունեին ընդամենը մեկ արկ, այն էլ արձակեցին առաջին նավի վրա, որը ոչ մի վնաս չպատճառեց ռազմանավին: Այդ էլ պատճառ դարձավ, որ Չերչիլը նավատորմը չվտանգելու պատրվակով հրաման արձակի վերադառնալ: Օրեր անց Կ. Պոլիս վերադարձած թուրքական իշխանությունները հրամայեցին Օսմանյան կայսրության գրեթե ամբողջ տարածքում սկսել կանխավ ծրագրված հայերի տեղահանություններն ու զանգվածային կոտորածները: 1915թ. ապրիլի 24-ին ընթացքի մեջ դրվեց Հայոց Մեծ եղեռնը... (մանրամասները տե՛ս, H. Morgenthau, Secrets of Bosphorus, Constantinopol 1913-1916, L., 1918, կամ Հ. Մորգենթաու, Ամերիկայի դեսպանի հուշերը և հայկական եղեռնի գաղտնիքները, Ե., 1990թ.):

2. Չերչիլի սույն հոդվածը ասես Արաբացու հարցազրույցի պատասխանը լինի: Այս հատվածով Չերչիլը հակադարձում է Արաբացուն, որը նույն կերպ՝ «անտանելի և բնաջնջման ենթակա» էր ներկայացնում բոլոր հին ազգերն ու քաղաքակրթությունները:

3. Չերչիլի կանխատեսումը, ցավոք, իրագործվում է նաև եվրոպական երկրներում, որտեղ եկեղեցիների մի ստվար մասը վերածվել է թանգարանների, մեկ այլ բաժին էլ աճուրդի է հանվել ու վաճառվել: Իրողություն, որ եվրոպական քաղաքակրթությունը իր պատմության ընթացքում չէր տեսել:

4. Տե՛ս, Ալան Դալեսի հայտնի ծրագիրը:

5. Սպարտակուս Վայսհաուպտը 18-րդ դարի վերջերի մասոնության գլխավոր հիմնադիրներից և գործիչներից էր:

6. Չերչիլ-Տրոցկի հակասությունը պայմանավորված է աշխարհի կառավարման ձևի տարբերությունով: Չերչիլը կողմնակից է **միաբևեռությանը**, երբ ընդամենը մեկ գերտերություն է լինելու աշխարհի կառավարողը: Տրոցկին կողմ է **միակենտրոն** կառավարմանը. ասել է թե՝ աներևույթ, ուստի և պատասխանատվության ոչ ենթակա կառավարում, երբ անձնապես հայտնի չեն աշխարհի բուն կառավարողներն ու համակարգը, հայտնի են միայն նրանց ենթակա կառույցները: Մեծ Բրիտանիայի կայսրությունը, ԽՍՀՄ-ը **միաբևեռ** կառավարման գերտերությունների օրինակներից էին, ԱՄՆ-ը, Եվրոմիությունը՝ աշխարհի **միակենտրոն** կառավարման օրինակներից: Տե՛ս, «Ուխտ Արարատի», թիվ 2/13, 2007թ., «Հայաստանը աշխարհի միակենտրոն, անմիջական և աներևույթ ղեկավարման նոր ուժային մեխանիզմի կիզակետում» հոդվածը և կից քարտեզը:

Այսինքն՝ սառը պատերազմը ոչ թե ԱՄՆ-ԽՍՀՄ երկբևեռության հետևանք էր, այլ իրականում **միակենտրոնի** և **միաբևեռի** հակամարտություն: Այսօր էլ ԱՄՆ-Ռուսաստան հակամարտության հիմքում նույն՝ **միակենտրոնության** և **միաբևեռության** հակամարտությունն է:

Հակաբնական իրողությունները դատապարտված են կործանման: Չեն կարող փրկվել, եթե **միակենտրոնականն** ու **միաբևեռականը** հակամարտելու փոխարեն անգամ որոշեն համագործակցել: Հայտնի է, որ անհնար է ինքնակառավարվողին կառավարել հենց միայն այն պատճառով, որ նա ինքնակառավարվող է: Մարդկային աշխարհը, գլոբալ քաղաքակրթական ընդհանրությունը անցյալում, ներկայում և ապագայում անհնար եղավ, չի հաջողվում, հնարավոր չի լինի կառավարել: Քանզի նա իր բնությամբ միմիայն ինքնակառավարվող է՝ ինքնակարգավորվող է, ինքնավերակարգավորվող ու ինքնազարգացող է:

Սա է բնականը, բնագիտորեն բնականոն ու հոգևոր ընկալումով միակը՝ Աստվածայինը:

7. Տե՛ս, Արաբացու հարցազրույցը Լինկոլն Սթեֆընսի հետ, «Այդ անտանելի հայերը», որտեղ ասված է. «Ինչպես հայերն են, ինչպես բոլոր այս հին ազգերն էլ, որոնց պետք է ոչնչացնել»:

8. Տե՛ս, սույն հոդվածի տողատակ 5-րդ կետում տրված **միակենտրոնության** և **միաբևեռության** բացատրությունը:

ՊԱՈՒԼ ՌՈՐԲԱԽ

ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՒԹՅԱՆ ԲՈՆԱԳԱՂԹԻ ԱՌԱՋԻՆ ՄԵԾ ԾՐԱԳԻՐԸ

Միգուցե մարդկությունը խուսափեր Առաջին և Երկրորդ համաշխարհային պատերազմների արհավիրքներից, եթե որպես կանխարգելող միջոց՝ ազգամիջյան ատելության սերմանման, պատերազմի ու ցեղասպանության քարոզչության, մեծ պետությունները պատասխանատվության կանչեին բոլոր ռորբախներին: Խնդիր, որը կարևորվում է, ըստ էության, ընթացքի մեջ դրված երրորդ համաշխարհային աղետը կանխելու հարցում:

Ռորբախ Պաուլ, գերմանացի քաղաքական և հասարակական գործիչ: Գերմանա-հայկական ընկերության նախագահի տեղակալներից: Գրել է մի շարք աշխատություններ՝ նվիրված Մերձավոր Արևելքում Գերմանիայի քաղաքականությանը, որոնցում գնահատել է Արևմտյան Հայաստանի նշանակությունը Գերմանիայի տնտեսական և քաղաքական շահերի տեսանկյունից: «Բաղդադի երկաթուղի» (1902) աշխատության մեջ հիմնավորել է այդ շինության նշանակությունը Մերձավոր և Միջին Արևելքում Գերմանիայի նվաճողական քաղաքականության դիրքերից, նշել Արևմտյան Հայաստանով այն անցկացնելու նպատակահարմարությունը, որը կնպաստեր այդ տարածաշրջանում Գերմանիայի ազդեցության ամրապնդմանը: Ռորբախը գրել է. «Նա ով տիրում է Հայաստանին, անմիջականորեն տիրում է ինչպես Փոքր Ասիայի արևելյան մասին, այնպես էլ Միջագետքին» (“Война и германская политика”, 1915, с. 63): Ընդգծելով այն կարևոր նշանակությունը, որ ուներ Հայաստանը Օսմանյան կայսրության համար, Ռորբախը շեշտել է, որ «Թուրքիան թե՛ քաղաքական և թե՛ ռազմական առումով կկորցնի իր կենսունակությունը հենց որ կորցնի Հայաստանը, հատկապես եթե այն կորցնի հօգուտ Ռուսաստանի» (նույն տեղում, էջ 62): **Ելնելով դրանից՝ Ռորբախը դեմ էր Արևմտյան Հայաստանի անկախությանը, պաշտպանել է այնտեղից հայերի տեղահանության մասին Թուրքիայի իշխող շրջանների ծրագրերը: Նշել է, որ «Արևմտյան Հայաստանից պետք է դուրս անել բնիկ հայերին», իսկ նրանց տեղում բնակեցնել Թրակիայից և Ռուսաստանից բերված մահմեդականների: Եթե այդպես վարվեին, ապա Հայաստանը մեկ հարվածով կպոկվեր Ռուսաստանի ձեռքից»:** Ռորբախն առաջարկել է արևմտահայերին գաղթեցնել Միջագետք, ինչը, նրա կարծիքով, կնպաստեր «ճանապարհի տնտեսական զարգացմանը»:

Ս. ՍՏԵՓԱՆՅԱՆ

Գրականություն

Պ. Ռորբախ, «Բաղդադի երկաթուղի», (գերմ.) Die Bagdadbahn, B., 1902; Война и германская политка, М., 1915.

Տրոցկի (Բրոնշտեյն) Լև Դավիդովիչ (1897-1940): Քաղաքական գործիչ, «տրոցկիզմի» գաղափարախոս: Սոցիալ-դեմոկրատական շարժման մեջ էր 1897թ., Կոմկուսի անդամ էր 1917-1927թթ., 1905-1907թթ.՝ հեղափոխության մասնակից (Պետերբուրգի խորհրդի նախագահ), 1917թ. Հոկտեմբերյան հեղափոխության մասնակից՝ Պետրոգրադի խորհրդի նախագահ: 1917-1918թթ. եղել է ՌՍՖՍՌ-ի Արտաքին գործերի ժողովրդական կոմիսար: Կարմիր բանակի կազմավորման և քաղաքացիական պատերազմի ժամանակ ՌՍՖՍՌ-ի պաշտպանության կազմակերպիչներից մեկն էր: 1918-1924թթ. եղել է Ռազմական և ծովային ժողովրդական կոմիսար, նաև Ռազմահեղափոխական խորհրդի նախագահն էր, միաժամանակ և 1920-1921թթ. ճանապարհների ժողովրդական կոմիսար: 1925-1926թթ. ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի նախագահության անդամ էր: Կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամ էր 1917-1927թթ.: Իսկ 1919-1926թթ. Կենտկոմի քաղբյուրոյի անդամ: 1929թ. հակասովետական գործունեության պատճառով արտաքսվել է ԽՍՀՄ-ից:

«Տրոցկիզմը» դեռևս գործուն գաղափարախոսություն է: Մի շարք երկրներում, այդ թվում՝ Մեծ Բրիտանիայում, Իտալիայում, ԱՄՆ-ում, ԳՖՀ-ում, Ֆրանսիայում, Ճապոնիայում, Արգենտինայում, Բոլիվիայում և Բելգիայում առ այսօր շարունակում են գոյություն ունենալ և գործել տրոցկիստական խմբեր: «Տրոցկիզմը» մերժում է խաղաղ համակեցության սկզբունքը: Սոցիալիզմի կառուցումը մեկ երկրում հնարավոր է համարում միայն համաշխարհային հեղափոխության հաղթանակի դեպքում:

Сов. энциклопедический словарь, Москва, 1989г., стр. 13-71.

Լ. Բ. ՏՐՈՑԿԻ [1],

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ԹՈՒՐՔԻԱՆ ԱՌԱՋԻԿԱ ԿՈՆՖԵՐԱՆՍՈՒՄ [2]

(ՀՐԱՊԱՐԱԿՎԵԼ Է Ա. ՍԿԱՉԿՈՎ ԿԵՂՃԱՆՈՒՆՈՎ)

Արևելյան չորս պետությունների՝ Սովետական Ռուսաստանի, Ադրբեջանի և իմպերիալիզմի դեմ կռվող Թուրքիայի առաջիկա կոնֆերանսը բացառիկ կարևոր նշանակություն ունեցող իրադարձություն է[3]: Այն շրջադարձային կետ պիտի հանդիսանա Համաշխարհային Հեղափոխության պատմության մեջ: Այդ կոնֆերանսում պետք է կատարվի երկուսից մեկը. կամ՝ արևելյան պետությունները իրար հետ պետք է կապ հաստատեն, և այն ժամանակ իմպերիալիզմի դեմ մղվող պայքարը կստանա չտեսնված ուժ ու ծավալ, կամ, փոխադարձ համաձայնության չգալով և մեկը մյուսից երես դարձնելով, նրանք դրանով իսկ հարված կհասցնեն հեղափոխության զարգացմանը արևելքում: Իսկ հեղափոխության մասնատումը արևելքում առաջ կբերի հեղափոխության հարատև ձգձգում արևմուտքում:

Համաշխարհային սոցիալիստական հեղափոխության հաղթանակն այժմ հավասարապես կախված է ինչպես հեղափոխական պրոլետարիատից[4], այնպես էլ իմպերիալիզմի կողմից ճնշված արևելյան երկրներից[5]: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է գործադրել բոլոր ջանքերը, որպեսզի կոնֆերանսի մասնակից արևելյան երկրները միահամուռ ճակատով ելույթ ունենան ընդդեմ արևմտաեվրոպական իմպերիալիզմի: Դրա համար անհրաժեշտ է, որ այդ պետությունները իրար նկատմամբ այնպիսի զիջումներ անեն[6], որոնք ի վիճակի լինեն վերացնելու փոխադարձ դժգոհությունը և անվստահության բոլոր առիթները:

Ինչպիսի՞ն պետք է լինեն այդ զիջումները, և ո՞վ պիտի իր վրա վերցնի զիջումների նախաձեռնությունը՝ արևելքում բարեկամական հարաբերություններ ստեղծելու համար: Այստեղ պետք չէ աչքաթող անել այն հանգամանքը, որ կոնֆերանսում հանդիպում կունենան երեք սոցիալիստական[7] և մեկ բուրժուա-նացիոնալիստական պետություններ: Կհանդիպեն երկու աշխարհայացքներ և այդ աշխարհա-

յացքների էությունից կբխի, թե ի՞նչ զիջումներ պետք է արվեն: Եվ այդ զիջումներն ո՞ւմ համար կլինեն կարևոր: Այն ժամանակ, երբ ազգայնա-պետական շահերը հետապնդող Անկարայի կառավարության համար չափազանց կարևոր նշանակություն ունի թուրքական տերիտորիայի պահպանման և գուցե նաև նորերի վերցման[8] հարցը, որոնք սոցիալիստական պետությունների համար ոչ տերիտորիայի և ոչ էլ ազգային միասնության համար կարևոր դեր չեն խաղում: Առաջիկա կոնֆերանսում սոցիալիստական պետությունները, իհարկե, կղեկավարվեն ազգային-գաղութային հարցերի մասին ընկեր Վ. Լենինի առաջ քաշած սկզբունքով, որն ասում է.

«Պրոլետարական ինտերնացիոնալիզմը պահանջում է.

Առաջին՝ մեր երկրում պրոլետարական պայքարի շահերը ենթարկել համաշխարհային մասշտաբով նույն պայքարի շահերին:

Երկրորդ՝ պահանջում է, որպեսզի բուրժուազիայի դեմ հաղթանակ տարած ազգը ազգային մեծագույն զոհաբերությունների ընդունակություն և պատրաստակամություն ցուցաբերի հանուն միջազգային իմպերիալիզմի տապալման»:

Համաշխարհային մասշտաբով պրոլետարական պայքարի շահերը պահանջում են իմպերիալիզմի լծից ազատագրել միջազգային կապիտալիզմը սնող գաղութային և կիսագաղութային երկրներին: Հենց դրանով իսկ այդ պայքարի շահերը պահանջում են ամեն կերպ պաշտպանել Թուրքիային[9], որն առայժմ ԱՆՏԱՆՏ-ի իմպերիալիստական պետությունների[10] դեմ ակտիվ պայքարող արևելքի միակ կիսագաղութային երկիրն է: Այդ պայքարում Թուրքիային օժանդակելու համար պայմանավորվող երկրները պետք է բավարարեն նրա ազգային պետական պահանջները: Անկարայի ազգային բուրժուական պետությունը չի ցանկացել և այժմ էլ չի ցանկանում հաղթահարել իր նացիոնալիզմը[11]: Սակայն սոցիալիստական պետությունները[12], այնուամենայնիվ, պետք է հաղթահարեն իրենց նացիոնալիզմը[13] և համաշխարհային հեղափոխության շահերի համար զոհաբերեն ոչ միայն իրենց տերիտորիաները, այլև նույնիսկ իրենց ցեղակիցների խմբերին[14]: Եթե մենք հավատ ունենանք պրոլետարական հեղափոխության նկատմամբ, ապա պետք է հասկանանք, որ այդ բոլոր զոհաբերությունները միայն ժամանակավոր են: Համաշխարհային հեղափոխության հաղթանակից հետո նրանք ամբողջովին չեղյալ կհամարվեն: Եթե նույնիսկ Անկարայի պետությանը կասկածենք համաշխարհային իմպերիալիզմին հարելու մեջ, որ նա ցանկություն ունի իր իշխանության տակ պահելու հայկական բնակչության տերիտորիաները և նույնիսկ ցանկանում է գրավել Կովկասը, ապա այդ դեպքում էլ հարկ չկա վախենալու Թուրքիայից, քանի որ նրա իմպերիալիստական մտադրությունները, եթե իրոք գոյություն ունեն, ապարդյուն կլինեն հենց այն պատճառով, որ Եվրոպայում պրոլետարական հեղափոխության հաղթանակի դեպքում անխուսափելի կլինի կոմունիզմի հաղթանակը նաև Թուրքիայում, որը չունի իր սեփական արդյունաբերությունը և չի էլ կարող Եվրոպայից անկախ գոյություն ունենալ: Սոցիալիստական պետությունները, հավատալով պրոլետարական հեղափոխության անխուսափելիությանը, պետք է հանուն այդ հեղափոխության հաղթանակի զիջումներ անեն նացիոնալիստական պետություններին՝ հիշելով որ այդ զոհաբերությունները միայն ժամանակավոր բնույթ են կրում: Եթե 1920-ին Ռուսաստանը կարող էր զոհաբերել Ուկրաինային[15], այսինքն՝ ըստ էության ինքն իրեն, հանուն նոր բոցավառվող կոմունիզմի օջախի փրկության, ապա այժմ արևելքում հեղափոխության զարգացման շահերի համար սոցիալիստական պետությունները պետք է որոշ զիջումներ անեն Թուրքիային, որն արևելյան երկրներում իմպերիալիզմի դեմ պայքարի օջախ է: Այս բոլոր նկատառումները վերաբերում են Հայաստանին, քանի որ ո՛չ Ռուսաստանը և ո՛չ էլ Ադրբեջանը Թուրքիայի հետ վիճելի հարցեր չունեն: Կոնֆերանսում գլխավոր հարցը Հայկական հարցն է, այսինքն՝ այն, որ Թուրքիայի և Հայաստանի միջև վերացվեն բոլոր թյուրիմացությունները[16] և հաստատվեն բարեկամական հարաբերություններ[17]: Հայաստանն անպայմանորեն պետք է ղեկավարվի ազգային մեծագույն զոհաբերությունների վերաբերյալ լենինյան սկզբունքով: Նա պետք է հրաժարվի ոչ միայն ծովից ծով Հայաստանի մասին դաշնակցական իմպերիալիստական մտադրություններից, այլև նույնիսկ հայկական անվանվող հողերը միացնելու համեստ ցանկությունից[18]:

Այսպես՝ Հայաստանը պետք է հրաժարվի Վանի ու Բաղեշի (Բիթլիսի) վիլայեթները վերադարձնելու պահանջից, քանի որ ներկա պայմաններում այդ պահաջները պետք է համարել անհիմն: Ճիշտ է, այդ վիլայեթներում հայկական բնակչությունը կազմել է 40%, իսկ որոշ սանջակներում նույնիսկ բացարձակ մեծամասնություն: Ճիշտ է և այն, որ պատերազմի ժամանակ հայկական բնակչությունը էնվերի կառավարության կողմից ենթարկվել է բռնության, աքսորվել է, կոտորվել է, ջնջվել, իսկ մի մասն էլ ցրվել է ամբողջ Փոքր Ասիայում, Կովկասում, սակայն ճիշտ է նաև այն, որ այդ տերիտորիաներում հայկական բնակչության թիվը այժմ կազմում է 5-10%, ըստ 1919թ. Հարբորդի ամերիկյան հանձնաժողովի տվյալների[19]:

Հանձնաժողովը ոչ մի հավակնություն չուներ պակասեցնելու հայկական բնակչության թիվը: Բացի դրանից, Վանի և Բիթլիսի իսկական տերերը[20] (ըստ ռեալ ուժի) ոչ թե թուրքերն են, այլ քրդերը[21], որոնք ոչ մի կերպ չեն համաձայնվի Հայաստանին հանձնելու իրենց հողերը: Երբ թուրքական արտակարգ դեսպանության ներկայացուցիչը Մոսկվայից[22] վերադառնալուց հետո Անկարայի ազգային ժողովին զեկուցեց, թե Ռուսաստանը հաշտության պայման է դնում Վանի ու Բիթլիսի զիջումը Հայաստանին, քուրդ դեսպանները տեղերից գոռացին՝ «չհանձնել, թող հայերը փորձեն գալ ու վերցնել»: Ուժերի լրջմիտ հաշվառման դեպքում հայերը պետք է հասկանան, որ իրենք ուժեր չունեն այդ վիլայեթները վերցնելու համար: Հայերը կարող են այդ վիլայեթները գրավել միայն Ռուսաստանի օգնությամբ, սակայն, դրա հետ միասին, նրանք պետք է հասկանան, որ Կարմիր բանակը տվյալ պայմաններում նրանց համար չի գրավի Վանը և Բիթլիսը: Հայաստանի շահերի համար Կարմիր բանակի մտնելը Թուրքիա՝ կնշանակեր թուրք ժողովրդին և ամբողջ արևելքին ապացուցել, որ Սովետական Ռուսաստանը շարունակելու է ցարական Ռուսաստանի քաղաքականությունը, որ ռուսական կոմունիզմը դա ռուսական քողարկված իմպերիալիզմ է: Պայքար սկսել Թուրքիայի դեմ, նշանակում է տապալել հեղափոխությունը և անգլիական իմպերիալիզմի դեմ պայքարը ամբողջ արևելքում: Պարզ է, որ Սովետական Ռուսաստանը երբեք այդ քայլը չի կատարի, նույնիսկ եթե Հայաստանում Վանից և Բիթլիսից խառնված փախստականները ենթարկվեն անտանելի զրկանքների: Եթե Թուրքիայում մնացած հայությունը կառավարության կողմից այժմ հետապնդվի ու ճնշվի, միևնույնն է, Հայաստանին, մի որոշ ժամանակ, ոչինչ չի մնում անել, քան հաշտվել ստեղծված դրության հետ և հանուն համաշխարհային հեղափոխության շահերի՝ զոհաբերել, թե՛ իր նախկին տերիտորիաները և թե՛ Թուրքիայում մնացած սեփական ժողովրդի մի մասը[23]:

Հայաստանը պետք է հրաժարվի ոչ միայն այդ տերիտորիաներից, այլ նաև այն տերիտորիաներից, որոնք այժմ գտնվում են անկախ Հայաստանի կազմի մեջ[24]:

Հայկական Կարսի և Արդահանի մարզերը չպետք է կռվախնձոր դառնան Հայաստանի և Թուրքիայի միջև[25]: Հայկական կառավարության կողմից այդ տերիտորիաների վերագրավումը պետք է դիտել որպես իմպերիալիստական ակտ, քանի որ այդ տերիտորիաների բնակիչների 67%-ը

մահմեդականներ են, այդ իսկ պատճառով Հայաստանը ոչ մի իրավունք չունի ազգային ինքնորոշման սկզբունքով այդ տերիտորիաների նկատմամբ պահանջ[26] ներկայացնելու:

Իհարկե, կարելի է ասել, որ Կարսով և Արդահանով շահագրգռված է ոչ միայն Հայաստանը, այլև Ռուսաստանը, քանի որ այդ վայրերը Կովկասում պլացդարմ են ու մատույցներ: «Ով տիրում է Կարսին, նա տիրում է Կովկասին»: Սովետական Ռուսաստանը միջազգային հարցերը չի դիտում իր պետական շահերի տեսակետով, նա հավատ ունի համաշխարհային հեղափոխության հաղթանակի նկատմամբ և գիտի, որ այդ հաղթանակից հետո բոլոր պլացդարմներն ու մատույցները կորցնում են իրենց նշանակությունը: Հենց այդ պատճառով Ռուսաստանը ընդունելի կհամարի Կարսի և Արդահանի զիջումը[27] և նրանց ժամանակավոր թողնումը[28] Թուրքիայի իշխանության ներքո[29] մինչև այն ժամանակ, երբ համաշխարհային հեղափոխությունը ամեն ինչ կարգի բերի:

Եթե աշխատավոր Ռուսաստանը և Հայաստանը հանուն արևելքում հեղափոխության զարգացմանը կարող են հայտնի զիջումներ անել Թուրքիային, ապա Անկարայի կառավարությունը պետք է հասկանա, որ ժամանակակից Սովետական Հայաստանը դաշնակցական Հայաստան չէ, որ հայ կոմունիստների և դաշնակցականների միջև որևէ հաջորդականություն չկա, և որ անմտություն է նրա կողմից Սովետական Հայաստանի նկատմամբ ցուցաբերել թշնամական վերաբերմունք, ինչպես այդ եղել է դաշնակցականների[30] ժամանակ: Անկարայի կառավարությունը հայ կոմունիստներից պետք չէ պահանջի կատարելու դաշնակցականների հետ կնքված պայմանագրերը: Անկարայի կառավարությունը պետք է հասկանա, որ հեղափոխական Թուրքիայի թշնամին՝ դաշնակցական Հայաստանը, մահացած է, եթե նա փորձի հարություն առնել, ապա դաժան կերպով կջախջախվի ինչպես հայ ժողովրդի, այնպես էլ նրան պաշտպանող Սովետական Ռուսաստանի կողմից: Այդ իսկ պատճառով կարիք չկա վախենալու դաշնակցականների հարություն առնելուց, այլ կարելի է համարձակ կերպով հավատալ կոմունիստների կողմից ղեկավարվող հայ ժողովրդի բարեկամական հարաբերություններին և չպահանջել նրանցից ոչ մի ստորացուցիչ երաշխիք, ինչպիսին է զինաթափումը և այլն:

Անկարայի կառավարությունը քաջ գիտե, որ հայ-թուրքական թշնամությունը մեծ տերությունների քաղաքական արդյունքն է[31]: Չկա ցարական Ռուսաստանը[32]: Այժմ, երբ չկա ցարական Ռուսաստանը և Հայաստանը ազատվել է ԱՆՏԱՆՏ-ի ազդեցությունից, հայության թշնամության պատճառները վերանում են և ոչ մի հիմք չկա նոր շարունակության:

Ազդեցիկ հրապարակախոս Մ. Պավլովիչ Որոնտյովը իր վերջերս լույս տեսած «Ազգային և գաղութային» գրքում գրել է. «Հայաստանում սովետական կարգերի հաստատումը մի քայլ է[33] Կովկասի, Վրաստանի, Հայաստանի և Անատոլիական Թուրքիայի[34] ֆեդերացիայի ստեղծման համար, ֆեդերացիա, որի կորիզը կլինի և որի շուրջը կհամախմբվեն արևելքի մյուս պետությունները»:

Անկարայի կառավարությունը պիտի հասկանա, որ Հայաստանի սովետականացումով արդեն հնարավորություն է ստեղծվում ոչ թե նրա դեմ պայքարելու[35], այլ նրա հետ համախմբվելու՝ իմպերիալիզմի դեմ ընդհանուր պայքարի համար: Եթե մի կողմից Անկարայի կառավարությունը հասկանա դա և կարողանա բարձր կանգնել կույր և տարերային ազգային ատելությունից, իսկ մյուս կողմից Հայաստանը հետևի Լենինի՝ ազգային զոհաբերության մասին պատգամին, ապա այդ ժամանակ կարելի կլինի համոզվածությամբ պնդել, որ առաջիկա կոնֆերանսը վերջ կտա բոլոր թյուրիմացություններին, անվստահություններին ու մասնակից պետություններին կմիավորի անխախտելի բարեկամության ամուր շղթայով: Ահա այդ ժամանակ արևելքում հեղափոխության համար կբացվի իմպերիալիզմի դեմ հաղթանակի փայլուն դարաշրջան:

Ա. ՍԿԱՉԿՈՎ

Հ.Գ. - Տրոցկու սույն հոդվածը լույս է տեսել Ազգային գործերի ժողովրդական կոմիսարիատի «Ժիզն նացիոնալնոստեյ» թերթում, 4-ը մարտի 1921թ., Մոսկվայում:

Տրոցկին 1918-1924թթ. եղել է Ռազմական և ծովային ժողովրդական կոմիսար: Սկաչկովը այդ գերատեսչության կադրերից էր, ում անունով էլ Տրոցկին ստորագրել է հոդվածի տակ:

Ծանոթագրություն

1. Չնայած նրան, որ Տրոցկու սույն հոդվածում նշված գաղափարներն ու առաջարկվող քաղաքականությունը խստագույնս քննադատել էր Չերչիլը 1920թ., սակայն, ըստ էության, նույն այդ մոտեցումներն է, որ 20 տարի է ինչ բացահայտորեն իրականացնում են ԱՄՆ-ը, Մեծ Բրիտանիան, Եվրոմիությունը: Այն տարբերությամբ միայն, որ համաշխարհային հեղափոխություն ասվածը փոխարինվել է գլոբալացումով, իսկ պրոլետարիատի դիկտատուրան՝ կապիտալի դիկտատուրայով, որպես համաշխարհային կառավարություն. այն էլ, ինչպես Տրոցկու մոտ, իբրև թե հանուն «ժողովրդավարության» և «խաղաղ համակեցության»:

2. Նկատի ունի 1921թ. փետրվարի 26 - մարտի 16-ի մոսկվայան ռուս-թուրքական կոնֆերանսը, որը հոդվածի հրապարակման պահին ընթացքի մեջ էր, և Հայաստանի ու հայությանն առնչվող բոլոր հարցերի շուրջ պայմանավորվող կողմերը՝ Թուրքիան և ՌՍՖՍՌ-ը, արդեն իսկ եկել էին վերջնական համաձայնության, որն էլ ամրագրվեց՝ որպես 1921թ. մարտի 16-ի Ռուս-թուրքական եղբայրության և բարեկամության պայմանագիր:

3. Հոդվածը գրված է եղել ամիսներ առաջ, այդ իսկ պատճառով թվարկման մեջ չորրորդ պետության անունը բացակայում է: Չորրորդ պետությունը Սովետական Հայաստանն էր, որտեղ 1921թ. փետրվարի 18-ից մինչև ապրիլի սկիզբը սովետական իշխանությունը տապալված էր:

4. Մեր օրերում իրականացվող քաղաքականության տեսանկյունից պետք է հասկանալ՝ Եվրոմիության ու նրա հարևան երկրներից:

5. Հիշեցնենք. այդ Արաբացին էր, որ 1925-ին «ճնշված արևելյան երկրները» ներառավ բրիտանական կայսրության մեջ, որպես «Առաջին գունավոր դոմինյոն», որոնք ըստ ներկա իրողությունների, Ռալֆ Պիտերսը ներկայացնում է՝ որպես Նոր Միջին Արևելք տարածաշրջանում նշված երկրներ:

6. Ըստ ԱՄՆ-ի ներկայիս քաղաքականության, արևելյան տարածաշրջանի երկրների՝ Հայաստանի, Թուրքիայի, Իրանի, Աֆղանստանի, Պակիստանի, Սիրիայի և այլոց զիջումների մանրամասները տես Ռալֆ Պիտերսի հոդվածում ու կից քարտեզում:

7. «Երեք սոցիալիստական պետություններից» մեկը Սովետական Հայաստանն էր, որի մասնակցությունը կոնֆերանսին, Թուրքիայի պահանջով, ՄԵՐԺՎԵՑ դեռ հունվարի վերջին: Ի դեպ, 1920թ. աշնանը մերժվել էր նաև կոնֆերանսը նախապատրաստող ՌՍՖՍՌ - Թուրքիա բանակցություններին Հայաստանի Հանրապետության մասնակցությունը, հակառակ այն փաստի, որ բանակցության հիմնական թեման վերաբերում էր Հայաստանին ու հայությանը:

8. Նկատի ունի Կարսի, Արդահանի, Սուրմալուի, նաև Նախիջևանի ու Զանգեզուրի տարածքները: Նախիջևանը Զանգեզուրի հետ միասին Գարեգին Նժդեհի և Զանգեզուրի

բնակչության ջանքերով փրկվեց Թուրքիային բռնակցվելու վտանգից, սակայն, ինչպես հայտնի է, չփրկվեց Հայաստանից բռնանջատվելու և, ըստ թուրքական կողմի առաջարկի նոր տարբերակի, Ադրբեջանին բռնակցվելու ճակատագրից:

9. Նկատի ունի Մուստաֆա Քեմալի կամ Անկարայի իշխանություն ասվածը, որն այդ ժամանակ օրինական իշխանություն չէր և չէր կարող ներկայացնել Թուրքիա պետությունը:

10. Իմպերիալիստական պետություններ ասելով՝ այս դեպքում, նկատի ունի Հայաստանն ու Հունաստանը:

11. Թուրքական պետական նացիոնալիզմ. պետք է հասկանալ, դրա ագրեսիվ, զավթողական, նվաճողական գաղափարախոսությունը՝ պանթուրքիզմը, որին և ծառայեցվեց Ռուս-թուրքական եղբայրության և բարեկամության պայմանագիրը:

12. Նկատի ունի միայն Հայաստանն ու հայությունը, քանի որ, ինչպես նախատեսված էր կոնֆերանսից առաջ ընթացող նախապատրաստական քննարկումների ժամանակ, ինչպես նաև դրանց արդյունքը ամրագրող 1921թ. մարտի 16-ի Ռուս-թուրքական պայմանագրով, միակ երկիրն ու ժողովուրդը, որոնք դրվեցին համաշխարհային հեղափոխության զոհասեղանին, Հայաստանն էր ու հայությունը: Միայն Հայաստանն էր ու հայությունը, որ այդ գործարքի հետևանքում «զոհաբերեց ոչ միայն իր տերիտորիաները, այլև նույնիսկ իր ցեղակիցների խմբերին»:

13. Սոցիալիստական պետությունների նացիոնալիզմ ասվածի տակ Տրոցկին հասկանում է, տվյալ ազգի կողմից հայրենիք ունենալու, հայրենակիցներին, հայրենիքն ու հայրենի պետականությունը պաշտպանելու իրողությունը, որի բնական անօտարելի իրողությունից առաջարկում է հրաժարվել...

14. Եթե Արաբացին ուրիշներին էր առաջարկում մինչև վերջ իրականացնել հայերի բնաջնջումը, ապա Տրոցկու ցինիզմը հասնում է նրան, որ Խորհրդային Հայաստանի իշխանություններին է առաջարկում կամավոր զոհաբերել պայմանագրով Թուրքիային տրվող հայկական տարածքների հայությանը, «իրենց ցեղակիցների խմբերին», այսինքն՝ նպաստել ցեղասպանության շարունակմանը:

15. Ինչպես տեսանք, նույն ձեռագրով, Ռուսաստանը վերջերս կրկին «զոհաբերում է» Ուկրաինային: Կարծում ենք՝ կարիք չկա բացատրելու, թե հիմա հանուն ի՞նչ ապագայի է Ուկրաինան զոհաբերվում:

16. «Թյուրիմացություն» ասելով՝ նկատի ունի 1915-16թթ. և դեռ ընթացքի մեջ գտնվող թուրքական պետության իրականացրած հայերի ցեղասպանությունը:

17. «Թուրքիայի և Հայաստանի միջև վերացվեն բոլոր թյուրիմացությունները և հաստատվեն բարեկամական հարաբերություններ». կատարյալ ցինիզմի այս մոտեցումը, որն ի դեպ ցեղասպանության (կամ ցեղասպանին խրախուսելու) թաքուն քարոզչություն է, մեր օրերում, մի փոքր այլ ձևակերպումով, կրկին կյանքի է կոչվել: Այն սկսել էին իրագործել ԽՍՀՄ-ի ինքնափլուզման՝ «Պերեստոյկայի» դեռ առաջին օրերից, զորօրինակ՝ Վարդգես Պետրոսյանի «13 դատարկ աթոռներ» կամ «Կրակե շապիկ» վերտառությամբ գիրքը: Հիշենք նաև 1990-ականներին շրջանառության դրված ՀՀ նոր իշխանությունների արտաքին քաղաքական գաղափարախոսական այն թեզը, թե մեր **հացի ու լինելիության** ճանապարհը, ոչ այլ ոք, քան բարեկամ Թուրքիան է, որն այլևս այն չէ, ինչ էր 1915-23թթ.:

18. Հեղինակը նկատի ունի միջազգային քաղաքականությունում «Հայկական հարց» անունով արծարծվող Արևմտյան Հայաստանի ու արևմտահայության ազատագրության խնդիրները: Արաբացին ասում էր. **«Հայերը, չպետք է ունենան Հայաստանը, բուն երկիրը»**: Տրոցկին ասում է. «**Հայաստանն անպայմանորեն** պետք է ղեկավարվի ազգային մեծագույն զոհաբերությունների վերաբերյալ լենինյան սկզբունքով: Նա **պետք է հրաժարվի ոչ միայն ծովից ծով Հայաստանի մասին** դաշնակցական իմպերիալիստական **մտադրություններից, այլև նույնիսկ հայկական անվանվող հողերը միացնելու համեստ ցանկությունից**»:

19. Այս գաղափարը ներկայացրել է Պաուլ Ռորբախը 1902-ին, այն պաշտպանում էր Լոուրենս Արաբացին 1919-ին, իրագործում էր Տրոցկին 1921-ին...: Նույն այս գաղափարը, ֆաշիզմին հատուկ տերմինաբանությամբ, արտահայտել է Ռալֆ Պիտերսը 2006-ին, հիմնավորելով, թե հայերը հավակնություններ չպետք է ունենան Արևմտյան Հայաստանի նկատմամբ, քանզի «էթնիկ զտումներն» իրենց գործն արել են, այդ տարածքներում այլևս հայեր չկան: Իրականում այս ամբողջը ցեղասպանության և պատերազմի բացահայտ քարոզչություն է, որպես տարածքների զավթման միջոց, ինչը, համաձայն միջազգային օրենքների, որակվում է՝ որպես հանցագործություն: Տե՛ս, ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի Բանաձև 110 (II), Միջոցներ, որոնք պետք է ընդունվեն ընդդեմ նոր պատերազմի քարոզչության և հրահրողների, 3-ը նոյեմբերի 1947թ.:

20. Ներկայիս Կոսովոյի հայտնի տարբերակն է, ներկայացված դեռևս Տրոցկու կողմից, որտեղ տարածքի իրական տերեր համարվում են ոչ թե սերբերը, այլ բալկանյան թուրքերը, ինչպես Բալկաններում, այնպես էլ Կովկասում՝ այսպես կոչված «ալբանացիները»...

21. Զուգահեռներ կան նախկին և ներկա քաղաքական մոտեցումներում: Առաջիկայում խնդիր է դրվել անջատել Իրաքի (գործընթացը վաղուց տեսանելի է) և Իրանի հյուսիսային շրջանները ու ստեղծել Քուրդիստան երկիր, որի մեջ փորձելու են ներառել Արևմտյան Հայաստանի արևելյան և Արևելյան Հայաստանի արևմտյան շրջանները՝ տարածվելով մինչև Սև ծով: Միջազգային քաղաքականության մեջ հաճախ հանդիպող այս արատավոր ձեռագիրը, ինչպես տեսնում ենք, կրկնվում է. 1921-ին Տրոցկու կողմից քրդերի համար նախանշված դերակատարությունը այսօր վերահաստատում է Ռալֆ Պիտերսը:

22. Նկատի ունի 1919-ի բանակցությունները:

23. Լկտի մոտեցում է, ըստ որի՝ Տրոցկին ոչ միայն «օրինականացնում է» ցեղասպանության արդյունքում առաջացած իրողությունը, այլև առաջարկում է հայությանը մասնակցել ցեղասպանության շարունակությանը՝ զոհաբերվել կամովին: Փոխզիջումների, իրականում միակողմանի զիջումների նույն քաղաքականությունը պարտադրում է մեզ Եվրոմիությունը, երբ տարիներ շարունակ անդրադառնալով, իբրև թե, հայ-թուրքական սահմանի բացման խնդրին, իրականում հայերին առաջարկում է հրաժարվել Արևմտյան Հայաստանից, հաշտվել միջազգային արատավոր դիվանագիտության և քաղաքականության արդյունքում, իրենց իսկ կողմից ստեղծված անօրինական առկա իրողություններին, և միակողմանի զիջումների գնալ Արցախի, Զավախքի հարցերում: Ցեղասպանության դատապարտման պահանջն էլ դիտել՝ որպես հայ-թուրքական հարաբերությունների կարգավորմանը խանգարող «թյուրիմացություն»:

24. Ինչպես ժամանակին՝ 1918-20թթ., անկախ, իսկ 1920 դեկտեմբերից մինչև 1921թ. հուլիսի սկիզբը (Սովետական Ադրբեջանի իսկ վկայությամբ) Հայաստանի անբաժանելի մաս կազմող Արցախի ազատագրումը, ազատ և անկախ իրողությունը, պարզվեց, այսօր էլ կրկին խանգարում է միջազգային նույն (Արաբացու առաջարկած) ծրագրին՝ դրա նորացված նկրտումներին:

25. Ուշադրություն դարձնենք, որ հենց 1921թ. մարտի 16-ի Ռուս-թուրքական (Հայաստանի **համար** կնքված) պայմանագրով էր, որ հայկական այդ մարզերը տրվեցին Թուրքիային, իսկ դա **«օրինական» ուժ** ստացավ 1921թ. հոկտեմ-

բերի 13-ին Կարսում ՀԽՍՀ-ի նույն պայմանագիրը ստիպողաբար կնքելուց հետո: Միջազգային պրակտիկայում աղաղակող այս տարբերակին ապագայում «օրինական» տեսք տալու նպատակով էր, որ Եվրոմիության հարկադրանքով ՀՀ Սահմանադրության փոփոխությունների 2001-2005թթ. բոլոր տարբերակներում՝ 6-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության **համար** միջազգային պայմանագիր, առանց ՀՀ-ի մասնակցության, կարող են կնքել որևէ երկու և ավելի երկիր, որն ուժի մեջ կմտնի ՀՀ նախագահի հաստատումից կամ ՀՀ Ազգային Ժողովի վավերացումից հետո:

26. Հեղինակը նկատի ունի ՀՀ վտարանդի կառավարությունը, որը, համաձայն 1920թ. դեկտեմբերի 2-ի ՀՀ-ի և ՌՍՖՍՌ-ի միջև կնքած պայմանագրի, լքել էր իշխանությունը և մինչև 1922-ի աշունը գտնվում էր Պարսկաստանում: Թուրքիան և բոլշևիկյան Ռուսաստանը անհանգստանում էին, որ հայությունը փորձում է հենց Պարսկաստանում վերամիավորել իր զինյալ ուժերը՝ ազատագրելու Արևմտյան Հայաստանը, կամ, առաջնահերթորեն Կարսն ու Արդահանը: Ի դեպ, այդ խնդրի լուծմանը հետամուտ եղան ՌՍՖՍՌ-ի ջանքերով, որը 1921-ին՝ Ռուս-թուրքական պայմանագիրը Թուրքիայի կողմից վավերացնելուց 6 օր հետո, նոտայով դիմեց Պարսկաստանին՝ հայկական ուժերը այնտեղից դուրս հանելու հարցով: Այնուհետև մինչև 1922թ. դեկտեմբեր նոտաների հեղեղ տեղաց և միայն համաձայն 1921թ. փետրվարի 26-ի Ռուս-պարսկական պայմանագրի 5-րդ կետի, Պարսկաստան զորքեր մտցնելու ՌՍՖՍՌ-ի նոտայից հետո, Պարսկաստանը խնդրեց հայերին հեռանալ երկրից (մանրամասները տես Սիմոն Շահազիզյանի, «Ժամն է անկախ քաղաքականության ճանապարհով քայլելու» հոդվածում, «Ուրբաթ» շաբաթաթերթ, 26 ապրիլի և 3 մայիսի, 1991թ., Երևան):

27. Այստեղ ուշադրության է արժանի երկու հանգամանք. առաջին, որ բոլշևիկյան Ռուսաստանն է որոշում Կարսն ու Արդահանը զիջել Թուրքիային, և երկրորդ՝ զիջումներ հասկացությունն է ինքնին, որն այսօր՝ շուրջ 13 տարի է ինչ հնչեցնում են թե միջազգային դիվանագիտական, թե ներքին քաղաքական շրջանակներում, որպես ազատագրված Արցախի կարգավիճակի լուծման միջոց:

28. Փորձենք մեր օրերում հնչող առաջարկների տեսանկյունից ընթերցել այս հատվածը. **«Հենց այդ պատճառով Ռուսաստանը** (կարդա՝ Եվրոմիությունը) **ընդունելի կհամարի Կարսի և Արդահանի զիջումը** (կարդա՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության) **և նրանց ժամանակավոր թողնումը Թուրքիայի իշխանության ներքո** (կարդա՝ Ադրբեջանի) **մինչև այն ժամանակ, երբ համաշխարհային հեղափոխությունը** (կարդա եվրոինտեգրումը) **ամեն ինչ կարգի բերի»**: Մեր օրերում, սակայն, չի տրվում «քանի՞ տարով» հարցի պատասխանը…

29. Ժամանակի առումով, այն տրված էր 20 տարով, սակայն առ այսօր ժամկետը ԽՍՀՄ-ի կողմից պարբերաբար երկարաձգվել է 20-ական տարով. չնայած նրան, որ եթե ոչ 1950-ական թթ., ապա առնվազն 1991-ին և հենց Գորբաչովին էր քաջ հայտնի, որ «համաշխարհային հեղափոխությունն» այլևս չի հաղթելու: Պայմանագիրը Գորբաչովի կողմից 1991թ. մարտի 12-ին երկարաձգվեց ևս 20 տարով՝ մինչև 2011թ.:

30. Իրականում, մենք տեսանք, որ Թուրքիայի պետական քաղաքականությունը չփոխվեց ո՛չ Հայաստանի Հանրապետության, ո՛չ Խորհրդային Հայաստանի (ո՛չ էլ մեր օրերում նորանկախ Հայաստանի Հանրապետության) նկատմամբ: Տրոցկին էլ դա գիտեր, պարզապես ձևացնում էր՝ հայերի զգոնությունը թուլացնելու նպատակով: Մեր օրերում էլ են ձևացնում՝ թաքնվելով մարդասիրական ու խաղաղասիրական գեղեցիկ հնչող ֆրազների ետևում:

31. Սա հեղինակի միակ ճշմարիտ եզրակացությունն է հոդվածում, այն էլ սակայն օգտագործում է իր հերթական կեղծիքը իբրև հավաստի ներկայացնելու համար:

32. Հիմա էլ նույն քաղաքականությունը ասում է. «Չկա Սովետական Միությունը»:

33. Հետաքրքիր է, որ մեր օրերում «**Հայաստանում սովետական** (կարդա՝ նոր) **կարգերի հաստատումը**»՝ 2005թ. ՀՀ Սահմանադրությունը, ընկալում են՝ որպես նոր հեռանկար տարածաշրջանային ինտեգրման գործընթացների: Ամիսներ առաջ «Ռեգնում» ինտերնետ կայքում դրված Մամեդ Առաքելով կեղծանունը կրող հեղինակի «Անդրկովկասյան ֆեդերացիայի երրորդ փորձը» վերնագրով հոդվածում բառացիորեն ասված է՝ “Между тем формарования Закавказской или, как принято сейчас говорить, Южнокавказской федерации или конфедерации продолжает литать в воздухе и даже обретать некие зримые очертания. кроме очень медленно, но все же набирающей обороты Южнокавказской парламентской инициативы. В конце 2005 года произошли события, которые некоторые наблюдатели склонны увязывать именно с перспективой создания такого гособразования. Речь идет о состоявшемся 29 ноября 2005 г. в Армении референдуме по конституционным поправкам, который очень активно лоббировался европейскими структурами”.

34. Հարկ է լուրջ ուշադրություն դարձնել, որ այն ժամանակ խնդիր չէր դրված Անդրֆեդերացիան ստեղծել միայն Հայաստան, Վրաստան, Ադրբեջան կազմով: Այն ժամանակ, ինչպես և հիմա, այդ նորաստեղծ պետական կազմավորման մեջ իր կարևոր դերը պետք է ունենար նաև Թուրքիան, մի բան, որն այսօր՝ շուրջ 15 տարի է ինչ, սկսած 1992-ից, աստիճանական համբերությամբ, քայլ առ քայլ կառուցում է Եվրոմիությունը՝ առայժմ բավարարվելով այսպես կոչված «Սևծովյան երկրների համագործակցությունով»: Վերջինը դեռ 1903-1908թթ. արևմուտքն անվանում էր «Եվրասիական Միացյալ Նահանգներ», քանզի նա պետք է ներառեր ոչ միայն ամբողջ Կովկասի, այլև Բալկանյան թերակղզու երկրների, Ղրիմի և Օդեսայի, Քիրքուկ - Մոսուլի և Պարսկաստանի հյուսիսային, նաև Աֆղանստանի տարածքները: Հիշեցնենք ներկայիս «Սևծովյան համագործակցության երկրների» ցանկը. 1. Ալբանիա, 2. Հայաստան, 3. Ադրբեջան, 4. Բուլղարիա, 5. Վրաստան, 6. Մոլդովա, 7. Ռումինիա, 8. Ռուսաստան, 10. Սերբիա և Չեռնոգորիա, 11. Թուրքիա, 12. Ուկրաինա: Առավել քան ակնհայտ է, որ 1920-ական թթ. քաղաքականությունը ոչ միայն չի փոխվել, այլև շատ ավելի նեգատիվ զարգացում է ապրել հայերի համար: Պարզ է, թե Կովկասյան ընդհանուր պետություն ասվածը, նախկին անվանումով Եվրասիական Միացյալ Նահանգները, ինչպիսի հեռանկարներ է ներառում:

35. Ասել է թե, Թուրքիայի կողմից դեռևս իրագործվող ցեղասպանությունը, ըստ Տրոցկու, ընդամենը հայերի դեմ պայքար է Հայաստանը Թուրքիայի, Ադրբեջանի, Վրաստանի հետ միավորելու մեկ ընդհանուր ֆեդերացիայի մեջ: Իսկ այնուհետև, երբ թուրքերը դադարեցնեն ցեղասպանությունը, հայերը նրանց հետ ձեռք-ձեռքի պետք է պայքարեն իմպերիալիզմի դեմ՝ հանուն համաշխարհային հեղափոխության հաղթանակի: Հարց է, թե հիմա, այս նոր ֆեդերացիայում, հայերը թուրքերի, ադրբեջանցիների ու վրացիների հետ ձեռք-ձեռքի ո՞ւմ դեմ պետք է պայքարեն՝ հանուն ժողովրդավարության ու մարդու իրավունքների հաղթանակի: Հարց, որի պատասխանը, ի տարբերություն Տրոցկու հոդվածի, դեռևս տրված չէ Մամեդ Առաքելով կեղծանվան տակ թաքնված հեղինակի հոդվածում:

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԵՎ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՄԻՋԵՎ

Մոսկվա, 16 մարտի, 1921թ.

Ռուսաստանի Սոցիալիստական Ֆեդերատիվ Սովետական Հանրապետության կառավարությունը և Թուրքիայի Ազգային մեծ ժողովի կառավարությունը, բաժանելով ազգերի եղբայրության և ժողովուրդների ինքնորոշման սկզբունքները[1], նշելով իրենց միջև գոյություն ունեցող համերաշխությունը իմպերիալիզմի դեմ մղվող պայքարում, ինչպես նաև այն իրողությունը, որ երկու ժողովուրդներից մեկի համար ստեղծված ամեն տեսակ դժվարությունները վատթարացնում են մյուսի դրությունը, և ամբողջովին խանդավառված միմյանց միջև մշտական սրտագին փոխհարաբերություններ և երկու կողմերի փոխադարձ շահերի վրա հիմնված անխզելի բարեկամություն հաստատելու ցանկությամբ, որոշեցին կնքել բարեկամության և եղբայրության պայմանագիր և դրա համար որպես իրենց լիազորներ նշանակեցին՝

Ռուսաստանի Սոցիալիստական Ֆեդերատիվ Սովետական Հանրապետության Կառավարությունը -

Արտաքին գործերի ժողովրդական կոմիսար և Համառուսաստանյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեի անդամ Գեորգի Չիչերինին և Համառուսաստանյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեի անդամ Ջելալ-Էդդին Կորկմասովին, և

Թուրքիայի Ազգային մեծ ժողովի կառավարությունը՝

Թուրքիայի Ազգային մեծ ժողովի ժողովրդական կոմիսար, նույն ժողովում Կաստամոնիից դեպուտատ Յուսուֆ Քեմալ բեյին, թուրքական Ազգային մեծ ժողովի՝ Լուսավորության ժողովրդական Կոմիսար, նույն ժողովում Սինոպից դեպուտատ դոկտոր Ռիզա Նուր բեյին և Թուրքիայի Ազգային մեծ ժողովի լիազոր դեսպան, Անգորայի կողմից Ազգային մեծ ժողովի անդամ Ալի Ֆուադ փաշային,

որոնք իրենց լիազորագրերը փոխանակելով, դրանք գտան պատշաճ և օրինական ձևի, և համաձայնվեցին ներքոհիշյալի շուրջը՝

Հոդված 1. Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրն սկզբունքորեն համաձայնվում է չճանաչել ոչ մի հաշտության պայմանագիր կամ միջազգային որևէ այլ ակտեր, եթե Պայմանավորվող կողմերից մյուսին ուժով են հարկադրում ընդունել այդպիսիք[2]: Ռուսաստանի Սոցիալիստական Ֆեդերատիվ Սովետական Հանրապետության կառավարությունը համաձայնվում է չճանաչել Թուրքիային վերաբերվող և այսօր Թուրքիայի Ազգային մեծ ժողովը ներկայացնող նրա ազգային կառավարության կողմից չճանաչված որևէ միջազգային ակտ:

Թուրքիա հասկացության տակ սույն պայմանագրում հասկացվում են այն տերիտորիաները, որոնք մտցված են 1920 թվականի հունվարի 28-ի թուրքական Ազգային ուխտի մեջ, որը Կ. Պոլսում մշակել և հռչակել է օսմանյան դեպուտատների Պալատը և հաղորդել է մամուլին ու բոլոր պետություններին:

Թուրքիայի հյուսիս-արևելյան սահմանը որոշվում է այն գծով, որն սկսվելով Սև ծովի ափին գտնվող Սարպ գյուղից, անցնում է Խեդիսմեթա սարի վրայով, հետո առաջանում է Շավշետ սարի և Կաննի-դաղ սարի ջրաբաժան գծի ուղղությամբ, այնուհետև շարժվում է Կարսի սանջակների հյուսիսային վարչական սահմանագծի երկարությամբ՝ Արփաչայ և Արաքս գետերի հնահունով՝ մինչև Ստորին Կարասուի գետաբերանը (սահմանագծի մանրամասն նկարագրությունը և դրան վերաբերող հարցերը պարզաբանված են 1(A) և 1(B) հավելվածներում և երկու պայմանավորվող տերությունների կողմից ստորագրված առդրվող քարտեզի վրա):

Հոդված 2. Թուրքիան համաձայնվում է Վրաստանին զիջել Բաթում նավահանգստի ու քաղաքի սույն Պայմանագրի առաջին հոդվածում նշված սահմանագծից դեպի հյուսիս ընկած և Բաթումի մարզի բաղադրիչ մասը կազմող տերիտորիայի սուվերենությունը, պայմանով, որ

սույն հոդվածում նշված վայրերի բնակչությունը վարչական առումով կօգտվի տեղական լայն ինքնավարությամբ, որը յուրաքանչյուր համայնքին կապահովի կուլտուրական և կրոնական իրավունքներով, և բնակչությունը հնարավորություն կունենա սահմանելու իր ցանկություններին համապատասխանող հողային օրենք:

Թուրքիային կտրվի Բաթում նավահանգստի վրայով Թուրքիա կամ այնտեղից ուղարկվող ամեն տեսակ ապրանքների անմաքս, ազատ տրանզիտի իրավունք, տեղի չեն ունենա խափանումներ, ապրանքների վրա չի դրվի ոչ մի տեսակի տուրք: Թուրքիային կտրվի Բաթում նավահանգստից օգտվելու իրավունք և դրա համար նրանից չեն գանձվի հատուկ տուրքեր:

Հոդված 3. Երկու պայմանավորվող կողմերը համաձայն են, որ Նախիջևանի մարզը՝ սույն Պայմանագրի 1-ին (C) հավելվածում նշված սահմաններում կազմի ինքնավար տերիտորիա՝ Ադրբեջանի խնամակալության ներքո, պայմանով, որ Ադրբեջանը սույն խնամակալությունը չի զիջի մի երրորդ պետության[3]:

Թուրքիայի, Ադրբեջանի և Հայաստանի պատվիրակներից կազմված հանձնաժողովը կշտկի Նախիջևանի տերիտորիայի եռանկյունի կազմող՝ արևելքում Արաքսի հնահունի և Արևմուտքում Դաղնա (3829) - Վելի-դաղ (4121) - Բագարզիք (6587) - Քյոմուրլու-դաղ (6930) լեռների վրայով անցնող գծի միջև պարփակված տերիտորիայի սահմանագիծը, որն սկսվում է Քյոմուրլու-դաղ (6930) սարից, հետո անցնում է Սերայ Բուլաք սարի վրայով դեպի Արարատ կայարանը և վերջանում է Քարասուի և Արաքսի տրամախաչման տեղում:

Հոդված 4. Երկու Պայմանավորվող կողմերը հավաստելով Արևելքի ժողովուրդների ազգային ու ազատագրական շարժման և նոր հասարակարգի համար Ռուսաստանի աշխատավորության մղած պայքարի միջև եղած փոխադարձ շփումը, անվերապահորեն ճանաչում են այդ ժողովուրդների ազատության և անկախության իրավունքը, ինչպես նաև իրենց ցանկությունների համեմատ կառավարման ձևի ընտրության իրավունքը:

Հոդված 5. Նեղուցների բացումը[4] և բոլոր ժողովուրդների առևտրանավերի անցման ազատությունն ապահովելու համար, երկու Պայմանավորվող կողմերը համաձայնվում են Սև ծովի և նեղուցների միջազգային ստատուսի վերջնական մշակումը հանձնել ափամերձ պետությունների պատգամավորների ապագա Կոնֆերանսին, պայմանով, որ նրա ընդունած որոշումները չեն վնասի Թուրքիայի լիակատար սուվերենությանը, ինչպես նաև Թուրքիայի և նրա մայրաքաղաք Կ.Պոլսի անվտանգությունը:

Հոդված 6. Պայմանավորվող երկու կողմերն ընդունում են, որ ցայժմ երկու երկրների միջև կնքված բոլոր պայմանագրերը չեն համապատասխանում փոխադարձ շահերին: Ուստի, նրանք համաձայնվում են այդ պայմանագրերը համարել վերացված և ուժը կորցրած:

Ռուսաստանի Սոցիալիստական Ֆեդերատիվ Սովետական Հանրապետության կառավարությունը հայտա-

րարում է, մասնավորապես, որ ինքը Թուրքիային համարում է ազատ առաջներում Թուրքիայի և ցարական կառավարության միջև կնքված միջազգային ակտերի վրա հիմնված դրամական կամ որևէ այլ պարտավորություններից:

Հոդված 7. Ռուսաստանի Սոցիալիստական Ֆեդերատիվ Սովետական Հանրապետության կառավարությունը, կապիտուլյացիաների ռեժիմը համարելով անհամատեղելի յուրաքանչյուր երկրի ազգային ազատ զարգացման, ինչպես նաև նրա սուվերեն իրավունքների լրիվ իրագործման հետ, գտնում է, որ կորցրել են իրենց ուժը և վերացվել են այդ ռեժիմին որևէ առնչություն ունեցող բոլոր գործողություններն ու իրավունքները:

Հոդված 8. Պայմանավորվող երկու կողմերը պարտավորվում են իրենց տերիտորիաներում արգելել այնպիսի կազմակերպությունների և խմբերի[5] առաջացումն ու գոյությունը, որոնք ունեն մյուս երկրի, կամ նրա տերիտորիայի մի մասի կառավարության դերն ստանձնելու հավակնություն, ինչպես նաև պարտավորվում է իրեն տերիտորիայում արգելել այնպիսի խմբերի գոյությունը, որոնց նպատակն է պայքարը մյուս երկրի դեմ: Ռուսաստանն ու Թուրքիան փոխադարձության պայմանով ստանձնում են նույնպիսի պարտավորություն նաև Կովկասի Սովետական Հանրապետությունների վերաբերմամբ:

Համարվում է որոշված, որ սույն հոդվածում հիշատակված թուրքական տերիտորիայի տակ հասկացվում է այն տերիտորիան, որը գտնվում է Թուրքիայի Ազգային մեծ ժողովի կառավարության զինվորական և քաղաքացիական անմիջական կառավարման ներքո:

Հոդված 9. Երկու երկրների միջև հաղորդակցությունների անընդհատությունն ապահովելու համար, Պայմանավորվող կողմերը պարտավորվում են փոխադարձ համաձայնությամբ երկաթուղային, հեռագրային և հաղորդակցության այլ միջոցները պահպանելու և որքան հնարավոր է արագ զարգացնելու, ինչպես նաև առանց որևէ խափանումների երկու երկրների միջև մարդկանց ու ապրանքների ազատ փոխադրումն ապահովելու նպատակով ձեռք առնել բոլոր անհրաժեշտ միջոցները: Սակայն ընդունվում է, որ ինչպես ճանապարհորդների, նույնպես և ապրանքների փոխադրության, մուտքի և ելքի նկատմամբ լիովին կկիրառվեն յուրաքանչյուր երկրում այդ մասին սահմանված կանոնները:

Հոդված 10. Մյուս կողմի տերիտորիայում գտնվող Պայմանավորվող երկու կողմերի քաղաքացիների վրա կտարածվեն այն բոլոր իրավունքներն ու պարտականությունները, որոնք բխում են այն երկրի օրենքներից, որտեղ նրանք գտնվում են, ի բացառյալ ազգային պաշտպանության հետ կապված պարտականությունները, որոնցից նրանք կազատվեն:

Երկու կողմերի քաղաքացիների ընտանեկան իրավունքին, ժառանգության իրավունքին և գործունակությանը վերաբերող հարցերը նույնպես բացառվում են սույն հոդվածի որոշումներից: Դրանք կորոշվեն հատուկ համաձայնությամբ:

Հոդված 11. Երկու Պայմանավորվող կողմերը համաձայն են Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրի տերիտորիայում գտնվող մյուս կողմի քաղաքացիների նկատմամբ կիրառել առավելագույն բարենպաստ սկզբունքը:

Սույն հոդվածը չի կիրառվում Ռուսաստանին դաշնակից Սովետական Հանրապետությունների քաղաքացիների իրավունքների և Թուրքիային դաշնակից մուսուլմանական պետությունների քաղաքացիների նկատմամբ:

Հոդված 12. Մինչև 1918 թվականը Ռուսաստանի կազմի մեջ մտնող այն տերիտորիաների բոլոր բնակիչները, որպիսիք սույն Պայմանագրի հիման վրա Ռուսաստանի Սոցիալիստական Ֆեդերատիվ Սովետական կառավարությունն այսօր ընդունում է որպես Թուրքիայի սուվերենության տակ գտնվող տերիտորիաներ, ունեն իրենց ունեցվածքը կամ դրա արժեքն իրենց հետ վերցնելով Թուրքիայից ազատ հեռանալու իրավունքը: Նույնպիսի իրավունք տարածվում է նաև Բաքումի տերիտորիայի բնակիչների վրա, տերիտորիա, որի սուվերենությունը սույն Պայմանագրով Թուրքիան զիջում է Վրաստանին:

Հոդված 13. Սույն Պայմանագրի ստորագրման օրից հաշված Եվրոպական Ռուսաստանի և Կովկասի համար եռամսյա և Ասիական Ռուսաստանի համար վեցամսյա ժամկետում Ռուսաստանը պարտավորվում է իր հաշվին հայրենիք վերադարձնել մինչև Թուրքիայի հյուսիսարևելյան սահմանը Ռուսաստանում գտնվող բոլոր՝ զինվորական և քաղաքացիական գերի թուրքերին:

Թուրքիան նույն պարտավորությունն ստանձնում է դեռևս Թուրքիայում գտնվող ռուս զինվորական և քաղաքացիական գերիների վերաբերմամբ:

Այս հայրենադարձության մանրամասնությունները կսահմանվեն հատուկ կոնվենցիայով, որը պետք է մշակվի սույն Պայմանագրի ստորագրումից հետո:

Հոդված 14. Երկու Պայմանավորվող կողմերը համաձայն են ամենամոտիկ ժամանակներում կնքել հյուպատոսային կոնվենցիա, ինչպես նաև բոլոր տնտեսական, ֆինանսական և երկու երկրների միջև սույն Պայմանագրի ներածականում նշված բարեկամական հարաբերությունների հաստատման համար անհրաժեշտ մյուս հարցերը կարգավորող համաձայնագիրը:

Հոդված 15. Ռուսաստանը պարտավորվում է Անդրկովկասյան հանրապետությունների նկատմամբ դիմել քայլերի[6], որպեսզի այդ հանրապետությունների կողմից Թուրքիայի հետ կնքվելիք պայմանագրում անպատճառ ճանաչվեն սույն Պայմանագրի այն հոդվածները, որոնք անմիջաբար վերաբերում են իրենց:

Հոդված 16. Սույն Պայմանագիրն ենթակա է վավերացման: Վավերագրերի փոխանակումը կկայանա Կարսում, որքան հնարավոր է կարճ ժամանակամիջոցում:

Սույն Պայմանագիրը, ի բաց առյալ 13-րդ հոդվածը, ուժի մեջ կմտնի վավերագրերի փոխանակման պահից:

Ի վավերացումն շարադրվածի՝ վերոհիշյալ լիազորներն ստորագրեցին սույն պայմանագիրը և կնքեցին այն իրենց կնիքներով:

Կազմված է երկու օրինակով, Մոսկվայում, տասնվեցին մարտի հազար ինը հարյուր քսանմեկ (հազար երեք հարյուր երեսունյոթ) թվականին:

Թարգմանությունը՝ ռուսերենից

Գեորգի Չիչերին, Ջելալ Կորկմասով
Յուսուֆ Քեմալ, Դ-ր Ռիզա Նուր, Ալի Ֆուաադ

Պայմանագիրը վավերացված է ՀԿԴԿ-ի կողմից 1921 թ. հուլիսի 20-ին, Թուրքիայի Ազգային մեծ ժողովի կողմից՝ 1921 թ. հուլիսի 31-ին[7]: Վավերագրերի փոխանակումը տեղի է ունեցել Կարսում՝ 1921 թ. սեպտեմբերի 22-ին:

Ջոն Կիրակոսյան, Ռուբեն Սահակյան, «Հայաստանը

միջազգային դիվանագիտության և արտաքին քաղաքականության փաստաթղթերում՝ 1828-1923թթ.», «Հայաստան» հրտ., Երևան, 1972, էջ 499:

Ծանոթագրություն

1. Հիշեցնենք, որ այդ պահին, երբ իրենք խոսում էին «ազգերի եղբայրության և ժողովուրդների ինքնորոշման» մասին, հայերի ցեղասպանությունը դեռևս ընթացքի մեջ էր:

2. Նկատի ունեն Սևրի խաղաղության պայմանագիրը:

3. Երրորդ պետություն ասելով, նկատի ունեն Հայաստանը:

4. Սա պայմանագրում միակ հոդվածն էր, որ վերաբերում էր Ռուսաստանին, որը, ինչպես հայտնի է, Սևրի Խաղաղության կոնֆերանսում լուծում չստացավ: Լոզանի կոնֆերանսը, բոլշևիկյան Ռուսաստանի ակնկալիքներին հակառակ (Ռուսաստանը առաջարկում էր Թուրքիային՝ նեղուցները հսկել միասին), նեղուցները հայտարարեց ապառազմականացված, առանձնահատուկ կարգավիճակ շնորհեց սևծովյան բոլոր երկրներին, որոնք խաղաղ ժամանակ իրավունք ունեին առանց սահմանափակումների իրենց ռազմանավերը անցկացնել նեղուցներով: Ոչ սևծովյան երկրների համար դրվեցին սահմանափակումներ, ըստ նավերի դասերի, տոննաժի, նաև Սև ծովում մնալու ժամանակահատվածի: Նույնը հաստատվեց 1936թ. Մոնտրեոյի կոնֆերանսում, երբ անդրադարձան նեղուցների հարցին՝ ԽՍՀՄ-ը մնաց նույն կարգավիճակում:

5. Սրանով էր պայմանավորված, որ 1922թ. մինչև 1991թ. Մոսկվան արգելում էր հայությանը և Հայաստանին հիշել 1915թ. Մեծ եղեռնը, և այն, որ 1988թ. նոյեմբերի 22-ին Խորհրդային Հայաստանի կողմից ցեղասպանության դատապարտումը ԽՍՀՄ-ը ինքը ոչ միայն չճանաչեց, այլև չկատարեց սահմանադրական իր պարտավորությունը՝ հարցը Խորհրդային Հայաստանի անունից ներկայացնել ՄԱԿ-ին և Միջազգային Դատարանին:

6. Պարտադրելու քայլերը միայն Հայաստանին էին վերաբերում, քանի որ Վրաստանը և Ադրբեջանը կողմ էին, ըստ սույն պայմանագրի, Հայաստանից բռնանջատվող տարածքները իրենց կցելու:

7. 1920թ. նոյեմբերի 30-ին Սովետական Ադրբեջանի ընդունած հռչակագրի համաձայն՝ Լեռնային Ղարաբաղը, Նախիջևանը և Զանգեզուրը հայտարարվեց Սովետական Հայաստանի անբաժանելի մաս, որոնք, ըստ այդմ, ներառվեցին Սովետական Հայաստանի կազմ: 1921թ. Նժդեհը հավաստիացում ստացավ, թե Զանգեզուրը մնում է Հայաստանի կազմում և հուլիսի 3-ին հեռացավ երկրամասից: Դրանից հետո միայն 1921թ. հուլիսի 5-ին Կովբյուրոյի առանց քվեարկության ընդունած որոշումով Լեռնային Ղարաբաղը բռնակցվեց Սովետական Ադրբեջանին: Իսկ 1921թ. հուլիսի 20-ին պայմանագիրը վավերացրեց Մոսկվայի ՀԿԴԿ-ն, իսկ 1921թ. հուլիսի 31-ին՝ Թուրքիայի Ազգային մեծ ժողովը:

ՀՀ-ն 1918-1920թթ.

ԼՈԶԱՆԻ ԿՈՆՖԵՐԱՆՍ, 1923Թ.

Լոզանի հաշտության պայմանագիր: Ստորագրվել է 23 հուլիսի 1923թ., Լոզանի 1922-23թթ. խաղաղության կոնֆերանսում, մի կողմից՝ Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի, Հունաստանի, Ճապոնիայի, Ռումինիայի, Հարավսլավիայի, (ԱՄՆ-ը ներկա է որպես դիտորդ), մյուս կողմից՝ Թուրքիայի: Փոխարինեց Սևրի 1920թ. Հաշտության պայմանագրին: Հաստատեց Թուրքիայի ներկայիս սահմանները (Իրաքի հետ սահմանի որոշման հարցը հետաձգվեց): Չեղյալ համարեց կապիտուլյացիայի ռեժիմը: Վերացրեց օտարերկրացիների տնտեսական և քաղաքական արտոնությունները Թուրքիայում, նաև միջազգային ֆինանսական հսկողությունը Թուրքիայի նկատմամբ:

Ծանոթագրություն

- Փոխարինումը տեղի ունեցավ առանց Սևրի պայմանագիրը մերժելու:

- «Հաստատեց Թուրքիայի ներկայիս սահմանները» (մինչև 1991թ. կոչվում էր ԽՍՀՄ-Թուրքիա սահման) նշանակում է. օրինականացրեց բոլշևիկյան Ռուսաստանի և քեմալական Թուրքիայի միջև կնքված 1921թ. Ռուս-թուրքական պայմանագիրը, այն դեպքում, երբ երկու կողմերն էլ 1921թ. օրինական իշխանություն չէին իրենց երկրներում, նաև ոչ մի առնչություն չունեին Հայաստանի հետ: Հետևաբար, միջազգային իրավական առումով, այն չի կարող համարվել Հայաստան-Թուրքիա սահման:

- «Իրաքի հետ սահմանի որոշման հարցը հետաձգվեց» մինչև մեր օրերը: «Սահմանգծումը» սկսվեց ԱՄՆ զինուժի Իրաք ներխուժումով, համաձայն՝ Ռալֆ Պիտերսի «Միջին Արևելքի նոր քարտեզի»:

- Հիշենք, որ Հայերի ցեղասպանությունը դադարեց 1923թ. Լոզանի կոնֆերանսից հետո միայն: Ըստ էության, Լոզանի կոնֆերանսը հաստատելով ներկայիս Թուրքիայի սահմանները՝ (այն պարագայում, երբ դեռ ընթանում էր հայերի, նաև հույների ցեղասպանությունը) «նոր կարգ» սահմանեց, ցեղասպանությունների միջոցով և դրանց արդյունքում բռնազավթված տարածքները «նվիրաբերելու» ցեղասպանություն իրագործած պետությանը: «Նվիրաբերելը» Ռալֆ Պիտերսի գործածած տերմինն է:

- Ուշադրություն դարձրեք այն փաստին, որ Լոզանի պայմանագիրը ստորագրած երկրներից Մեծ Բրիտանիան, ԱՄՆ-ը, Ճապոնիան, Ռումինիան, Թուրքիան դեռևս չեն ճանաչել ու չեն դատապարտել 1915-23թթ. Հայոց ցեղասպանությունը:

Լոզանի հաշտության պայմանագիրը տե՛ս, «Հայկական Հարց», հանրագիտարան, Երևան, 1996թ., էջ 161-162:

Վերսալյան – վաշինգտոնյան համակարգի իմպերիալիստական պայմանագրերից մեկն է, որոնք եզրափակեցին Առաջին համաշխարհային պատերազմը: Ստորագրվել է 1920թ. օգոստոսի 10-ին՝ մի կողմից Անտանտի և նրան միացած երկրների, մյուս կողմից՝ Թուրքիայի սուլթանի: Չեղարկեց օսմանյան կայսրության տարածքների մասնատումը, այդ թվում՝ բուն թուրքական: Նոր պայմանագրով փոխարինվել է Լոզանի խաղաղության կոնֆերանսում:

Сов. энциклопедический словарь, Москва, 1989г., стр. 11-98.

Ծանոթագրություն

Իմպերիալիստական ուժեր ասելով՝ հասկանում են քեմալական Թուրքիայի դեմ պայքարող Հայաստանին և Հունաստանին նույնպես:

Բուն թուրքական տարածքներ ասելով՝ հասկանում են ամբողջ Արևմտյան Հայաստանը և 1921թ. Ռուս-թուրքական պայմանագրով, երբևէ Թուրքիայի հետ առնչություն չունեցած, Արևելյան Հայաստանի՝ Կարսի, Արդահանի, Սուրմալուի տարածքները: Տրոցկու «Հայաստանը և Թուրքիան առաջիկա կոնֆերանսում» հոդվածում, ի դեպ, այդ տարածքները ճշմարտացի ներկայացված են՝ որպես բուն հայկական տարածքներ: Այլ խնդիր է, որ հենց Տրոցկին էր առաջարկել դրանք «զոհաբերել» թուրքերին հանուն համաշխարհային հեղափոխության:

ՍԵՎՐԻ ՀԱՇՏՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ

Մասն 3-րդ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Բաժին 6-րդ
ՀԱՅԱՍՏԱՆ

Հոդված 88. Թուրքիան հայտարարում է, որ ճանաչում է Հայաստանը, ինչպես այդ բանն արդեն արել են Դաշնակից տերությունները, որպես ազատ և անկախ պետություն:

Հոդված 89. Թուրքիան և Հայաստանը, ինչպես և Բարձր պայմանավորվող կողմերը, համաձայնվում են Էրզրումի, Տրապիզոնի, Վանի և Բիթլիսի վիլայեթներում Թուրքիայի և Հայաստանի միջև սահմանազատումը թողնել Ամերիկայի Միացյալ Նահանգների որոշմանը և ընդունել ինչպես նրա որոշումը, նույնպես և այն բոլոր միջոցառումները, որոնք նա կարող է առաջարկել Հայաստանին դեպի ծով ելք տալու և հիշյալ սահմանագծին հարող օսմանյան բոլոր տերիտորիաների ապառազմականացման վերաբերյալ:



ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնի քարտեզը՝ Հայաստանի, Քուրդիստանի սահմաններով, կնիքը, ստորագրությունը:

Հոդված 90. Այն դեպքում, եթե 89-րդ հոդվածի համաձայն սահմանագիծը որոշելիս հիշյալ վիլայեթների ամբողջ տերիտորիան կամ նրա մի մասը հանձնվի Հայաստանին, Թուրքիան այսօր արդեն հայտարարում է, որ որոշման օրից սկսած ինքը հրաժարվում է հանձնված տերիտորիայի նկատմամբ բոլոր իրավունքներից և իրավահիմունքներից: Սույն պայմանագրի որոշումները, որոնք կիրառվելու են Թուրքիայից անջատվող տերիտորիաների նկատմամբ, այս պահից սկսած կգործադրվեն նաև այդ տերիտորիայի նկատմամբ:

Հայաստանի սուվերենությանը հանձնվող տերիտորիայի կապակցությամբ նրա վրա դրվող Թուրքիայի ֆինանսական պարտավորությունների բաժինը, և դրանց բնույթն ու այն իրավունքները, որոնցով նա կարող է փաստարկել, կսահմանվեն սույն Պայմանագրի 8-րդ մասի (ֆինանսական դրույթներ) 241-244-րդ հոդվածների համաձայն:

Հաջորդ կոնվենցիաները կկարգավորեն, եթե դա անհրաժեշտ լինի, այն բոլոր հարցերը, որոնք չեն կարգավորվել սույն Պայմանագրով և որոնք կարող են ծնունդ առնել հիշյալ տերիտորիայի փոխանցման կապակցությամբ:

Հոդված 91. Եթե 89-րդ հոդվածում նշված տերիտորիայի մի մասը հանձնվի Հայաստանին, ապա Սահմանագծման հանձնաժողով, որի կազմը կորոշվի հետագայում, կստեղծվի երեք ամսվա ընթացքում այն բանից հետո, երբ արդեն ընդունված կլինի Հայաստանի և Թուրքիայի միջև տեղում սահմանագիծ անցկացնելու վերաբերյալ հիշյալ հոդվածում նախատեսվող որոշումը:

Հոդված 92. Ադրբեջանի և Վրաստանի հետ Հայաստանի սահմաններն ըստ պատկանելույն կորոշվեն շահագրգռված պետությունների ընդհանուր համաձայնությամբ:

Երբ 89-րդ հոդվածում նախատեսված որոշումն արդեն ընդունված կլինի և եթե դրանից հետո այս կամ այն շահագրգռված պետությունները չեն կարողանա ընդհանուր համաձայնությամբ որոշել իրենց սահմանագիծը, վերջինս կորոշեն Գլխավոր դաշնակից տերությունները, որոնք դրա հետ միասին պետք է հոգ տանեն սահմանազատումը տեղում գծանշելու մասին:

10 օգոստոս,1920թ.
ՍԵՎՐ

Պայմանագրի տակ ստորագրել են՝

Թուրքիան, Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան, Իտալիան, Ճապոնիան, Բելգիան, Հունաստանը, Լեհաստանը, Պորտուգալիան, Ռումինիան, Հայաստանը, Չեխոսլովակիան, Սերբերի, Խորվաթների և Սլովենների թագավորությունը, Հեջազը:

Թարգմանությունը՝ ռուսերենից

ԱՄՆ-ի քաղաքական աշխարհաճանաչողության ձևավորման շրջանի և ներկայիս վիճակը

Քաղաքակրթական արժեքների ճիշտ ընտրությամբ է, որ ձևավորվեց Ամերիկայի Միացյալ Նահանգներ պետությունը՝ ազատագրվելով բրիտանական գաղութատիրությունից: Սույնով տրվում է ԱՄՆ Անկախության Հռչակագիրը՝ համեմատելու համար անկախության, ժողովրդավարության ճանաչողության ԱՄՆ անցյալի ու ներկայի պետական գործիչների ճանաչողության տարբերությունը, առավելապես՝ վերջին 50-60 տարիների ընթացքում:

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀՌՉԱԿԱԳԻՐԸ


IN CONGRESS, JULY 4, 1776.

The unanimous Declaration of the thirteen United States of America

(հատված)

Երբ դեպքերի ընթացքը պարտադրում է որևիցե ժողովրդի կտրելու մեկ այլ ժողովրդի հետ իրեն պարտադրված քաղաքական կապը, և գլոբալ քաղաքակրթությունում, այլ երկրներին համահավասար, զբաղեցնել անկախ դիրք, որի անօտարելի իրավունքը նրան տրված է բնական և աստվածային օրենքներով, ապա մարդկության հանդեպ ունեցած արժանի հարգանքը պարտավորեցնում է նրան վերստին շարադրել ողջ ճշմարտությունը և որպես ազատ կամքի դրսևորում, հայտարարել ազատության և անկախության իր օրինական ձեռքբերումները մշտապես պաշտպանելու իր վճռականությունը:

Հայտնի է, որ բոլոր մարդիկ արարվել են հավասար և Արարչի կողմից օժտված են ակնհայտ իրավունքներով, որոնցից են կյանքի, ազատության և երջանկության ձգտելու իրավունքը: Այդ իրավունքների, նաև անհատական ու ազգային անվտանգությունների ապահովման նպատակին է կոչված պետությունը, հասարակական ներքին և արտաքին փոխհարաբերությունները արդարացիության սկզբունքով կառավարող պետականության ինստիտուտը: Եթե պետության, իշխանության ձևը, կործանարար է այդ նպատակի համար, ապա ժողովուրդը իրավունք ունի փոխելու, և կամ ոչնչացնելու այն և հաստատելու նոր պետություն, նոր կարգավիճակ, որը լինի պետության այնպիսի ձև և նրա իշխանությունը, կառավարման կազմակերպումը հենված լինի այնպիսի սկզբունքների վրա, որոնք մեծապես կնպաստեն տվյալ ժողովրդի անվտանգությանն ու երջանկությանը:

Համամարդկային արժեքների տեսանկյունից վստահ լինելով մեր արդարացիությանը՝

Մենք՝ Ամերիկայի Միացյալ Նահանգների ժողովուրդը, կրողն ու իրականացնողը մեր պետականության, չճանաչելով որևէ երկրի կամ երկրների միությունների գերիշխանություն մեր նկատմամբ, մեր և մեր պետության՝ ԱՄՆ-ի անունից հայտնում ենք, որ իր ազատությունը և անկախությունը հաստատած Ամերիկայի Միացյալ Նահանգները, ձեռք բերելով՝ պատերազմ հայտարարելու, խաղաղություն կնքելու, միությունների մեջ մտնելու, առևտուր, ինչպես և բոլոր անկախ պետություններին յուրահատուկ միջազգային այլ իրավունքների կատարման իր իրավունքը, ինչպես առ այսօր և այսուհետ չի հանդուրժի իր իրավունքները սահմանափակող և ոչ մի պարտադրանք. անկախ նրանից թե ում կողմից և ինչ ձևերով փորձ կարվի այն կիրառել:

Մենք՝ Ամերիկայի Միացյալ Նահանգների քաղաքացիներս, միմյանց նկատմամբ փոխադարձաբար պարտավորվում ենք մեր կյանքով, ունեցվածքով ու պատվով, պաշտպանել սույն Հռչակագիրը, մեր ազգային անվտանգությունը, տարածքային ամբողջականությունը, մեր Ազատությունն ու Անկախությունը:

4 հուլիսի, 1776թ.

Դալես (Dulles) Ալան Ուելշի (07.04.1893թ., Ուոթերթաուն, Նյու Յորք նահանգ - 21.01.1969, Վաշինգտոն): ԱՄՆ քաղաքական գործիչ, իրավաբան: 1916-26թթ. եղել է դիվանագիտական ծառայության մեջ, այնուհետև եղել է «Սալիվան և Կրոմվէլ» խոշոր իրավաբանական ֆիրմայի գործընկերը: 1942-45թթ. գլխավորել է ԱՄՆ-ի քաղաքական հետախուզության համակարգը Եվրոպայում: 1947թ. ծառայել է ԱՄՆ-ի Կենտրոնական Հետախուզական Վարչության (ԿՀՎ) կառույցներում: 1953-61թթ. ԿՀՎ-ի տնօրենն է եղել: 1959-61թթ. Կարիբյան ճգնաժամով ԽՍՀՄ-ԱՄՆ ատոմային պատերազմի հրահրման կողմնակիցներից էր: ԽՍՀՄ-ի, ժող-սոց երկրների, ազգային-ազատագրական շարժումների դեմ ուղղված ԱՄՆ-ի հետախուզական լրտեսական-դիվերսիոն գործունեության կազմակերպիչներից մեկն էր: Լինելով ԿՀՎ-ի տնօրեն՝ եղբոր՝ Ջոն Ֆ.Դալեսի, հետ միասին 1950-ական թթ. մեծ ազդեցություն է ունեցել ԱՄՆ-ի կառավարության հակասովետական կուրսի ձևավորման մեջ:

Դալես (Dulles) Ջոն Ֆոստեր (25.02.1888, Վաշինգտոն - 24.05.1959, Վաշինգտոն): ԱՄՆ քաղաքական գործիչ, դիվանագետ, մասնագիտությամբ՝ իրավաբան: Սերտ համագործակցում էր ազդեցիկ մոնոպոլիստական շրջանակների հետ: 1927թ. սկսած երկար տարիներ գլխավորում էր «Սալիվան և Կրոմվէլ» խոշոր իրավաբանական ֆիրման, որը մասնավորապես 1920-30-ական թթ. ձևակերպում էր ամերիկա-գերմանական մոնոպոլիաների միջազգային գործարքները: Միջազգային «Նիկել կոմպանի» մոնոպոլիայի տնօրենն էր, գլխավորում էր «Նյու Յորք Սիտի Բանկի» կառավարիչների խորհուրդը, «Ռոկֆելերների ֆոնդի» հոգաբարձուների խորհրդի նախագահն էր և այլն... Դալեսի դիվանագիտական գործունեությունը սկսվում է 1907թ., երբ նա Հաագայի երկրորդ կոնֆերանսին ԱՄՆ պատվիրակության քարտուղարն էր: 1919-20թթ. Խաղաղության կոնֆերանսում ԱՄՆ պատվիրակության խորհրդական էր: 1924թ. մասնակցել է «Դաուեսի պլանի» մշակմանը: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո մեծ ակտիվությամբ մասնակցել է «Մարշալի պլանի» նախապատրաստմանը, նաև 1949թ. Հյուսիս-ատլանտյան դաշինքի կազմակերպմանը: 1953-59թթ.՝ ԱՄՆ պետքարտուղար: Նա էր «Ուժի դիրքերից», «Հավասակշռություն՝ պատերազմի եզրին» քաղաքական դոկտրինների ոգեշնչողն ու ուղղորդողը:

Сов. энциклопедический словарь, Москва, 1989г.

ԱԼԱՆ ԴԱԼԵՍԻ

ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԿՈՐԾԱՆՄԱՆ ՄԵԾԱԳՈՒՅՆ ՈՂԲԵՐԳՈՒԹՅԱՆ [1] ԾՐԱԳԻՐԸ [2]

Ներկայացվել է Ալան Դալեսի կողմից՝ Միջազգային հարաբերությունների խորհրդի 1945 թվականի գաղտնի ժողովներից մեկի ժամանակ, որտեղ ներկա էին ԱՄՆ փոխնախագահ Հ. Տրումենը, ֆինանսների նախարար Հ. Մորգենթաուն, Բ. Բարուխը:

«Պատերազմը կավարտվի, ամեն ինչ ինչ-որ կերպ կհանդարտվի, կկարգավորվի: Եվ մենք, մարդկանց հիմարացնելու ու ապուշացնելու նպատակին կնետենք այն ամենը, ինչ ունենք՝ ամբողջ ոսկին, ողջ նյութական օգնությունն ու ռեսուրսները:

Մարդկային ուղեղը, բանականությունը ունակ է փոփոխության: Այնտեղ քաոս սերմանելով՝ մենք իրենց իրական արժեքները աննկատ կփոխենք կեղծերով ու կպարտադրենք նրանց հավատալ այդ կեղծ արժեքներին: Ինչպե՞ս: Մենք կգտնենք մեր համախոհներին, օգնականներին ու դաշնակիցներին հենց Ռուսաստանում[3]:

Դրվագ առ դրվագ կխաղարկվի աշխարհի ամենաանհնազանդ ժողովրդի կործանման իր ծավալով մեծագույն ողբերգությունը, իր ինքնագիտակցության վերջնական, անշրջելի մարումը: Գրականությունից և արվեստից, օրինակ, մենք աստիճանաբար դուրս կմղենք նրա հասարակական էությունը, նկարիչներին հետ կսովորեցնենք, նրանցից դուրս կմղենք ժողովրդական զանգվածների հոգու խորքում կատարվող գործընթացների պատկերման ու ուսումնասիրման ցանկությունը: Գրականությունը, թատրոնը, կինոն - կպատկերեն և կփառաբանեն մարդկային ամենացածր ու զազրելի զգացումները: Մենք ամեն կերպ կօգնենք ու կբարձրացնենք այսպես կոչված արվեստագետների, որոնք կսկսեն գիտակցությունում սերմանել և մարդկանց գլուխները խցկել սեքսի, բռնության, սադիզմի, դավաճանության, այլ խոսքով՝ ամեն տեսակ անբարոյականության պաշտամունքը:

Պետության կառավարման մեջ մենք քաոս և խառնաշփոթ կստեղծենք: Մենք աննկատ, բայց ակտիվորեն ու մշտապես կօժանդակենք չինովնիկների հիմարությանը, կաշառակերությանը, անսկզբունքայնությանը:

Ազնվությունը և օրինավորությունը կծաղրվեն, կդառնան անցյալի մնացուկ ու ոչ մեկին այլևս պետք չեն լինի: Ստահակությունն ու լկտիությունը, սուտն ու խաբեությունը, հարբեցողությունն ու թմրամոլությունը, միմյանց հանդեպ անասնական վախն ու անամոթությունը, այլախոհությունը, ազգայնամոլությունը և ժողովուրդների հակադրումը միմյանց - այս բոլորը մենք կսերմանենք ճարպկորեն ու աննկատ: Եվ միայն քչերը, շատ քչերը կենթադրեն ու կհասկանան, թե ինչ է կատարվում: Բայց նման մարդկանց մենք կդնենք անօգնական վիճակի մեջ, կդարձնենք ծաղրի առարկա, կգտնենք միջոցներ նրանց զրպարտելու և հասարակության տականք անվանելու:

Այսպես, սերունդ առ սերունդ մենք կսասանենք... Մենք մարդկանցով կզբաղվենք մանուկ, երիտասարդ հասակից, խաղագումարը միշտ կդնենք երիտասարդության վրա, կսկսենք կազմալուծել ու քայքայել, բարոյալքել ու այլասերել, ապականել ու պղծել նրան: Մենք նրանցից կպատրաստենք լրտեսներ, ազատ աշխարհի կոսմոպոլիտներ: Հենց այսպես էլ մենք դա կանենք»:

<u>Ծանոթագրություն</u>

1. Հիշենք, համաշխարհային կառավարման գնացող կայսրության մասին Արաբացին 1919թ. ասում էր. **«Բրիտանական իմպերիալիզմն այս փուլում շահագրգռված է ավելի բնական հարստություններով, քան ժողովուրդներով՝ որպես այդպիսիք»**: Ասել է թե՝ Երկրորդ համաշխարհային պատերազմով ավարտվեց **«բնական հարստություններով»** զբաղվելու փուլը: Ալան Դալեսը 1945-ին ներկայացնում է երկրորդ փուլի՝ **«ժողովուրդներով զբաղվելու»** ծրագիրը: Դա գործողության մեջ է առ այսօր: Հիմնական «հաջողությունները» գրանցվել են ԱՄՆ-ում և Արևմտյան Եվրոպայի երկրներում: Այս ծրագիրը, ըստ էության, ՄԱԿ-ի 1948թ. Մարդու Իրավունքների Համընդհանուր Հռչակագրի բացասումն է:

2. Ամբողջական ծրագրի այս հատվածը թարգմանվել է ռուսերենից. տե՛ս, "Правда", 11.03.1994г. կամ О. А. Платонов, Терновый венец России, М., 2000г., стр. 431-432: Սույն հրատակությամբ ներկայացված է փաստաթղթի ճշգրիտ թարգմանությունը, որը տրամադրել է սովետական հետախուզության ամենահին աշխատակիցներից մեկը: Այս խորհրդակցության սղագրությունը Ստալինին է տրամադրվել դեռևս 1945 թվականի ապրիլ-մայիսին, բայց գտնվել է «հույժ գաղտնի» նշումի տակ՝ չբաց-

→

ՌԱԼՖ ՊԻՏԵՐՍ. ՄԻՋԻՆ ԱՐԵՎԵԼՔԻ ՆՈՐ ՔԱՐՏԵԶԸ[1]

ԸՍՏ ԱՐՅՈՒՆԱԿՑԱԿԱՆ ԿԱՊԵՐԻ[2] ԵՎ ՀԱՎԱՏԻ ՆՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ[3]

(ԱՄՆ, «Զինված ուժերի հանդես», «Armed Forces Journal», Ինտերնետ կայքէջ, 20-ը օգոստոսի, 2006թ.)

Իրականում **Ռալֆ Պիտերսը** սույն գաղափարախոսությունն ու ծրագիրը ընդամենը հրապարակավ ներկայացնողն է, միջազգային-քաղաքական շրջանառության մեջ դնող հանձնառու անձ: Բուն հեղինակը, ինչպես նշում է Միխայիլ Գուսմանը **Արիել Շարոնն է**. «Чувствуя уверенность в своих сылах, Шарон[4] проявлял заинтересовонность в разработке новых формулировок в области внешней оборонной политики. В декабре 1981 года новый министр обороны (А. Шарон) выступил с программной речью, в которой провозгласил, что **обороноительные интересы Израеля выходит далеко за непосредственной конфронтации с соседними странами и включают Пакистан[5], Северную Африку[6] и даже отдельные районы Африканского континента[7]**».[8]:

Միջազգային սահմանները[9] երբեք էլ ամբողջովին արդար չեն եղել[10]: Բայց այս կամ այն երկրին պարտադրված անարդարության աստիճանը (որով նրան ստիպել են միանալ մեկին և անջատվել ուրիշից) չափազանց տարբեր է եղել: Այնքան տարբեր, որքան, ասենք, անկախությունը՝ բռնատիրությունից, օրենքի իշխանությունը՝ ահաբեկչությունից, հանդուրժողականությունը՝ դաժանությունից և նույնիսկ խաղաղությունը՝ պատերազմից:

Աշխարհում ամենախեղաթյուրված և քմահաճ սահմանները գտնվում են Աֆրիկայում և Միջին Արևելքում: Աֆրիկայի սահմանները[11], գծված ժամանակին եսապաշտ եվրոպացիների կողմից, որոնք կդժվարանային անգամ իրենց սեփական պետության սահմանները հստակեցնել, շարունակում են միջպետական կռիվների տեղիք տալ և տեղացի բնակչության մահվան պատճառ դառնալ: Իսկ Միջին Արևելքում Չերչիլի որակած «անարդար սահմանները» առաջացնում են առավել բարդ խնդիրներ, որոնց լուծումը վեր է տեղական իշխանությունների հնարավորություններից[12]:

Հասկանալի է, որ այնտեղ այլ խնդիրներ ևս կան (մշակութային լճացում, սկանդալային չափսերի հասնող սոցիալական անհավասարություն, կրոնական ծայրահեղություն և այլն), սակայն տարածաշրջանը ճիշտ չընբռնելու խնդիրը պայմանավորված է առաջին հերթին մեր դիվանագետների պաշտած «սրբություն սրբոց» կամ «մեծագույն տաբու» համարվող սահմաններով:

Իհարկե սահմանների ոչ մի վերանայում չի կարող Միջին Արևելքի բոլոր փոքրամասնություններին գոհունակություն[13] պարգևել: Որոշ դեպքերում, էթնիկական և կրոնական խմբավորումները միաձուլվել են և գոհ են արդյունքից: Այլ դեպքերում, արյունակցական կամ հավատի նույնության գործոնը այնքան էլ բավարար ազդեցություն չի թողել մարդկանց վրա:

Այս հոդվածին կից ներկայացվող քարտեզում փորձ է արված վերանայելու ամենաշատ տուժած[14] կամ «խաբված»[15] խմբավորումների վիճակը: Դրանց թվում են՝ քրդերը, բելուջները և արաբ շիաները: Բայց տարածաշրջանի քրիստոնյաների (բահայիները, իսմայելացիները, նաքշբանդիները) վիճակը այնքան էլ ճիշտ չի ներկայացված: **Իսկ մի սարսափելի չարագործություն, ինչպիսին է հայերի հանդեպ հոգեվարքի մեջ գտնվող Օսմանյան կայսրության ցեղասպանությունը, երբեք չի կարող փոխհատուցվել տարածքային նվիրատվությամբ[16]:**

Այդուհանդերձ, ինչքան էլ մեր պատկերացմամբ կազմված նոր քարտեզը թերություններ ունենա, առանց սահմանները վերագծելու մենք երբեք խաղաղություն[17] չենք տեսնի Միջին Արևելքում:

Նույնիսկ նրանք, ովքեր զզվում են սահմանները վերափոխելու թեմայից, ճիշտ կլիներ զբաղվեին եթե ոչ կատարյալ, համենայն դեպս ավելի արդար սահմանների մշակումով՝ հատկապես Բոսֆորից Ինդոս[18] ընկած տարածաշրջանում: Ընդունելով, որ պետության կայացման միջազգային նորմերը այդ սխալ սահմանները ուղղելու արդյունավետ մեխանիզմները չեն ստեղծել, համենայնդեպս, Միջին Արևելքի «օրգանական»[19] սահմանները հասկանալու մտավոր ջանքերն օգնում են մեզ հասկանալու, թե այդ հարցում ինչ դժվարությունների առաջ ենք կանգնած և կանգնելու հետագայում: Մենք գործ ենք ունենալու կոթողային[20], մարդու ձեռամբ ստեղծված, «այլանդակությունների» հետ, որոնք մինչև չսրբագրվեն, շարունակելու են ատելություն և թշնամանք սերմանել:

Իսկ բոլոր նրանց, ովքեր մերժում են «պատկերացնել աներևակայելին»՝ հայտարարելով, թե սահմանները վերջնական են և անփոփոխ, արժե հիշեցնել, որ սահմանները երբեք էլ ստատիկ, կայուն չեն եղել: Դարերի ընթացքում փոխվել են և հիմա էլ են փոխվում (Կոնգոյից սկսած մինչև Կոսովո և Կովկաս[21]):

Հիշենք նաև 5 հազար տարվա վաղեմության մի փոքրիկ կեղտոտ գաղտնիք. էթնիկական զտումն իր գործն անում է[22]:

Սկսենք Ամերիկայի ընթերցողի համար սահմանային ամենազգայուն թեմայից[23]: Որպեսզի Իսրայելը իր

հայտելու համար այն մարդկանց, ովքեր այս հրեշավոր փաստաթուղթը փոխանցեցին Կրեմլին: Սովետական հետախուզության վերոհիշյալ աշխատակիցը պատմում էր նաև, որ Լ. Բերիայի օգնական Լյուդվիգովի խոսքերով՝ այդ սղագրությունը խորապես վրդովվեցրել է Ստալինին, որովհետև Միջազգային հարաբերությունների խորհրդի թշնամական ծրագրերը Սովետական Միության հանդեպ մշակվում էր գրեթե այն օրերին, երբ ընթանում էր Յալթայի խորհրդաժողովը, որտեղ ԱՄՆ-ը խոսում էր Սովետական Միության հետ իր բարեկամության մասին:

3. Արևմտյան հայտնի բլեֆ է. Ռուսաստան հասկացողության տակ փորձել ներառել մի ամբողջ տարածաշրջան՝ իր ժողովուրդներով ու երկրներով: Իրականում պետք է հասկանալ Արևելյան Եվրոպայի երկրները, Խորհրդային Միության հանրապետությունները, այդ թվում՝ Խորհրդային Ռուսաստանը…

հարևանների հետ խաղաղ ապրելու հույս ունենա, նա պետք է վերադառնա իր 1967-ից առաջվա սահմաններին (չնչին տեղական շտկումներով՝ սոսկ անվտանգության մղումներով): Բայց հազարավոր տարիներ արյամբ շաղախված երուսաղեմն ու շրջապատող տարածքները պետք է մնան (առայժմ) անձեռնմխելի, դրանք մեզ համար դժվար մշակելի խնդիրներ են, քանի որ յուրաքանչյուր կողմ իր Աստվածը դարձրել է «անշարժ գույքի մի մագնատ»: Յուրաքանչյուր հողակտորի համար լուրջ պայքար է գնում, որը մոռացության է մատնում նավթի կամ էթնիկական մյուս կռիվները: Այնպես որ միաժամանակ թողնելով այդ հատվածը, զբաղվենք անտեսված մյուս տարածքների լուծումով:

Բալկանյան լեռների և Հիմալայների[24] արանքում գտնվող ամենամեծ սահմանային անարդարությունը անկախ քրդական պետության[25] բացակայությունն է: Միջին Արևելքի սահմանամերձ տարածքներում ապրում են 27-36 միլիոն քրդեր (թվերը ճիշտ չեն կարող լինել, քանի որ ոչ մի երկիր ցարդ ազնիվ մարդահամար չի անցկացրել): Բայց նույնիսկ նվազագույն հաշվարկներով ներկա Իրաքի բնակչությունից ավելի լինելով, աշխարհի էթնիկական այս ամենամեծ խմբավորումը մինչև օրս չունի իր պետությունը: Ավելին, Քսենոֆոնի ժամանակներից սկսած այդ ժողովուրդը ամենուրեք ճնշված է եղել ամենատարբեր կառավարությունների կողմից:

Մ. Նահանգներն ու նրա կոալիցիոն դաշնակիցները Բաղդադի անկումից հետո հրաշալի առիթ բաց թողեցին ուղղելու այս հնարավորությունը: Իրաքի ֆրանկենշտեյնյան հրեշ պետությունը, որը ստեղծված է իրար չհամապատասխանող մասերից, պետք է անմիջապես բաժանվեր երեք մասերի: Անհեռատես լինելու հետևանքով, գուցե և վախկոտությունից դրդված, չկատարեցինք այդ քայլը և մղեցինք քրդերին, որ պաշտպանեն Իրաքի նոր կառավարությունը: Նրանք կատարեցին մեր խնդրանքը, բայց եթե ազատ հանրաքվե անցկացվի, նրանց մոտ 100 տոկոսը կքվեարկի հօգուտ անկախության:

Նույնը կանեն նաև Թուրքիայի տառապյալ քրդերը, որոնք տասնամյակներ շարունակ հանդուրժել են կատաղի զինվորական ճնշումներն ու «լեռնցի թուրք» նվաստացուցիչ պիտակը, որի նպատակն է մոռացնել տալ նրանց ինքնությունը: Հանդարտության կարճ ժամանակահատվածից հետո վերջերս դարձյալ ուժգնացել են ճնշումները և թուրքիայի արևելյան այդ 5-րդ մասը պետք է համարել գրավյալ (օկուպացված) տարածք:

Ինչ վերաբերում է Սիրիայի և Իրանի քրդերին, նրանք էլ անկասկած կմիանան իրենց ազգակիցներին, եթե կարողանան, անկախ Քուրդիստանում: Աշխարհի օրինական ժողովրդավարական պետությունների հրաժարվելը կամ դժվարությունը մինչև օրս քրդական անկախությանը հետամուտ լինելու որոշումից պարզապես մարդու իրավունքների անտեսման մեղանչանքն է, որն անհամեմատ վատ է, քան բոլոր այն մեղքերը, որ մենք առօրյա մամուլում հանդիպում ենք: Ի դեպ, Դիարբեքիրից մինչև Թավրիզ երկարող անկախ Քուրդիստանը կլինի նաև Բուլղարիայի և Ճապոնիայի միջև գտնվող ամենաարևմտամետ պետությունը[26]:

Ճիշտ ու արդարացի մոտեցումն այդ տարածքում, սյունիներով բնակեցված Իրաքի երեք շրջաններին կտար հնարավորություն միանալու Սիրիային, որն իր առափնյա տարածքները կորցնելու է ի նպաստ Մեծ Լիբանանի՝ վերածնված փյունիկի[27]: Իսկ շիաներով բնակեցված Իրաքի հարավային հատվածը հիմք կհանդիսանար ստեղծել մի նոր՝ Արաբական Շիա պետություն՝ օղակելով Պարսից ծոցի մեծ մասն իր մեջ[28]: Հորդանանը կպահպանի իր ներկա սահմանները[29], մի փոքր տարածվելով դեպի հարավ՝ ի հաշիվ Սաուդյան Արաբիայի[30]: Վերջինս, իր հերթին, մեծապես կտուժի, ինչպես՝ Պակիստանն իր ժամանակին: Մահմեդական աշխարհի խորը լճացման պատճառներից մեկն էլ Սաուդյան արքայական ընտանիքի ավատապետական վերաբերմունքն է Մեքքա և Մեդինա քաղաքների հանդեպ: Ոստիկանական պետության հսկողություն սահմանելով իսլամի այդ ամենասուրբ վայրերի վրա՝ աշխարհի ամենամոլեռանդ և բռնապետական վարչակարգերից՝ սաուդյան թագավորությունը, որը նաև հսկայական նավթային հարստության տերն է, կարողացել է իր վահաբական գաղափարախոսությունը տարածել իր սահմաններից դուրս: Սաուդցիների հարստության, հետևաբար նաև ազդեցիկ իշխանության հասնելը ամենամեծ դժբախտությունն է ընդհանրապես մահմեդական (սկսած Մարգարեի ժամանակներից) և, մասնավորապես, արաբական աշխարհի համար (սկսած՝ օսմանյան, եթե ոչ մոնղոլական նվաճումներից):

Ընդունելով, որ նման սրբավայրերի հսկողությունը ոչ մահմեդական երկրները չեն կարող իրականացնել, մի պահ պատկերացնենք, թե ի՞նչ առողջ մթնոլորտ կարող էր իշխել մահմեդական աշխարհում, եթե երբևէ այդ երկու սրբազան քաղաքները գտնվեին մահմեդական աշխարհի տարբեր ուղղությունների ներկայացուցիչներից կազմված խորհրդի շրջան կամ հերթագայող հսկողության տակ: Դա կկոչվեր Իսլամական Արաբական Պետություն և կնմանվեր Վատիկանին, որտեղ հնարավոր կլիներ հավատի վերաբերյալ քննարկումներ անցկացնել, բայց ոչ պարտադրել: Իսկական արդարության (որը մեզ կարող է դուր չգալ) պայմաններում Սաուդյան Արաբիայի առափնյա նավթաղաշտերը պետք է հանձնվեն շիա արաբներին, որոնք այդ տարածքի բնակիչներն են, իսկ հարավարևելյան տարածքները՝ Եմենին: Ռիադի և շրջակա անկախ տարածքների տիրությամբ սահմանափակված Սաուդյան Տունը այդ դեպքում քիչ վնաս կկարողանա հասցնել մահմեդականությանը և աշխարհին:

Խելացնոր սահմաններով Իրանն իր տարածքի մի մասը կզիջի Միացյալ Ադրբեջանին[31], Ազատ Քուրդիստանին, Արաբական Շիա պետությանը և Ազատ Բելուջիստանին: Բայց ձեռք կբերի Աֆղանստանի տարածքում գտնվող Հերաթի նահանգները, որոնք Պարսկաստանի հետ պատմական և լեզվական առնչություններ ունեն: Իրանն այդպիսով կդառնա էթնիկական առումով զուտ պարսկական պետություն: Հարցական կմնա միայն «Բանդար Աբբասի» նավահանգստի հարցը: Պե՞տք է այն Արաբական Շիա պետությանը, դժվար խնդիր է[32]:

Գալով Աֆղանստանին, այն ինչ կորցնելու է արևմուտքում, շահելու է արևելքում՝ Պակիստանից, որի հյուսիս-արևմտյան սահմանի ցեղերը միանալու են իրենց աֆղան եղբայրներին: Խնդիրն այստեղ ոչ թե մեր ցանկությամբ սահմանները փոփոխելն է, այլ տեղացի բնակչության ցանկությունները հաշվի առնելը: Պակիստանը, ճիշտ է, կկորցնի իր Բելուջի տարածքը, սակայն անբնականից կդառնա «բնական» մի պետություն՝ Ինդոսի արևելյան մասում:

Միացյալ Արաբական էմիրությունների քաղաք-պետությունների ճակատագիրը տարբեր է լինելու: Նրանցից ոմանք գուցե միանան Արաբական Շիա պետությանը: Քանի որ բոլոր պուրիտանական մշակույթներն էլ երկերեսանի, կամ կեղծ բարեպաշտական բնույթ ունեն, Դուբային կթույլատրվի պահպանել «հարուստ անառակների խաղավայրը» լինելու իր կարգավիճակը: Քուվեյթն ու Օմանը նույնպես կպահպանեն իրենց ներկա սահմանները: Սահմանների վերագծման մեր այս ենթադրական վարկածի հիմքում

ընկած են էթնիկական և կրոնական ընդհանրությունները: Ուսումնասիրելով առաջարկված տարբերակը և համեմատելով այն ներկայիս գործող սահմանների հետ, մենք կտեսնենք այն մեծ սխալները, որ 20-րդ դարում գործել են ֆրանսիացիներն ու անգլիացիները այս տարածքում: Մի տարածք, որը փորձում էր նվաստացումներից ու պարտություններից հետո ոտքի կանգնել:

Ժողովուրդների կամքը[33] արտահայտելու նպատակով սահմաններ ճշգրտելը գուցե անկարելի թվա: Առնվազն ժամանակավորապես: Բայց վստահ ենք, ժամանակի ընթացքում այդ նոր ու բնական սահմանները իրականություն դառնալու են:

Մինչ այդ՝ մեր համազգեստ հագած տղամարդիկ և կանայք շարունակելու են պայքարն ընդդեմ ահաբեկչության և հանուն անվտանգության ու ժողովրդավարության[34]: Ներկա պարտադրված միությունների (Անկարա և Կարաչի) առկայությունն անգամ բերրի հող է կրոնական ծայրահեղությունների և ահաբեկչական խմբավորումների կազմավորման համար:

Խեղաթյուրված սահմանների ներկա դրությունը իրավիճակի ավելի վատթարացում քան բարելավում է խոստանում[35]: Միացյալ Նահանգները, նրա դաշնակիցները ու մասնավորապես մեր զինված ուժերը անընդհատ նորանոր ճգնաժամերի են ականատես լինելու այս տարածաշրջանում, որտեղ գերիշխում են ազգայնամոլության և ծայրահեղականության վատթարագույն տարրերը: Եթե Իրաքը ինչոր հույս է ներշնչում, այն էլ եթե ժամանակից շուտ չհեռանանք այնտեղից, ապա մյուս պետությունները միայն խնդիրներ են առաջացնելու հնարավոր բոլոր ճակատներում:

Ովքե՞ր են շահելու[36] նոր սահմաններից

Աֆղանստանը, Արաբական Շիա պետությունը, Հայաստանը, Ադրբեջանը, Անկախ Բելուջիստանը, Անկախ Քուրդիստանը, Իրանը, Իսլամական Սուրբ Պետությունը, Հորդանանը, Լիբանանը և Եմենը:

Ովքե՞ր են կորցնելու[37]

Աֆղանստանը, Իրանը, Իրաքը, Իսրայելը, Քուվեյթը, Պակիստանը, Քաթարը, Սաուդյան Արաբիան, Սիրիան, Թուրքիան, Միացյալ Արաբական Էմիրությունները և Արևմտյան Ափը:

Ծանոթագրություն

1. Պետք է հասկանալ, Արևմուտքի (Իսրայել-ԱՄՆ-Եվրոմիություն ալյանսի) կողմից առաջարկվող նոր «Միջին Արևելքի Միացյալ Նահանգներ» ընդհանուր պետության ներքին և արտաքին սահմանները կանխորոշող քարտեզ:

2. Համաձայն գենետիկայի օրենքների՝ արյունակցական կապերը վերաբերում են ընտանիքներին, գերդաստաններին, բայց ոչ երբեք էթնիկ խմբերին, ժողովուրդներին ու ազգերին:

3. Մերժում է ազգերի ձևավորման բնական կենսատարածքի իրողությունը. այն փոխարինելով Մարդկային աշխարհի բնապատմական զարգացման շատ ավելի ուշ շրջանում ձևավորված քաղաքակրթական արժեքի՝ հավատի նմանության (նույնն է, ըստ կրոնական պատկանելիության) խմբավորելու և միմյանցից բաժանելու՝ սահմանազատելու տրամաբանությամբ:

4. Ариэль Щарон. Род. 1928г. В Палестине (под Британским мандатом). Основатель партии Ликуд (обединение). Занимал должности министров: 1. селского хозяйства (1977), 2. обороны (1981), 3. промыщленности, 4. строительства, 5. инфраструктуры, 6. иностранных дел. С 7 марта 2000г. премиер министр Израеля.

5. **Включают Пакистан - ներառյալ Պակիստան** ասելիս, պետք է հասկանալ, Ռալֆ Պիտերսի 2006-ին օգոստոսին ներկայացրած «Միջին Արևելքի նոր սահմանները» քարտեզը:

6. **Северную Африку** - Հյուսիսային Աֆրիկա հասկացողության տակ պետք է հասկանալ Միջերկրածովյան համագործակցության այդ հատվածը ընդգրկող երկրները, որի մասին հայտարարեց Ֆրանսիայի նախագահ Սարկոզին: Տե՛ս, «Ուխտ Արարատի», թիվ 2/13, 2007թ., էջ 22, II-ը:

7. Отдельные районы Африканского континента - «Աֆրիկյան մայրցամաքի որոշակի շրջաններ» ասվածի տակ պետք է հասկանալ Կարմիրծովյան առափնյա միացյալ պետությունը, որի կազմում կլինեն Եգիպտոսից, Սուդանից, Էրիտրայից մասեր, իսկ աֆրիկյան մնացյալ մայրցամաքը, ինչպես առաջարկեց Լիբիայի նախագահ Քադդաֆին՝ վերածվելու է Աֆրիկայի Միացյալ Նահանգներ ընդհանուր պետության: Տե՛ս, նույն տեղում:

8. Михаил Гусман, Формула власти: 55 интервю в золотом галстуке, Изд. Тера-Книжный клуб, Москва, 2005г., стр. 484.

9. Միջազգային սահմաններ - այսպիսի քաղաքական տերմին գոյություն չունի: Յուրաքանչյուր երկիր ունի իր պետական սահմանը: Ըստ էության, փորձ է արվում ներկայացնել, թե երկրների նոր սահմանները գծվելու են դրսի թելադրանքով, միջազգային քաղաքականության կողմից, այն ինչ արվում է Ռալֆի կողմից իր հոդվածում և իր սարքած քարտեզներում:

10. Հայտնի է, որ պետության սահմանները արդար են, այսինքն բնականոն են, եթե չեն ներառում մեկ այլ պետության կամ ազգի բռնազավթված տարածքները: Արդարացի չլինելը պետք է հասկանալ, որ այն ինչ կատարվել է Առաջին և Երկրորդ համաշխարհային պատերազմների հետևանքում, երբ գծվել են նոր սահմաններ՝ տեղի են ունեցել բռնազավթումներ, որոնք, ինչպես հայտնի է, գերտերությունների կողմից արհեստականորեն ստեղծված, այսպես կոչված, «լարվածության օջախներն» են:

11. Նկատի ունի ոչ թե Աֆրիկա մայրցամաքի աշխարհագրական սահմանները, այլ «Աշխարհի Միացյալ Նահանգներ» ընդհանուր՝ համաշխարհային պետության ստեղծման արևմտյան ծրագրի երրորդ փուլում, ըստ Աֆրիկայի միջազգային սահմանների նոր քարտեզի ստեղծվելիք «Աֆրիկայի Միացյալ Նահանգները»: Տե՛ս, նույն տեղում:

12. Սահմանները վերագծելու համար բացահայտ դնում է ինքնիշխան պետությունների ներքին գործերին դրսից միջամտելու խնդիր: Միջամտելու ձևերն են՝ անջատողական շարժումները, չդադարող ահաբեկչությունները, կրոնական և ազգամիջյան բախումները, որոնց ականատեսն ենք տարիներ շարունակ, քարտեզում ընդգրկված բոլոր պետություններում՝ Պակիստանից մինչև Լիբանան: Տեղական իշխանություններ ասելով՝ հասկանում է նոր ստեղծվող պետությունների նահանգները, որոնց կողմից տրվող սահմանային ինքնուրույն լուծումները բնականաբար կարող են ավելի արդարացի լինեն և չհանդիսանալ հետագա լարվածության օջախներ: Ուստի, Ռալֆը փորձում է արդարացնել ու ապահովել գերտերությունների նախկին ձեռագրով միջամտությունը, նոր սահմանների ձևավորմանը, նոր լարվածության օջախներ հաստատելու համար: Օրինակ, ցեղասպանության ճանապարհով Թուրքիայի կողմից բռնազավթված Արևմտյան Հայաստանի տարածքում քրդական պետության ստեղծումով, փաստորեն, փորձ է արվում ստեղծել հայ-քրդական լարվածություն: Նույն այդ քրդական պետությունը ամբողջ իր սահմանով մեկ ունենալու է լարվածության մի շարք օջախներ, այդ թվում, արևմուտքից Թուրքիայի, հարավից՝ Սյունի Իրաքի, և Արաբ Շիա պետության, արևելքից՝ Իրանի և հենց իր ներսում: Օրինակների շարքը

կարելի է երկարել, սակայն մենք հիմա հիշենք, որ լարվածության նոր օջախներ են ստեղծում, առանց փորձ անելու նախորդները կարգավորել: Դրա լավագույն ապացույցը հայ-թուրքական լարվածությունը լուծելու արևմտյան չկամությունն է, որին ավելացվում է նորը:

13. Սահմանները չեն գծվում փոքրամասնություններին գոհունակություն պարգևելու համար: Յուրաքանչյուր պետության սահման հստակեցվում, վերականգնվում է տվյալ ազգի բնական կենսատարածքում, բնականոն ապրելու և զարգանալու՝ քաղաքակրթական իր ուրույն ուղին անցնելու համար:

14. Արևմտյան մտածողությամբ՝ «տուժած» տերմինը թարգմանվում է՝ որպես որոշակի ազգային կենսատարածքում գոյություն ունեցող պետության տարածքի մի մասում՝ արտաքին էքսպանսիայի (ընդլայման) ճանապարհով, այլ ժողովրդի պատկանող տարրերի բնակեցման ճանապարհով, այդ պետության տարածքից այն անջատելու գործընթաց: Օրինակ, Սերբիայից Կոսովոյի անկախացման եռափուլ գործընթացը:

15. «Խաբված ժողովուրդ» ձևակերպումը Ֆրիտյոֆ Նանսենինն է և վերաբերում է հայ ժողովրդին ու Հայաստանին: Արևմուտքի, Անտանտի երկրների Հայկական հարցի լուծման՝ Հայաստանի անկախացման խոստումներին հակառակ, չնայած իր մեծ ներդրումներին, հայությունը զրկվեց իր հայրենիքի բնական կենսատարածքների մեծագույն մասից, անգամ վտանգի տակ էր մնացորդացը: Խաբեության այդ գործընթացը, ի դեպ, հստակ երևում է Արաբացու և Տրոցկու նյութերում, ինչպես նաև Արցախյան ազատամարտի, Հայաստանի անկախացման վերջին գործընթացներում և Ռալֆ Պիտերսի տրամաբանությունում:

16. Հստակ ուղղորդում է գերտերություններին, որ չնայած եվրոպական մի շարք երկրներ ճանաչել ու դատապարտել են Հայերի ցեղասպանությունը, այդ երկրները և հայերը չպետք է դա ընկալեն որպես Հայկական հարցի տարածքային խնդիրների լուծումներ, քանզի, ըստ Ռալֆի, Թուրքիայի կողմից ցեղասպանության ճանապարհով բռնազավթված հայության հայրենիքի 9/10-րդ մասը կարող է արևմուտքը նվիրել կամ չնվիրել: Տվյալ դեպքում ակնարկում է հայերին՝ նվեր ստանալու հույս չունենալ: Դա, ի դեպ, միայն հայերին ու Հայաստանին չէ որ վերաբերվում է, ավելի շուտ ուղղված է Ռալֆի քարտեզում նշված բոլոր երկրներին: Այս մոտեցումը. «ինձ հետ եք առևտուր անելու» սկզբունքը, փորձ է ցույց տալու ամբողջ Միջին Արևելքին, որ ինչպես բացահայտ արդարացի Հայկական հարցի լուծումը, այնպես էլ ամբողջ այդ տարածաշրջանի երկրների խնդիրների լուծումը միայն իրենց կամքից է կախված, և ոչ թե խնդրի արդարացիությունից:

17. Պետք է դիտել որպես սպառնալիք. կա՛մ կհամաձայնվեք այս սահմաններին, կա՛մ թույլ չի տրվի հարևանների հետ խաղաղ ապրել:

18. Ուզում է ասել, որ Եվրոմիությունը, ԱՄՆ-ին քննադատելու փոխարեն, պետք է զբաղվի իր գծած քարտեզի հյուսիսային շերտով՝ Բոսֆորից մինչև Հնդկաստան, Ինդոնեզիա…

19. «Օրգանական» սահմանը նորաստեղծ տերմին է, նկատի ունի, ըստ քարտեզի, ձևավորվող Միջին Արևելքի Միացյալ Նահանգներ պետությունը, որտեղ այսօրվա ինքնիշխան պետությունների սահմանները դիտվելու են՝ որպես ներպետական՝ նահանգային, սահմաններ, ասել է թե՝ «օրգանական»:

20. «Կոթողային» այլանդակություն ասելով, նկատի ունի քարտեզում ներառված երկրների ժողովուրդների կրոնները, այդ թվում՝ քրիստոնեությունը, իսլամը, բուդդայականությունը: Կարծում ենք, հիմա հասկանալի է Եվրոպայում ժամանակ առ ժամանակ ի հայտ եկող Մուհամմեդի ծաղրանկարների պատմությունները, Բուդդայի արձանի պայթեցումը Աֆղանստանում, ինչպես և Եվրոպայում քրիստոնեական կաթոլիկ եկեղեցիները թանգարանների վերածելու կամ աճուրդի հանելու խնդիրները:

21. Կոնգոյից, Կոսովո և Կովկաս ասելով՝ ակնարկում է Աֆրիկայի Միացյալ Նահանգների և Միջերկրածովյան Միացյալ Նահանգների ստեղծումը, Կովկաս ասելով ակնարկում է Սևծովյան և Կասպիական երկրների միությունների ստեղծումը, որոնց խնդրում օգտագործվելու է Կոսովոյի լուծումը, այսինքն՝ երկրների բնական տարածքներից էքսպանսիայի միջոցով անջատվելու լուծումը:

22. Գերմանական ֆաշիզմի կողմից օգտագործված «էթնիկ զտում» ասվածի տակ նկատի ունի հենց ցեղասպանությունը: «Իր գործն անում է» ասելով ակնարկում է, որ 1915-ից առ այսօր և դեռ առաջիկայում ցեղասպանությունն իր բոլոր դրսևորումներով կիրառելի է մնում աշխարհի քարտեզի ձևավորման արևմտյան մոտեցումներում: Սա, ըստ էության, ոչ միայն ցեղասպանություն իրագործելու անպատժելիության մասին քարոզչություն է, այլև որպես սպառնալիք, ուղղված է իրենց չենթարկվող երկրներին ու ժողովուրդներին:

23. Ինչպես երևում է հաջորդ նախադասությունից, ԱՄՆ-ի աշխարհաքաղաքականության առանցքում Իսրայելի խնդիրներն են: Դրա ապացույցն է Միխայիլ Գուսմանի վերոնշյալ ծանուցումը: Տե՛ս, ծանոթագրություն 4-րդ:

24. Ի տարբերություն Առաջին և Երկրորդ համաշխարհային պատերազմների, երբ Եվրոպա-Ասիա էքսպանսիայի կապը գնում էր ցամաքային եռաշերտ-քառաշերտ ազդեցության գոտիներով, օրինակ՝ 1916թ. Սայքս Պիկոյի պայմանագրով, ապա ներկայումս, ըստ ազդեցության գոտիների, աշխատում է երկու համակարգ. նախկին ցամաքայինը ներառում է նաև ծովային ազդեցության գոտիներ: Տե՛ս, «Ուխտ Արարատի», թիվ 2/13, 2007թ., Խմբագրականի փոխարեն նյութը, որտեղ շարադրված է, թե ինչպես է Կովկասը մասնատվում Սևծովյան և Կասպիական առափնյա պետությունների մեջ: Այն դեպքում, երբ Հիմալայներ ասելով նկատի ունի ասիական երկրների լոկ ցամաքային սահմանների վերաձևումը:

25. Հայտնի է, որ Սևրի դաշնագրով կարգավորվում էր ոչ միայն Հայկական հարցը (ճիշտ է՝ մասնակիորեն), այլև ձևավորվելու էր քրդական պետություն: Ավելին՝ քրդական պետությունը չէր ստեղծվելու բուն Հայաստանի տարածքների վրա: Այլ խնդիր է, թե ինչով է պայմանավորված արևմտյան նախորդ քաղաքականության վերախմբագրումը՝ ըստ Ռալֆի, երբ քրդական պետությունը տարածվում է նաև Հայաստանի սահմաններում, հավանաբար՝ որպես ապագայի նոր հակամարտություն, հայ-քրդական «լարվածության օջախ»:

26. Այստեղ է, որ Ռալֆը տալիս է վերևում դրված հարցի պատասխանը: Այսինքն՝ քրդական պետությունը քրդերի համար չէ որ ստեղծվում է, նա լինելու է ընդամենը հանցագործ գործիք՝ ժանդարմ պետություն, Եվրոմիության ձեռքում՝ Բուլղարիայից մինչև Ճապոնիա երկարող աշխարհագրական տարածքում:

27. Հարցը Լիբանանը չէ: Դա պայմանավորված է Միջերկրածովյան ընդհանուր պետության ստեղծումով, որտեղ, ըստ արևմուտքի, Սիրիան չպետք է լինի:

28. Իրաքը երեք առանձին պետությունների մասնատելու ծրագիրը ընթացքի մեջ է: Զուգահեռ ընթանում են Պարսից ծոցի երկրների միության ստեղծման աշխատանքները:

29. Կպահպանի, քանի որ, կտրված լինելով Միջերկրականից, չի խանգարում Միջերկրածովյան ընդհանուր պետության ստեղծման աշխատանքներին:

30. Սաուդյան Արաբիայի մասնատումը պայմանավորված է Պարսից ծոցի և Կարմիր ծովի երկրների միությունների ստեղծման ծրագրերով:

31. Սա տիպիկ օրինակ է էթնիկ էքսպանսիայի միջոցով

արհեստականորեն ստեղծվող պետական միավորման, որի սկիզբը, տվյալ դեպքում, դրվեց 1918թ.: Այսօր պետք չէ այդ պետությունը, ստեղծում են նորը՝ ի չիք դարձնելով նախորդ ժամանակահատվածում եղած միջազգային պարտավորություններն ու պայմանագրերը:

32. Այս և հաջորդ երկու պարբերություններում նշված պետությունների սահմանների վերաձևավորմամբ են պայմանավորված այդ երկրներում և նրանց միջև առնվազն վերջին հինգ - տասը տարիներին ընթացող բախումները, ահաբեկչության դրսևորումները, ազգային և կրոնական լարվածությունը, որոնք հետևանք են արևմտյան լրատվության քարոզչության, իսկ 2006-ից արդեն նաև Ռալֆի կողմից անմիջականորեն իրագործվող ազգային և կրոնական թշնամանքի, ատելության, ազգամիջյան պատերազմների հրահրման, հակամարտությունների սերմանման և քարոզչության:

33. Քարտեզում ներառված երկրների համար «Ժողովրդի կամք» հասկացությունը արևմուտքում փոխարինվել է երկրի ղեկավարի «քաղաքական կամք» հակաժողովրդավարական հասկացությամբ, ուստի և Ռալֆին ընկալելի է, որ երկրի ղեկավարի անմիջական աջակցությամբ սահմանների փոփոխությունը կընկալվի՝ որպես երկրի ժողովուրդի կամքի արտահայտություն:

34. Հստակ ասում է, որ այս ծրագիրն իրականացնելու են ԱՄՆ-ի և ՆԱՏՕ-ի զինուժի միջոցով, իբրև թե ընդդեմ ահաբեկչության և հանուն անվտանգության և ժողովրդավարության: Չհստակեցնելով, թե ո՞ւմ անվտանգության: Ի դեպ, սույնով լուրջ մարտահրավեր է նետվում մի ամբողջ տարածաշրջանի երկրներին ու ժողովուրդներին: Սա հենց այն խնդիրներից է, որն անմիջականորեն վերաբերում է ՄԱԿ-ի Անվտանգության Խորհրդի գործառույթներին:

35. Սա նույնպես բացահայտ սպառնալիք է տարածաշրջանի այն երկրներին, որոնք կհանդգնեն ընդդիմանալ այս քարտեզով առաջարկվող փոփոխություններին: Տարօրինակ է, որ առ այսօր այս հարցը որևէ պետություն չի առաջարկել ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի քննարկմանը, որի իրավասությունն է այսօրինակ մեծ աղետների կանխարգելման և իրապես տարածաշրջանային խնդիրների իրավական լուծման ու խաղաղության պահպանման գործառույթը:

36. Գոյություն ունեցող խնդիրների լուծման Ռալֆի առաջարկած տրամաբանության պարագային, պարզ է, որ չի շահելու ոչ մի կողմ: Ինչ վերաբերում է Հայաստանին, ապա Ռալֆին թվում է, թե կարող է խաբել հայությանը՝ նրան վերադարձնելով 1921թ. Ռուս-թուրքական պայմանագրով բռնազավթված Արևելյան Հայաստանի՝ Կարսի, Արդահանի, Սումալուի մի հատվածը, Արարատով, հույս ունենալով որ հայերը չեն նկատի, թե շահող կոչված այդ տարածքին չեն գումարվելու ապագայի քրդական պետությանը միացվող Հայաստանի տարածքները, էլ չասելու համար, որ նոր Ադրբեջանի տարածքում են թողնվում Արցախն ու Նախիջևանը:

37. Կորցնելու են բոլորը, բացառությամբ Իսրայելի, քանզի Բաղդադ քաղաք - նահանգի ընդհանուր ղեկավարման և առաջարկված ծրագրային այլ փոփոխությունների միջոցով վերահսկելի է դառնում ամբողջ տարածաշրջանը, որն էլ երաշխավորում է Իսրայել պետության ազգային անվտանգությունը: Համենայնդեպս, այդպես էր մտածում Արիել Շարոնը 1981-ին, իսկ Ռալֆ Պիտերսը 2006-ին:

Հ.Գ. - Քիչ էր մնում մոռանայինք Ռալֆին հարցնել, թե այդ ինչպե՞ս է պատահել, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը չի ներառել «շահող երկրի»՝ Հայաստանի, կազմում: Կամ չի նշել, որպես առանձին պետություն՝ «Ազատ Արցախ», ինչպես նշել է՝ «Ազատ Բելուջիստան», «Ազատ Քուրդիստան» պետությունները: Ի՞նչ է ԼՂՀ-ի հայությունը «հավատի նմանություններ», թե՞ «արյունակցական կապեր» չունի ՀՀ-ի հայերի հետ: Իսկ միգուցե՞ ուզում է ասել, թե ապագայի «էքնիկ զտումներն իրենց գործն անելու են»: Ավելի ճիշտ կլիներ, եթե այդ հարցերի պատասխանները Ռալֆ Պիտերսը դատարանում տար: Նույն կերպ առանձին խոսակցության նյութ է Ջավախքի հարցը (ինչպես և Նախիջևանի), որից սակայն, հեղինակը կանխավ վարպետորեն խուսափել է, որովհետև Վրաստանը ընդհանրապես չի ներգրավել իր հոդվածում և քարտեզում: Հավանաբար, վերջինս ի հայտ կգա ծրագրային երկրորդ նյութում և քարտեզում, որտեղ խոսք կգնա արդեն հյուսիս-կովկասյան, սևծովյան և կասպիական ափամերձ, միջին-ասիական երկրների սահմանների վերագծման հարցերի շուրջ:







Ռալֆ Պիտերսի քարտեզները և Աշխարհի միակենտրոն ընդհանուր ուժային ղեկավարման նոր կառույցի ծովային և ցամաքային մեխանիզմները

ՄԱԿ-Ի ԳԼԽԱՎՈՐ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ 217 A (III) ԲԱՆԱՁԵՎ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՌՉԱԿԱԳԻՐ

10 դեկտեմբերի, 1948թ.

Նախաբան

Քանզի մարդկության ընտանիքի բոլոր անդամներին հատուկ արժանապատվության և հավասար ու անօտարելի իրավունքների ճանաչումն աշխարհի ազատության, արդարության և խաղաղության հիմքն է,

քանզի մարդու իրավունքների նկատմամբ քամահրանքն ու արհամարհանքը հանգեցրել են մարդկության խիղճը վրդովող բարբարոսական գործողությունների, և քանի որ իբրև մարդկության վեհ նպատակ է հռչակված այնպիսի աշխարհի ստեղծումը, որտեղ մարդիկ կվայելեն խոսքի ու համոզմունքների ազատություն և զերծ վախից ու կարիքից,

քանզի անհրաժեշտ է օրենքի իշխանությամբ պաշտպանել մարդու իրավունքները, որպեսզի նա, որպես վերջին միջոց, հարկադրված չընդվզի բռնակալության ու ճնշման դեմ,

քանզի անհրաժեշտ է նպաստել ազգերի բարեկամական հարաբերությունների զարգացմանը, քանզի Միավորված ազգերի ժողովուրդները Կանոնադրության մեջ վերահաստատել են իրենց հավատը մարդու հիմնական իրավունքների, մարդ անհատի արժանապատվության ու արժեքի, տղամարդու ու կնոջ իրավահավասարության հանդեպ և վճռել սոցիալական առաջադիմությանն ու կենսապայմանների բարելավմանն աջակցել առավել ազատության պայմաններում,

քանզի անդամ պետությունները պարտավորվել են, Միավորված ազգերի հետ համագործակցելով, հասնել մարդու իրավունքների ու հիմնական ազատությունների նկատմամբ համընդհանուր հարգանքի ու դրանց պահպանման,

քանզի այս իրավունքների ու ազատությունների համընդհանուր ըմբռնումը վիթխարի

նշանակություն ունի այս պարտավորության լիակատար իրականացման համար.

ԳԼԽԱՎՈՐ ԱՍԱՄԲԼԵԱՆ
հրապարակում է սույն
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՌՉԱԿԱԳԻՐԸ
...

Ծանոթագրություն

1. Սույն Հռչակագիրը հետպատերազմյան տարիներից հանդիսանում է միջազգային իրավունքի կազմակերպման և իրականացման առանցքը:

2. Հաշվի առնելով նյութի մեծ ծավալը, ամբողջ տեքստը չենք ներկայացնում: Այն կարելի է գտնել յուրաքանչյուր գրադարանում, ինչպես նաև ՄԱԿ-ի ինտերնետ կայքէջում:

3. ՄԱԿ-ի Երևանյան գրասենյակի կատարած սույն թարգմանությունը, ըստ էության, չի համապատասխանում մայր օրինակին, ուստի, խորհուրդ ենք տալիս ընթերցել բնագիրը ՄԱԿ-ի պաշտոնական հինգ լեզուներից որևէ մեկով:

ՄԱԿ-Ի ԲԱՆԱՁԵՎԵՐ, ԿՈՆՎԵՆՑԻԱՆԵՐ

ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի Բանաձև 260 A (III)
Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին, 9 դեկտեմբերի 1948թ.
Ուժի մեջ է մտել 12 հունվարի 1951թ.

Պայմանավորվող կողմերը,

հաշվի առնելով, որ Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեան իր 1946 թ. դեկտեմբերի 11-ի 96 (1) բանաձևում հայտարարել է, որ միջազգային իրավունքի համաձայն ցեղասպանությունը հանցագործություն է և հակասում է Միավորված ազգերի կազմակերպության ոգուն ու նպատակներին, և որ քաղաքակիրթ աշխարհը դատապարտում է այն,

ընդունելով, որ պատմության բոլոր ժամանակաշրջաններում ցեղասպանությունը մեծ կորուստներ է պատճառել մարդկությանը, և

համոզված լինելով, որ մարդկությունն այդ նողկալի արհավիրքից ազատելու համար անհրաժեշտ է միջազգային համագործակցություն.

սույնով համաձայնում են ներքոհիշյալի շուրջ.

ՀՈԴՎԱԾ 1

Պայմանավորվող կողմերը հաստատում են, որ ցեղասպանությունը, անկախ նրանից՝ կատարվում է խաղաղ, թե պատերազմական պայմաններում, ըստ միջազգային իրավունքի հանցագործություն է, որը նրանք պարտավորվում են կանխարգելել և պատժել այն կատարելու համար:

ՀՈԴՎԱԾ 2

Սույն Կոնվենցիայում ցեղասպանություն նշանակում է հետևյալ գործողություններից ցանկացածը՝ կատարված ազգային, էթնիկական, ցեղական կամ կրոնական որևէ խմբի, որպես այդպիսին, լրիվ կամ մասնակի ոչնչացման մտադրությամբ.

a) այդ խմբի անդամների սպանությունը,

b) այդ խմբի անդամներին մարմնական լուրջ վնասվածքներ կամ մտավոր վնաս պատճառելը,

c) որևէ խմբի համար կյանքի այնպիսի պայմանների միտումնավոր ստեղծումը, որոնք ուղղված են նրա լրիվ կամ մասնակի ֆիզիկական ոչնչացմանը,

d) այդ խմբի միջավայրում մանկածնությունը կանխելուն միտված միջոցների իրականացումը,

e) երեխաների բռնի փոխանցումը մարդկային մի խմբից մյուսին:

ՀՈԴՎԱԾ 3

Պատժելի են հետևյալ արարքները՝

a) ցեղասպանությունը,

b) ցեղասպանություն կատարելու նպատակով դավադրությունը,

c) ցեղասպանության ուղղակի և հրապարակային հրահրումը,

d) ցեղասպանություն կատարելու փորձը,

e) հանցակցությունը ցեղասպանության կատարման մեջ:

ՀՈԴՎԱԾ 4

Ցեղասպանություն կամ 3-րդ հոդվածում թվարկված որևէ արարք կատարած անձինք ենթակա են պատժի՝ անկախ այն բանից, նրանք սահմանադրությամբ պատասխանատու ղեկավարներ են, թե պաշտոնատար կամ մասնավոր անձինք:

ՀՈԴՎԱԾ 5

Պայմանավորվող կողմերը պարտավորվում են սույն

Կոնվենցիայի դրույթները գործողության մեջ դնելու համար ընդունել իրենց սահմանադրություններին համապատասխան անհրաժեշտ օրենսդրություն և, մասնավորապես, սահմանել արդյունավետ պատժամիջոցներ ցեղասպանության մեջ կամ 3-րդ հոդվածում նշված մյուս արարքներից որևէ մեկում մեղավոր անձանց համար:

ՀՈԴՎԱԾ 6

Այն անձինք, ովքեր մեղադրվում են ցեղասպանություն կամ 3-րդ հոդվածում թվարկված որևէ արարք կատարելու մեջ, դատվում են այն երկրի իրավասու դատարանի կողմից, որի տարածքում կատարվել է այդ հանցագործությունը, կամ այնպիսի միջազգային քրեական դատարանի կողմից, որը կարող է իրավազորություն ունենալ սույն Կոնվենցիայի՝ այդ իրավազորությունը ճանաչած կողմերի նկատմամբ:

ՀՈԴՎԱԾ 7

Ցեղասպանությունը և 3-րդ հոդվածում թվարկված մյուս արարքները հանձնման նպատակների համար չեն դիտվում որպես քաղաքական հանցագործություններ:

Նման դեպքերում Պայմանավորվող կողմերը պարտավորվում են հանձնումն իրականացնել իրենց օրենսդրության և գործող պայմանագրերի համաձայն:

ՀՈԴՎԱԾ 8

Յուրաքանչյուր պայմանավորվող կողմ կարող է դիմել Միավորված ազգերի կազմակերպության իրավասու մարմիններին՝ Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրությանը համապատասխան ձեռնարկելու այնպիսի գործողություններ, որոնք նրանք անհրաժեշտ են համարում ցեղասպանությունը և 3-րդ հոդվածում թվարկված որևէ այլ արարք կանխարգելելու և ճնշելու համար:

ՀՈԴՎԱԾ 9

Պայմանավորվող կողմերի միջև վեճերը՝ կապված սույն Կոնվենցիայի մեկնաբանման, կիրառման և կատարման հետ, ներառյալ նաև ցեղասպանություն կամ 3-րդ հոդվածում թվարկված որևէ արարք կատարելու համար այս կամ այն պետության պատասխանատվության վերաբերյալ վեճերը, հանձնվում են Միջազգային դատարանի քննարկմանը՝ վեճի կողմերից յուրաքանչյուրի պահանջով:

ՀՈԴՎԱԾ 10... ՀՈԴՎԱԾ 19

<u>Ծանոթագրություն</u>

1. Կոնվենցիան Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1993 թվականի հունիսի 23-ից:

2. Հաշվի առնելով, որ Կոնվենցիայի պաշտոնական սույն թարգմանությունը չի համապատասխանում մայր օրինակին, կից ներկայացնում ենք նաև ռուսերեն բնագիրը: Օրինակ, հայերեն տեքստում՝ Հոդված 1-ում, ասված է. «**Պայմանավորվող կողմերը հաստատում են, որ ցեղասպանությունը, անկախ նրանից՝ կատարվում է խաղաղ, թե պատերազմական պայմաններում, ըստ միջազգային իրավունքի հանցագործություն է, որը նրանք պարտավորվում են կանխարգելել և պատժել այն կատարելու համար»:** Այն դեպքում, երբ ռուսերենում կարդում ենք. Статья I. Договаривающиеся стороны подтверждают, что геноцид независимо от того, совершается ли он в мирное или военное время, является преступлением, которое нарушает нормы международного права и против которого они объязуются принимать меры предупреждения и карать за его совершение. Տեսանելի է, որ **военное время** մի բան է, **պատերազմական պայմանները**՝ այլ: Կամ՝ **нарушает нормы международного права** մի բան է, **ըստ միջազգային իրավունքի** լրիվ այլ բան:

ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի Բանձև

Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և դրա համար պատժի մասին, 9-ը դեկտեմբերի 1948թ.

Конвенция о предупреждении преступления геноцида и наказании за него, 9 декабря 1948г.

Договаривающиеся стороны,

Принимая во внимание, что Генеральная Ассамблея Организации Объединеонных Наций в своей резалюции 96 (1) от 11 декабя 1946 года объявила, что геноцид является преступлением, нарушающим нормы международного право и противоречащим духу и целям Организации Объединеонных Наций, и что цивилизованный мир осуждает его,

Признавая, что на протежении всей истории геноцид приносил большие потери человечеству, и

Будучи убежденными, что для избавления человечества от этого отвратительного бедствия необходимо международное сотруничество,

Соглашаются, как это предусмотрено ниже:

Статья I

Договаривающиеся стороны подтверждают, что геноцид независимо от того, совершается ли он в мирное или военное время, является преступлением, которое нарушает нормы международного права и против которого они объязуются принимать меры предупреждения и карать за его совершение.

Статья II

В настоящей Конвенции под геноцидом понимаются следующие действия, совершаемые с намерением уничтожить, полностью или частично, какую-либо национальную, этническую, расовую или религиозную группу, как токовую:

a) убийство членов такой группы,

b) причененение серъезных телесных повреждений или умственного расстройства членам такой группы,

c) предумышленное создание для кокой-либо группы таких жизненных условий, которые рассчитаны на полное или частичное физическое уничтожение ее,

d) меры, рассчитанные на предотвращение деторождения в среде такой группы,

e) насильственная передача детей из одной человеческой группы в другую.

Статья III

Наказуемы следующие деяния:

a) геноцид,

b) заговор с целью совершения геноцида,

c) прямое и публичное подстрекательство к совершению геноцида,

d) покушение на совершение геноцида,

e) соучастие в геноциде.

Статья IV

Лица, совершающие геноцид или какие-либо другие из перечисленных в статье III деяний, подлежат наказанию независимо от того, являются ли они ответсвенными по конституции правителями, должностными или частными лицами.

Статья V

Для введения в силу положений настоящей Конвенции Договаривающиеся стороны обязуются провести необходимое законодательство, каждая в соответствии со своей конституционной процедурой, и, в частности, предусмотреть эффективные меры наказания лиц, виновных в совершении геноцида или других упомянутых в статье III преступлений.

Статья VI

Лица, обвиняемые в совершении геноцида или других перечисленных в статье III деяний, должны быть судимы компетентным судом того государства, на территории которого было совешено это деяние, или таким международным уголовным судом, который может иметь юрисдикцию в отношении Сторон настоящей конвенции, признавших юрисдикцию такого суда.

Статья VII

В отношении выдачи виновных геноцид и другие перечисленные в статье III деяния не рассматриваются как политические преступления.

В таких случаях Договаривающиеся стороны обязуются осуществлять выдачу в соотвествии со своим законадательством и действующими договорами.

Статья VIII

Каждый участник настоящей Конвенции может обратиться к соответствующему органу Организации Объединеонных Наций с требованием принять, в соответствии с положениями Устава Организации Объединеонных Наций, все необходимые, по его мнению, меры в целях предупреждения и пресечения актов геноцида или одного из других перечисленных в статье III деяний.

Статья IX

Споры между Договаривающиеся сторонами по вопросам толкования, применения или выполнения настоящей Конвенции, включая споры относительно ответственности того или другого государства за совершение геноцида или одного из перечисленных в статье III деяний, передаются на рассмотрение Международного Суда по требованию любой из сторон в споре.

Статья X

Настоящая Конвенция, английский, китайский, испанский, французский и русский тексты которой являются равно аутентичными, датируется 9 декабря 1948 года.

Статья XI ... Статья XIX

ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի Բանաձև

Պատերազմի հանցագործությունների և մարդկության դեմ հանցագործությունների նկատմամբ վաղեմության ժամկետ չկիրառելու մասին, 26-ը նոյեմբերի 1948թ.

Конвенция о неприменимости срока давности к военным преступлениям и преступлениям против человечества, 26 ноября 1968г.

Государства — участники настоящей Конвенции,

Ссылаясь на резалюции Генеральной Ассамблеи Организации Объединеонных Наций 3 (I) от 13 февраля 1946 года и 170 (II) от 31 октября 1947 года о выдаче и наказании военных преступников, на резолюцию 95 (I) от 11 декабря 1946 года, потверждающую принцыпи международного права, признанные Уставом Нюренбергского международного военного трибунала и приговором этого трибунала, и на резолюции 2184 (XXI) от 12 декабря 1966 года и 2202 (XXI) от 16 декабря 1966 года, в которых ясно осуждаются как преступления против человечества нарушение экономических и политических прав коренного населения, с одной стороны, и политики апартеида — с другой,

Ссылаясь на резалюции 1074 D (XXXIX) от 28 июля 1965 года и 1158 (XLI) от 5 августа 1966 года Экономического и Социального Совета Организации Объединенных Наций о наказании военных преступников и лиц, совершивших преступления против человечества,

Отмечая, что ни в одной торжественной декларации, акте или конвенции, касающихся судебного преследования или наказания за военные преступления и преступления против человечества, не содержится положения о сроке давности,

Считая, что в соотвтствии с международным правом военные преступления и преступления против человечества относится к самым тяжким преступлениям,

Исходя из убеждеия, что эффективное наказание за военные преступления и преступления против человечества является важным фактором в деле предупреждения таких преступлений, зашиты прав человека и основных свобод, укрепления доверия, поошрения сотрудничества между народами и обеспечения международного мира и безопасности,

Отмечая, что применение к военным преступлениям и преступления против человечества внутренних правовых норм, касающихся срока давности в отношении обычных преступлений, является вопросом, вызывающим серезную озабоченность мирового общественного мнения, так как оно препятствует судебному преследованию и наказанию лиц, ответственных за такие преступления,

Признавая небходимость и своевременность удверждения в международном праве, посредством настоящей Конвенции, принципа о том, что не существует срока давности в отношении военных преступлений и преступления против человечества, а также обеспечения повсеместного применения этого принципа,

Согласились о нижеследующем:

Статья I

Никакие сроки давности не применяются к следующим преступлениям, независимо от времени их совершения:

a) военные преступления, как они определяются в Уставе Нюренбергского международного военного трибунала от 8 августа 1945 года и подтверждаются резолюциями 3 (I) от 13 февраля 1946 года и 95 (I) от 11 декабря 1946 года Генеральной Ассамблеи Организации Объединеонных Наций, а таже, в частности, «серезные нарушения», перечисленные в Женевских конвенциях о защите жертв войны от 12 августа 1949 года,

b) преступления против человечества, независимо от того, были ли они совершены во время войны или в мирное время, как они определяются в Уставе Нюренбергского международного военного трибунала от 8 августа 1945 года и подтверждаются в резолюциях 3 (I) от 13 февраля 1946 года и 95 (I) от 11 декабря 1946 года Генеральной Ассамблеи Организации Объединенных Наций, изгнание в результате вооруженного нападения или оккупации и бесчеловечные деиствия, являюшиеся следствием политики апартеида, а также преступление геноцида, определяемое в Конвенции 1948 года о предупреждении преступления геноцида и наказании за него, даже если эти действия не представляют собой

нарушения внутреннего законодательства той страны, в которой они были совершены.

Статья II

В случае совершения какой-либо из преступлений, упомянутых в статье I, положения настоящей онвенции применяются к представителям государственных властей и частным лицам, которые выступают в качестве исполнителей этих преступлений или соучастников таких преступлений, или участвуют в заговоре для их совершения, независимо от степени их заверщенности, равно как и к представителям государственных властей, допускающим их совершение.

Статья III

Государство — участники настоящей Конвенции объязуются принять все необходимые внутренние меры законодательного или иного характера, направленные на то, чтобы в соответствии с международным правом создать условия для выдачи лиц, указанных в статье II настоящей Конвенции.

Статья IV

Государство — участники настоящей Конвенции объязуются принять в соответствии с их конституционной процедурой любые законодателйные или иные меры, необходимые для обеспечения того, чтобы срок давности, установленный законом или иным путем, не применялся к судебному преследованию и наказанию за преступления, указанные в статьях I и II настоящей Конвенции, и чтобы там, где такой срок применяется к этим преступлениям, он был отменен.

Статья V ... Статья XI

ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի Բանաձև 110 (II)
Միջոցներ, որոնք պետք է ընդունվեն ընդդեմ նոր պատերազմի քարոզչության և հրահրողների, 3-ը նոյեմբերի 1947թ.

Резалюция 110 (II) Генеральной Ассамблеи ООН[1]

Меры, которые должны быть приняты против пропоганды и поджигателей новой войны, 3 ноября 1947г.

Принимая во внимание, что в Уставе Организации Объединенных Наций народы выразили их решимость избавить градущие поколения от бедствий войны, дважды в наше время принесших человечеству невыразимое горе, и проявлять терпимость и жить вместе, в мире друг с другом, как добрые соседи, и

Принимая во внимание, что Устав также требует развития всеобшего уважения к основным свободам, в том числе к свободе слова, и соблюдения их, причем все члены обязались в статье 56 предпринимать совместные и сомостоятельные действия дла такого соблюдения основных свобод,

Генеральная Ассамблея

1. осуждает любую форму ведущейся в любой стране пропоганды, имеющей целью или способной создать или усилить угрозу миру, нарушением мира или акт агрессии.

Ծանոթագրություն

ՄԱԿ-ի սույն բանաձևով է պայմանավորված, որ վերջին 6 տասնամյակում ոչ մի երկրում պաշտոնապես պատերազմ չի քարոզվում: Խանգարում է ոչ միայն 110 (II) բանաձևը, այլև ՄԱԿ-ի մի շարք այլ կոնվենցիաներ և փաստաթղթեր: Սակայն դրանք չեն խանգարում, որպեսզի երկրները, իբրև մասնավոր կարծիք, պատերազմի, ցեղասպանության քարոզչությունը, հրահրումը, կրոնական և ազգային ատելություն և թշնամանք սերմանելը հնչեցնեն (քարոզչություն ծավալեն), այսպես կոչված, «հեղինակավոր» քաղաքագետների և վերլուծաբանների միջոցով: Մոդայիկ է դարձել երկրների դեմ պատերազմ կամ ռազմական ագրեսիա սանձազերծելը ներկայացնել, որպես «միջազգային տեռորիզմի» դեմ պայքար՝ հանուն հարձակվող երկրի ազգային անվտանգության:

ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի Բանաձև 127 (II)
Կեղծ կամ խեղաթյուրված տեղեկատվություն, 15-ը նոյեմբերի 1947թ.

Резолюция 127 (II) Генеральной Ассамблеи ООН[2]

Ложная или извращенная информация, 15 ноября 1947г.

Генеральная Ассамблея,

Считая, что государство — члены Организации Объединенных Нации, согласно статье 1 Устава, объязаны развивать дружественные отношения между собой и осуществлять международное сотрудничество, развивая для этого и укрепляя уважение к правам человека и основным свободам,

Считая, что для достижения этой цели необходимо облегчать и расширять распространение во всех странах информации, способной улучшить взаимное понимание между народами и обеспечить дружественные отношения между ними,

Считая, что значительные успехи в этой области могут быть осуществлены лишь путем проведения, в пределах того, что согласно с основными законами каждой данной страны, мер для борьбы с распространением ложных или извращенных известий, которые могут повредить дружеским отношениям между государствами,

Предлагает правительствам государств — членов Организации Объединенных Наций:

1. изучить меры, которые могут быть приняты с пользой в отдельных государствах, в пределах того, что согласно с основными законами их для борьбы с распространением ложных или извращенных известий, которые могут повредить дружеским отношениям между государствами, ...

Ծանոթագրություն

1. Սույն բանաձևն է խանգարում համաշխարհային տիրապետության գնացող ուժերին: Քենեդի-Խրուշչովին չեզոքացնելուց հետո, 1966թ. սկսած, որպես ճարպիկ լուծում գտնվեց Ալան Դալեսի ծրագիրը: Դալեսի նախանշած՝ մարդու բնության դեմ ուղղված բոլոր այլանդակությունները՝ ընդդեմ ՄԱԿ-ի 1948թ. Մարդու Իրավունքների Համընդհանուր Հռչակագրի, ներկայացվեցին՝ որպես ՄԱԿ-ի և Եվրոմիության Մարդու իրավունքների կոնվենցիաներ: Օրինակ, միասեռականներին ամուսնություն թույլատրելու, ինչպես նաև նրանց կողմից առողջ ընտանիքների երեխաներ որդեգրել թույլատրելու օրենքները, որոնք հակասում են ՄԱԿ-ի Մարդու Իրավունքների Համընդհանուր Հռչակագրի 16-րդ Հոդվածին, մասնավորապես, 3-րդ կետին, որտեղ ասված է. «Ընտանիքը հասարակության բնական և հիմնական բջիջն է, ունի հասարակության ու պետության կողմից պաշտպանվելու իրավունք»:

ՀՀ-Ի ԵՎ ԼՂՀ-Ի ԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՓՈՒԼԵՐԸ 1917-ԻՑ ՑԱՅՍՕՐ

Հայաստանի Հանրապետության ազգային և միջազգային իրավական կարգավիճակի փուլերը 1918-ից ցայսօր [1]

Հայության ձեռքբերումներն ու կորուստները, մասնավորապես, իրավունքի ոլորտում

I. ՓՈՒԼ 1918թ. մայիսի 28 - 1920թ. դեկտեմբերի 4. Հայաստանի Հանրապետություն - փաստացի՝ ԱՆԿԱԽ - իրավականորեն՝ ԱՆԿԱԽ,

Ձեռքբերումները. 1) Սարդարապատի, Բաշ Ապարանի, Ղարաքիլիսայի՝ Հայոց լինել - չլինելու վճռական գոյամարտի հաղթանակ: 2) Հայրենիքում ազատ, անկախ, ինքնիշխան ապրելու, հարատևելու իրավունքի նվաճում՝ Հայաստանի անկախության վերականգնում: 3) 1919թ. հունվարի 19-ին դաշնակից երկրների Գերագույն Խորհուրդը ճանաչեց ՀՀ կառավարությունը: 4) 1919թ. ապրիլ - մայիսին ազատագրվեցին Կարսը, Օթլին, Կաղզվանը, Շարուրը և Նախիջևանը. գրեթե ամբողջությամբ վերականգնվեց Արևելյան Հայաստանի 1914-ի սահմանները: 5) 1919թ. մայիսի 14-ին Փարիզի կոնֆերանսը որոշում ընդունեց ԱՄՆ-ին Հայաստանի մանդատը տալու մասին: 6) 1919թ. մայիսի 16-ին ՀՀ Նախարարների խորհուրդը ընդունեց որոշում Երևանում Պետական Համալսարան հիմնելու մասին. Համալսարանի բացումը տեղի ունեցավ 1920թ. հունվարի 31-ին Ալեքսանդրապոլում (Երևանում դեռևս շենք չունենալու պատճառով): 7) 1920թ. հունվարին 19-ին Ազգերի Լիգան ճանաչեց ՀՀ փաստացի (դե ֆակտո) անկախությունն ու ինքնիշխանությունը: 8) 1920թ. օգոստոսի 10-ին կնքվեց Սևրի հաշտության պայմանագիրը, որի համաձայն՝ Թուրքիան (սուլթանը՝ օրինական իշխանություն) ճանաչում էր Հայաստանի Հանրապետությունը՝ որպես ազատ և անկախ պետություն: 9) 1920թ. օգոստոսի 10-ին, Թիֆլիսում կնքվեց համաձայնագիր ՀՀ-ի և ՌՍՖՍՌ-ի միջև, համաձայն որի՝ Սովետական Ռուսաստանը նույնպես ՀՀ-ն ճանաչում էր որպես ազատ և անկախ պետություն:

Կորուստները. 1) Քառակողմ պատերազմի հասցրած վնասները հայությանն ու հանրապետությանը: 2) 1920թ. նոյեմբերի 29-ին հայ բոլշևիկները՝ Հեղկոմը, Հայաստանը հայտարարեցին սովետական: 3) 1920թ. դեկտեմբերի 2-ին կնքվեց Համաձայնագիր ՌՍՖՍՌ-ի և ՀՀ-ի միջև, համաձայն որի՝ Հայաստանը հայտարարվում է անկախ սոցիալիստական հանրապետություն: 4) 1920թ. սեպտեմբերին Երևանի Պետական Համալսարանում դասերը ժամանակավորապես դադարեցին:

II. ՓՈՒԼ 1920թ. դեկտեմբերի 4 - 1922թ. մարտի 12. Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետություն - փաստացի՝ ՈՉ ԱՆԿԱԽ, իրավականորեն՝ ԱՆԿԱԽ,

Ձեռքբերումները. 1) 1919-ից՝ Զանգեզուրի անկախության և ինքնիշխանության զինյալ պաշտպանություն: 1920թ. դեկտեմբերի 25-ին՝ որպես Ինքնավար Սյունիք: 1921թ. ապրիլի 26-ից՝ Լեռնահայաստանի Հանրապետություն: 2) 1921թ. փետրվարի 20-ին՝ Վրաստանի զավթած հայկական Լոռու, այսպես կոչված, «չեզոք գոտու» ազատագրումը: 3) 1921թ. հոկտեմբերի 10-ին Երևանի Պետական Համալսարանը վերսկսեց դասերը: 4) 1922թ. փետրվարի 3-ին ընդունվեց ՀԽՍՀ Սահմանադրությունը:

Կորուստները. 1) 1921թ. մարտի 16-ի Ռուս-թուրքական բարեկամության և եղբայրության պայմանագիր ու այն վավերացնող՝ 2) 1921թ. հոկտեմբերի 13-ի Կարսի պայմանագիր: 3) Ռազմական կոմունիզմի հասցրած վնասները: 4) 1921թ. հուլիսի 3-ին Զանգեզուրից Գարեգին Նժդեհի դուրս գալը:

III. ՓՈՒԼ 1922թ. մարտի 12 - 1922թ. դեկտեմբերի 30. Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետություն - փաստացի՝ ՈՉ ԱՆԿԱԽ - իրավականորեն՝ ՈՉ ԱՆԿԱԽ,

Ձեռքբերումները. 1) Երևանի Պետական Համալսարանի վերաբացումը:

Կորուստները. 1) 1922թ. մարտի 12-ին Սով. Հայաստանը, Սով. Վրաստանը, Սով. Ադրբեջանը կնքեցին Անդրկովկասի Սովետական Սոցիալիստական Ֆեդերատիվ Հանրապետությունների Միություն (ԱՍՍՖՀՄ) ստեղծելու պայմանագիրը: 2) 1922թ. դեկտեմբերի 10-ին ԱՍՍՖՀՄ-ն վերակազմավորվեց Անդրկովկասի Սովետական Ֆեդերատիվ Հանրապետության, իսկ 1922թ. դեկտեմբերի 30-ին այն մտավ նորաստեղծ ԽՍՀՄ-ի կազմ. իրավական առումով Սով. Հայաստանը ընկավ կրկնակի կախվածության մեջ: 3) **Հնարավոր կորուստ**. 1922-ի վերջերին Երևանի գավառային կուսակցական կոնֆերանսը, առաջարկեց փակել Երևանի Պետական Համալսարանը[2] (պատճառաբանելով երկրի տնտեսական վիճակը). 1923-ին ՀԿ(բ)Կ 2-րդ համագումարը այն մերժեց:

IV. ՓՈՒԼ 1922թ. դեկտեմբերի 30 - 1937թ. մարտի 23. Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետություն - փաստացի՝ ՈՉ ԱՆԿԱԽ - իրավականորեն՝ կրկնակի ՈՉ ԱՆԿԱԽ,

Ձեռքբերումները. 1) 1936թ. դեկտեմբերի 5-ին հաստատվեց ԽՍՀՄ նոր սահմանադրությունը, ըստ որի՝ դադարում է Անդրկովկասի ՍՖՍՀ-ի գոյությունը:

Կորուստները. 1) 9-ը հուլիսի 1936թ. Աղասի Խանջյանի սպանությունը ԱՍՖՍՀ-ի կենտրոնում՝ Թբիլիսիում, ԽՍՀՄ նոր Սահմանադրության նախագծի մեջ Լեռնային Ղարաբաղը և Նախիջևանը Հայկական ՍՍՀ-ին վերամիավորելու առաջարկը խափանելու համար: 2) Հայ մտավորականների սպանություններ և բռնություններ:

V. ՓՈՒԼ 1937թ. մարտի 23 - 1988թ. փետրվարի 20. Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետություն - փաստացի՝ ԿԻՍԱՆԿԱԽ, իրավականորեն՝ ԿԻՍԱՆԿԱԽ,

Ձեռքբերումները. 1) 1937թ. մարտի 23-ից, համաձայն Հայկական ՍՍՀ նոր Սահմանադրության՝ ինքնուրույն հանրապետություն՝ ԽՍՀՄ կազմում: 2) 1939թ. Հայկական էպոսի 1000-ամյակի հոբելյանական տոնակատարություններ. Սասունցի Դավիթ համահավաք բնագրի հրատարակում. բանասացություն - Հայոց անկոտրում ոգու ինքնարթնացում: 3) Բոլոր ասպարեզներում քաղաքակրթական նոր մակարդակի նվաճում: 4) Հաղթանակ Հայրենական մեծ պատերազմում:

Կորուստները. 1) Բռնադատվածների և զոհերի մեծ ալիք: 2) 1941-45թթ. Պատերազմի ժամանակ կրած կորուստներ՝ ճակատում և թիկունքում:

VI. ՓՈՒԼ 1988թ. փետրվարի 20 - 1990թ. օգոստոսի 23. Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետություն - փաստացի՝ ԱՆԿԱԽ - իրավականորեն՝ ԿԻՍԱՆԿԱԽ,

Ձեռքբերումները. 1) 22-ը նոյեմբերի 1988թ. ՀՍՍՀ օրենքը օսմանյան Թուրքիայում Հայերի 1915թ. ցեղասպանության դատապարտման մասին: 2) 1-ը դեկտեմբերի 1989թ. ՀՍՍՀ Գերագույն Խորհրդի և Լեռնային Ղարաբաղի Ազգային Խորհրդի որոշումը՝ Հայկական ՍՍՀ-ի և Լեռնային Ղարաբաղի վերամիավորման մասին:

Կորուստները. 1988թ. դեկտեմբերի 7-ի Սպիտակի երկրաշարժ:

VII. ՓՈՒԼ 1990թ. օգոստոսի 23 - 1991թ. սեպտեմբերի 21. Հայաստանի Հանրապետություն - փաստացի՝ ԱՆԿԱԽ, իրավականորեն՝ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ գործընթաց,

Ձեռքբերումները. 20-ը օգոստոսի 1990թ. ՀՍՍՀ Գերագույն Խորհրդի օրենքը, որով ընդունվեց Հայաստանի Հանրապետության Անկախության Հռչակագիրը և հռչակվեց

անկախ պետականության հաստատման գործընթացի սկիզբը:

Կորուստները. Հայաստանի շրջափակում հյուսիսից՝ երկաթուղին փակելու միջոցով:

VIII. ՓՈՒԼ 1991թ. սեպտեմբերի 21 - 1994թ. մայիսի 12. Հայաստանի Հանրապետություն - փաստացի՝ ԱՆԿԱԽ, իրավականորեն՝ ԱՆԿԱԽ.

Ձեռքբերումները. 1) Անկախության գործընթացի ավարտ, համաժողովրդական հանրաքվեով Անկախության Հռչակագրի ընդունում: 2) Շուշիի ազատագրումը 1992թ. մայիսի 9-ին: 3) 8-ը հուլիսի 1992թ. ՀՀ Գերագույն Խորհրդի օրենքը, որով Հայաստանը ոչ միայն ճանաչում է ԼՂՀ-ի անկախությունը, այլև չի ճանաչում և երբևէ չի ճանաչելու որևէ երկրի կամ միջազգային կառույցի ԼՂՀ-ը կրկին Ադրբեջանին բռնակցելու որևէ փաստաթուղթ:

Կորուստները. 1) 1992թ. դեկտեմբեր. գազամատակարարման դադարեցում և հոսանքազրկում: 2) Վայրի սեփականաշնորհման գործընթացի սկիզբ:

IX. ՓՈՒԼ 1994թ. մայիսի 12 - 2005թ. նոյեմբերի 27. Հայաստանի Հանրապետություն - փաստացի՝ ԿԻՍԱՆԿԱԽ, իրավականորեն՝ ԱՆԿԱԽ.

Ձեռքբերումները. 1) Հաղթական դադար Արցախյան ազատամարտում: 2) 2003թ. մայիս - հանրաքվե. Հայաստանի Անկախության Հռչկագրին հակասող Սահմանադրության եվրոնախագծի տարբերակի համաժողովրդական մերժում: 3) Խաղաղ կենսագործելու հնարավորություն:

Կորուստները. 1) Իշխանության ու ժողովրդի տարանջատում: 2) Սոցիալ-տնտեսական, կրթական ոլորտում: 3) Ձանգվածային գործազրկություն: 4) Ձանգվածային արտագաղթ: 5) Կրթական, գիտական, մշակութային ընդհանուր մակարդակի սրընթաց վատթարացում: 6) ՀՀ Անկախության Հռչակագրին հակասող օրենքների ընդունում: 6) ՀՀ Ազգային Ժողովի կողմից Սահմանադրության նախագիծը կրկին հանրաքվեի դնելու որոշում:

X. ՓՈՒԼ 2005թ. նոյեմբերի 27. - առ այսօր. Հայաստանի Հանրապետություն - փաստացի՝ ԿԱԽՅԱԼ, իրավական առումով, երկտակված իրարից օտարված իրողություն է. ա) ժողովրդի համար իրեն պատկանող ՀՀ ամբողջ իշխանությունը իրավականորեն՝ ԱՆԿԱԽ է, բ) իշխանավորների և պետծառայողների համար, համաձայն՝ ժողովրդի կողմից հանրաքեով մերժված Սահմանադրության՝ ՈՉ ԱՆԿԱԽ.

Ձեռքբերումները. Սպասումային, անորոշ լարվածություն:

Կորուստները. 1) Ժողովրդի 2005թ. նոյեմբերի 27-ին հանրաքվեով մերժած նախագիծը, որպես գործող Սահմանադրություն ընդունելու իրողություն: 2) ՀՀ ազգային անվտանգությանը սպառնացող, մարդու իրավունքներն ու ժողովրդավարությունը, ըստ էության, մերժող մի շարք եվրոօրենքների ընդունում: 3) ՀՀ պաշտոնական մակարդակում ավելի քան տասը տարի է փորձում են մոռացության մատնել Հայաստանի Անկախության Հռչակագիրը՝ ՀՀ Մայր Օրենքը (որի տեքստը ՀՀ-ում դարձել է բավականին դժվար ճարվող փաստաթուղթ): 4) Ազգային և քաղաքակրթական ընդհանուր արժեքների ճգնաժամի խորացում:

<u>Ծանոթագրություն</u>

1. Սա վերլուծության նախնական փորձ է ընդամենը, որը լրացումների խիստ կարիք ունի, ինչը հնարավորություն կտա ընկալել իրերի դրությունը, դրանց նպատակային պայմանավորվածությունն ու իրարամերժությունը, ըստ այդմ՝ ձևավորվող իրողությունները, դրանցում ընթացող՝ ուղղորդվող, ղեկավարելի, նաև բնական և ինքնակա գործընթացների ու երևույթների էությունը: Դա անհրաժեշտ է անել որոշելու իրերի կանխատեսելի ու անկանխատեսելի հաջորդականությունը, բացահայտելու համար դեպքերի զարգացման տրամաբանությունը, նաև գտնելու դեռևս լուծում չստացած անցյալի, ներկայի ու ապագայի մի շարք ինչո՞ւ-ների և ինչպե՞ս-ների պատասխանները:

2. Վերջին տարիներին՝ նույն սցենարով, որոշ նեոբոլշևիկներ՝ ՄԱԿ-ի հովանու տակ, որպես ՀՀ եվրոինտեգրման բարեփոխում, «քննարկում» են ՀՀ Ազգային Ակադեմիայի փակման հարցը:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախության փուլերը 1917-ից առ այսօր[1]

Հայության ձեռքբերումներն ու կորուստները, մասնավորապես, իրավունքի ոլորտում

I. ՓՈՒԼ 1917թ. նոյեմբերից - 1918թ. մայիսի 28. Լեռնային Ղարաբաղ - փաստացի՝ ԱՆԿԱԽ - իրավականորեն՝ ԱՆՈՐՈՇ,

Ձեռքբերումները. Սեփական ուժերով անկախության, ինքնիշխանության պահպանում:

Կորուստները. Ավազակային հարձակումների ու ներխուժումների հետևանքով մարդկային, նյութական կորուստներ:

II. ՓՈՒԼ 1918թ. մայիսի 28 - 1920թ. նոյեմբեր 30. Լեռնային Ղարաբաղ - փաստացի՝ ԱՆԿԱԽ, իրավականորեն՝ ԱՆԿԱԽ,

Ձեռքբերումները. Լեռնային Ղարաբաղը Հայաստանի Հանրապետության կազմում է:

Կորուստները. Շուշին ջարդերի ու արյունահեղությունների ասպարեզ է: 1920 մարտի 23-ին թուրք-մուսավաթական հրոսակախմբերը կոտորեցին 30 հազար հայ բնակիչների, կողոպտեցին ու հրկիզեցին Շուշիի հայկական թաղամասերը:

III. ՓՈՒԼ 1920թ. նոյեմբեր 30 - 1921թ. հուլիս 4. Լեռնային Ղարաբաղ - փաստացի՝ ԱՆԿԱԽ, իրավականորեն՝ ԿԻՍԱՆԿԱԽ՝ ՀՍՍՀ-ի հետ միասին,

Ձեռքբերումները. 1920թ. նոյեմբերի 30-ին Ադրբեջանի Հեղկոմի հռչակագրով Լեռնային Ղարաբաղը, Ձանգեզուրը և Նախիջևանը ճանաչվել են Խորհրդային Հայաստանի անբաժանելի մաս:

Կորուստները. Ռազմական կոմունիզմի քաղաքականությամբ պայմանավորված մարդկային, նյութական կորուստներ:

IV. ՓՈՒԼ 1921թ. հուլիսի 5 - 1986թ. Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզ - փաստացի՝ ԿԻՍԱՆԿԱԽ, իրավականորեն կրկնակի՝ ՈՉ ԱՆԿԱԽ,

Ձեռքբերումները, 1) Մինչև 1976թ. ԼՂԻՄ-ի իշխանությունների ու մտավորականության և ՀՍՍՀ-ի շարունակական դիմումները խորհրդային իշխանություններին: 2) Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի անկախության գործընթացի սկիզբը՝ ստորագրահավաք:

Կորուստները. 1) 1921թ. հուլիսի 5-ի Կովբյուրոյի որոշմամբ (առանց քվեարկության) Լեռնային Ղարաբաղի բռնակցումը Սովետական Ադրբեջանին 2) Մինչև 1976թ. կենտրոնական իշխանությունների դիմումներին ի պատասխան՝ բռնություններ, հալածանքներ Ադրբեջանի Սովետական Սոցիալիստական Հանրապետության կողմից:

V. ՓՈՒԼ 1988թ. փետրվարի 20 - 1988թ. հունիսի 15. Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզ - փաստացի՝ ԱՆԿԱԽ, իրավականորեն՝ ԿԻՍԱՆԿԱԽ,

Ձեռքբերումները. 1) 2-ը փետրվարի 1988-ի ԼՂԻՄ-ի մարզխորհրդի արտակարգ սեսիայի որոշումը Խորհրդային Ադրբեջանից անջատվելու և Խորհրդային Հայաստանին միանալու մասին: 2) «Կռունկ» կոմիտեի կազմավորում, «Միացում» համաժողովրդական շարժման հռչակում, ինքնաբուխ ինքնապաշտպանության ձևավորում:

Կորուստները. 1988-ի փետրվարի 26-28՝ Սումգայիթյան ջարդեր, ավազակային հարձակումներ Արցախի հայաբնակ գյուղերի վրա:

VI. ՓՈՒԼ 1988թ. հունիսի 15 - 1989թ. դեկտեմբերի 1. Լեռնային Ղարաբաղ - փաստացի՝ ԱՆԿԱԽ, իրավականորեն ԿԻՍԱՆԿԱԽ՝ ՀՍՍՀ-ի հետ միասին,

Ձեռքբերումները. 15-ը հունիսի 1988թ. որոշումը ՀՍՍՀ Գերագույն Խորհրդի ԼՂԻՄ-ը Ադրբեջանական ՍՍՀ-ի կազմից Հայկական ՍՍՀ-ի կազմի մեջ անցնելու վերաբերյալ:

Կորուստները. ԼՂԻՄ-ի շրջափակում խորհրդային զորքերի և ադրբեջանական հրոսակների կողմից:

VII. ՓՈՒԼ 1989թ. դեկտեմբերի 1 - 1990թ. օգոստոսի 23. Լեռնային Ղարաբաղ - փաստացի՝ ԱՆԿԱԽ, իրավականորեն ԿԻՍԱՆԿԱԽ՝ ՀՍՍՀ-ի հետ միասին,

Ձեռքբերումները. 1988թ. դեկտեմբերի 1-ի որոշումը ՀԽՍՀ Գերագույն Խորհրդի և Լեռնային Ղարաբաղի Ազգային Խորհրդի Հայկական ԽՍՀ-ի և Լեռնային Ղարաբաղի վերամիավորման մասին:

Կորուստները. Փաստաթղթային ռեժիմի ստուգումների պատրվակով սադրիչ գործողություններ, ձերբակալություններ, հալածանքներ արցախահայության նկատմամբ:

VIII. ՓՈՒԼ 1990թ. օգոստոսի 23 - 1991թ. սեպտեմբերի 2. Լեռնային Ղարաբաղ - փաստացի՝ ԱՆԿԱԽ, իրավականորեն՝ ԱՆԿԱԽԱՑՄԱՆ գործընթաց՝ ՀՀ-ի հետ միասին,

Ձեռքբերումները. 1) 1990թ. մայիսին ԼՂ-ի 14 ընտրատածքներում ՀԽՍՀ (ԼՂ-ն և Շահումյանի շրջանը ներառյալ) Գերագույն Խորհրդի ընտրությունների մասնակցությունը: 2) 20-ը օգոստոսի 1990թ. ՀԽՍՀ (ԼՂ-ն և Շահումյանի շրջանը ներառնող) Գերագույն Խորհրդի օրենքը, որով ընդունվեց Հայաստանի Հանրապետության Անկախության Հռչակագիրը և հռչակվեց անկախ պետականության հաստատման գործընթացի սկիզբը:

Կորուստները. Պատերազմական

IX. ՓՈՒԼ 1991թ. սեպտեմբերի 2 - 1991թ. դեկտեմբերի 10. Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն - փաստացի՝ ԱՆԿԱԽ, իրավականորեն՝ ԱՆԿԱԽԱՑՄԱՆ գործընթացի ավարտ:

Ձեռքբերումները. Անկախության գործընթացի ավարտ. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակում, ԼՂՀ Անկախության Հռչակագրի ընդունում, 2-ը սեպտեմբերի 1991թ.:

Կորուստները. Պատերազմական:

X. ՓՈՒԼ 1991թ. դեկտեմբերի 10 - առ այսօր. Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն - փաստացի՝ ԱՆԿԱԽ, իրավականորեն՝ ԱՆԿԱԽ.

Ձեռքբերումները. 1) Ազատագրական պատերազմի հաղթական ընթացք, Շուշիի ազատագրումով սկիզբ առած Արցախի գերակշիռ մասի ազատագրում, պատերազմի հաղթական հրադադար: 2) Համաժողովրդական հանրաքվեով անկախության ամրագրումը՝ որպես ժողովրդական կամքի դրսևորում: 3) Համաձայն համաժողովրդական հանրաքվեի արդյունքների՝ ԼՂՀ Գերագույն Խորհրդի կողմից ԼՂՀ Անկախության Հռչակագրի հաստատում, 6-ը հունվարի 1992թ.:

Կորուստները. Պատերազմի հաղթարշավի կասեցում՝ արևմուտքի և ելցինյան ՌԴ-ի միջնորդությամբ: Հրադադարի կնքում, որով արևմուտքը ոչ միայն իբրև թե վիճելի դարձրեց ԼՂՀ-ի անկախությունը, այլև խնդիրը տեղափոխեց կարգավիճակի որոշման այսպես կոչված փոխզիջումների դաշտ:

Ծանոթագրություն

1. Այն նույնպես, որպես ամբողջի մաս, թերի է: Քանզի ԼՂՀ-ն ՀՀ-ի, Նախիջևանի, Զավախքի ու Սփյուռքի հետ միասին է, որ ամբողջանում է որպես Հայություն, Հայ քաղաքակրթություն և Հայոց պետականություն:

ԼՂԻՄ-Ի ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴԵՊՈՒՏԱՏՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ 20-ՐԴ ԳՈՒՄԱՐՄԱՆ ԱՐՏԱՀԵՐԹ ՍԵՍԻԱՅԻ ՈՐՈՇՈՒՄԸ

Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը Ադրբեջանական ՍՍՀ-ի կազմից Հայկական ՍՍՀ-ի կազմի մեջ անցնելու վեաբերյալ Ադրբեջանական և Հայկական ՍՍՀ-ի Գերագույն սովետների առջև միջնորդելու մասին

20 փետրվար 1988թ.

Ստեփանակերտ

РЕШЕНИЯ

Внеочередной сессий Совета народных депутаатов НКАО XX созыва ,,О ходатайстве перед верховными советами Азербайджанской ССР и Армянской ССР о передаче НКАО из состава Азербайджанской ССР в состав Армяанской ССР,,

от 20 февраля 1988г.

Заслушав и обсудив выступления депутатов областного совета народных депутатов НКАО о ходатайстве перед Верховными Советами Азербайджанской ССР и Армянской ССР о передаче НКАО из состава Азербайджанской ССР в состав Армянской ССР, внеочередная сессия Нагорно-Карабахского областного Совета народных депутатов решила:

Идя навстречу пожеланиям трудящихся НКАО, просит Верховный Совет Азербайджанской ССР и Верховный Совет Армянской ССР проявить чувство глубокого понимания чаяний армянского населения Нагорного Карабаха и решить вопрос о передаче НКАО из состава Азербайджанской ССР в состав Армянской ССР, одновременно ходотайствовать перед Верховным Советом Союза ССР о положительном решении вопроса передачи НКАО из состава Азербайджанской ССР в состав Армянской ССР.

(Газ. “Советский Карабах”, Степанакерт, на русск. яз., 21 февраля 1988г.)

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՈՐՈՇՈՒՄԸ

«Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը Ադրբեջանական ՍՍՀ-ի կազմից Հայկական ՍՍՀ կազմի մեջ անցնելու վերաբերյալ Ադրբեջանական և Հայկական ՍՍՀ Գերագույն սովետների առջև միջնորդելու մասին» Ադրբեջանական ՍՍՀ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի ժողովրդական դեպուտատների մարզային սովետի 1988 թվականի փետրվարի 20-ի արտահերթ նստաշրջանի որոշման մասին

Հայկական ՍՍՀ Գերագույն սովետը նշում է, որ Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ հարցը, ինչպես և ազգամիջյան հարաբերությունների շատ այլ չլուծված պրոբլեմներ գտնվում են ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի ուշադրության կենտրոնում, որի վկայությունն է ՍՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար Մ. Ս. Գորբաչովի՝ սոցիալիստական ինտերնացիոնալիզմի ոգով համակված դիմումը Ադրբեջանի և Հայաստանի աշխատավորներին, ժողովուրդներին: Այդ դիմումը երախտագիտությամբ և հանուն սովետական ժողովուրդների բարեկամության ամրապնդման մեծ պատասխանատվության զգացումով ընդունվեց Սովետական Հայաստանի հասարակության, բոլոր աշխատավորների կողմից:

ՍՄԿԿ Կենտկոմի քաղբյուրոյի որոշմամբ Կենտկոմի քարտուղարությանը հանձնարարված է կազմակերպել Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում կուտակված պրոբլեմների, նրա շուրջը ազգամիջյան հարաբերությունների սրման պատճառների խոր ու համակողմանի ուսումնասիրությունը, համապատասխան առաջարկությունների մշա-

կումը և ըստ դրանց պատրաստության աստիճանի ներկայացնել ՍՄԿԿ Կենտկոմի և ՍՍՀՄ Կառավարության քննարկմանը: Լեռնային Ղարաբաղի պրոբլեմների, մարզի աշխատավորների կարիքների նկատմամբ մեծ ուշադրության վկայություն է, հանդիսանում նաև Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի սոցիալ-տնտեսական զարգացման արագացման միջոցառումների մասին ՍՄԿԿ Կենտկոմի և ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի որոշումը:

Հանրապետության Գերագույն սովետը միահամուռ պաշտպանում է համամիութենական XIX կուսակցական կոնֆերանսին ուղղված ՍՄԿԿ Կենտկոմի թեզիսները, որոնցում նշվում է, որ քաղաքական սիստեմի վերակառուցման շրջանակներում անհրաժեշտ է քննարկել և հասունացած միջոցներ ձեռնարկել սովետական ֆեդերացիայի հետագա զարգացման ուղղությամբ, պահանջվում է մշտական ուշադրություն ազգամիջյան հարաբերությունների հարցերին, յուրաքանչյուր ազգի և ազգության զարգացմանը:

Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետության Գերագույն սովետը որոշում է.

Համակողմանիորեն ուսումնասիրելով Ադրբեջանական ՍՍՀ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի ժողովրդական դեպուտատների սովետի 1988 թվականի փետրվարի 20-ի արտահերթ նստաշրջանի որոշումը և հաշվի առնելով Լեռնային Ղարաբաղում և նրա շուրջը ստեղծված լարված իրավիճակը, ինչպես նաև ԼՂԻՄ-ի և Հայկական ՍՍՀ հայ բնակչության կամքի արտահայտությունը, ղեկավարվելով ազգերի ազատ ինքնորոշման իրավունքի մասին ՍՍՀՄ Սահմանադրության 70-րդ հոդվածով, համաձայնություն տալ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը Հայկական ՍՍՀ կազմի մեջ մտնելուն:

Խնդրել ՍՍՀՄ Գերագույն սովետին քննարկել և դրականորեն լուծել Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը Ադրբեջանական ՍՍՀ-ի կազմից Հայկական ՍՍՀ կազմի մեջ անցնելու հարցը:

Հայկական ՍՍՀ Գերագույն սովետը, դիմելով ՍՍՀ Գերագույն սովետին, հույս է հայտնում, որ այդպիսի որոշումը չի խախտի երկու հանրապետությունների միջև եղած ավանդական բարիդրացիական հարաբերությունները և այն ընդունվելու կընկալվի Ադրբեջանական ժողովրդի կողմից:

Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի
նախագահության նախագահ՝ Հ. ՈՍԿԱՆՅԱՆ
Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի
նախագահության քարտուղար՝ Ն. ՍՏԵՓԱՆՅԱՆ

15 հունիսի 1988 թ., Երևան

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

Օսմանյան Թուրքիայում հայերի 1915 թվականի ցեղասպանության դատապարտման մասին

Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետության Գերագույն սովետը որոշում է.

1. Դատապարտելով 1915 թվականին Օսմանյան Թուրքիայում հայերի ցեղասպանությունը, որպես մարդկության դեմ ուղղված ծանրագույն հանցագործություն, ապրիլի 24-ը հայտարարել հայերի ցեղասպանության զոհերի հիշատակի օր:

2. ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահություն առաջարկություն ներկայացնել հայերի 1915 թվականի ցեղասպանությունը ճանաչելու և դատապարտելու մասին:

3. Հանձնարարել Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդին Հայաստանի արհմիությունների խորհրդի հետ համատեղ քննության առնել ու լուծել ապրիլի 24-ը ոչ աշխատանքային օր հայտարարելու հարցը, հանգստյան օրերից մեկը տեղափոխելով այդ օրը:

Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի
նախագահության նախագահ՝ Հ. ՈՍԿԱՆՅԱՆ
Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի
նախագահության քարտուղար՝ Ն. ՍՏԵՓԱՆՅԱՆ

22 նոյեմբերի 1988 թ., Երևան

Ծանոթագրություն

1. Սույն օրենքի 2-րդ կետի տրամաբանությունը պայմանավորված է ՀԽՍՀ-ն դեռևս ԽՍՀՄ կազմի մեջ լինելով, երբ միջազգային հանրությանն առնչվող ՀԽՍՀ հարցերը, Հայաստանի կամ ԽՍՀՄ-ի անունից ՄԱԿ-ին իրավունք ուներ ներկայացնել միայն ԽՍՀՄ կենտրոնական իշխանությունը:

2. ՀՀ Անկախության հռչակումից, առավել ևս 1992թ. մարտի 2-ից Միավորված Ազգերի Կազմակերպության լիիրավ անդամ դառնալուց հետո, բոլոր մյուս օրենքների հետ միասին, սույն օրենքը նույնպես հարկ էր, անհրաժեշտ փոփոխություններ կատարելու միջոցով, համապատասխանեցնել ՀՀ միջազգային նոր կարգավիճակին:

3. Տեղեկացնենք, որ թերացումը շտկելու միտումով, Հայաստանի Հանրապետական Կուսակցության առաջարկով, պատգամավոր Աշոտ Նավասարդյանի կողմից ներկայացվել և 1993թ. ՀՀ Գերագույն Խորհրդի օրակարգ է մտել «Օսմանյան Թուրքիայում հայերի 1915 թվականի ցեղասպանության դատապարտման մասին 22 նոյեմբերի 1988թ. ՀՀ Օրենքում անհրաժեշտ փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծը: Առ այսօր գտնվելով ՀՀ ԱԺ օրակարգում՝ այն չի քննարկվել:

4. Սույնը հնարավոր չէ «թերացում» դիտել, քանզի այն դեմ է ժողովրդի կամքին՝ Հայաստանի Անկախության Հռչակագրին. ՀՀ Ազգային Ժողովը շուրջ 16 տարի է, ինչ 6-րդ կետի համաձայն՝ «**Հայաստանի Հանրապետությունը, որպես միջազգային իրավունքի սուբյեկտ, վարում է անկախ արտաքին քաղաքականություն**», պարտավոր էր «**ԱՐՏԱՀԱՅՏԵԼՈՎ Հայաստանի ժողովրդի միասնական կամքը**», «**ԳԻՏԱԿՑԵԼՈՎ իր պատասխանատվությունը հայ ժողովրդի... պատմական արդարության վերականգնման գործում**», ելնելով նրանից, որ «**Սույն Հռչակագիրը հիմք է ծառայում... պետական մարմինների գործունեության, ...համար**» Հայաստանի Հանրապետության անունից **սատարելու էր 1915 թվականին Օսմանյան Թուրքիայում և Արևմտյան Հայաստանում Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացին:**

Հ.Գ. - **Ցեղասպանությունը** որպես մարդկության դեմ կատարված հանցագործություն **ճանաչելու, դատապարտելու և պատասխանատվության մասին**.

Օտար երկրների և միջազգային կառույցների կողմից 1915 - 1923թթ. ցեղասպանության.

ա) ՃԱՆԱՉՈՒՄԸ նշանակում է, որ այդ երկրները և կառույցները պաշտոնապես հարգում են ցեղասպանությանը զոհ դարձած միլիոնավոր հայերի հիշատակը,

բ) ԴԱՏԱՊԱՐՏՈՒՄԸ նշանակում է, որ այդ երկրները և կառույցները օժանդակում են մարդկության դեմ նոր հանցագործությունների կանխարգելմանը:

գ) ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԱՆԱՉՈՒՄ նշանակում է, որ, ըստ որևէ երկրի ներկայացրած առաջարկի, ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեան, համաձայն ՄԱԿ-ի Միջազգային դատարանի որոշման, ճանաչում և դատապարտում է «**1915 թվականին Օսմանյան Թուրքիայում և Արևմտյան Հայաստանում իրականացված Հայոց ցեղասպանությունը**»:

Հիշեցնենք. 1965-ի հոկտեմբերին, երբ Հայաստանը դեռ ՄԱԿ-ի անդամ չէր, ՄԱԿ-ում հնչեց Կիպրոսի արտգործնախարար Կիպրիանուի ելույթը, որը կոչ արեց քննարկել Հայկական հարցը: 1967-ի ապրիլին Մոնտեվիդեոյում (Ուրուգվայ) կայացած Լատինական Ամերիկայի երկրների միջխորհրդարանային համագումարն ընդունեց որոշում՝ աջակցել Հայկական հարցի քննարկմանը ՄԱԿ-ում: 1970-ին Ուրուգվայի խորհրդարանը հանձնարարեց երկրի կառավարությանը և արտգործնախարարին Հայկական հարցը ներկայացնել ՄԱԿ-ի քննարկմանը: Բոլոր փորձերը կասեցրել է ԽՍՀՄ-ը, ելնելով 1921թ. մարտի 16-ի Ռուս-թուրքական պայմանագրով ստանձնած պարտավորությունից:

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ

Հայկական ԽՍՀ-ի և Լեռնային Ղարաբաղի վերամիավորման մասին

Հիմնվելով ազգերի ինքնորոշման համամարդկային սկզբունքների վրա և արձագանքելով հայ Ժողովրդի բռնի ուժով բաժանված երկու հատվածների վերամիավորման օրինական ձգտմանը, Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդը և Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհուրդը որոշում են.

Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդը ճանաչում է Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի ինքնորոշման փաստը՝ հաստատված ԼՂԻՄ-ի մարզային խորհրդի 1988թ. փետրվարի 20-ի և հուլիսի 12-ի նստաշրջանների, ինչպես նաև մարզի բնակչության լիազոր ներկայացուցիչների 1989 թվականի օգոստոսի 16-ի համագումարի և Ազգային խորհրդի հոկտեմբերի 19-ի նիստի որոշումներում,

Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդը ճանաչում է Լեռնային Ղարաբաղի լիազոր-ներկայացուցիչների համագումարը և նրա ընտրած Ազգային խորհուրդը՝ որպես մարզի ներկայումս գործող միակ օրինական իշխանություն,

Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդը և Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհուրդը հռչակում են Հայկական ԽՍՀ-ի և Լեռնային Ղարաբաղի վերամիավորումը: Լեռնային Ղարաբաղի բնակչության վրա տարածվում են Հայկական ԽՍՀ-ի քաղաքացիության իրավունքները,

Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդը և Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհուրդը ստեղծում են համատեղ հանձնաժողով (իր աշխատանքային ապարատով) Հայկական ԽՍՀ-ի և Լեռնային Ղարաբաղի վերամիավորումն իրագործելու ուղղությամբ գործնական քայլեր մշակելու համար,

Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդը և Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհուրդը պարտավորվում են ներկայացնել Հյուսիսային Արցախի Շահումյանի շրջանի և Գետաշենի ենթաշրջանի հայ բնակչության ազգային շահերը,

Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահությանը, Հայկական ԽՍՀ Մինիստրների խորհրդին և ԼՂԻՄ-ի Ազգային խորհրդի նախագահությանը հանձնարարվում է գործադրել սույն որոշումից բխող բոլոր անհրաժեշտ միջոցառումներն իրականացնելու համար Հայկական ԽՍՀ-ի և Լեռնային Ղարաբաղի քաղաքական, տնտեսական և մշակութային կառուցվածքների իրական միաձուլումը միասնական պետական-քաղաքական համակարգում:

Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի
նախագահության նախագահ՝ Հ. ՈՍԿԱՆՅԱՆ
Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի
նախագահության քարտուղար՝ Ն. ՍՏԵՓԱՆՅԱՆ
Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհրդի
նախագահ՝ Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

1 դեկտեմբերի 1989թ., Երևան, N1650XI

1989թ. դեկտեմբերի 1-ի որոշման համաձայն՝ Արցախը՝ Լեռնային Ղարաբաղն ու Շահումյանի շրջանը ներառած Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի 1990թ. մայիսի ընտրություններում՝ ՀԽՍՀ-ի, ԼՂԻՄ-ի և Շահումյանի շրջանի ընտրատարածքներում ընտրված ժողովրդական պատգամավորների ՑՈՒՑԱԿԸ,

Ովքեր ՀԽՍՀ Գերագույն խորհրդի անդրանիկ նիստում՝ 1990թ. օգոստոսի 23-ին, **ԿՈՂՄ քվեարկեցին Անկախության գործընթացն սկսելուն և ՀՀ Մայր Օրենքին՝ Հայաստանի Անկախության Հռչակագրին**, նաև ՀՀ-ում Անկախության գործընթացն ավարտող 1991թ. սեպտեմբերի 21-ի համաժողովրդական հանրաքվեում **ԱՅՈ՛ ասացին Հայաստանի Հանրապետության անկախությանն ու Հայաստանի Հանրապետության Անկախության Հռչակագրին:**

1 - Ռուբինյան Կարապետ
2 - Հարությունյան Յուրիկ
3 - Բայանդուր Անահիտ
4 - Ղարագյոզյան Հարություն
5 - Արշակյան Ազատ
6 - Սարգսյան Աշոտ
7 - Տեր-Պետրոսյան Լևոն
8 - Այվազյան Վիտյա
9 - Սարգսյան Տիգրան
10 - Մանուկյան Վազգեն
11 - Թորոսյան Ռուբեն
12 - Միրզոյան Վալերի
13 - Սիրադեղյան Վանիկ
14 - Պողոսյան Վալերի
14 - Մարգարյան Էդիկ
15 - Սահակյան Արա
16 - Բագոյան Ռաֆայել
16 - Բեգլարյան Գագիկ
17 - Քացախյան Պետրոս
18 - Պետրոսյան Վարդան
19 - Շամշյան Եղիա
20 - Սանասարյան Հակոբ
21 - Ղազարյան Սամսոն
22 - Պապյան Ռաֆայել
23 - Չախոյան Հայկ
24 - Գևորգյան Սամվել
24 - Եղիազարյան Մանվել
25 - Վարդանյան Յուրի
26 - Ասատրյան Բագրատ
27 - Գրիգորյան Ավետիք
28 - Բաղդասարյան Ալբերտ
29 - Մովսիսյան Յուրի
30 - Շահնազարյան Դավիթ
31 -
32 - Պետրոսյան Շահեն
33 - Աբգարյան Երջանիկ
34 - Արարքցյան Բաբկեն
35 - Արամյան Միքայել
36 - Շահմուրադյան Սամվել
36 - Հարությունյան Խոսրով
37 - Ջաղինյան Էդուարդ
38 - Հովսեփյան Համլետ
39 - Գրիգորյան Ստեփան
40 -
41 - Բաղդասարյան Սեյրան
42 - Վարդանյան Դավիթ
43 - Ջոլյան Սուրեն
44 - Եգորյան Էդուարդ
45 - Զաքարյան Արտավազդ
46 - Իշխանյան Ռաֆայել
47 - Արշակյան Աղասի
48 - Ղահրամանյան Մարտունիկ
49 - Պետրոսյան Վլադիմիր
50 - Հովսեփյան Աղվան
51 - Ջուռնաչյան Վարդան
52 - Այվազյան Սմբատ
53 - Մորիկյան Այդին
54 - Նավասարդյան Աշոտ
55 - Գրիգորյան Հրաչյա
56 - Բլեյան Աշոտ
57 - Ավագյան Սեյրան
58 - Ազիզյան Գևորգ
59 - Հակոբյան Ալեքսան
60 - Գաբրիելյան Մեխակ
61 - Ավագյան Գրիգոր
62 - Սադոյան Արշակ
63 - Հակոբյան Հակոբ
64 - Սարգսյան Յուրի
65 - Աբգարյան Ռաֆիկ
66 - Հակոբյան Ռոբերտ
67 - Ոսկանյան Աշոտ
68 - Աղաջանյան Վլադիմիր
69 -
70 - Բաղալյան Ստեփան
71 - Բալայան Կիմ
72 - Բեզիրջյան Խաչատուր
73 - Թովմասյան Գոռ
74 - Շահինյան Սամվել
75 - Քոչարյան Շավարշ
76 - Հարոյան Վաչագան
77 - Բաղդասարյան Սեմյոն
78 - Մուրադյան Սարգիս
79 - Յուզբաշյան Կարեն
80 - Բաղդասարյան Գևորգ
81 - Մուրադյան Իգոր
82 - Հակոբյան Սմբատ
83 - Մայիլյան Արամ
84 - Իգիթյան Հովհաննես
85 -
86 - Պոլոնսկի Լեոնիդ
87 - Գրիգորյան Վարդևան
88 - Հովհաննիսյան Գագիկ
89 - Հովհաննիսյան Ռուդիկ
90 - Տոնոյան Սամվել
91 - Ավոյան Վարազդատ
92 - Պետրոսյան Սպարտակ
93 - Փափանյան Գրիգոր
94 - Գալստյան Լյովա
95 - Սարգսյան Տաճատ

96 - Համբարձումյան Կառլեն
97 - Ադամյան Լևոն
98 - Հակոբյան Լեոնիդ
99 - Քոչարյան Ռոբերտ
100 - Գրիգորյան Սամվել
101 - Մատինյան Հովհաննես
102 - Թումանյան Արտաշես
103 - Մանուկյան Արամ
104 - Ղարագյոզյան Վանդոս
105 - Յարալյան Էդիկ
106 - Սերոբյան Մարատ
107 - Շահվերդյան Գրիգորի
108 - Իվանով Նիկոլայ
109 - Հակոբյան Գուրգեն
110 - Մնացականյան Ռոբերտ
111 - Ալեքսանյան Մարատ
112 - Մանուչարյան Ալեքսանդր
113 - Աղաջանյան Ռոլես
114 - Գասպարյան Վլադիմիր
115 - Ղազինյան Ռաֆիկ
116 - Բալայան Նարինե
117 - Ղազարյան Արտուշ
118 - Աբրահամյան Տարիել
119 - Պետրոսյան Ռազմիկ
120 - Մխիթարյան Ռաֆիկ
121 - Գդլյան Թելման
122 - Պետրոսյան Վարդգես
122 - Գասպարյան Սամվել
123 - Ղազարյան Ռաֆայել
124 - Ամիրյան Սլավիկ
125 - Թունյան Մայիս
126 - Աղվանյան Երվանդ
127 - Մանուկյան Գևորգ
128 - Եղիազարյան Հրաչիկ
129 - Սիմոնյան Հրաչիկ
130 - Անանյան Ջեմմա
131 - Հակոբյան Ռուբիկ
132 - Զախարյան Ռազմիկ
133 - Ալավերդյան Յուրիկ
134 - Մելքոնյան Ռաֆայել
135 - Ստեփանյան Լևոն
136 - Սուքիասյան Գառնիկ
137 - Խաչատրյան Գարեգին
138 - Մարտիրոսյան Արմեն
139 - Գևորգյան Անահիտ
140 - Սարուխանյան Ռադիկ
141 - Հայրապետյան Սլավիկ
142 - Մկրտչյան Կարեն
143 - Մանուչարով Արկադի
144 -
145 - Ղազարյան Ֆերդինանդ
146 - Մովսիսյան Վլադիմիր
146 - Հերթևցյան Արծվիկ
147 - Բաբաջանյան Արամ
148 - Սարգսյան Արկադի
149 - Ղուկասյան Ռուդիկ
150 - Եղիազարյան Սաշա
151 - Հովհաննիսյան Հովհաննես
152 - աչատրյան Լյուդվիգ
153 - Հարությունյան Գագիկ
153 - Սահակյան Ֆրունզե
154 - Թևոսյան Սամվել
155 - Տոնոյան Մարտին
156 - Ալեքսանյան Շավարշ
157 - Եսայան Մեխակ
158 - Մկրտչյան Միսակ
159 - Մարգարյան Մարզպետունի
160 - Հարությունյան Վոլոդյա
161 - Ավետիսյան Ալեքսան
162 - Շիրխանյան Վահան
163 - Լազարյան Հուսիկ
164 - Գրիգորյան Ռազմիկ
165 - Ալոյան Թամարա
166 - Պողոսյան Մարատ
167 - Աբրահամյան Վոլոդյա
167 - Հակոբյան Աշոտ
168 - Վարդանյան Ռաֆիկ
169 - Տեր-Գուլանյան Մերուժան
170 - Աղազարյան Հովիկ
171 - Սարգսյան Վազգեն
171 - Մարտիրոսյան Ռազմիկ
172 - Մինասյան Գագիկ
173 - Սահակյան Նադիր
174 - Մայիլյան Սամվել
175 - Դավթյան Արսեն
176 - Գրիգորյան Սեյրան
177 - Մանասերյան Նորայր
178 - Ներսիսյան Գագիկ
179 - Թադևոսյան Թադևոս
180 - աչատրյան Հրանտ
181 - Մինասյան Հենրիկ
182 - Ալեքսանյան Ռոբերտ
183 - Խաչատրյան Վիգեն
184 - Պետրոսյան Ռաֆիկ
185 - Մարտիրոսյան Գագիկ
185 - Կարապետյան Արթուր
186 - Աբրահամյան Գագիկ
187 - Թարվերդյան Սամվել
188 - Եղիազարյան Նորիկ
188 - Հովսեփյան Հրաչյա
189 - Մկրտչյան Վաչագան
190 - Կյուրեղյան Տիգրան
191 - Նահատակյան Համլետ
192 - Հայրիկյան Պարույր
193 - Կիրակոսյան Գևորգ
194 - Հովհաննիսյան Ալինա
195 - Սաֆարյան Խաչիկ
196 - Մաթևոսյան Հրանտ
197 - Քոչինյան Հովհաննես
198 - Ամիրխանյան Իսրայել
199 - Իսախանյան Նորայր
200 - Ջավուկցյան Սեյրան
201 - Դումիկյան Խաչիկ
202 - Կարապետյան Հարություն
203 - Հակոբյան Հրանուշ
204 - Հակոբյան Վահագն
205 - Դալլաքյան Համլետ
206 - Սահակյան Արամայիս
207 - Վարդանյան Միքայել
208 - Վարդանյան Կարլեն
209 - Թադևոսյան Ռուբիկ
210 - Ասմարյան Սուրիկ
211 - Մխիթարյան Մեխակ
212 - Զախոյան Աշոտ
213 - Մանուկյան Անդրանիկ
214 - Մելտոնյան Սանասար
215 - Դավթյան Շչորս
216 - Գոմցյան Արարատ
217 - Իսագուլյան Գառնիկ
218 - Մանուկյան Գնել
219 - Ստամբուլցյան Խաչիկ
220 - Սարդարյան Կտրիճ
220 - Միքայելյան Կարլեն
221 - Սահակյան Մելս
222 - Թաքարյան Գեորգի
222 - Գևորգյան Գևորգ
223 - Մելքոնյան Մարտին
224 - Սահակյան Հենրիկ
225 - Սահակյան Ալբերտ
226 - Գալստյան Լազար
227 - Պողոսյան Վազգեն
228 - Հարությունյան Գրիգոր
229 - Մնացականյան Վրեժ
230 - Մարդոյան Աշոտ
231 - աչատրյան Ցոլակ
232 - Հարությունյան Սուրեն
232 - Մխիթարյան Գարմեն
233 - Մամյան Ժորա
234 - Չիլինգարյան Վասիլ
235 - Փաշիկյան Վարդան
236 - Մկրտումյան Սերյոժա
237 - Միրզոյան Նորայր
238 - Ուզունյան Վոլոդյա
239 - Առաքելյան Հենզել
240 - Դիլանյան Թելման
241 - Ասատրյան Պավլիկ
242 - Ռիբալկո Վիկտոր
242 - Բադալյան Վոլոդյա
243 - Ճշմարիտյան Յուրի
243 - Պառավյան Հովիկ
244 - Սիմոնյան Դերենիկ
245 - Հակոբյան Էդիկ
246 - Ենգոյան Ռազմիկ
247 - Ստեփանյան Կարինե
248 - Գրիգորյան Միքայել
248 - Մուրադյան Հենրիկ
249 - Սարգսյան Սերժիկ
250 - Պետրոսյան Գեորգի
251 - Գրիգորյան Համլետ
252 - Ղուկասյան Էդիկ
253 - Շիրինյան Վիգեն
254 - Իշխանյան Ջավեն
255 - Աթանեսյան Վահրամ
256 - Առուշանյան Սլավիկ
257 - Բախշյան Մանֆրեդ
258 - Դանիելյան Ռազմիկ
259 - Բաղյան Գրիշա
260 -

Հ. Գ. - Ցուցակը տրվում է նրա համար, որ ՀՀ յուրաքանչյուր քաղաքացի հնարավորություն ունենա համեմատել և գնահատել, թե պատգամավորներից ո՞վ, ինչպե՞ս դրսևորեց իրեն հետագայում՝ օրենսդիր, գործադիր, դատական, տնտեսական և քաղաքագիտական գործունեությունում, և որքանո՞վ է դա համապատասխանում կամ հակասում ՀՀ Մայր Օրենքին՝ Հայաստանի Անկախության Հռչակագրին, որը ՀՀ Սահմանադրության, ՀՀ ամբողջ օրենսդրական դաշտի, նաև միջազգային պայմանագրերի նկատմամբ գերակա իրողություն է, ոչ միայն առաջնորդող և ուղղորդող, այլև պարտադրող:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀՌՉԱԿԱԳԻՐ

Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդը՝[1]

ԱՐՏԱՀԱՅՏԵԼՈՎ Հայաստանի ժողովրդի միասնական կամքը,

ԳԻՏԱԿՑԵԼՈՎ իր պատասխանատվությունը հայ ժողովրդի ճակատագրի առջեւ համայն հայության իղձերի իրականացման եւ **պատմական արդարության վերականգնման** գործում,

ԵԼՆԵԼՈՎ մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի սկզբունքներից եւ միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմերից,

ԿԵՆՍԱԳՈՐԾԵԼՈՎ ազգերի ազատ ինքնորոշման իրավունքը,

ՀԻՄՆՎԵԼՈՎ 1989 թվականի դեկտեմբերի 1-ի «Հայկական ԽՍՀ-ի եւ Լեռնային Ղարաբաղի վերամիավորման մասին» Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի եւ Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհրդի համատեղ որոշման[2] վրա,

ՀԱՐԳԱՑՆԵԼՈՎ 1918 թվականի մայիսի 28-ին ստեղծված անկախ Հայաստանի Հանրապետության ժողովրդավարական ավանդույթները,

ԽՆԴԻՐ ԴՆԵԼՈՎ ժողովրդավարական, իրավական հասարակարգի ստեղծումը,

ՀՌՉԱԿՈՒՄ Է

անկախ պետականության հաստատման գործընթացի սկիզբը:[3]

1. Հայկական ԽՍՀ-ն վերանվանվում է Հայաստանի Հանրապետություն, կրճատ՝ Հայաստան: Հայաստանի Հանրապետությունն ունի իր դրոշը, զինանշանը եւ հիմնը:

2. Հայաստանի Հանրապետությունը ինքնիշխան պետություն է՝ օժտված պետական իշխանության գերակայությամբ, անկախությամբ, լիիրավությամբ:

Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում գործում են միայն Հայաստանի Հանրապետության սահմանադրությունը եւ օրենքները:

3. Հայոց պետականության կրողը Հայաստանի Հանրապետության ժողովուրդն է, որն իր իշխանությունը իրագոր-

ծում է անմիջականորեն եւ ներկայացուցչական մարմինների միջոցով՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրության եւ օրենքների հիման վրա:

Հանրապետության ժողովրդի անունից հանդես գալու իրավունքը պատկանում է բացառապես Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդին:

4. Հայաստանի Հանրապետության տարածքում բնակվող բոլոր քաղաքացիների համար սահմանվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն:

Արտերկրի հայությունը Հայաստանի Հանրապետության քաղաքացիության իրավունք ունի:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիները գտնվում են նրա պաշտպանության եւ աջակցության ներքո:

Հայաստանի Հանրապետությունն ապահովում է իր քաղաքացիների ազատ ու իրավահավասար զարգացումը՝ անկախ ազգությունից, ռասայական պատկանելությունից եւ դավանանքից:

5. Հայաստանի Հանրապետությունը իր անվտանգությունը եւ սահմանների անձեռնմխելիությունը ապահովելու նպատակով ստեղծում է Գերագույն խորհրդին ենթակա սեփական զինված ուժեր, ներքին զորքեր, պետական եւ հասարակական անվտանգության մարմիններ:

Հայաստանի Հանրապետությունը ունի ԽՍՀՄ սպառազինության իր մասնաբաժնի իրավունքը: [4]

Հայաստանի Հանրապետությունն ինքն է որոշում իր քաղաքացիների զինվորական ծառայության կարգը:

Այլ երկրների զորամիավորումները, նրանց ռազմական բազաները եւ շինությունները կարող են տեղաբաշխվել Հայաստանի Հանրապետության տարածքում միայն նրա Գերագույն խորհրդի որոշմամբ:

Հայաստանի Հանրապետության զինված ուժերը կարող են օգտագործվել միայն նրա Գերագույն խորհրդի որոշմամբ:

6. Հայաստանի Հանրապետությունը, որպես միջազգային իրավունքի սուբյեկտ, վարում է անկախ արտաքին քաղաքականություն, անմիջական հարաբերություններ է հաստատում այլ պետությունների, **ԽՍՀՄ ազգային-պետական կազմավորումների** հետ, մասնակցում է միջազգային կազմակերպությունների գործունեությանը:

7. Հայաստանի Հանրապետության ազգային հարստությունը՝ հողը, ընդերքը, օդային տարածությունը, ջրային եւ այլ բնական պաշարները, տնտեսական, մտավոր, մշակութային կարողությունները, նրա ժողովրդի սեփականությունն է: Դրանց տիրապետման, օգտագործման եւ տնօրինման կարգը որոշվում է Հայաստանի Հանրապետության օրենքներով:

Հայաստանի Հանրապետությունը ունի ԽՍՀՄ ազգային հարստության, այդ թվում՝ ոսկու պաշարների, ալմաստի եւ վալյուտային ֆոնդերի մասնաբաժնի իրավունք:

8. Հայաստանի Հանրապետությունը սեփականության բազմաձեւության հիման վրա որոշում է իր տնտեսավարման սկզբունքները եւ կարգը, հիմնում սեփական դրամ, ազգային բանկ, ֆինանսա-վարկային համակարգ, հարկային եւ մաքսային ծառայություններ:

9. Հայաստանի Հանրապետությունը իր տարածքում ապահովում է՝

խոսքի, մամուլի, խղճի ազատություն.

օրենսդիր, գործադիր եւ դատական իշխանությունների տարանջատում.

բազմակուսակցություն, կուսակցությունների իրավահավասարություն,

իրավապահ մարմինների եւ զինված ուժերի ապաքաղաքականացում:

10. Հայաստանի Հանրապետությունը ապահովում է հայերենի, որպես պետական լեզվի, գործառությունը Հանրապետության կյանքի բոլոր ոլորտներում, ստեղծում կրթության, գիտության եւ մշակույթի սեփական համակարգ:

11. Հայաստանի Հանրապետությունը սատար է կանգնում 1915 թվականին Օսմանյան Թուրքիայում եւ Արեւմտյան Հայաստանում Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործին:

12. Սույն Հռչակագիրը հիմք[5] է ծառայում Հայաստանի Հանրապետության սահմանադրության մշակման, իսկ գործող սահմանադրության մեջ փոփոխությունների եւ լրացումների կատարման, պետական մարմինների գործունեության, Հանրապետության նոր օրենսդրության մշակման համար:

Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի նախագահ՝ Լ. ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ
Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի քարտուղար՝ Ա. ՍԱՀԱԿՅԱՆ

23 օգոստոսի 1990թ., Երեւան

Ծանոթագրություն

1. Հայկական ԽՍՀ-ն և նրա Գերագույն խորհուրդը՝ համաձայն 1989 թվականի դեկտեմբերի 1-ի «Հայկական ԽՍՀ-ի եւ Լեռնային Ղարաբաղի վերամիավորման մասին» Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի եւ Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհրդի համատեղ որոշման, ներկայացնում էր արդեն նախկին ՀԽՍՀ-ը, ԼՂԻՄ-ը և Շահումային շրջանը միասին վերցված: ՀԽՍՀ-ի, ԼՂԻՄ-ի և Շահումյանի շրջանի տարածքային ընտրական տեղամասերում էլ 1990թ. մայիսին անցկացված ընտրություններով կազմավորվեց սույն Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդը, որն իր գործունեության անդրանիկ նիստում (դեռևս ԽՍՀՄ-ի գոյության պայմաններում) հռչակեց Անկախության գործընթացի սկիզբն ու Հայաստանի Անկախության սույն Հռչակագիրը:

2. Սույն դրույթի համաձայն՝ «Հայկական ԽՍՀ-ի եւ Լեռնային Ղարաբաղի վերամիավորման մասին» Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի եւ Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհրդի համատեղ Որոշումը գործող օրենք մնաց 1-ին կետով ՀԽՍՀ-ից Հայաստանի Հանրապետություն վերանվանված և Անկախության գործընթաց մտած ՀՀ-ի համար:

3. ՀՀ անկախության հաստատման գործընթացը ավարտվեց 1991թ. սեպտեմբերի 21-ին, երբ Հայաստանի Անկախության Հռչակագիրը համաժողովրդական հանրաքվեով ամրագրվեց՝ որպես համաժողովրդական ազատ կամքի դրսևորման վերսահմանադրական միակ գերակայություն՝ Մայր Օրենք:

4. Հայաստանի Անկախության ՀՌՉԱԿՄԱՆ համաժողովրդական հանրաքվեից հետո, սույն ՀՌՉԱԿԱԳՐԻ, անկախ պետականության գործընթացով (դեռևս ԽՍՀՄ-ի առկայությունով) պայմանավորված (մեր կողմից մուգ փոքրատառ գրված) դրույթները 1991թ. սեպտեմբերի 21-ից հանդիսանում են ուժը կորցրած:

5. Մտահոգիչ է այն, որ ՀՀ Ազգային Ժողովի ինտերնետ կայքում՝ որտեղ պահպանվում են 1990-ից առ այսօր ընդունված օրենքները, այդպես էլ չդրվեց ՀՀ Առաջին՝ Մայր Օրենքը: Ավելի քան մտահոգիչ է նաև այն, որ ժողովրդի կողմից՝ սույն Հռչակագրին հակասող ՀՀ նոր Սահմանադրության նախագիծը հանրաքվեով մերժելուց հետո՝ 2003-ի հունիսից ՀՀ Նախագահի ինտերներտ կայքէջում, երեք՝ հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզվով դրված Հայաստանի Անկախության Հռչակագրի տեքստերը հանվեցին:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՌՉԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ

ՀՌՉԱԿԱԳԻՐ

Բոլոր մակարդակների խորհուրդների պատգամավորների մասնակցությամբ ժողովրդական պատգամավորների

Լեռնային Ղարաբաղի Մարզային և Շահումյանի Շրջանային խորհուրդների համատեղ նստաշրջանի

ՈՐՈՇՈՒՄԸ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակման և նրա պետական իշխանության ու կառավարման ժամանակավոր մարմինների ձևավորման վերաբերյալ հռչակագիր ընդունելու մասին:

Բոլոր մակարդակների խորհուրդների պատգամավորների մասնակցությամբ ժողովրդական պատգամավորների Լեռնային Ղարաբաղի Մարզային և Շահումյանի Շրջանային խորհուրդների համատեղ նստաշրջանը, արտահայտելով ժողովրդի կամքը, որը ամրագրված է փաստորեն անցկացված հանրաքվեում և ԼՂԻՄ ու Շահումյանի շրջանային իշխանության մարմինների 1988-1991թթ. որոշումներում,

ազատության, անկախության, իրավահավասարության և բարիդրացիության նրա ձգտումը, ղեկավարվելով քաղաքական, սոցիալ-տնտեսական և մշակութային ոլորտների զարգացման խնդրում ամբողջ բնակչության շահերով, բնական և օրինական, միջազգային իրավունքի նորմերին համապատասխան համարելով հայ ժողովրդի միասնության ձգտումը, որոշում է՝

1. Ընդունել ներկայիս Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի և սահմանակից Շահումյանի շրջանի սահմաններում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության (ԼՂՀ) հռչակման մասին հռչակագիրը:

2. ԼՂԻՄ ժողովրդական պատգամավորների Մարզային խորհուրդը և նրա Գործադիր կոմիտեն համարել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական իշխանության և կառավարման բարձրագույն ժամանակավոր մարմին՝ մինչև համաժողովրդական ընտրություններ, իշխանության և կառավարման հանրապետական նոր մարմինների ձևավորումը:

3. Հանձնարարել ժողովրդական պատգամավորների մարզային խորհրդի գործկոմին՝ ներգրավելով լայն հասարակությանը, նախապատրաստել և մարզային խորհրդի նստաշրջանի քննարկման ներկայացնել ԼՂՀ պետական իշխանության և կառավարման մարմինների կառուցվածքի և գործառությունների մասին ժամանակավոր կանոնակարգը:

4. Մինչև ԼՂՀ սահմանադրության և օրենքների ընդունումը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում գործում են ԽՍՀՄ սահմանադրությունը և օրենսդրությունը, ինչպես նաև այժմ գործող այլ օրենքներ, որոնք չեն հակասում սույն հռչակագրի նպատակներին ու սկզբունքներին, հանրապետության առանձնահատկություններին:

2 սեպտեմբերի 1991թ., Ստեփանակերտ

ԱԿՏ՝
ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՔՎԵԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1991թ. դեկտեմբերի 10-ից ԼՂՀ-ում էին գտնվում մի խումբ անկախ դիտորդներ՝ ԼՂՀ կարգավիճակի հարցով հանրաքվեի ընթացքին հետևելու նպատակով:

Դիտորդական խմբերն աշխատել են Ստեփանակերտ քաղաքում, Ասկերանի, Հադրութի, Մարտակերտի, Մարտունու և Շահումյանի շրջաններում: Դիտորդներն այցելել են ավելի քան 30 ընտրական տեղամասեր, ներկա գտնվել ձայների հաշվառմանը:

Անկախ դիտորդները հավաստագրում են.

Հանրաքվեի նախապատրաստումը, անցկացումը և արդյունքների ամփոփումն իրականացվել են «ԼՂՀ հանրաքվեի անցկացման մասին ժամանակավոր կանոնակարգին» համապատասխան: ԼՂՀ տարածքում կազմվել է 81 ընտրատարածք: Ընտրատարածքների ցուցակը և տարածքային ընտրական հանձնաժողովների հասցեները հրապարակվել են «Խորհրդային Ղարաբաղ» թերթում: Ընտրողների ցուցակներում ընգրկված էին ձայնի իրավունք ունեցող 132.328 մարդ:

Հանրաքվեի հարցը ձևակերպվել է այսպես.

«Համաձա՞յն եք դուք, որպեսզի հռչակված Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը լինի անկախ պետություն՝ ինքնուրույն որոշելով համագործակցության ձևը ուրիշ պետությունների և ընկերակցությունների հետ»:

Երեք՝ հայերեն, ադրբեջաներեն և ռուսերեն լեզուներով քվեաթերթիկները պարունակում են նշված հարցը և «Այո», «Ոչ» բառերը (անցանկալին ջնջել): Նշված լեզուներից մեկով գրված քվեաթերթիկը (ըստ ընտրողի ցանկության) տրվել է անձնագրի ներկայացմամբ և ստորագրությամբ:

Դիտորդների կողմից չեն հայտնաբերվել քվեարկության արարողակարգի, քվեաթերթիկների տրման, դրանց ձևակերպման, ձայների հաշվման խախտումներ:

Դիտորդներն անհրաժեշտ են համարում նշել, որ հանրաքվեն անցկացվել է ԼՂՀ դեմ զինված ագրեսիայի պայմաններում, ինչն արտահայտվում է Ստեփանակերտ քաղաքի և մյուս բնակավայրերի անդադար հրետակոծություններին մեջ, տարբեր զինատեսակների կիրառմամբ, ներառյալ հրթիռներն ու հրետանին: Քվեարկության օրը հրետակոծումներից զոհվել են 10, վիրավորվել՝ 11 հայեր: Ստեփանակերտ քաղաքի կանանց և երեխաների մեծամասնությունը գիշերում է նկուղներում, փակ են մսուր-մանկապարտեզները, դպրոցները: Դեկտեմբերի 11-ի լույս 12-ի գիշերը հրետանային արկ է ընկել Ստեփանակերտի դպրոցներից մեկի վրա: Պայթեցված է քաղաքային ջրատարը, չկա հաց, դեղորայք:

Հանրաքվեին մասնակցել են 108.736 մարդ, ինչը կազմում է գրանցված ընտրողների թվի 82,2 տոկոսը: Քվեարկությանը չմասնակցածների գերակշիռ մեծամասնությունն ադրբեջանական բնակավայրերի բնակիչներն են:

Քվեատուփերը բացելով՝ դրանցում հայտնաբերվել են 108.736 քվեաթերթիկներ, 99 քվեաթերթիկներ ճանաչվել են անվավեր:

Քվեարկության արդյունքները.

«Այո» - 108.615 (Քվեարկության մասնակիցների թվի 99.89 տոկոսը),

«Ոչ» - 24 (Քվեարկության մասնակիցների թվի 0.02 տոկոսը)

Վերոհիշյալ «Ժամանակավոր կանոնակարգի» համաձայն՝ հանրաքվեի առաջադրած որոշումը համարվում է ընդունված, եթե քվեարկությանը մասնակցել է քվեացուցակներում նշված անձանց կեսից ավելին, հանրաքվեի արդյունքներով որոշմանը հավանություն են տվել քվեարկության մասնակիցների առնվազն 2/3-ը:

Ելնելով քվեարկության արդյունքներից և նկատի ունենալով Մարդու Իրավունքների Համընդհանուր Հռչակագրի և միջազգային ակտերի դրույթները՝ անկախ դիտորդները հայտարարում են.

ԼՂՀ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ ՉԱՅՆԵՐԻ ՃՆՇՈՂ ՄԵԾԱՄԱՍՆՈՒԹՅԱՄԲ ԱՐՏԱՀԱՅՏՎԵԼ է ԼՂՀ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՕԳՏԻՆ

Աֆանասև Յուրի Նիկոլաևիչ (ԽՍՀՄ և ՌԽՖՍՀ ժողովրդական պատգամավոր), Սմիռնով Վլադիմիր Սերգեևիչ (ԽՍՀՄ ժողովրդական պատգամավոր), Նազարով Բորիս Լազարովիչ (Մարդու իրավունքների տեղեկատվական կենտրոնի նախագահ), Պրոշեչկին Եվգենի Վիկտորովիչ (Ժողովրդական Ռուսաստան), Վոեվոդսկի Կոնստանտին Էմանուելովիչ (ԵԱՀԽ մարդու իրավունքների միջազգային

կոնգրես, Սանկտ-Պետերբուրգի իրավապաշտպան կենտրոն), Պոլյակովա էլլա Միխայլովնա («Մեմորիալ», «Զինվորի մայրերի շարժում», Սանկտ-Պետերբուրգ), Բուրկովա Ինեսա Եմելյանովնա (Ռուս մտավորականության «Ղարաբաղ» կոմիտե («ԿՐԻԿ»), Մոսկվա), Սինյավսկայա Գալինա Պետրովնա («Ընդդեմ բռնության շարժում», Մոսկվա), Լուգինա Ելենա Վլադիմիրովնա (Զինծառայողների ծնողների մոսկովյան կոմիտե), Ալեքսեևսկի Կիրիլ Միխայլովիչ (ԽՍՀՄ Ա ընտրողների ակումբ, Մոսկվա), Կուլիկովա Գալինա Պավլովնա (Ռուս մշակույթի ընկերություն, Երևան), Սամոդուրով Յուրի Վլադիմիրովիչ (Սախարովի միջազգային կոնգրես), Սուպրունենկո Օլգա Իգորևնա (Մոսխորհրդի ժողովրդական պատգամավոր), Շաքլիգին Գենադի Ֆեոդորովիչ (Մոսխորհրդի ժողովրդական պատգամավոր), Տավրիլով Ալեքսեյ Գրիգորևիչ («Մեմորիալ»), Ֆյոդորով Վլադիմիր Վլադիմիրովիչ (Հակաֆաշիստական կենտրոն, Մոսկվա), Կալինկին Նիկոլայ Իվանովիչ («Մեմորիալ»), Դաշկևիչ Վլադիմիր Սերգեևիչ (Ռուս մտավորականության «Ղարաբաղ» կոմիտե («ԿՐԻԿ»), Բաբուշկին Անդրեյ Վլադիմիրովիչ (Մոսխորհրդի ժողովրդական պատգամավոր), Գորբան Վիկտոր Վասիլևիչ (Մոսխորհրդի ժողովրդական պատգամավոր), Դանիլով Վիտալի Ալեքսեևիչ (ԵԱՀԽ մարդու իրավունքների միջազգային կոնգրես), Տիտով Վյաչեսլավ Կոստանտինովիչ (Մոսխորհրդի ժողովրդական պատգամավոր), Կիչմար Նիկոլայ Իվանովիչ (ԵԱՀԽ մարդու իրավունքների միջազգային կոնգրես, Ուկրաինայի ժողովրդական ՌՈՒԽ, Սևաստոպոլ):

ԱՄՆ-ի, Բուլղարիայի և Ռուսաստանի հեռուստատեսությունների, Ֆրանսպրես, Կոտիդիեն դը Պարի (Ֆրանսիա), Մեծ Բրիտանիայի ֆոտոգործակալության, Իսպանիայի տեղեկատվական գործակալության, «Մեգապոլիս էքսպրես»-ի, «Իզվեստիա»-ի, «Մոսկովսկիե նովոստի»-ի, «Լիտերատուրնայա գազետա»-ի, «Ստոլիցա»-ի, «Պանորամա»-ի, Ռադիո «Ռոսիա»-ի, «Էխո Մոսկվի»-ի լրագրողների մասնակցությամբ:

ՀՌՉԱԿԱԳԻՐ
ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՔՎԵԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ելնելով ժողովրդի ինքնորոշման անկապտելի իրավունքից, հիմնվելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ժողովրդի կամքի վրա, որն արտահայտվել է 1991 թվականի դեկտեմբերի 10-ին կայացած հանրապետական հանրաքվեի միջոցով,

գիտակցելով պատմական հայրենիքի ճակատագրի հանդեպ պատասխանատվությունը,

հաստատելով հավատարմությունը 1991 թվականի սեպտեմբերի 2-ի Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն հայտարարելու մասին Հռչակագրի սկզբունքներին,

ձգտելով հայ և ադրբեջանական ժողովուրդների միջև հարաբերությունների կարգավորմանը,

կամենալով պաշտպանել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բնակչությունն ագրեսիայից և ֆիզիկական ոչնչացման վտանգից,

զարգացնելով Լեռնային Ղարաբաղի 1918-1920 թվականների անկախ ժողովրդավարման փորձը,

արտահայտելով բոլոր պետությունների և պետությունների ընկերակցությունների հետ իրավահավասար և փոխշահավետ հարաբերություններ հաստատելու պատրաստակամություն,

հարգելով տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային համաձայնագրի՝ Մարդու Իրավունքների Համընդհանուր Հռչակագրի, անվտանգության և համագործակցության հարցերով Եվրոպական խորհրդակցության մասնակից երկրների Վիեննայի հանդիպման եզրափակիչ փաստաթղթի և միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմերի սկզբունքները և հետևելով դրանց,

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Գերագույն խորհուրդը հաստատում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախ պետականությունը

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունն անկախ պետություն է, ունի իր պետական դրոշը, զինանշանը և օրհներգը: Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ամբողջ տարածքում գործում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Սահմանադրությունը և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքները, ինչպես նաև մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանությունը կարգավորող միջազգային և իրավական ակտերը:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ամբողջ իշխանությունը պատկանում է Լեռնային Ղարաբաղի ժողովրդին, որն իր իշխանությունն ու կամքն իրականացնում է համաժողովրդական հանրաքվեի կամ ներկայացուցչական մարմինների միջոցով:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բոլոր բնակիչները հանդիսանում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիներ: Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում թույլատրվում է երկակի քաղաքացիություն: Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության ներքո՝ անկախ ազգային, ռասայական պատկանելությունից և դավանանքից, Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը երաշխավորում է իր քաղաքացիների իրավունքներն ու ազատությունները:

Իր քաղաքացիների պաշտպանության և ազգաբնակչության անվտանգության համար Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ստեղծվում են իշխանության բարձրագույն մարմիններին ենթակա զինված ուժեր, հասարակական կարգի պահպանության և պետական անվտանգության մարմիններ: Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիները զինվորական ծառայություն են կատարում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում: Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիների կողմից զինվորական ծառայության կատարումն այլ պետությունների տարածքում, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում այլ պետությունների զինված ուժերի գտնվելն իրականացվում է միջազգային պայմանագրերի և համաձայնագրերի հիման վրա:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը, հանդիսանալով միջազգային իրավունքի սուբյեկտ, իրականացնում է անկախ արտաքին քաղաքականություն, հաստատում է չմիջնորդավորված հարաբերություններ այլ պետությունների հետ, մասնակցում է միջազգային կազմակերպությունների գործունեությանը:

Հողը, ընդերքը, օդային տարածքը, բնական, նյութական և հոգևոր հարստությունները Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ժողովրդի սեփականությունն են: Դրանց օգտագործման և տիրապետման կարգը սահմանվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տնտեսությունը հիմնվում է սեփականության բոլոր ձևերի իրավահավասարության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բոլոր քաղաքացիներին տնտեսական կյանքի լիարժեք և ազատ մասնակցելու հավասար հնարավորություններ տրամադրելու սկզբունքի վրա:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը ճանաչում է Մարդու Իրավունքի գերակայությունը, ապահովում է խոսքի, խղճի, քաղաքական և հասարակական գործունեության ու միջազգային ընկերակցության կողմից ճանաչված քաղաքացիական բոլոր այլ իրավունքներն ու ազատությունները

ները: Ազգային փոքրամասնությունները գտնվում են պետության պաշտպանության ներքո: Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական կարգն ապահովում է ազգային փոքրամասնությունների լիարժեք մասնակցությունը հանրապետության քաղաքական, տնտեսական և **հոգևոր** կյանքին: Ազգային հատկանիշով ցանկացած խտրականություն հետապնդվում է օրենքով:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական լեզուն հայերենն է: Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը ճանաչում է մայրենի լեզվի, առանց որևէ սահմանափակման, տնտեսական, մշակութային և կրթական ոլորտներում կիրառելու ազգային փոքրամասնությունների իրավունքը:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սահմանադրության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրության ստեղծման հիմք են հանդիսանում սույն Հռչակագիրը և Մարդու Իրավունքների Համընդհանուր Հռչակագիրը:

6 հունվարի, 1992թ., Ստեփանակերտ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՍՏԵՂԾՎԱԾ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

Հիմնվելով միջազգային իրավունքի հիմնադրույթների, ազգերի ինքնորոշման իրավունքի, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախության մասին 1991 թվականի դեկտեմբերի 10-ի հանրաքվեի արդյունքների վրա,

հայտնելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության և նրա ազգաբնակչության իրավունքները պաշտպանելու վճռականությունը,

հավաստելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հիմնահարցի քաղաքական լուծման ուղուն իր հավատարմությունը,

նշելով, որ կպաշտպանի Արցախի հարցի այն լուծումը, որը կընդունի Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը,

անընդունելի համարելով մի շարք միջազգային փաստաթղթերում Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը որպես Ադրբեջանի մաս ամրագրելու փորձերը,

Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդը որոշում է.

1. Հետևողականորեն սատար կանգնել Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը և նրա բնակչության իրավունքների պաշտպանությանը:

2. Հայաստանի Հանրապետության համար անընդունելի համարել միջազգային կամ ներպետական ցանկացած փաստաթուղթ, որտեղ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը նշված կլինի Ադրբեջանի կազմում:

Ուժի մեջ է մտել՝ 8 հուլիսի 1992թ., Հ.Ն-0663-1

Ծանոթագրություն

1. 1992թ. մարտին, երբ ՄԱԿ-ը, որպես լիիրավ անդամ ընդունեց 1990թ. օգոստոսի 23-ին հռչակած և 1991թ. սեպտեմբերի 21-ի հանրաքվեով՝ համաժողովրդական կամքի դրսևորումով, ԽՍՀՄ-ից անկախացած ՀՀ-ին, պարտավոր էր նույն կերպ ՄԱԿ-ի լիիրավ անդամ ընդունել նաև 1991թ. դեկտեմբերի 10-ի հանրաքվեով անկախություն հռչակած ԼՂՀ-ին, եթե ՀՀ-ն դեմ չէր: Քանի որ համաձայն 1989թ. դեկտեմբերի 1-ի որոշման, ԽՍՀՄ-ից իր անկախացման գործընթացը ԼՂՀ-ն սկսել է 1990թ. օգոստոսի 23-ից՝ ՀՀ-ի հետ միասին, լինելով ՀՀ-ի կազմում: ՀՀ-ն դեմ չեղավ 1991թ. սեպտեմբերի 2-ին ԼՂՀ հռչակմանը, ուստի, և իր անկախացման գործընթացն ավարտեց 1991թ. սեպտեմբերի 21-ին, ԼՂՀ-ն այն ավարտեց 1991թ. դեկտեմբերի 10-ին: Իմաստազուրկ են ՀՀ-ի կողմից ԼՂՀ-ի անկախությունը ճանաչելու մասին (ընտրական քարոզչության կամ այլ նպատակներով) երբեմն հնչեցվող կոչերը: Քանզի, սույն Օրենքով՝ ՀՀ-ն ոչ միայն ճանաչում և սատարում ԼՂՀ անկախությունը, այլև չի ճանաչում ԼՂՀ-ի անկախության մերժումը որևէ երկրի կամ միջազգային կառույցի կողմից:

Документ N-10

МИНОБОРОНЫ РОССИЙСКОЙ ФЕДЕРАЦИИ П. С. ГРАЧЕВУ

МИД РОССИЙСКОЙ ФЕДЕРАЦИИ А. В. КОЗЫРЕВУ

Откликаясь на призыв к прекращению огня, изложенный в Бишкекском протоколе от 5 мая 1994 года, и опираясь на Протоколе от 18 февраля 1994 года, противоборствующие Стороны согласились о следующем:

Обеспечить полное прекращение огня и военных действий с 00 часов 01 минуты 12 мая 1994 года.

Соответствующие приказы о прекращении огня будут отданы и доведены до командиров воинских формирований, ответственных за их выполнение, не позднее 11 мая 1994 года.

12 мая до 23.00 Стороны обменяются текстами своих приказов о прекращении огня с целью их возможного взаимного дополнения и в дальнейшем унификации основных положений аналогичных документов.

2. Просит министра обороны Российской Федерации о созыве в Москве не позднее 12 мая с. г. срочного совещания министров обороны Азербайджана, Армении и командующего армией Нагорного Карабаха с целью согласования рубежей развода войск, других неотложных военно-технических вопросов и подготовки развертывания передовой группы международных наблюдателей.

3. Настоящая договоренность будет использована для заверщения в передстоящие 10 дней переговоров и заключения не позднее 22 мая с. г.. Соглашения о перекращении вооруженного конфликта.

4. Настоящая договоренность вступит в силу сразу после того, как Посредник уведомит о том, что он получил от противоборствующих сил полностью идентичные документы, подписанные уполномоченными представителями.

Министр обороны Азербайджана
Министр обороны Армении
Командующий армей Нагорного Карабаха

,, ,, мая 1994 г.

– – – – – – – – – –

Примечание: текст подписан соотвественно М. Мамедовым в Баку 9 мая, С. Саркисяаном в Ереване 10 мая, С. Бабаяаном в Степанакерте 11 мая 1994 г.[1]

Ծանոթագրություն

1. Զինադադարը առաջին հերթին պետք էր Ադրբեջանին, որին գնալու մեզ հարկադրեց արևմուտքը: Արդյունքը մենք տեսնում ենք արդեն 13 տարուց ի վեր ծգծգվող բանակցություններում, Ադրբեջանում ահագնացող հակահայկական հիստերիայով ընթացող նոր պատերազմի՝ ռևանշի կոչերում: Մինչդեռ այդ պահին կարելի էր խաղաղության վերջնական պայմանագիր կնքել և խուսափել հետագայի բացասական զարգացումներից:

ՄԵԾԵՐ՝ Գանդի, Նանսեն, Յանիկյան



Գանդի Մոհանդաս Կարամչանդ (02.101869թ.-30.01.1948թ.): Հնդկաստանի ազգային ազատագրական շարժման ղեկավարներից մեկն էր, «Գանդիզմի» հիմնադիր: Իրավաբան: 1893-1914թթ. ապրել է Հարավային Աֆրիկայում: Նամակակցել է Լև Նիկոլաևիչ Տոլստոյի հետ: 1915թ. վերադարձել է Հնդկաստան, գլխավորել Հնդկական Ազգային Կոնգրես կուսակցությունը, դարձել է կուսակցության գաղափարախոսը: «Գանդիզմը»՝ Գանդիի ուսմունքը, դարձավ ազգային ազատագրական պայքարի ծրագիր: Հակաբրիտանական պայքարում ժողովուրդը նրան անվանեց Մահաթմա՝ Մեծ ոգի: Գանդին պայքարում էր «Բաժանիր և տիրիր» անգլիական քաղաքականության, հնդկա-մուսուլմանական գժտությունների հրահրման, կաստաների պահպանման դեմ: Նա բազմիցս բանտարկվել է անգլիական իշխանությունների կողմից (1922-24թթ., 1930-31թթ., 1942-44թթ.): 1942թ. Գանդին առաջադրեց անգլիական գաղութարարների դեմ ուղղված «Դուրս Հնդկաստանից» կարգախոսը: 1947թ. Հնդկաստանի անկախություն նվաճելուց և երկիրը Հնդկական Միություն և Պակիստան առանձին պետությունների մասնատվելուց հետո Գանդին հանդես եկավ հնդիկների և մուսուլմանների արյունահեղ ջարդերի դեմ: Սպանվել է հնդկական շովինիստական «Հինդու Մահասաբհա» կազմակերպության անդամներից մեկի ձեռքով:

Հայկական Սովետական Հանրագիտարան,
Երևան, 1976թ., հատոր 2-րդ, էջ 684:

ՄԱՀԱԹՄԱ ԳԱՆԴԻ [1]

Իմ համակողմանի փորձն ինձ համոզել է, որ չկա ուրիշ Աստված ճշմարտությունից բացի:

Ճշմարտության համընդհանուր և համագո ոգին հայցելու համար, հարկ է կարողանալ սիրել թշվառագույն մի արարածի՝ ինքն իրեն: Մարդը չի կարող իրեն թույլ տալ օտարվել կյանքի մի որևիցե ոլորտից: Ահա թե ինչու՝ իմ հավատարմությունը ճշմարտությանը հանգեցրեց ինձ քաղաքականության մարզին, և առանց նվազագույն տատանման ու դրա հետ մեկտեղ համակ խոնարհությամբ կարող եմ ասել, որ նա, ով կհաստատի, թե կրոնն ընդհանուր ոչինչ չունի քաղաքականության հետ, չգիտե, թե ինչ ասել է կրոն:

ԱՍԻԱՅԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ
Մոհանդաս Կարամչանդ Գանդի [2]

Միջինասիական առնչումների վերաբերյալ Կոնֆերանսի եզրափակիչ նիստին, 1947թ. ապրիլի 2-ին, Պուրանա Կալիում (Դելի), Գանդին ասաց.

- Բարեկամներ, դուք չտեսաք իսկական Հնդկաստանը դուք Կոնֆերանսի հավաքվեցիք ոչ իսկական Հնդկաստանի կենտրոնում: Դելին, Բոմբեյը, Կալկաթան, Լահորը խոշոր քաղաքներ են՝ ուստի, ավելի ենթարկված Արևմուտքի ազդեցությանը:

Եթե դուք իսկապես ուզում եք տեսնել Հնդկաստանն՝ իրական վեհությամբ, ստիպված կլինեք փնտրել դա գյուղերում... Այդ աղքատիկ հյուղակներում, աղբակույտերի արանքում մենք կտեսնենք խոնարհ աղբահանների, ում մեջ է ամփոփված վերին իմաստությունը:

Մատնացույց անելով, որ իմաստությունն Արևմուտք է եկել Արևելքից, Գանդին ասաց.

- Այդ իմաստություններից առաջինը Զրադաշտն էր: Նա պատկանում էր Արևելքին: Նրան հետևեց Բուդդան, որը Արևելքինն էր: Մինչ Հիսուսը Մովսեսն էր, որը Պաղեստինինն էր, թեև ծնվել էր Եգիպտոսում: Հիսուսից հետո հայտնվեց Մուհամեդը... Ես չգիտեմ աշխարհում մեկ ուրիշի, որը կհամեմատվեր ասիացի մարդկանց հետ:

Իսկ ինչ եղավ հետո: Քրիստոնեությունը խեղվեց, երբ տեղափոխվեց Արևմուտք: Ափսոս, որ ստիպված եմ խոսել այդ մասին: Այլևս չէի կամենա խոսել այդ մասին: Այս ամենը ձեզ ասացի լոկ որպեսզի հասկանաք, որ այն ամենն, ինչ տեսաք մեծ քաղաքներում, իրական Հնդկաստանը չէ: Հարկավ, նախճիրը, որ կատարվում է մեր աչքերի առաջ, ամոթաբեր երևույթ է: Ինչպես արդեն երեկ ասացի, կմոռանաք այդ նախճիրի մասին, հենց թողնեք Հնդկաստանի սահմանները:

Սակայն ես ուզում եմ, որ դուք հասկանաք Ասիայի առաքելությունը: Դա չի լինի տեսնել Արևմուտքի աչքերով, կամ ընբռնել, փոխառնելով ատոմային ռումբը: Եթե դուք առաքելություն եք ուզում իրականացնել Արևմուտքի հանդեպ, դա պիտի լինի սիրո և ճշմարտության առաքելություն:

Ժողովրդավարության մեր դարում, չքավորներից չքավորագույնների արթնացման դարում, դուք կարող եք վերստին ստանձնել մեծագույն կարևորության առաքելությունը: Դուք կավարտեք Արևմուտքի հպատակեցումը ոչ վրիժառությամբ, որ կեղեքել են ձեզ, այլ իրական ըմբռնողությամբ: Վստահ եմ, որ եթե դուք ի մի բերեք ձեր հոգիները և ոչ միայն մտքերը, թափանցելու ձեր առաքելության խորհրդի մեջ, որոնք Արևելքի իմաստուններն են ձեզ բերել, և եթե իրականում արժանի լինեք այդ մեծ առաքելությանը, Արևմուտքի հպատակեցումը կավարտվի: Եվ հպատակեցված Արևմուտքը կգոհանա դրանով:

Ներկայումս Արևմուտքը ծարավի է իմաստության: Նա հուսալքված է ատոմային ռումբերի հարաճուն քանակից... Դուք պիտի ցույց տաք աշխարհին այդ ամբողջ չարիքը և համակ մեղսալիությունը: Սա է ժառանգությունը, որ ձեր և իմ ուսուցիչները թողել են Ասիային:

Ծանոթագրություն

1. Տե՛ս, Մ. Կ. Գանդի, «Ասիայի առաքելությունը», «Հարիջա», 1947թ. ապրիլի 20, Բարոյականությունը քաղաքականության մեջ, քրեստոմատիա, Բ. Գ. Կասուլստինի խմբագրություն, ՄՊՀ հրատ., Մոսկվա, 2004, էջ 192-103:

2. Տե՛ս, Մ. Կ. Գանդի, «Իմ կյանքը», գլ. XLIV, Հրաժեշտ, Վոստ, Լիտ. հրատ., Մոսկվա, 1959, էջ 415:

ՖՐԻՏՅՈՖ ՆԱՆՍԵՆ

Նանսեն (Nansen) Ֆրիտյոֆ (10.10.1861 - 13.05.1930), նորվեգացի գիտնական, բևեռախույզ, օվկիանոսագետ, հումանիստ, հասարակական գործիչ: Առաջին համաշխարհային պատերազմի (1914-1918) ավարտից հետո, որպես Ազգերի Լիգայի գերագույն կոմիսար, Նանսենը զբաղվել է ռազմագերիներին հայրենիք վերադարձնելու և գաղթականների խնդիրներով:

Օգնություն է կազմակերպել Պոլոնիայի սովյալներին (1921): Նանսենի հասարակական գործունեության կարևոր մասն է կազմել հայ ժողովրդին օգնելու համար կատարած աշխատանքը: Նա խստագույնս դատապարտել է Աբդուլ Համիդ 2-րդի և երիտթուրքերի կազմակերպած հայերի ցեղասպանությունը, շեշտել, որ թուրքական վայրագությունները իրենց չափերով ու դաժանությամբ հավասարը չունեն պատմության մեջ: Զբաղվելով գաղթականների խնդրով՝ Նանսենը մեծ օգնություն է ցույց տվել նրանց, բազմահազար հայ փախստականներ ստացել են «Նանսենյան անձնագիր», ինչը որոշ չափով թեթևացրել է նրանց դրությունը: Հանդես է եկել հայ գաղթականներին Խորհրդային Հայաստան հայրենադարձնելու համար պայմանների ստեղծման օգտին, գլխավորել հայ-

րենադարձության հանձնաժողովը (1925-1929): Հարցի ուսումնասիրման ու նախապատրաստման նպատակով Նանսենն իր հանձնաժողովով 1925-ի հունիսին ժամանել է Երևան: Եղել է հանրապետության շրջաններում, պարզել գաղթականներին ընդունելու հնարավորությունները: Վերադառնալով Ժնև՝ Ազգերի Լիգային է ներկայացրել զեկուցագիր Խորհրդային Հայաստան կատարած այցելության արդյունքների մասին՝ նշելով, որ հանրապետությանն օգնություն ցուցաբերելու դեպքում կարող է տեղավորել 25-30 հզ. գաղթականներ: Նանսենը, համոզվելով, որ Ազգերի Լիգան դանդաղում և չի վճռում հայ գաղթականության հայրենադարձության հարցը, ինքը մարդասիրական ուղիներով հայթայթել է անհրաժեշտ միջոցներ և տրամադրել 7000 հայ գաղթականների հայրենադարձության կազմակերպման գործին: Հայ ժողովրդի պատմությանը և Հայաստանին Նանսենը նվիրել է բազմաթիվ հոդվածներ, զեկուցագրեր, ելույթներ: 1927-ին նորվեգերեն հրատարակվել են նրա «Հայաստանը և Մերձավոր Արևելքը» խորագրով և գերմաներեն «Խաբված ժողովուրդը» վերտառությամբ գրքերը, որտեղ հեղինակը մեղադրել է հայասպանության հանցավորներին, ինչպես թուրք ջարդարարներին, որոնք հայ ժողովրդին ներքաշեցին իրենց հորձանուտը: Հումանիստական գործունեության համար Նանսենին շնորհվել է Նոբելյան մրցանակ (1922): Նանսենի անունով են կոչվում կղզի ու հրվանդան Ֆրանց Յոսիֆի երկրում, նեղուց՝ Կանադական, Արկտիկական արշիպելագում, գոգավորություն ու լեռնաշղթա՝ Հյուսիսային սառուցյալ օվկիանոսում: Երևանում կա Նանսենի անվան փողոց: Սպիտակ քաղաքում կանգնեցված է հուշարձան Նանսենին՝ «Նորվեգական գյուղի» տարածքում, որը կառուցել են նորվեգացիները 1988-ի ավերիչ երկրաշարժից հետո:

Պատառիկներ Ֆրիտյոֆ Նանսենի «Խաբված ժողովուրդ» գրքից, ԵՊՀ հրտ., Երևան, 2000թ.:

Այսուհանդերձ երիտթուրքերը հասան իրենց նպատակին, մաքրեցին Անատոլիան հայ բնակչությունից և արդեն կարող էին Թալեաթ փաշայի պես ասել, որ Հայկական հարց այլևս գոյություն չունի: Եվրոպացի կամ ամերիկացի պետական գործիչներին այլևս չէր հետաքրքրում այնտեղ տեղի ունեցածը, նրանց համար մշտնջենական Հայկական հարցը վերջապես հիմնովին խեղդվել էր արյան մեջ: Տեսանք, թե ինչպես Արևմտյան Եվրոպայի պետություններն ու Ամերիկայի Միացյալ Նահանգները փոխանակ հատուցելու հայ ժողովրդի հանդեպ իրենց պարտավորությունները, որ այնքան հանդիսավոր ստանձնել էին այն ժամանակ, երբ պատերազմում հայերի օգնության կարիքն ունեին, հանդես եկան սոսկ դատարկաբանությամբ: Իսկ Ազգերի ընկերակցությո՞ւնը: 1920թ. Ազգերի ընկերակցության առաջին գումարումը միաձայն որոշում ընդունեց, որ պետությունները պետք է ամեն ինչ անեն՝ «հնարավորին չափ արագ վերջ դնելու հայկական ահավոր ողբերգությանը»՝ տալով այդ ժողովրդի հետագա անվտանգության երաշխիք: 1921թ. սեպտեմբերին Ազգերի ընկերակցության երկրորդ գումարմանը լորդ Իքիլզը միաձայն բանաձև ընդունել տվեց, որտեղ բարձրացված էր այն հարցը, որ «Գերագույն խորհուրդը պետք է պարտադրի պետություններին՝ երաշխավորելու Հայաստանի ապագան՝ ամենից առաջ հատկացնելով հայերին ազգային հայրենիք (“a National Home”, “Foyer National”), օսմանյան տիրապետությունից լրիվ անկախ»: 1922թ. սեպտեմբերին Ազգերի ընկերակցության երրորդ գումարումը կրկին միաձայն որոշում ընդունեց, որ «Թուրքիայի հետ հաշտության բանակցությունների ժամանակ չպետք է աչքաթող անել հայերի համար ազգային հայրենիք ստեղծելու անհրաժեշտությունը: Ժողովը դիմեց Խորհրդին՝ ձեռնարկել այդ հարցի լուծման բոլոր անհրաժեշտ միջոցառումները»:

Լոզանի հաշտության բանակցությունները ձգձգվեցին 1922թ. նոյեմբերից մինչև 1923թ. հունիսը: Պետությունների ներկայացուցիչները խուսափում էին Սևրի պայմանագրի՝ Հայաստանին վերաբերող որոշումներից: Նրանց անունից լորդ Քերզոնը առաջ քաշեց հայերի ազգային հայրենիքի կամ երկրի պահանջը, իսկ Հայկական հարցը որակեց՝ որպես «աշխարհի մեծագույն խայտառակությունը»: Թուրքերը կտրականապես բացարկեցին առաջարկը: Քայլ առ քայլ առաջարկն այնքան սեղմվեց, որ ձևակերպվեց հայերին հայրենիք հատկացնել «Թուրքիայում», այն էլ ոչ ինքնավար կառավարմամբ: Իրականում կազմավորվելու էր մի մարզ՝ «թուրքական օրենքներով և թուրքական կառավարմամբ. այստեղ հավաքված հայերը կարող էին պահպանել իրենց ցեղը, լեզուն, մշակույթը»: Թուրքիայի միջնորդները մերժում էին անգամ այս պահանջը, իսկ մյուս պետությունների ներկայացուցիչները կարծում էին, թե այս առաջարկով մեծ բան են անում հայ ժողովրդին, որն իր արյունը չէր խնայել նրանց համար: Իսկ երբ 1923թ. հուլիսի 24-ին ստորագրվեց Լոզանի պայմանագիրը, այնտեղ խոսք անգամ չկար հայերի հայրենիքի որևէ ձևի մասին: Պայմանագիրը կնքվեց այնպես, որ «կարծես հայերը ընդհանրապես գոյություն չեն ունեցել», այսինքն՝ տեղի էր ունեցել հայերի իրավունքների լրիվ ոտնահարում:

Սրանով ավարտվեցին Արևմտյան Եվրոպայի և Ամերիկայի փորձերը՝ կատարելու հայ ժողովրդին բազմիցս տված ազատության և անկախության մասին խոստումները, որոնք

շռայլվել էին՝ հայերին Անտանտի կողմից պատերազմին ներգրավելու նպատակով:

Ի՞նչ նպատակ էր հետապնդում Ազգերի ընկերակցության կոմիտեն՝ քննության դնելով Հայկական հարցը, գուցե՞ ինչ-որ բան էր ուզում անել անտուն հայ գաղթականների համար: Այն միայն լռեցրեց խղճի ձայնը, եթե իհարկե կար մեկը, որ խիղճ ունենար: Ինչի՞ համար էր այդ ամենը, քանի որ բարեխիղճ հետազոտությունների հիման վրա տրված առաջարկությունները ջերմ ընդունելություն գտնելով փորձագետների շրջանում՝ սառնասրտորեն մերժվում էին պետությունների կառավարությունների կողմից: Նրանք նույնիսկ զլացան իրենց համեստ զոհաբերությամբ թեթևացնել գաղթականների կարիքները, մարդիկ, որոնց պարտք էին իրենք: Պատասխանը այս էր. ներկա պայմաններում, երբ ինքդ էլ արդեն բավականին կարիքի մեջ ես, դժվար է ուրիշին զոհողություն անել: Լավ կլիներ այդպես մտածել նաև այն ժամանակ, երբ թանկ երդումներով ու պատվո հավաստիացումներով կոչ էիք անում ծայր աստիճան կարիքի մեջ գտնվող այդ դժբախտներին հանուն Անտանտի զոհաբերել ոչ միայն դրամ և ունեցվածք, այլև կյանք (էջ 269-270):

Կասկածից վեր էր, որ Մեծ Բրիտանիայի երկու ղեկավար պետական գործիչների այս պարզ և հաստատակամ առաջարկությունները կանտեսվեն: Անհնար էր մտածել, որ Ռամզեյ Մաքդոնալդը և աշխատանքային կուսակցությունը զոհունակությամբ չէին ընդունի այդ առաջարկությունները: Սակայն Մաքդոնալդը տապալվեց, իշխանության գլուխ անցավ Պահպանողական կուսակցությունը՝ Բոլդուինի ղեկավարությամբ: Թվում էր՝ ամեն ինչ կարգին է: Այնինչ Բոլդուինի կառավարությունը մերժեց որևէ օգնություն հայ ժողովրդի կամ փախստականների համար, որոնք այդքան «բարոյական իրավունք» ունեին:

Զարմանալի էր, թե իսկապես ի՞նչ նպատակ էր դա հետապնդում: Իրապե՞ս բոլորը դատարկ բառեր էին: Դատարկ բառեր առանց լուրջ հետևությունների՞:

Իսկ Ազգերի ընկերակցությո՞ւնը: Նա նույնպե՞ս չուներ պատասխանատվության զգացում: Մի կողմից՝ Ազգերի ընկերակցությունը ստիպում է փախստականների գծով իր գլխավոր հանձնակատարին, չնայած նրա անդադար հրաժարականներին, վերցնել հայ գաղթականների գործը, մյուս կողմից՝ խանգարում էր գործի դնել հայերի համար օգնություն հավաքելու ազդեցիկ միջոցները: Պետք էր ենթադրել, որ Ազգերի ընկերակցությունը ի զորու չէր ձեռնարկած որևէ գործ մինչև վերջ հասցնելու, հատկապես եթե դա վերաբերում էր պետությունների ստանձնած պարտավորություններին: Մի՞թե Ազգերի ընկերակցությունը կարծում է, թե կատարել է իր պարտքը և հարցը լուծել, առանց իր հեղինակությունը հատկապես Արևելքում վտանգելու:

Եվրոպական ժողովուրդներն ու պետական գործիչները հոգնել են մշտնջենական Հայկական հարցից: Դա ինքնըստինքյան հասկանալի է: Չէ՞ որ այդ հարցը նրանք ձախողեցին: Հայաստան անունը նրանց նիրհած խղճերում արթնացնում է սոսկ ուրացած կամ չկատարած խոստումների տհաճ հիշողություններ: Նրանք մատը մատին չխփեցին իրենց խոստումները կատարելու համար, քանի որ դրանք տրվել էին թեև փոքր, արնաքամ, սակայն շնորհալի մի ժողովրդի, որը չուներ նավթի ու ոսկու հանքավայրեր:

Կարեկցում եմ հայ ժողովրդին, որ խճճվեց եվրոպական քաղաքականության մեջ: Նրա համար ավելի լավ կլիներ, եթե իր անունը երբևէ հնչած չլիներ եվրոպացի որևէ քաղաքագետի բերանից[1]: Սակայն հայ ժողովուրդը բնավ չի կորցնում իր հույսը: Նա համառ, անխոնջ աշխատում և սպասում է, շարունակ սպասում:

Նա սպասում է մինչև օրս[2] (էջ 272-273):

Հայ գաղթականներին չօգնելու բրիտանական քաղաքականության մի փոքր դրվագ (Ֆրիտյոֆ Նանսեն, «Խաբված ժողովուրդ», էջ 271-272):

Մեծ Բրիտանիայի Պահպանողական կուսակցության առաջնորդ Սթենլի Բոլդուինը՝ ներկայիս պրեմիեր մինիստրը, և Ազատական կուսակցության առաջնորդ Ասքվիթը 1924թ. սեպտեմբերին մի սրտառուչ ուղերձով դիմեցին այն ժամանակվա պրեմիեր մինիստրին և աշխատանքային կուսակցության առաջնորդ Ռամզեյ Մաքդոնալդին: Նրանք պնդում էին, որ Մեծ Բրիտանիան պետք է մի զգալի գումար հավաքի Հունաստանում, Բալկանյան թերակղզում և այլ վայրերում գտնվող հայ գաղթականների համար: Որպես հիմնավորում առաջադրեցին հետևյալ կետերը.

«Քանի որ հայերը, քաջալերված ազատության խոստումներով, պատերազմի ժամանակ օգնեցին դաշնակիցներին, և քանի որ այդ գործի համար նրանք այդքան տառապանք կրեցին»:

«Քանի որ դաշնակից և շահագրգիռ պետությունների գործիչները պատերազմի ընթացքում և զինադադարից հետո շարունակ պարտավորվում էին երաշխավորել հայ ազգի ազատությունն ու անկախությունը»:

«Քանի որ Մեծ Բրիտանիան պատասխանատու է Զմյուռնիայի ավերումից հետո օտոմանյան հայերի հիմնովին տեղահանման և արտաքսման համար»:

«Քանի որ 1916թ. թուրքական կառավարության կողմից Բեռլինում ավանդ դրված հինգ միլիոն ֆունտ ստեռլինգը (թուրքական ոսկով), որ զինադադարից հետո անցավ դաշնակիցներին, մեծ մասամբ (գուցե և ամբողջությամբ) հայերի փողն էր»:

«Քանի որ փախստականների ներկա վիճակը անկայուն ու վիատեցուցիչ է, և կշտամբանք արևմտյան տերություններին»:

Այնուհետև հարց է տրվում. «Ի՞նչ կարելի է անել»:

«որը ափսոսանքով ընդունում ենք, որ հայերին տված մեր խոստումները առայժմ անհնար է կատարել... Սակայն կա մեկ այլ ճանապարհ մեր զգացմունքներն ու պատասխանատվությունը ի ցույց դնելու և մեղմելու թուրքահայերի սփռված բեկորների հուսահատ վիճակը: Նրանց բնակեցման ամենահարմար երկիրը, անկասկած, Ռուսահայաստանն է: Տեղի կառավարությունը խոստանում է արտոնյալ պայմաններ...»:

Թվում էր՝ ամեն ինչ կարգին է: Այնինչ Բոլդուինի կառավարությունը մերժեց որևէ օգնություն հայ ժողովրդի կամ փախստականների համար, որոնք այդքան «բարոյական իրավունք» ունեին:

Զարմանալի էր, թե իսկապես ի՞նչ նպատակ էր դա հետապնդում: Իրապե՞ս բոլորը դատարկ բառեր էին: Դատարկ բառեր առանց լուրջ հետևությունների՞:

Նանսենի ջանքերի շնորհիվ, որպես հայ գաղթականներին, ինչպես նաև նույն կարգավիճակում գտնվող այլ երկրների թշվառներին օգնություն իրականացնելու միջոց դրվեց Նանսենյան անձնագրեր տալու խնդիրը:

«Նանսենյան անձնագիր», անձը հաստատող ժողովրդական վկայական, որը տրվել է փախստականներին և քաղաքացիություն չունեցող անձանց Առաջին համաշխարհային պատերազմից հետո: Մտցրել է Ազգերի Լիգան՝ Ֆ. Նանսենի (այստեղից էլ՝ անվանումը) նախաձեռնությամբ Ժնևում հրավիրված կոնֆերանսի որոշմամբ (1922թ.): Գերբի փոխարեն անձնագրում ամրացվել է Նանսենի դիմանկարով նամականիշ: «Նանսենյան անձնագիր» ստացած անձինք օգտվել են կոնֆերանսի մասնակից երկրում բնակվելու, ազատ տեղաշարժվելու իրավունքից, նրանց նկատմամբ դադարել են գործել քաղաքացիություն չունեցողների համար նախատեսված սահմանափակումները: Ազգերի Լիգայի որոշմամբ[4] (12 հուլիսի 1924թ.) Մեծ եղեռնից փրկված շուրջ 320 հազար հայեր, որոնք դեգերում էին տարբեր երկրներում, ստացել են «Նանսենյան անձնագիր»:

Հ.Գ. - Ինչ վերաբերում է Հայկական Սփյուռքի գաղթօջախներում ցեղասպանությունից փրկվածներին, ապա հարկ է հիշել, օրինակ, ԱՄՆ-ում 1924-ի ընթացող դատավարությունը[3]: Երբ իբրև ասիացի (վատ իմաստով) և քաղաքակրթական զարգացում չունեցողների փորձ էր արվում քաղաքացիությունից զրկել ցեղասպանությունից փրկված և ԱՄՆ-ում օթևան գտած հայ փախստականներին, իսկ դեռևս քաղաքացիություն չունեցողներին էլ, ըստ այդմ՝ սպառնում էր որպես (այսօրեական եվրոտերմինաբանությամբ ասված) անօրինական միգրանտների ԱՄՆ-ից վտարվելու հեռանկարը: Ցեղասպանությունից փրկվածների համար ներկան ու ապագան շատ ավելի հուսահատական էին Եվրոպայում, ուր նրանց նկատմամբ սովի և անօթևանության սպառնալիքները ավելի էին խստանում քաղաքացիություն չունենալու պատճառով աշխատանք չունենալու, ինչպես և երկրից դուրս գալ չկարողանալու՝ Խորհրդային Հայաստան կամ այլ երկիր տեղափոխվելու պատճառով: Համատարած անորոշության այս հուսահատության իրողությունը, որը իբրև թե պայմանավորված էր եվրոպական երկրների հետպատերազմյան բյուրոկրատական քաշքշուկների ու պետական անտարբերությունով, ամեն օր հայերի կյանք էր խլում: Արևմտյան Ռորբախ - Արաբացի - Տրոցկի քաղաքական մարդատյացության, ցեղասպանությունն իրագործող հանցագործին սիրաշահելու և փրկվածներին ոչնչացնելու դեմ էր, որ իր բողոքի ձայնը բարձրացրեց ու Վճռական մենակի իր գործուն աջակցությամբ Եվրոպայում կյանքի ու մահու միջև մաքառող հայերին օգնության հասավ Նորվեգիայի, ավելի շուտ՝ Աշխարհի Մեծագույն մարդը՝ Ֆրիտյոֆ Նանսենը: Ստորև ներկայացնում ենք Նանսենի՝ իր իսկ գրքում շարադրած իրողությունները, հայ գաղթականներին չօգնելու, սակայն նրանց օգտին ընդամենը խոսելու բրիտանական քաղաքականության մի փոքր դրվագ:

<u>Ծանոթագրություն</u>

1. Ցավոք, 1992թ., Շուշիի ազատագրումից հետո, առ այսօր եվրոպացի և առհասարակ արևմուտքի քաղաքագետների բերանից կրկին, ավելի քան հաճախակի, հնչում է հայ ժողովրդի անունը:

2. Հայոց սպասումն ավարտվեց, երբ դարասկզբի ձեռագրով, հիմա էլ ադրբեջանցիների ձեռքերով, սումգայիթյան և այլ եղեռնագործությունների միջոցով՝ ընթացքի մեջ դրվեց ամբողջ արցախահայությունը բռնագաղթի ենթարկելու հրեշավոր ծրագիրը: Հայությունն այլևս չսպասեց, պարտադրված պատերազմին ու սոցիալական ահավոր ճնշումներին հերոսաբար դիմակայելով, հաղթեց՝ հաստատելով իր երկրում ազատ, անկախ, ինքնիշխան ապրելու իր իրավունքը, իրողություն, որ առ այսօր չի ուզում ճանաչել արևմտյան քաղաքականությունը:

3. Մանրամասները, տե՛ս, «Ուխտ Արարատի», թիվ 4/10, 2006թ., «Հայ քաղաքացիության փորձադաշտը. 1924թ. դատավարությունը Փորթլենդի դատարանում» Ս. Գալոյանի հոդվածում: Շարունակությունը տե՛ս, «Ուխտ Արարատի», թիվ 5/11, 2006թ.:

4. Գերմանացի հրապարակախոս Հենրիխ Ֆիրբյուխերի վկայությամբ Լոզանի պայմանագիրը հայերի համար «նրա բոլոր հույսերի կործանումն էր»: Եվ եթե կա մի բնագավառ, ուր **«Ազգերի Լիգան ոչինչ չի արել, ապա դա Հայկական հարցն է»**: Հենրիխ Ֆիրբյուխեր, «Հայաստան, 1915: Ի՞նչ է թաքցրել կայզերական կառավարությունը գերմանական հպատակներից: Մի կուլտուրական ժողովրդի կոտորածը Թուրքիայի կողմից»: Տե՛ս, «Հայկական Հարց», հանրագիտարան, Երևան, 1996թ., էջ 271:

ՅԱՆԻԿՅԱՆ (ՅԱՆԻԳՅԱՆ) ԳՈՒՐԳԵՆ

Յանիկյան Գուրգեն (24.12.1895, Կարին - 27.03.1984, ԱՄՆ), արդյունաբերող, գյուտարար և հասարակական - քաղաքական գործիչ: 1894-96-ի հայկական կոտորածների ժամանակ Յանիկյանի ընտանիքը անցել է Կարս: Նախնական և միջնակարգ կրթությունն ստացել Ժնևում, Նոր Նախիջևանում և Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում: Առաջին համաշխարհային պատերազմի սկզբին մտել է հայկական կամավորական 2-րդ գունդը, մասնակցել Կովկասյան ռազմաճակատի մարտերին: Պատերազմից հետո ավարտել է ՄՊՀ ճարտարապետության դասընթացը: Որոշ ժամանակ աշխատել է Թիֆլիսում: 1930-ական թվականներին աշխատել է Իրանում: ԱՄՆ-ին մատուցած ծառայությունների համար Յանիկյանը ստացել է ԱՄՆ-ի քաղաքացիություն, որից հետո արդյունաբերողի և գյուտարարի իր գործունեությունը շարունակել է ԱՄՆ-ում:

Յանիկյանը փորձել է Մեծ եղեռնի իրողությունն ու Հայկական հարցը ծանոթացնել օտարներին, սակայն նրա ծրագրերին խոչընդոտել է ԱՄՆ-ի կառավարությունը՝ խուսափելով ամերիկա-թուրքական հարաբերությունների բարդացումից: Հանգելով այն համոզման, որ միայն ուժի գործադրմամբ կարելի է միջազգային հասարակայնության ուշադրությունը բևեռել հայ ժողովրդի արդարացի դատի վրա, 1973-ի հունվարի 27-ին, Կալիֆոռնիայի Սանտա Բարբարա քաղաքում Յանիկյանը սպանել է երկու թուրք դիվանագետների՝ հյուպատոսին ու նրա օգնականին:

Դատապարտվել է ցմահ բանտարկության, սակայն 1984-ի հունվարին ազատ է արձակվել վատ առողջության պատճառով և շուտով մահացել: Յանիկյանի ահաբեկչական արարքով սկզբնավորվեց Հայ դատի հետապնդման նոր՝ զինված փուլը, որը իրագործեցին Հայաստանի Ազատագրության Հայ Գաղտնի Բանակը, Հայկական Ցեղասպանության Արդարության Մարտիկները՝ նման այլ հայկական կազմակերպություններ:

Ա. ՍԱՆՋՅԱՆ
Լիբանան

«Հայկական Հարց» հանրագիտարան, Հայկական Հանրագիտարանի գլխավոր խմբագրություն, Երևան, 1996թ., էջ 347-348:

…Սիրելի ցեղակիցներ,

Այս մասը մասնավորապես պիտի հետաքրքրէ ձեզ, կազմելով իմ ընդհանուր գաղափարների մասը, վերաբերող մեր ցեղին, որը հանգամանքներից ստիպուած՝ ցրուած է ամբողջ աշխարհում:

Շատ բնական է և զարմանալու էլ բան չկա, որ ձեզանից շատերը զարմացած նայում են աշխարհի մեծերին ու նրանց, այսպէս կոչուած, «միացեալ կապիկներից» կազմած ընդհանուր ժողովին, որը ըստ իր կանոնագրության՝ պիտի քննէ ու պաշտպանէ բոլոր ազգերի, մանավանդ փոքր ազգերի իրավունքները…

Ո՞վ չի խաբել մեզ… Ո՞վ չի աշխատել օգտագործել մեր ազգը իր սեփական շահերի համար… Հետաքրքրվողները թող կարդան պատմությունը. ես պատմություն գրելու ցանկություն չունեմ:

Մենք, որ աշխարհիս ամենահին ազգերից մեկն ենք, մենք, որ քանիցս, երբ պատմության փոշին ուզել է մեզ ծածկել, շնորհիվ մեր զավակների կամքին՝ նոր ծնունդ ենք առել և նրանց զոհողութեամբ մինչև այսօր էլ ապրում ենք մեր անունով ու ՆԱՅԻՐՅԱՆ կամքով, պիտի մոռանա՞նք կապիտալիստական սիստեմի արարքները դեպի մեզ՝ հայ ազգը:

Փա՛ռք ազգի զավակներին, որ նրանք կերտում են մի նոր ՆԱՅԻՐՅԱՆ երկիր, որ պիտի զարմացնէ արար մարդկությունը: Աշխարհի ամեն կողմ ցրված հայերը ունեն ամեն տեսակ հպատակություն: Բայց նրանք՝ բոլորը, մի ազգի զաւակներ են, որոնք հիշում են անցյալը և լեցված են ցասումով, որ վերջապես գազանը ստանա իր արժանի պատիժը ու վերադարձնէ մեզ՝ գողացածը:



ԳՈՒՐԳԵՆ ՅԱՆԻԿՅԱՆԻ
ՆԱՄԱԿ - ՀՈՒՇԱԳՐԻ ՎԵՐՋԻՆ ՄԱՍԸ

Միայն վրեժի ցասումը չէ, որ ղեկավարելու է մեր արարքները, այլև մեր ցանկությունը. ապացուցել մարդկությանը, որ ՀԱՅ մարդը, անխտիր, ինչ երկրում էլ նա ապրում է, ում հպատակություն էլ կրում է - դեռ չի մեռել և իր կրծքում դեռ պահում է վառ արդարության ու հաշվետվության պահանջները:

Տասնյակ տարիներ մեզ քնեցրել են խոստումերով և մենք բացի թղթերի կույտերից՝ դիվանագետների սեղանների վրա դարսած, ոչ մի արդյունք չենք ունեցել: Շատերը ցանկանում են, որ կամաց-կամաց Հայը մոռանա իր պահանջներն ու պատմության փոշին այս անգամ էլ ծածկի մարդկության կողմից կատարված անարդարությունները:

Երբ պատմությունը մեզ սովորեցնում է, որ այս աշխարհում միայն ուժն է թելադրում մարդկային գործերը, դէ, այն ժամանակ ի՞նչ իրավունք ունենք մենք՝ հայերս, որպէս ԴՈՆՔԻՇՈՏՆԵՐ սավառնել երկնքում՝ արդարություն որոնելով:

Մեր պատմությունը ապացուցել է աշխարհին, որ հայ ազգը կարո՛ղ է կռվել:

Անցյալում հազարավոր մեր եղբայրներից գնում էին կամավոր կերպով դէպի մահը և ժպտում էին, երբ կտրվում էր նրանց կյանքի վերջին թելը:

Չեմ կարծում, որ կյանքի հաճույքներն ու կապիտալիստական սիստեմը կատարել են իրենց քանդիչ գործը և ստեղծել դրություն, որ մեր կյանքում արդեն բացակայում են անձնազոհ ու գաղափարի համար զոհվող անհատներ:

Չի կարելի նույնիսկ ենթադրել, որ ազգիս ողբերգությունը ցույց տվող գրականությունը և զանազան երկրներում կառուցված կոթողները չեն լցրել մեր մատաղ սերնդի ներքին աշխարհը ցանկություններով՝ օգնել իրեն կյանք տվող ցեղին, բարձրացնել և իր ձայնը մարդկության դեմ:

Թող Թուրքիան և նրա բարեկամները մեզ կոչեն ԳԷՇ, բայց չանուանեն էՇ:

Ցրված են աշխարհի չորս կողմը և՛ նրանք, որոնց արդեն տարիքն առած ուղեղում դեռ վառ են մնացել անցած օրերի արյունոտ պատկերները, նրանք աշխատել են օգնել իրենց կյանք տվող ցեղին, երբ դեռ երիտասարդ էին ու կռվել են գազանների հետ: Տարակույս չկա, որ նրանց մեջ էլ դեռ չի մեռել բողոքող և իրավունքներ պահանջող ոգին:

Ես ոչ միայն մենակ մնալու չեմ, այլ ԼԻՆԵԼՈՒ եմ եմ առաջինը, ով պիտի հնչեցնէ այս նոր ձևի պատերազմի հրավիրող փողը:

Անցած տարիները եկան ինձ ապացուցելու, որ այս աշխարհում ազատություն, արդարություն, ճշմարտություն և սրանց նման բարձր գաղափարների իմաստը, եթե այսպէս շարունակվի մեր կյանքը, շուտով միայն բառարաններում են գտնելու: Բավական է, որքան հայ անհատը, գնչու դառած, դռնե-դուռ ընկած ողորմություն է աղերսում մարդկությունից:

Ես՝ անհատս, ոչ ցանկություն ունեմ այլևս լռելու և ոչ էլ ժամանակ:

Միակ ցանկությունը, որ մնում է իմ մեջ, այդ է՝ չլինել միակը այս ձևի պատերազմը իրականացնելու գործում:

Վերջնական հաղթանակը լինելու է մե՛ր, կասկած չունե՛մ:

Դո՛ւք՝ հայ ազգի զաւակներ, ՆԵՄԵՍԻՍՆԵՐ դարձած, հարվածեք թշնամուն ամեն մի տեղ, որտեղ դուք ինքներդ հարմար կը գտնեք:

Հանգամանքներից են կախված, թէ ե՞րբ, որտե՞ղ և ինչպե՞ս ես պիտի հնչեցնեմ այս նոր տեսակ հայ անհատի որոշած պատերազմի առաջին փողը…:

Հուսով եմ, որ շատ ժամանակ չի անցնելու:

Տարիներ էին ինձ հարկավոր, որ ես գայի այս որոշման:

Երկար ամիսներ էին հարկավոր, որ ես պատրաստէի որոշածիս իրագործումը, որովհետև ես գիտէի, թէ ես այրում եմ բոլոր կամուրջներն իմ հետևից և վերադառնալու հարց չէր կարող լինել:

Կասկած չունեմ, որ ես մենակ լինելու չեմ: Կասկած չունեմ, որ անխտիր իրենց հասակին լինելու են ինձ նմանները, որոնք հասկանալով, որ մենք այլևս ուրիշ ելք չունենք, դիմելու են մի միջոցի, որը միակ հասկանալի լեզուն է մեր ներկայիս կյանքում:

ՆԵՄԵՍԻՍ դարձած մի հայու զավակ
ԳՈՒՐԳԵՆ ՅԱՆԻԿՅԱՆ
Սանթա Բարբարա, Սեպտեմբեր, 1972թ.

Երբ այս նամակը կը կարդաք՝ արդեն ես, որ հեղինակն է այս նոր ձևի պատերազմին ու տարիների ընթացքում փայփայել էի այս գաղափարը, արդեն անցել եմ նրա իրագործման…

Ես լինելու եմ և՛ առաջինը, և լինելու եմ օրինակ շատ շատերին…

Կասկած չունեմ, որ ինձ նման մտածողների ցանկը կարճ լինելու չէ…

Կասկած չունեմ, որ շատերն են գնալու այս նոր ձևի պատերազմի ճանապարհով…

Կասկած չունեմ, որ ամեն մի հայ անհատ պիտի աշխատի տարածել այս նոր ձևի պատերազմի գաղափարը, և, պետք եղած դեպքում, ՀԱՅ ԱՆՀԱՏԸ ՕԳՆԵԼՈՒ է ՀԱՅ ԱՆՀԱՏԻՆ:

ԳՈՒՐԳԵՆ ՅԱՆԻԿՅԱՆ
Նեմեսիս դարձած մի ՀԱՅ ԱՆՀԱՏ

Հարց - Սիրելի պրն. Յանիկյան, բանտի խցից ձեր տված այս ոգևորիչ պատգամը[1] հայ ժողովրդին մեծապես հուզիչ էր: Այժմ, այս առիթից օգտվելով, ցանկանում եմ մի քանի հարցեր տալ, որպեսզի ժողովուրդն անձամբ ձեզանից իմանա, թե ինչպես ասպարեզ իջաք՝ հայ ժողովրդին օգտակար դառնալու համար: Պրն Յանիկյան, ե՞րբ որոշեցիք հայ ժողովրդի վրեժը[2] լուծելու թվականը:

Պատասխան - Թվականը շատ հեռու էր: Հայրս, երբ վախճանվեց, կտակ թողեց ինձ, որ հայ ժողովրդի համար մի բան անեմ, և իր մահվան րոպեին խոստացա կատարել այդ: Հետագայում, երբ ամուսնացա մի բժշկուհու հետ, բացատրեցի դրությունը և նա էլ համաձայնեց: Անհրաժեշտ էր հավաքել այնքան դրամ, որ կարողանայինք իրագործել այդ նպատակը, որոշել էինք շարժապատկերով ցույց տալ աշխարհին, թե ինչ խատառակություն է կատարվել:

Հ - Պրն Յանիկյան, ասացիք, որ արդեն վաղուց որոշել էիք շարժապատկերով ցույց տալ աշխարհին հայ ժողովրդի ամբողջ դժբախտությունը, ի՞նչ աշխատանքներ էիք կատարել այդ ուղղությամբ:

Պ - Մեր ունեցած ամբողջ դրամը՝ 2 մլն դոլարից ավելի, ծախսեցինք այդ նպատակի համար. 18 ամիս ես ապրում էի Արևելքի այն վայրերում, որտեղ կատարվել էին մեր ջարդերը և պատրաստում էի շարժապատկերը: Գնեցի մի գյուղ, որ պիտի այրվեր, գտա այն վայրերը, որտեղ դիակների կմախքներից դեզեր էին կուտակված, և այդ բոլորը ցուցադրվելու էին: Երբ դրամը վերջացավ, հույս ունեի, թե պարսկական կառավարությունը կտա իր պարտքը, որով կշարունակեմ իմ գործը: Բայց երբ նրանք իմացան, որ ես ամերիկահպատակ եմ, դրամը չտվեցին: Նրանք իմ կառուցած երկաթգծի համար կես միլիարդ դոլար են ստացել ամերիկյան կառավարությունից. բայց ինձ չեն վճարել իմ 2 մլն դոլարը և մինչ այսօր էլ պարտք են:

Պարսկաստանի դատարանը որոշեց, որ այդ դրամը վճարվի ինձ, բայց Շահն արգելք հանդիսացավ «Սթեյթ դեպարտմենթում»:

Հ - Պրն Յանիկյան, ինչո՞ւ ձեր դրամը չվճարվեց «Սթեյթ դեպարտմենթի» կողմից:

Պ - Որովհետև Շահը բարեկամն էր Նիքսոն կոչված նախագահի և խնդրեց, որ «Սթեյթ դեպարտմենթը» չօգնի ինձ: Նախնական շրջանում նրանք օգնեցին, բայց հետագայում այլևս չօգնեցին:

Հ - Արգելքն ուղղակի շարժապատկերի համա՞ր էր:

Պ - Այո՛, նրանք իմացան, որ ես պատրաստում էի այդ շարժապատկերը: Նրանք գիտեին, որ ես այն ձրի էի ցույց տալու աշխարհին՝ թե՛ անգլերեն և թե՛ ֆրանսերեն լեզուներով: Թուրք կառավարությունն էլ, երբ իմացավ եղելությունը, միջամտեց «Սթեյթ դեպարտմենթում», որ չօգնեն ինձ: Այդպիսով շարժապատկերը կիսատ մնաց, և ես այրեցի այն:

ՈՒՐՈՒԳՎԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԸ ԳՈՒՐԳԵՆ ՅԱՆԻԿՅԱՆԻ ՀԵՏ

(Տրվում է հարցազրույցի հիմնական ասելիքը)

Հ - Պրն Յանիկյան, ի՞նչ էր ներկայացնում ձեր այդ շարժապատկերը:

Պ - Այն ներկայացնում էր ոչ միայն հայերի ջարդը, այլև ցույց էր տալիս մեծ երկրների վերաբերմունքը դեպի հայը, նրանց շահերը, ովքեր ուզում էին խեղդել Հայկական հարցը: Այդ էր գլխավոր նպատակս և ոչ թե ցույց տալ սպանության 2 մլն տեսարաններ:

Շարժապատկերի մնացած մասն էլ տաճկական փաստաթղթերի վրա էր հիմնված, թե ի՞նչ ծրագրով և ինչպե՞ս բանտերից թողեցին ավազակներին ու նրանց հագցրին զինվորական զգեստներ, որպեսզի մեզ ջարդեին, թե ինչպե՞ս հայ զինվորների զենքերը վերցրին, ուղարկեցին՝ ճանապարհներին կոտորելու համար:

Բացատրում էի նաև Սևրի և Լոզանի պայմանագրի մասին:

Հ - Պրն Յանիկյան, ուրեմն ձեր նպատակի իրագործման արգելքից հետո է, որ դուք որոշեցիք այդ քայլն անել:

Պ - Այո՛, մինչ այդ ես իմ ամբողջ գրությունների մեջ միշտ պաշտպանել եմ այն միտքը, որ բռնությունը պետք է ոչնչանա մեր կյանքում: Բայց երբ այդ բոլորը կատարվեց, և մարդկությունն ու համայն աշխարհը լուռ մնացին Հայկական հարցի նկատմամբ, այն ժամանակ որոշեցի, թե ինչպես կարող եմ մարդկության և պետությունների ուշադրությունը կենտրոնացնել Հայ դատի վրա:

...

Հ - Պրն Յանիկյան դատավարությունից և ցմահ դատապարտվելուց հետո ի՞նչ է ձեր ծրագիրը, նպատակը և դիրքորոշումն այսօր Հայ դատի առնչությամբ:

Պ - Իմ մոտեցումը Հայ դատի առնչությամբ նույնն է, ինչ որ անցյալում էր: Խոսքով ոչ ոքի ազատություն կամ երկիր չի տրվում: Բայց ի՞նչ կարող եմ անել բանտից. ես միայն կարող եմ ուրախանալ, երբ լրագրերում կարդում եմ, որ ստեղծվել է մի բռունցք, որ կոչվում է Հայաստանի Ազատագրության Հայ Գաղտնի Բանակ: Այս բռունցքն է այսօր գործ կատարողը, և իմ միակ հույսը դրա վրա է:

Ճառերով, բողոքագիր գրելով, դպրոցներ շինելով և կուսակցության որոշ ղեկավարության վրա հույսեր դնելով Հայ դատը չի լուծվի, միայն ուժ է հարկավոր:

Այսօր հրապարակ են եկել երիտասարդներ, ստեղծել են մի բանակ և գնում են զինյալ ազատագրական պայքարի ուղիով, ուրախ եմ և շնորհակալ, որ նրանք իրենց կոչում են Յանիկյանի զավակներ, ես գրկաբաց ընդունում եմ այդ զավակներին:

ԳՈՒՐԳԵՆ ՅԱՆԻԿՅԱՆԻ ԴԱՏԱԽԱԶԻ ՈՒՇԱ-ՑԱԾ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՏ-ՄՈՒՄ Է «ՖՐԵԶՆՈ ԲԻ» ՕՐԱԹԵՐԹԸ (25 հունվար, 1998թ.)

25 տարի առաջ (1973թ. հունվարի 27-ին) 2 թուրք դիվանագետ սպանած Գուրգեն Յանիկյանի դատախազ Դեյվիդ Միները մի հոդվածով անդրադարձել է դատավարությանը և ընդունել, որ սխալ է գործել, երբ արգելել է ներկայացնել Հայկական ցեղասպանության մասին վկայությունները:

Հոդվածի սկզբում դատախազը նախ անդրադարձել է Յանիկյանի ահաբեկչական արարքին, որ տեղի ունեցավ Սանտա Բարբարայի «Բալթիմոր» հյուրանոցում, երբ Յանիկյանը նվերներ հանձնելու պատրվակով հանդիպման էր հրավիրել Թուրքիայի ընդհանուր հյուպատոսին և փոխհյուպատոսին և «երկու սատանաներին» սպանելուց հետո հանձնվել իշխանություններին:

Արարքից մի քանի ժամ առաջ 78-ամյա Յանիկյանը հարյուրավոր թերթերի և հայ քաղաքացիների նամակներ էր հղել՝ կոչ անելով ահաբեկել Թուրքիայի կառավարության բոլոր ներկայացուցիչներին՝ «արդարություն պահանջելով» 1915-ին ջարդված 2 միլիոն հայերի համար:



Ըստ դատախազի՝ Յանիկյանի առաջնորդած ահաբեկչական արշավին հաջորդած 10 տարիներին ահաբեկվել են 27 թուրք դիվանագետներ, իսկ 150 հոգի էլ՝ վիրավորվել կամ սպանվել:

Նա շարունակում է, թե Յանիկյանը ոգևորված էր Սողոմոն Թեհլիրյանով, որը 1921-ին սպանել էր «Թուրքիայում բոլոր հայերին սպանելու» հրաման արձակած Թալեաթ փաշային և իր դատավարությունն օգտագործել էր Հայկական հարցը և ցեղասպանությունը միջազգային հասարակայնությանը ներկայացնելու համար:

Յանիկյանը ևս ցանկանում էր իր դատավարությունը դարձնել «Հայկական Նյուրնբերգի» նախաքայլը, որովհետև Թուրքիայի իշխանությունները չեն ընդունում Հայկական ցեղասպանությունը:

«Ես էի Յանիկյանի դատավարության դատախազը, և հայերի հույսն ինձ վրա էր»,- գրում է Միները և ավելացնում, թե դատավարությունից առաջ Յանիկյանի փաստաբաններից Վազգեն Մինասյանը կոչ է արել իրեն ցեղասպանության դեմ մի վճիռ արձակել և հանձնել է Թեհլիրյանի մասին գրված «Խաչը և մահիկը» գիրքը, որի հեղինակը Գ. Յանիկյանի բարեկամներից Լինդի Ավագյանն էր:

«Առիթ ունես աշխարհում արդարության խորհրդանիշ լինելու», - ասել էր Մինասյանը դատախազին:

«Այդ բառերը շարունակում են հալածել ինձ մինչև այսօր և եթե կարողանայի ժամանակը հետ դարձնել, այլ ճանապարհ կընտրեի, ինչ էլ լինեին հետևանքները»,- շարունակում է Միները՝ ասելով, թե Յանիկյանի փաստաբանները ցանկանում էին դատավարությանը ներկայացնել վերապրողների և պատմաբանների վկայություններն ու լուսանկարչական փաստերը ցեղասպանության մասին:

«Իբրև դատախազ իմ պարտականությունն էր դատապարտել ոճիրը, և գիտենալով, որ դատախազը կարող է իր կարծիքը փոխել, եթե լսի ջարդերի մասին ցավալի վկայությունները, համոզեցի դատավորին, որ դրանք (վկայությունները) նկատի չունենա: Այդպիսով Հայկական Նյուրնբերգը ձախողության մատնեցի», - գրում է նա:

Դատախազը շարունակում է, թե Յանիկյանի և Արամ Սարոյանի (Վիլյամ Սարոյանի հորեղբորորդին) ուսերին մնաց Հայկական ցեղասպանության փաստերը ներկայացնելը: Յանիկյանը 6 օր շարունակ ներկայացնում էր դրանք՝ նկարագրելով իր ընտանիքի 26 անդամների սպանությունը:

Ըստ դատախազի՝ պաշտպանության հիմնական թեզությունն այն էր, որ սպանված դիվանագետները չէին ներկայացնում այն կառավարությունը, որ պատասխանատու էր ցեղասպանության համար[3], և այդ պատճառով Յանիկյանը 79-ամյա հասակում դատապարտվեց ցմահ բանտարկության և 5 տարի հետո ներում ստացավ՝ հակառակ Թուրքիայի բողոքների: Սակայն 2 ամիս անց մահացավ սրտի տագնապից:

Դատախազը եզրակացնում է, թե Յանիկյանը մի խորհրդանիշ է Թուրքիայի կառավարության ուրացման քաղաքականության դեմ, և հիշեցնում է, որ նրա պաշտպան փաստաբաններից մեկն ասել է. **«Այժմ Յանիկյանը հայոց պատմության կարևոր մասնիկն է»**: Դատախազն ավելացնում է, թե Թուրքիայի կառավարությունը շարունակում է ուրանալ ցեղասպանությունը՝ հակառակ գոյություն ունեցող փաստերի:

«Ցավում եմ, որ թույլ չտվեցի ցեղասպանության վերաբերյալ փաստերի լիարժեք ներկայացմանը, ոչ թե նրա համար, որ Յանիկյանը պետք է ազատ արձակվեր, այլ նրա համար, որ պատմության ամենամութ էջերը՝ ցեղասպանությունները, պետք է բացահայտվեն, որպեսզի այլևս չկրկնվեն արհավիրքները: Դժբախտաբար, Հայկական ցեղասպանությունը չի դատապարտված, և այդ պատճառով Ադոլֆ Հիտլերը 1939-ին իր ազգային ցեղասպանության արշավի սկզբին հայտարարեց.

«Վերջապես, ո՞վ է հիմա հիշում հայերի բնաջնջումը»:

<u>Ծանոթագրություն</u>

1. Նկատի ունի գործողությունից առաջ գրված կոչը հայ ժողովրդին, որը նույնպես ներկայացնում ենք այս բաժնում:

2. Լրագրողները հաճախ հարցը սխալ են ձևակերպում, ինչպես այս դեպքում: Յանիկյանի խնդիրը վրեժ լուծելը չէր, այլ ազատագրական պայքարի սկիզբը դնելը:

3. Կեղծ փաստարկ է, ճիշտ չէ: Ցեղասպանության ոճիրը վաղեմության ժամկետ չունի, և Թուրքիայի ներկայիս պետությունը՝ որպես իրավահաջորդ, պատասխանատու է հանցագործության համար, այնքան ժամանակ քանի դեռ չի ընդունել ու դատապարտել հանցագործությունը և չի կատարել վնասների հատուցում, այդ թվում, քանի դեռ չի վերադարձրել ցեղասպանության միջոցով և դրա արդյունքում բռնազավթված տարածքները: Տե՛ս, ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի Կոնվենցիան Պատերազմի հանցագործությունների և մարդկության դեմ հանցագործությունների նկատմամբ վաղեմության ժամկետ չկիրառելու մասին, 26-ը նոյեմբերի 1948թ.:

ՎԵՐՋԱԲԱՆ

Պարբերականի այս համարի ավարտական աշխատանքները համընկան ԱՄՆ Սենատի Արտաքին հարաբերությունների խորհրդում 106-րդ բանաձևի քննարկումների հետ: Շահագրգիռ կողմերն իրար անցան. ամերիկացիները՝ թե մեր ազգային անվտանգությունն է վտանգվում Մերձավոր Արևելքում, թուրքերը թե՝ կներխուժենք իրաքյան քրդաստան, քրդերը թե՝ քննարկումները թուրքական կողմին լարում են մեր դեմ: Կարծես՝ մինչ քննարկումները ամերիկյան զինուժը անվտանգ պայմաններում էր Իրաքում, կամ այդ թուրքերը չէին, որ Սադդամից առաջ և հետո հազար անգամ ներխուժեցին Իրաք, և վերջապես, կարծես՝ քրդերը, հատկապես 1925-ից հետո, բարեկամական հարաբերությունների մեջ են թուրքական իշխանությունների հետ:

Իրականում, քննարկումների դրական ելքը, անշուշտ մեզանից զատ, պետք է, որ կարևոր լիներ նշյալ կողմերին. ԱՄՆ-ին՝ հաստատելու նոր աշխարհի կառուցման իր ազատական, դեմոկրատական կողմնորոշումը. ինչպես արտահայտվեց ամերիկացի սենատորներից մեկը. **«Ես կողմ եմ քվեարկում Հայոց ցեղասպանությունը դատապարտող բանաձևին այն համոզումով, որ այդպես վաղվա աշխարհը ավելի լավն է լինելու»**: Թուրքերին՝ ձերբազատվելու վերջապես հանցագործ անցյալից: Քրդերին՝ բացելու քրդական պետություն ստեղծելու հարցը:

ԱՄՆ Սենատի որոշումը, սակայն, իրավական ուժ չունի[1]:

Վերադառնանք պարբերականում ներկայացված նյութերին, որոնք ցույց են տալիս, որ Հայոց ցեղասպանությունը՝

Տեսական ձևակերպում է ստացել արևմուտքում՝ ռորբախների ու նմանների կողմից:

Այն խրախուսել, ուղղորդել և կազմակերպել են արևմտյան մի շարք գերտերությունների ինչպես քաղաքական, այնպես էլ գաղտնի ծառայությունների գործիչներ և աշխատակիցներ:

Դրա հետևանքների մասնակի վերացման՝ Սևրի Խաղաղության կոնֆերանսի որոշումների իրականացումը, արգելափակել են նույն ուժերը:

Որի հետևանքում առաջացած իրողությունը փորձել են «օրինականացնել» սկզբում 1921թ. Ռուս-թուրքական բարեկամության և եղբայրության, ապա 1923թ. Լոզանի պայմանագրով:

Ինչպես Հայոց ցեղասպանությունը կազմակերպելու, այնպես էլ հայկական պետության դեմ իրականացվող գործողությունները իրենց հատուկ տրամաբանությունն ունեն: Այդ տրամաբանությունը գործում է նաև մեր օրերում՝ ՀՀ-ի, ԼՂՀ-ի և Հայկական սփյուռքի գաղթօջախների դեմ:

Խորքում այդ տրամաբանությունը ոչ միայն հայատյաց, այլև մարդատյաց է, ընդդեմ՝ մարդկության:

Նշված բոլոր օրինակներում, նաև առաջիկայում, այդ տրամաբանությամբ առաջնորդվող բոլոր անձինք և գործողությունները ենթակա են քրեական պատասխանատվության:

Պարբերականում ներկայացված Հռչակագրերն ու Կոնվենցիաները ապացուցում են, որ՝

ա) Հայկական հարցի լուծումը իրավունքի ոլորտում է,

բ) օրակարգում Հայկական հարցի լուծման հրատապ անհրաժեշտությունը կա, որպեսզի ապահովվի տարածաշրջանի կայուն անվտանգությունն ու խաղաղ համակեցությունը, բնականոն զարգացումը,

գ) որպեսզի իրականանա հայ-թուրքական, հայ-ադրբեջանական իրական երկխոսություն,

դ) որպեսզի վերացվեն արհեստականորեն ստեղծված «լարվածության օջախները» Հայկական լեռնաշխարհում և կովկասյան տարածաշրջանում,

ե) քրդերն էլ պետք է պետություն ունենան, սակայն իրենց բնօրրանում, որպեսզի չդառնան գործիք Ռալֆ Պիտերսի նախատեսած նոր լարվածության հինգ օջախներում,

զ) որպեսզի ապագայում իսպառ բացառվի ցեղասպանության իրականացում մեկ այլ ժողովուրդի հանդեպ,

է) որպեսզի Հայկական հարցի ամբողջական լուծման օրինակով, այլ տարածաշրջաններում ևս վերացվեն «լարվածության օջախները» և ոչ թե ստեղծվեն նորերը:

ը) Մարդկությունը այլ ընտրություն չունի. իր տունն ու տեղը կարգավորելու համար պարտավոր է օգտագործել ՄԱԿ-ի ընձեռած իրավական ու կազմակերպչական բոլոր հնարավորություններն ու մեխանիզմները, միջազգային իրավական ու օրենսդրական նորմերի և Հռչակագրերի ոգուն ու տառին համաձայն:

Գտնում ենք, որ խնդիր ունենք մեր ներուժն ու մարտավարությունը վերադասավորելու ժամանակի պահանջներին համապատասխան.

- պայքարի առաջին գծում պետք է լինեն իրավական, [2]
- երկրորդում՝ քաղաքական, դիվանագիտական, քաղաքակրթական,
- երրորդում՝ ազգային - պետական և միջազգային անվտանգության խնդիրները:

Հենց այս տրամաբանությամբ էլ պետք է դասավորվեն՝

- իրավաբանն ու իրավագետը,
- քաղաքագետը, դիվանագետը, մտավորականը,
- ազգային - պետական գործիչը, ազատամարտիկն ու զինվորը:

«Խաղաղությունը կլինի անտանելի, եթե այն կառուցվի փոխզիջումներով»,- բացատրում էր Վուդրո Վիլսոնը 1919-ին Փարիզի Խաղաղության կոնֆերանսին՝ զգուշացնելով,- «Հակառակ դեպքում՝ առնվազն քառորդ դար հետո, կունենանք էլ ավելի ահավոր, երկրորդ համաշխարհային պատերազմ»:

Մինսկի խումբը սնանկ համարելով միջազգային իրավունքի հայտնի նորմերով ԼՂՀ-ի ժողովրդի ազատ, անկախ և ինքնիշխան ապրելու վճռականության 16-ամյա փաստացի և իրավական իրողությունը, համառորեն առաջարկում է խաղաղությունը կառուցել հենց միայն փոխզիջումների միջոցով: Ասել է թե՝ նախապատրաստում է «անտանելի խաղաղություն», նաև դրան հաջորդող «նոր պատերազմ»: Բաց է մնում մեկ հարց. ստանձնո՞ւմ է արդյոք իր պատասխանատվությունը դրանում:

Իսկ ինչպե՞ս է փորձելու «չնկատել» ու «շրջանցել» Բնիկ ժողովուրդների իրավունքների մասին Հռչակագիրը, որը ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեան ընդունեց վերջերս, մասնավորապես՝ 3-րդ և 8-րդ Հոդվածները:

ՄԱԿ, Գլխավոր Ասամբլեա, 14 սեպտեմբեր, 2007թ.
Հռչակագիր Բնիկ ժողովուրդների իրավունքների մասին

Հոդված 3. Բնիկ ժողովուրդները ունեն ինքնորոշման իրավունք: Այդ իրավունքի ուժով նրանք ազատորեն հաստատում են իրենց քաղաքական կարգավիճակը և ազատորեն իրագործում են իրենց տնտեսական, սոցիալական և մշակութային զարգացումը:

Հոդված 8.

1. Բնիկ ժողովուրդները և նրանց պատկանող անձինք իրավունք ունեն չենթարկվելու հարկադիր ուծացման, ինչպես և իրենց մշակույթի ոչնչացմանն ուղղված ազդեցության,

2. Պետությունները ապահովում են կանխարգելման և իրավական պաշտպանության արդյունավետ մեխանիզմներ **ընդդեմ**՝

a) յուրաքանչյուր գործողության, որ նպատակ է հետապնդում, կամ արդյունք է հանդիսանում զրկելու իրենց ամբողջականությունից՝ որպես ինքնաբավ ժողովուրդներ, կամ իրենց մշակութային արժեքների, կամ էթնիկ ինքնության,

b) յուրաքանչյուր գործողության, որ նպատակ է հետապնդում, կամ արդյունք է հանդիսանում նրանց իրենց հողերից, տարածքներից կամ ռեսուրսներից զրկելու,

c) պարտադրող բոլոր ձևերով բնակչության ստիպողական տեղահանման, որը նպատակ է հետապնդում, կամ արդյունք է հանդիսանում իրենց որևէ իրավունքների խախտման, կամ ոչնչացման,

d) յուրաքանչյուր ձևով ստիպողական ուծացման, կամ ինտեգրման,

e) ամեն ձևի քարոզչության, որ նպատակ ունի խրախուսել, կամ հրահրել ազգային կամ էթնիկական խտրականություն ուղղված նրանց դեմ:

(Ռուսերենից թարգմանությունը մերն է: Կից ներկայացնում ենք բնօրինակը - խմբ.)

Декларация Организации Объединенных Наций о правах коренных народов

Генеральная Ассамблея

Статья 3

Коренные народы имеют право на самоопределение. В силу этого права они свободно устанавливают свой политический статус и свободно осуществляют свое экономическое, социальное и культурное развитие.

Статья 8

1. Коренные народы и принадлежащие к ним лица имеют право не подвергаться принудительной ассимиляции или воздействию в целях уничтожения их культуры.

2. Государства обеспечивают эффективные механизмы предупреждения и правовой защиты в отношении:

a) любого действия, имеющего своей целью или результатом лишение их целостности как самобытных народов или их культурных ценностей, или этнической самобытности;

b) любого действия, имеющего своей целью или результатом лишение их своих земель, территории или ресурсов;

c) принудительного перемещения населения в любой форме, имеющего своей целью или результатом нарушение или подрыв любого их права;

d) принудительной ассимиляции или интеграции в любой форме;

e) пропаганды в любой форме, имеющей целью поощрение или разжигание расовой или этнической дискриминации, направленной против них.

Հ.Գ. - Արաբացու հետապնդած **առաջին** նպատակը շուտով իրագործվեց: «Հարցազրույցն» իր գործն արեց: Անտանտի գերտերությունները և բոլշևիկյան Ռուսաստանը (Տրոցկու ջանքերով) տապալեցին Սևրի պայմանագիրը, որին փոխարինելու դրվեց Լոզանի դաշնագիրը, որտեղ մասնակից կողմերը, ըստ էության, հավանություն տվեցին ցեղասպանության ճանապարհով տարածքներ զավթելու, այն միջազգայնորեն «օրինականացնելու» Տրոցկու նախանշած «ազգերին զոհաբերելու լենինյան սկզբունքին»:

Ինչ վերաբերում է **երկրորդ** նպատակին, հայերի հալածանքներն Արևելյան Հայաստանում և Հայկական սփյուռքի գաղթօջախներում շարունակելու ծրագրին, ապա ինչպես հայտնի է, այն՝ մասնակի «հաջողություններով» հանդերձ, ամբողջական առումով տապալվեց թե՛ Արևելյան Հայաստանում, թե՛ Սփյուռքում: Սակայն ծրագրի՝ «**Հայերը, չպետք է ունենան Հայաստանը»** բաժինը առ այսօր համարվում է օրակարգային: Այդ է վկայում 1988-ից առ ասօր ՀՀ-ի և ԼՂՀ-ի նկատմամբ իրագործվող քաղաքականությունը: Դա, ի դեպ, 1988-94թթ. խայտառակ պարտություն կրեց, քանզի չհաջողվեց Լեռնային Ղարաբաղը մի քանի ամսում հայազրկել: Չհաջողվեց չեզոքացնել ազատ, անկախ և ինքնիշխան Հայաստանի Հանրապետության հնարավոր իրողությունը: Փառք Աստծո, նախատեսված աղետի փոխարեն այսօր ունենք անկախության գործընթացը միասին անցած և լինելիության պատերազմը հաղթած երկու ինքնիշխան պետություն:

Երրորդ նպատակի իրագործման հիմնաքարը դրվեց 1957-ին, որպես եվրոպական երկրներին ու ժողովուրդներին (համաձայն Ա. Դալեսի ծրագրի) խաբելու և մոլորեցնելու ճանապարհով, աներևույթ կենտրոնից ղեկավարվող՝ բանականությունն ու սրբությունները կորցրած խամաճիկների վերածելու գործընթաց: Այն 2005-ին ժամանակավոր պարտություններ կրեց Ֆրանսիայում, Հոլանդիայում, 2003-ին՝ Հայաստանում, «նորացված» սահմանադրությունները համաժողովրդական հանրաքվեներում մերժելու արդյունքում: Սակայն Մեծ խաբեության կոմիսարները համառում են: Ձանում են թե՛ Եվրոպայում և թե՛ հարևան երկրներում, թե՛ Միջին Արևելքում և թե՛ Աֆրիկայում: Այդ է վկայում նշյալ տարածաշրջանում ընթացքի մեջ դրված «Սոդոմ - Գոմորի» հեռանկարը անթաքույց քարոզող, արաբական աշխարհի ժողովուրդներին տեռորիզմին ու լոկալ հակամարտություններին զոհ մատուցող, անգլիացի Արաբացու «Առաջին գունավոր դոմինոյին» փոխարինելու եկած ամերիկացի Ռալֆ Պիտերսի «Նոր Միջին Արևելքի» ռազմաքաղաքական «շինարարության» մարդատյաց գործընթացը:

Կգա օրը և կտեսնենք, որ Արաբացու երրորդ նպատակը նույնպես դատապարտված էր ձախողման:

Ծանոթագրություն

1. Այս հանգամանքը մշտապես պետք է նկատի առնել՝ ապագա ծրագրերում առկա ներուժն ու հնարավորությունները օգտագործելիս: Եվ պետք է խուսափել խնդրի անհարկի շահարկումից, զգուշանալով հաղթանակ կոչել գործընթացի հետ կապված հաջողությունները:

2. Ժամանակն է ստեղծելու հայերի, հայության, հայ մշակույթի իրավական պաշտպանության կառույցներ: Յուրաքանչյուր հասարակական, հայրենակցական, քաղաքական կամ այլ տեսակի ուժ մեզանում կարող է ընտրել ու իրականացնել հայ անհատի, հայ համայնքի, հայոց հոգևոր ժառանգության, հայ արվեստի ու մշակույթի, Հայոց պատմության, հայկական սպորտի, Հայոց վաղընջական իրավունքների... ոտնահարումների ոլորտներից մեկն ու մեկի իրավական պաշտպանությունը: Այդպես տեղի կունենա նաև աշխատանքի և պատասխանատվության իրատեսական բաշխում:

«Աշխարհի մեջ մեն մենակ ենք: Բավական է այդ մենակությունը, որ մեր թուլությունը կրահ ու պողպատ հագնի»:

Զորավար Անդրանիկ (1918թ., Կարին)

ՀԱՅԱՍՏԱՆ

ARMENIA

ԱՐՄԵՆԻԱ

ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԱՏԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՅ ԳԱՂՏՆԻ ԲԱՆԱԿԻ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

«Մենք զենքը… վայր չենք դնի քանի դեռ Թուրքիայի ճնշված ժողովուրդներն ազատություն չեն ստացել: Թուրքիան դաժանություններով գերազանցեց իր ուսուցիչներին և ապացուցեց Եվրոպայում իր գոյության իրավունքի կասկածելի լինելը, նա վերածվեց կայզեր հավատարիմ և արժանի ծառայի: Հայերի անարգ կոտորածը հարկադրում է մեզ այդ տգետ, մոլագար ոհմակին հանել Եվրոպայից: Հայաստանը պետք է ստանա այն, ինչի պատմական իրավունքն ունի: Նա ապրելու ավելի մեծ իրավունք ունի, քան Թուրքիան, որովհետև ի զորու է ինքն իրեն կառավարել:

Ուշ թե շուտ Թուրքիան կանգնելու է ռազմական դատարանի առաջ և հաշիվ է տալու. այն ժամանակ նրանից կպահանջվի թալանվածը վերադարձնել դրա իսկական տերերին»:

ՎՈՒԴՐՈ ՎԻԼՍՈՆ

Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահ